

Առաջին Արևելագրային

ԳՆԵՏՈՐԱԿԱՆ  
ԱՐՎԵՍՏԻ  
ԴԻՍՈՒՆՔՆԵՐԸ

Հայկերի և Նախկին ար

ՍՈՒՐԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

ՀՈՒՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ  
ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ

## ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Հասարակական-քաղաքական կյանքին մասնակցող յուրաքանչյուր մարդու համար հռետորական արվեստի հիմունքներն իմանալը առաջնահերթ անհրաժեշտություն է, հատկապես այն մարդկանց համար, որոնց դործունեությունն ու մասնագիտությունը մշտապես կապված են հրապարակային ճառ կամ գեղարվեստական խոսք արտասանելու հետ: Քաղաքական-հասարակական գործիչները, ազիտատորները, պրոպագանդիստները, դասախոսները, դատախազները, դատապաշտպանները, դերասանները, ասմունքողները, հազորդավարները, մանկավարժները և ուրիշներ ոչ միայն պետք է ծանոթ լինեն խոսքի կուլտուրայի հիմունքներին, այլև վարպետորեն տիրապետեն հրապարակային խոսքի արվեստին:

Այս աշխատության մեջ համառոտակի շարադրված են խոսքի կուլտուրայի այն հիմունքները, որոնց հետագա խոր ուսումնասիրությունը կախված կլինի հռետորական արվեստի այս կամ այն ճյուղն ուսումնասիրող անձանց ջանասիրությունից:

Խոսքի տեխնիկայի հիմնական սկզբունքներն ընդհանուր են հռետորական արվեստի բոլոր ճյուղերի համար: Գրքի առաջին բաժինը նվիրված է շնչառությանը, առողանությանը, ձայնին և ուղղախոսությանը: Միասնական գրական արտասանության գործին սատարելու նպատակով գրքում զգալի տեղ է հատկացված ուղղախոսության հարցերին:

Խոսքի հնչման կուլտուրան սերտորեն առնչվում է, բացի տեխնիկական ձևերից ու միջոցներից, անհատական-ստեղծագործական բարդ հոգեբանական տարրերի հետ: Այս բաժինը ևս ընդհանուր է բեմական-գեղարվեստական խոսքի և հռետորական արվեստի մյուս բոլոր ճյուղերի համար:

«Հռետորական արվեստի տեսակները» գլխում համառոտակի տրված է յուրաքանչյուր ճյուղի պատմությունը, լեզվագիրը, բեր-

СУРЕН КАГРАМАНОВИЧ АРЕВШАТЯН  
**ОСНОВЫ ОРАТОРСКОГО ИСКУССТВА**

(на армянском языке)  
Армучпедгиз  
Ереван, 1961

ված են ականավոր հոնտորների ճառերի օրինակներ ինչպես տեքստում, այնպես էլ դրքի հավելվածում:

«Քաղաքական ճառի կառուցվածքը» գլուխը գրքի կարևոր բաժիններից մեկն է, որտեղ ճառի տեխնիկական կառուցվածքին և ձևին զուգահեռ, ելնելով նրա բովանդակությունից ու նպատակազորումից, խոսվում է բազմաթիվ ոճաբանական ձևերի ու լեզվի մասին:

Գրքի վերջին գլուխը նվիրված է հոնտորական արվեստի ամենատարածված ճյուղին՝ դատական ճարտասանությանը, որտեղ տրված է դատական ճարտասանական արվեստի համառոտ պատմությունը, դատական ճառի կառուցվածքը, ինչպես և բերված են ճառերի օրինակներ:

«Հոնտորական արվեստի հիմունքները» աշխատությունն իր մեջ համառոտակի ամփոփում է հեղինակի իրավաբանական երկարամյա գործունեության և բեմական-գեղարվեստական խոսքի մանկավարժական փորձը:

Գիրքը օգտակար կարող է լինել համալսարանի և ինստիտուտների իրավաբանական, մանկավարժական, դերասանական, ռեժիսյորական ֆակուլտետների ուսանողության, ինչպես նաև պրոպագանդիստների, ագիտատորների, սկսնակ դատախազների, դատապաշտպանների և հոնտորական արվեստով հետաքրքրվողների համար:

Ն Ե Ր Ա Մ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Բանաստեղծ՝ ծնվում եմ,  
Հստառ՝ դառնում:

Յիցերոն

Ճարտասանությունը կամ պերճախոսությունը հասարակական-քաղաքական պատմության բոլոր մամանակներում ու բոլոր ժողովուրդների առաջավոր մարդկանց կողմից միշտ էլ բարձր է գնահատվել: Կենդանի խոսքը, գեղեցիկ, համուլիլ խոսելու արվեստը՝ հոնտորական արվեստը, մարդկության բազմաբանական-հասարակական հարաբերությունների բոլոր ժամանակաշրջաններում հսկայական դեր է խաղացել:

Հոնտորական արվեստն իր զարդացման տարբեր փուլերում կրել է գլխավորապես քաղաքական բնույթ:

Հետագարձ հայացք նետելով հոնտորական արվեստի պատմական զարդացման շրջանների վրա, մենք տեսնում ենք, որ սկզբած Հին Հունաստանից, Հռոմից, միջին դարերից և վերջացրած՝ նորագույն ժամանակաշրջանով, ընդհուպ մինչև Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռեյոլյուցիան, մինչև մեր օրերը, հասարակական-քաղաքական պայքարի բնագավառում ճարտասանությունը հանդիսացել է մի մարտական զորեղ զենք, որի միջոցով կարգավորվել են ոչ միայն ժողովուրդների ու պետությունների ներքին, այլև արտաքին՝ միջպագային կյանքի շափաղանց բարդ խնդիրները:

Հոնտորական արվեստի զարգացումը պատմականորեն կապված է Հին Հունաստանի ժողովման շրջանի՝ V—IV դարերի (մ. թ. ա.), ինչպես և Հին Հռոմի հասարակական-քաղաքական հարաբերությունների զարգացման հետ: Գասակարգային պայքարի սրումը, լայն մասսաների ղերի ուժեղացումը պետական, հասարա-

կական, կուլտուրական կյանքում պահանջում էին պերճախոսություն՝ կենդանի, գեղեցիկ, հուզիչ ու համոզիչ խոսքի համալիրում՝ իրենց բազաքական հակառակորդների դեմ հաղթանակ տանելու, ինչպես և գիտության, փիլիսոփայության, գրականության և այլ բազմաթիվ բնագավառներում իրենց տեսակետները հիմնավորելու և տարածելու համար։

Այդ տեսակետից Հին Հունաստանում հասկապես խոշոր դեր խաղացին սոփեստները։ Ճարտասանության այդ ուսուցիչները գրում էին ճառեր, ձեռնարկներ, իրենց աշակերտներին ստիպում էին սովորել բերանացի։ Սոփեստներն ավելի ուշադրություն էին դարձնում լեզվի անխնդրական միջոցների ու շարադրանքի, քան թե ճառի բովանդակության, տրամաբանության և ճշտության վրա։ Գործածելով սլաակերալոր, ծաղկացրած լեզու, անսպասելի դարձվածքներ, հմտորեն ընտրված թեմաներ, նրանք իրենց ճառերով ավելի շատ ձգտում էին դուր գալ, հիացնել, քան համոզել։

Անտիկ աշխարհի ամենասկսնավոր հոետորը Դեմոսթենեսն էր (384—322 թթ. մ. թ. ա.), որը լինելով դեմոկրատիայի կողմնակից, դեմ էր էսքլինեսի կողմից գլխավորվող մակեդոնական արխատոկրատիային և պայքարում էր հանուն դեմոկրատական Աթենքի անկախության ու ազատության։ Բնությունից թուլակազմ, հիվանդոտ և նեղ կուրծք ունեցող Դեմոսթենեսի մեջ այնքան զորեղ էր հոետոր դառնալու ցանկությունը, որ նա մեծ դժվարությամբ հաղթահարեց նաև իր թոթովախոսությունը և ուսերի ցնցումը։ Պատմում են, որ իր ձայնը դարգացնելու և թոթովախոսությունը վերացնելու համար նա գնում էր ծովափ, բերանն էր անում մանր ծովաբարձր և ձգտում էր սլարդ ու հասկանալի ձևով արտասանել դժվար բառերն ու դարձվածքները, հեկյամետրով գրված բանաստեղծությունները։ Չայնն ուժեղացնելու, թոքերն ու կուրծքն ամրացնելու համար նա սար էր բարձրանում, ջանալով շնչել դանդաղ ու խորը, զուգորդելով արտասանության հետ։ Ուսերի ցնցումը վերացնելու համար առաստաղից կախում էր սրեր և ինքը կանգնում նրանց տակ։ Երբ խոսելիս նա ակամայից ցնչվում էր, սրերը ծակում էին նրա ուսերը. այդպիսով, շնորհիվ իր մեծ ջանասիրության և համառության, նա ազատվեց այդ թերությունից ևս։

Դեմոսթենեսը ավելի քան տասը տարի զբաղվում էր դատական պաշտպանությամբ, և շնայած այն ժամանակ դատական գործերը շատ եկամտաբեր էին, այնուամենայնիվ, շրավարարվելով դատական հոետորի իր հասարակական դիրքով, նա իրեն նվիրեց ավելի բարձր գործունեության, դառնալով իր ժամանակի չգերազանցված քաղաքական հոետորը։

Հին Հոմի սենատորներից, որպես լավագույն հոետոր, հայտնի էր Կատոն-ավագը (234—149 թթ. մ. թ. ա.), որը պրովինցիայի պահպանողական միջին հողատերերի ներկայացուցիչն էր և Կարթագենի ռիսերիմ թշնամին։ Հոմի սենատում արտասանած իր բոլոր ճառերը Կատոնը վերջացնում էր այսպիսի խոսքերով. «Ceterum censeo Carthaginem esse delendam», այսինքն՝ «Այնուամենայնիվ, ես կարծում եմ, որ Կարթագենը պետք է կործանել»։

Հին Հոմի նշանավոր հոետորներից էր Յիցերոնը (106—43 թթ. մ. թ. ա.)։ Նա հայտնի էր որպես և՛ դատական, և՛ քաղաքական հոետոր։ Շատերն ընդունում են, որ Յիցերոնը առավելապես դատական, քան քաղաքական հոետոր էր։ Ռուսոն համեմատելով Դեմոսթենեսին և Յիցերոնին, այսպես է բնութագրել յուրաքանչյուրի տաղանդը. «Դեմոսթենեսը հոետոր է, Յիցերոնը՝ փաստարան»<sup>1</sup>։

Յիցերոնից հետո Հոմում հոետորական արվեստը սկսում է անկում ապրել. դա ռեսպուբլիկական կարգերի վերացման հետևանք էր։ Հոմեական կայսրերը հալածում էին քաղաքական հոետորներին և պարզ է, որ այդպիսի պայմաններում քաղաքական ճարտասանության ոչ միայն զարգացման, այլև գոյության մասին խոսք անգամ չէր կարող լինել։ Պահպանվում էր դատական հոետորական արվեստը։

Միջնադարում՝ սխոլաստիկայի ու խավարամոլության երկարատև ժամանակաշրջանում, հոետորական արվեստը ֆեոդալական-միապետական կարգերի դաժան հալածանքների հետևանքով մոռացության տրվեց։ Քրիստոնեության տարածման և հոգևորականության արտոնյալ վիճակի շնորհիվ լայն զարգացում ստացան կրոնա-բարոյական բնույթի հոգևոր ճառերը։

Քաղաքական կյանքի զարթոնքը և XVIII դարում ֆրանսիական բուրժուական ռեոլյուցիան մեծ պտղի տվեցին քաղաքական ճարտասանության վերակենդանացմանն ու զարգացմանը։

XIX դարում հոետորական արվեստը զարգացավ Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում՝ Անգլիայում, Գերմանիայում, Իտալիայում, Ավստրիայում։ Անգլիական պառլամենտարիզմը մեծ չափով նպաստեց պառլամենտական հոետորական արվեստի զարգացմանը։

Ցարական Ռուսաստանում հոետորական արվեստը շատ ուշ է զարգացել։ Միապետությունը միշտ էլ ճնշել է քաղաքական ադատ խոսքը։ Միայն 1864 թվականի դատական ռեֆորմից հետո նպաստ

<sup>1</sup> М. Н. Попов, «Политическое красноречие», С.-Петербург, 1906 г., стр. 14.

աավոր պայմաններ ստեղծվեցին դատական ճարտասանության զարգացման համար, որին լայն շահերով նպաստեց երդվյալ ատենակալների ինստիտուտի ստեղծումը և դատավարության մրցակցության սկզբունքի կիրառումը: Թեև երդվյալների դատարանի ստեղծումը միայն աննշան խոչընդոտ էր ցարական կամայականությունների դեմ, սակայն նրա առաջադիմական բնույթը և դատավարության նոր սկզբունքները հնարավորություններ ստեղծեցին դատական հետադիմական արվեստի զարգացման համար:

Երդվյալների դատարանի կողմնակից, ցարական կառավարության օրոք դատական բարձրաստիճան պաշտոնյա, ականավոր դատական հետադիմական Ա. Ֆ. Կոնին միշտ ջերմորեն պաշտպանում էր երդվյալների դատարանը ցարական ուսուցիչներին շինողների ու հրապարակախոսներին մշտական հարձակումներից, գանկով, որ քրեական դատավարության նոր, առաջադիմական սկզբունքները ապահովում են մարդասիրական գաղափարների կենսագործումը:

Դատական ուսուցիչից հետո, մի քանի ասանամյակ շանցած, ցարական Ռուսաստանում երևան եկան մի շարք հուշակավոր դատական հետադիմական, որոնց ճառերի կառուցվածքը, բովանդակությունը, կուռ տրամաբանությունը, հուշակալությունն ու բարձրարժեք լեզուն ճարտասանական ձևերի հարստությամբ մինչև հիմա էլ չեն կորցրել իրենց թարմությունն ու հմայքը:

XIX դարի կեսերից սկսած, քաղաքական կյանքի սրման և կապիտալիզմի դեմ մղվող պայքարի պայմաններում, է՛լ ավելի զարգացավ քաղաքական ճարտասանությունը, դառնալով այդ պայքարի անհրաժեշտ հղորդ կենտրոնի մեկը: Պրոլետարիատի ռազմիկները Մարքսի, Էնգելսի, Լենինի ճառերն իրենց բովանդակության հագեցվածությամբ, ձևով և հուշակալությամբ հանդիսանում են հետադիմական արվեստի լավագույն օրինակներ:

Ռուսաստանում մարքսիզմի տարածման գործում իր տեսական-սրբազանդիտական ճառերով պատմական խոշոր դեր կատարեց նաև ականավոր հետադիմական Գ. Վ. Պլեխանովը:

1905—1907 թթ. առաջին բուրժուա-դեմոկրատական ռևոլյուցիան մեծ զարկ տվեց հետադիմական արվեստի զարգացմանը: Սակայն քաղաքական ճարտասանության աննախընթաց ծաղկման ու զարգացման համար լայն հորիզոններ բացվեցին Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի և սոցիալիզմի կառուցման ժամանակաշրջանում, երբ հանդես եկան մի շարք ականավոր հետադիմական նրանցից Մ. Ի. Կալինինը, հանդիսանալով լավագույն սրբազանդիտ և ագիտատոր, մեծ ուղադրություն էր դարձնում

հետադիմական արվեստին վերաբերող խնդիրներին, շահագանց օգտակար խորհուրդներ էր ապրիս սկսնակ հետադիմական, ասելով.

«Հետադիմական արվեստը, ընկերներ,— դա ամենադժվար արվեստն է և մասսայական կազմակերպություններում աշխատող բոլշևիկները պետք է տիրապետեն այդ արվեստին: Չտիրապետելով այդ արվեստին, դժվար չէ թմբեցնել լսարանը: Կարելի է ասել, որ ասոց հետադիմից ինչ հիանալի կերպով թմբեցնում է լսարանը և միայն մեկն է, որ կարող է շատ թե քիչ պահել նրա տրամադրությունը, որ նա շքի»<sup>1</sup>:

Ագիտատորների բոցաշունչ խոսքի նշանակության մասին Յարուսլավիկին գրել է.

«Ցարիզմի դեմ մղած պայքարի շրջանում քանի-քանի անգամ է պատահել, որ բոլշևիկ ագիտատորի խոսքը բանվորների ժողովում հողմացրիվ է արել գործադուլի, ցույցի անհրաժեշտության վերաբերյալ ամեն տեսակ տարակուսանքները: Մի անգամ չէ, որ ագիտատորի խոսքը վերջ է դրել հետամնացների տատանումներին, բոլշևիկյան փոքրամթիվ ավանգարդի շուրջը համալսմբելով, առաջ է տարել նրանց: Քանի անգամ է եղել, երբ բանվորների ու սյուզապիների դեմ ուղղված ցարական ղինվորների ավիանները ցած են իջել, հենց որ պարսիական ագիտատորը կրքոտ խոսքով ղինել է զինվորներին»<sup>2</sup>:

Բոլշևիկյան ագիտացիան ու պրոպագանդան հսկայական դեր խաղացին 1918—1920 թթ. քաղաքացիական կռիվների և ինտերվենցիայի դեմ մղված պայքարի ժամանակաշրջանում:

Է՛լ ավելի մեծ եղավ բոլշևիկյան բոցաշունչ, կենդանի խոսքի նշանակությունը Հայրենական Մեծ պատերազմի տարիներին:

Արդի սոցիալիստներում էլ ավելի է մեծանում հետադիմական արվեստի անհրաժեշտությունը, քանի որ ոգեշունչ և համողիչ խոսքը օրըստօրե աշխուժացող հասարակական-քաղաքական կյանքում, ինչպես և գիտությունների տիրապետման ու մասսայականացման բնագավառում, աշխատավոր մասսաներին մորիլիդացնում է նյութական ու հոգևոր բարիքների առատություն ստեղծելու գործում և նպաստում է սովետական կյանքի և կուլտուրայի ծաղկմանը:

<sup>1</sup> М. И. Калинин, «Статьи и речи 1919—1935», стр. 202—205.

<sup>2</sup> Е. М. Ярославский, «Советы агитаторам», 1942 г., стр. 5.

## ԽՈՍՔԻ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՇԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ

Խոսքի տեխնիկան հոետորական արվեստի բոլոր տեսակները հիմքն է: Խոսքի տեխնիկայի հիման վրա է, որ հնարավոր է զառնում տիրապետել խոսքի արտահայտչական միջոցներին: Խոսքի տեխնիկայի մշակմամբ կարելի է ձեռք բերել խոսելու և արտասանելու այնպիսի հմտություն, որը բոլոր պայմաններում հոետորին, դերասանին, ասմունքողին և հաղորդավարին զուրա է բերում զժվարին կացությունից:

Խոսքի տեխնիկան բաղկացած է չորս հիմնական բաժիններից.

1. շնչառություն,
2. առոգանություն,
3. ձայն,
4. ուղղախոսություն:

Ուսուցման և ուսումնասիրության սկզբնական շրջանում այդ բաժինները միմյանցից սահմանազատվում են, իսկ գործնական կիրառման ժամանակ նրանք արդեն միասնական են, բայց չեն կարող միաժամանակ մշակվել: Ձայնը չի կարող մշակվել, եթե նախորդ կանոնավորված չեն շնչառությունը, խոսքի ապարատը և առոգանությունը:

Շնչառության վրա կատարվող աշխատանքի էությունն է՝ սրտը տեխնիկական մշակմամբ զարգացնել շնչառության ամենից ավելի բնական, ճիշտ, առողջ, շատ չճոզնոց և նյարտակահարմար ձև, որը պետք է նպաստի ձայնի կանոնավոր զարգացմանը և խոսքի արտասանության զժվարությունների վերադարձը:

Առոգանությունը (լատիներեն dicere — արտասանել, dictio — արտասանություն) պետք է նպաստի խոսքի և առանձին ձայնավորների ու բաղաձայնների հստակ ու պարզ արտասանությանը: Լավ առոգանությունը յուրաքանչյուր հոետորի, դերասանի և երգչի

համար խիստ անհրաժեշտություն է: Վատ առոգանությունը միշտ էլ տհաճ տպավորություն է թողնում:

Ձայնի մշակման ու ձայնադրման աշխատանքը շատ ավելի բարդ է, Ձայնի ծավալը, ուժը, հնչունությունը, դիմացկունությունը և ճկունությունը զարգացնելու համար ջանասիրություն և համառություն է պահանջվում:

Ձայնի մշակմանը պետք է նախորդի ձայնի զոնազան թերութունների վերացումը, ինչպես, օրինակ՝ անգախոսությունը, փոկորդային ձայնը, ատամների միջով կամ կիսաբաց բերանով խոսելը և այլն: Այդ ուղղությամբ կատարվող վարժությունների նպատակն է՝ գտնել ձայնական ապարատի ճիշտ դիրքը, ձայնին տալ ճիշտ ուղղություն և ճիշտ օգտադործել շնչառությունը: Ձայնական թերությունները վերացնելուց հետո նոր վարժություններով պետք է զարգացնել ձայնը, ամրադնել ձայնական տվյալները և վերջնականապես տիրապետել դրանց:

Առոգանության և ձայնական ապարատի մշակումն ու զարգացումը կախված է սիստեմատիկ վարժություններից: Ինչպես ջութակահարը՝ չվարժված մատները կամ պարողի մկանները, նույնպես և չվարժված ձայնալարերը, խոսպոտությունը, ծանր շնչառությունը, դանդաղաշարժ լեզուն, ալարկոտ բերանը հոետորի, դերասանի, ասմունքողի, հաղորդավարի և երգչի համար խոչընդոտներ են, որոնց հաղթահարումից հետո միայն կարող է խոսք լինել ախնիկայի զարգացման մասին:

Խոսքի տեխնիկայի շորրորդ բաժինը ուղղախոսությունն է (օրթոեպիան), որն ուսուցանում է բառերի ուղիղ, առանց աղավաղման և ճիշտ շեշտադրությամբ արտասանություն: Գրված խոսքը և կենդանի խոսակցական լեզուն չեն համընկնում, բանի որ յուրաքանչյուր վայրի, շրջապատի, աշխատանքի պայմաններն իրենց առանձնահատուկ կնիքն են դնում մարդկանց արտասանության վրա:

Խոսակցական բարբառը կամ խոսքի արտասանության առանձնահատկությունը յուրացվում է դեռ մանուկ հասակից, երբ երեխան, նմանվելով շրջապատին, ընդօրինակում է նրանց բարբառը: Հաճախ մեծ-զժվարությամբ է հաջողվում վերացնել արմատացած սխալ արտասանությունն ու բարբառը: Քիչ չեն այն դեպքերը, երբ բարձրագույն կրթություն ստացած մարդիկ արտասանում են՝ սաչման, արջան, աչրուն, հուսիս, փրոնտ, սեկալմերբ, անգաջ և այլն, իսկ արտաոռոջ շեշտադրությունը դարձել է շատ սովորական բան:

Հայ աշխարհիկ լեզվի զարգացումը կաշկանդված լինելով

<sup>1</sup> E. Саричева, «Техника сценической речи», Москва, 1939 г., стр 5—7.

գրաբարով, XIX դարի կեսերին, հորդելով, դուրս եկավ իր ափերից և գրավոր խոսքի մեջ իր սեղը գրավեց:

Ինչպես ուսական գրական լեզվի առանցքը կազմեց մոսկովյան բարբառը, իտալերենինը՝ Տոսկանի, անգլերենինը՝ Լոնդոնի բարբառը, այնպես էլ արևելահայ գրական լեզվի՝ աշխարհաբարի առանցքը կազմեց արարատյան բարբառը, որի հիման վրա զարգացավ հայ գրական լեզվի ուղղախոսությունը:

Հոետորական արվեստի հիմնական և հզոր միջոցը լեզուն է, գրական լեզուն, որին պետք է տիրապետի յուրաքանչյուր գրագետ մարդ, իսկ հոետորը, դերասանը, ասմունքողն ու հաղորդավարը՝ առավել ևս: Եստ հասարակական-քաղաքական գործիչներ ճիշտ չեն խոսում: Գաղտնիք չէ, որ շատ ու շատ դասախոսների, դատախազների, դատապաշտպանների ճառերը շատ հեռու են հոետորական արվեստի պահանջներից:

Եթե հասարակական-քաղաքական-դատական հոետորների համար նման երևույթը պախարակելի է, ապա բեմական արվեստի ներկայացուցչի՝ դերասանի, ռեժիսորի, ասմունքողի և հաղորդավարի կողմից լեզվին շտիրապետելը և ուղղախոսական կանոնների դեմ մեղանշելը միանգամայն անհանդուրժելի է:

## ԽՈՍՔԻ ԱՊԱՐԱՏԸ ԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԿԱՆՆԵՐԸ

Խոսքի ապարատի և շնչառության օրգանների կանոնավոր կառուցվածքից և ճիշտ գործունեությունից է կախված արտասանության ճշտությունն ու հստակությունը:

Նեղ առումով, խոսքի ապարատին են վերաբերում շրթունքները, ծնոտները, ատամները, լեզուն, կարծր և փափուկ քիմքը, լեզվակը, կոկորդը, ձայնալարերը և շնչափուշը: Խոսելու գործողությանը մասնակցում են նաև խոսքի ապարատի զանազան մասերի մկանները, որոնց կծկումները հետևանք են կենտրոնական նյարդային համակարգության առանձին տեղամասերի գործունեության: Այդ ամբողջ աշխատանքը համաձայնեցվում է գլխուղեղի ձախ կիսագնդի կեղևում զետեղված նյարդային կենտրոնի հետ:

Աննորմալ արտասանությունը հետևանք է՝ ա) խոսքի ապարատի կառուցվածքի թերության, բ) խոսքի ապարատի ճիշտ կառուցվածքի դեպքում նրա այս կամ այն մասի պատահական, ոչ ճիշտ օգտագործման և գ) կենտրոնական նյարդային համակարգության առանձին տեղամասերի գործունեության խանգարման<sup>1</sup>:

Խոսքի ապարատի կառուցվածքի թերությունների թվին են պատկանում ծնոտի ոչ ճիշտ դիրքը, վերին կամ ստորին ծնոտի դուրս ընկած լինելը, նոսր և ծուռ տտամները: Այդ արատները առաջացնում են առաջնալեզվային բաղաձայնների (դ, տ, ք, ձ, ծ, ց, ջ, ն, չ, ժ, շ, գ, ս, լ, ո, բ) ոչ ճիշտ արտասանություն:

Առողջ և ճիշտ ատամնաշարը հանդիսանալով լեզվի պատեկ, մեծապես նպաստում է հստակ արտասանությանը, մասամբ էլ ձայնադարձիկ (ռեզոնատոր) է հանդիսանում:

Երկար և հաստ լեզուն երբեմն շնչախոսության և սվավախոսության պատճառ է դառնում:

<sup>1</sup> E. Саричева, «Техника сценической речи», Москва, 1939 г., стр. 10.

Ծքն լեզվատակի սանձիկը լեզուն կարճ է պահում, ապա դրա հետևանքով առաջանում է թոթովախոսություն՝ «ղ»-ով խոսելը:

Այս արատները օրգանական բնույթ են կրում և պահանջում են բժշկական միջամտություն:

Շատ հաճախ էլ շնչախոսությունը, թոթովախոսությունը կամ դանդաղախոսությունը երեխաների խոսքի ոչ ճիշտ դաստիարակության կամ շրջապատի վատ օրինակի հետևանք է: Նկատված է, որ Ֆրանսիացի կամ հրեա երեխաների շրջապատում մյուս երեխաները նրանց նմանվելով, Ե հնչյունը արտասանում են ղ: Նման արատը հնարավոր է վերացնել: Անհրաժեշտ է միայն, որ խոսքի ոչ օրգանական արատ ունեցողն ըմբռնի իր թերությունը և սխառմասիկ ու համառ վարժությունների միջոցով վերացնի այդ:

Խոսքի կարևոր օրգաններից մեկը լեզուն է, որից գերազանցապես կախում ունի արտասանության հստակությունը: Լեզվի հետ կապված ամենատարածված արտասանական թերությունն է լ, Ե, ռ հնչյունների արտասանությունը: Երեխաների մոտ Ե և ռ հնչյունների արտասանության շտկումը երկար է տևում, իսկ մեծահասակները, հասկապես երգիչները, Ե-ի փոխարեն արտասանում են ռ, որը սոցիալական, մեխանիկական արատ է և հեշտությամբ կարելի է վերացնել:

Կենտրոնական նյարդային համակարգության առանձին տեղամասերի գործունեության խանգարման հետևանքով արտասանության բնագավառում առաջանում են շափաղանց ծանր հետևանքներ և այս դեպքում, իհարկե, ոչ միայն խոսք լինել չի կարող հեևաորի, դերասանի մասնագիտությամբ դրազվելու մասին, այլև համադատասխան բուժման միջոցով տվյալ անձնավորությունը պետք է հասնի այն բանին, որ շրջապատը գոնե կարողանա քիչ թե շատ հասկանալ նրա սովորական կենցաղային խոսակցությունը:

Խոսքի թերությունները վերացնելու, լավ, պարզ ու հստակ արտասանություն ձևեր բերելու համար առաջին հերթին պետք է ունենալ հնազանդ, Լեթարիվող խոսքի ասյարատ: Առանձին ձայնավորների ու բաղաձայնների արտասանական թերությունները վերացնելու աշխատանքին կարելի է անդնել միայն խոսքի ապարատին լավ տիրապետելուց և նրա առանձին մասերի՝ շրթունքների, լեզվի, ծնոտների, ձայնալարերի ֆունկցիաները գիտակցելուց հետո:

Այդ ամենը վերաբերում է խոսքի տեխնիկայի կուրսի հիմնական բաժիններից մեկին՝ առողջանությունը, որին կանդաղադանանք հետազայում, իսկ առայժմ ծանոթանանք խոսքի ապարատի կարևոր մասի՝ կոկորդի հետ:

Ձայնահնչումն առաջանում է այն պահին, երբ օդը թոքերից, շնչափողի միջոցով, մտնում է կոկորդը, շարժման մեջ է դնում ձայնալարերը, որոնք իրարից հեռանալով ու մոտենալով, թրթռում են և ստացվում է սկզբնական բավական թույլ հնչող ձայն, որը հետո ձայնադարձիկների միջոցով զգալի շափով ուժեղանում է:

Կոկորդը մի եռանկյունաձև տուփ է, որը բաղկացած է կրծքիկներից ու մկաններից: Կոկորդի մեջ գտնվում են մեկ զույգ ձայնալարեր: Պարանոցի առջևի մասում գտնվող և շատ հեշտությամբ շոշափվող ադամախնձորը կազմում է կոկորդի առջևի մասը և կոչվում է վաճաճան կոճիկ:

Կոկորդի ետևի պատը, ինչպես և կողքերի ու առջևի պատերը կազմում են այսպես կոչվող օղաձև կամ մատանիաձև կոճիկը:

Կոկորդի հիմքն է կազմում կոճկաօղակը, որը թաղանթակապով միացած է շնչափողի վերին օղակի հետ:

Կոկորդի երրորդ մասն է կազմում կոկորդախուփը, որը լրացնում է կոկորդի առջևի պատը:

Կոկորդի ետևի պատը՝ օղաձև կամ մատանիաձև կոճիկի մեծ մասը լրացվում է ևս երկու կոճիկներով, որոնք սիմետրիկ կերպով գասավորված են նրա միջին մասում և կոչվում են շեռեփաձև կրծքիկներ: Նրանք շափազանց շարժուն են և ղեկավարում են ձայնալարերի իրար մոտենալու և հեռանալու պրոցեսները:

Ձայնալարերը գտնվում են կոկորդում և սկսվում են վահանաձև կոճիկի, այսինքն՝ ադամախնձորի ներսի առջևի մասից (եռանկյունաձայրից), տարածվում են դեպի ետևի պատը և ամրացված են շերեփաձև կոճիկի ներսի ծայրին: Երկու ձայնալարերի միջև գոյացած ճեղքը կոչվում է ձայնանեղէ:

Երբ շերեփաձև կոճիկները մկանների կծկման շնորհիվ պուլսվում են իրենց առանցքի շուրջը՝ դեպի դուրս, ապա նրանց ներսի ծայրին ամրացած ձայնալարերը իրարից հեռանում են, ձայնաճեղքը լայնանում է և ընդունում եռանկյան ձև: Վերջինս տեղի է ունենում այն դեպքում, երբ մարդ հանգիստ շնչում է և օդն ազատ կերպով անցնում է բացված ձայնաճեղքի միջով: Իսկ երբ արտաշնչման ժամանակ շերեփաձև կոճիկները շրջվում են դեպի ներս, ձայնալարերը դրա հետևանքով ընդհուպ մոտենալով իրար, արտաշնչվող օդի հանդեպ պատնեշ են գոյացնում: Օդը ճեղքելով իրար մոտեցած ձայնալարերը, նրանց շարժման մեջ է դնում, որից և առաջանում է ձայն: Սակայն չպետք է կարծել, թե միայն ձայնալարերի թրթռումից է, որ ձայնը հնչում է: Ձայնալարերի թրթռալու պահին, ինչպես վերևում նշեցինք, ստացվում է շափազանց

թույլ հնչյուն: Այդ հնչյունն ուժեղանում է ձայնադարձիկներում, որոնք գտնվում են կոկորդից վերև ու ներքև:

Ձայնադարձիկներն են՝ կրծքավանդակը, քիմքը, քթախորշը, ատամները, դեմքի ոսկերտափքը և ճակատախորշը:

Այսպիսով, ձայնի ուժը կախված է ոչ միայն արտաշնչվող օդի հնչումից, այլև օդի՝ դեպի ձայնադարձիկները ճիշտ ուղղութիւն տալուց, ինչպես նաև ձայնական ապարատի նորմալ դիրքից ու նրա մասերի բարենպաստ համագործակցութիւնից: Մի խոսքով, պահանջվում է, որպեսզի առողջ դրութիւն մեջ գտնվեն թոքերը, քթախորշը, կոկորդը, ձայնալարերը և տեղի շունենա որևէ օրգանական ձեւափոխութիւն:

Հետտրական արվեստի և բեմական խոսքի համար ձայնը խոշոր նշանակութիւն ունի: Ձայնադրման, ձայնի առողջապահութիւն (հիգիենայի) և հարակից հարցերին կանդադառնանք հետագայում: Իսկ հիմա, նկատի ունենալով, որ շնչառութիւնը անմիջական կապ ունի ձայնական ապարատի և արտասանութիւն հետ, կանգ առնենք շնչառութիւն օրգանների վրա:

Շնչառութիւն հիմնական ապարատը բոլորն են, որոնք հերմետիկ կերպով ամփոփված են կրծքավանդակում: Թոքերի գործունեութիւնը կարգավորվում է գանգի մեջ գետեղված երկարած ուղեղում գտնվող «շնչառութիւն կենտրոնի» կողմից:

Թոքերը, բացառութեամբ սիրտն զրադեցնող մասի, գրավում են համարյա ամբողջ կրծքավանդակը և իրենցից ներկայացնում են սպունգանման, կոնաձև մի օրգան: Թոքերը բաղկացած են միլիոնավոր թոքային բշտիկներից (ալվեոլներից), որոնք օդից ներծծում են օրգանիզմի համար անհրաժեշտ թթվածինը:

Շնչափողի ներքևի մասից թոքերի մեջ են ճյուղավորվում բրոնխները, նախ, բաժանվելով երկու հիմնական՝ աջ և ձախ տանող բրոնխների, իսկ հետո, յուրաքանչյուրն իր հերթին, ստանում է բազմաթիվ ճյուղավորումներ, ընդհուպ մինչև թոքային բշտիկները:

Թոքերի մեջ տարածված է նաև թոքային զարկերակների ու երակների ցանցը, որի դերը գազերի փոխանակումը և թոքային հյուսվածքի սնումն է:

Թոքերը արտաքինից պատված են թաղանթով, որը կոչվում է պլերա (լանջաթաղանթ):

Կրծքավանդակը, որի մեջ ամփոփված են թոքերը, բաղկացած է 12 զույգ կողերից, որոնք ետևի կողմից շարժուն հոդերի միջոցով միացած են ողնաշարին, իսկ առջևից՝ կոճիկների միջոցով՝ կրծոսկրին (բացառութեամբ ներքևի 5 զույգից):

Ներքևի մասում թոքերը հենվում են ստոծանուն (դիաֆրագմային), որը մկանային մի միջնորմ է և որովայնախոռոչը բաժանում է կրծքախոռոչից:

Կողերի միջև գտնվում են միջկողային մկանները, որոնք մասնակցում են կրծքավանդակի լայնացմանը:

Շնչառութիւն բնական ընթացքը բաղկացած է երեք փուլից. դրանք են. 1) ներշնչումը, որի շնորհիվ արյունը թթվածին է ստանում, 2) արտաշնչումը, որի ժամանակ թոքերից դուրս են նետվում գազերը և օրգանիզմի համար ոչ պիտանի ու վնասակար նյութերը և 3) դադարը՝ ներշնչումից առաջ:

ՍՏՈԾԱՆՈՒ ԴԵՐՆ ՈՒ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ստոծանին, ինչպես արդեն վերը նշվեց, մի մկան է, որը կրծքախոռոչը բաժանում է որովայնախոռոչից: Հանգիստ վիճակում նա ունի անհավասար, գմբեթային ձև և, ինչպես յուրաքանչյուր մկան, ունի սեղմվելու կամ կծկվելու հատկութիւն: Թոքերի նկատմամբ ստոծանին հատակի կամ հենարանի դեր է կատարում, ըստ որում այդ հատակը շնորհիվ կծկումների, լինելով առաձգական, փոխում է նաև թոքերի ծավալը: Դա տեղի է ունենում այն պատճառով, որ ներշնչման ժամանակ ստոծանին կծկվում է, իջնում ցած, տափականտում և դրանով տեղ բացում թոքերի ստորին մասի համար, Թոքերն իրենց առաձգականութիւն և օդով լցված լինելու շնորհիվ է, որ գրավում են ստոծանու կծկման հետևանքով ազատված տարածութիւնը:

Քանի որ թոքերը կոնաձև են և թոքային բշտիկներն առավելապես գտնվում են թոքերի ստորին մասում, ապա ստոծանու կծկման ժամանակ թոքերի ստորին մասի բազմաթիվ բշտիկները լրցվում են օդով, հարկ եղած դեպքում օգտագործելու համար ստեղծելով օդի պաշար:

Եթե շնչելիս մարդ չի օգտվում ստոծանուց, ապա շնչառութիւնը շատ մակերեսային է լինում: Դա այսպես կոչվող ուսային կամ անրակային շնչառութիւնն է, որը պահանջում է թոքերում օդի պաշարի հաճախակի լրացում, այսինքն՝ հաճախակի ներշնչում, ըստ որում ծախսվում է ավելի շատ էներգիա և ստացվում առողջութիւն համար քիչ օգուտ, քանի որ թոքերի ներքևի մասը, որն ավելի հարուստ է թոքային բշտիկներով, մնում է անօգտագործելի:

Ստոծանու ակտիվ մասնակցութեամբ խոր ներշնչումը մարդու համար նորմալ շնչառութիւն պահանջ է, և ստոծանային շնչառութիւն տեք մարդիկ ~~բացառութեամբ են սնունդը խոր շնչառութիւնն ամ-~~

բացնում է ստոծանին և նման շնչառությունը հետզհետե դառնում է ավտոմատիկ: Այդ տեսակետից անցյալում կանանց համար շատ վնասակար է եղել կորսետ կրելը, իսկ ներկայումս՝ զանազան լայն ու նեղ գոտիներով մարմինը սեղմելը, որի հետևանքով խոր ստոծանային շնչառությունը հետզհետե դառնում է մակերեսային. թույլ և անառողջ: Նստակյաց կյանք վարողները, որոնք կուսցած են աշխատում, նույնպես շնչում են թոքերի վերին մասով, որի հետևանքով թուլանում է օրգանիզմը: Նման անկանոն շնչառությունը միշտ էլ կարելի է շտկել և դարձնել կանոնավոր, բնական, այսինքն՝ խոր ստոծանային:

## ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ

### ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՏՆՍԱԿՆԵՐԸ

Հոևտորական արվեստի և երգեցողության մեջ կիրառվող շրնչառության տեսակները հետևյալներն են.

1. անրակային կամ ուսային,
2. կրծքային,
3. կողային և
4. ստոծանային<sup>1</sup>:

Այս կամ այն տեսակի շնչառությունը կախված է այն բանից, թե շնչառական ապարատի ո՞ր մկաններն են գործում:

Անրակային կամ ուսային շնչառության ժամանակ գործում են զլխավորապես ուսի մկանները, որոնք, ուսը բարձրացնելով, վերին լայնացնում են կրծքավանդակը և դրա հեռանքով շնչառությունը կատարվում է թոքերի վերին մասով:

Կրծքային շնչառության ժամանակ գործում են կրծքավանդակի վերին և միջին մասերը լայնացնող մկանները:

Չուտ կողային շնչառություն ինքնին գոյություն չունի, որովհետև օդ ներշնչելիս կողերի հետ մեկտեղ լայնանում է կրծքավանդակը և այդ ընթացքում գործում է ստոծանին: Դրանով իսկ կողային շնչառությունը մոտենում է ստոծանային շնչառությանը, մինչդեռ ուսային և կրծքային շնչառության ժամանակ ստոծանին գրեթե հանգիստ վիճակի մեջ է:

Ստոծանային շնչառությունը կատարվում է ստոծանու կծկումով և ներշնչած օդը ստոծանուն դեպի ներքև ճնշելով, միաժամա-

<sup>1</sup> E. Саричева, «Техника сценической речи», Москва, 1939 г., стр. 78

նակ փորի պատերը մի փոքր ուռցնում է դեպի դուրս, ուստի այդ տիպի շնչառութիւնը կոչվում է նաև փորային կամ որովայնային:

Շնչառութիւնն նշված ձևերից յուրաքանչյուրն ունենալով որոշ դրական կողմեր, միաժամանակ ունի նաև խոշոր թերութիւններ: Օրինակ՝ անրակային կամ ուային շնչառութիւնը կիրառվում է միայն հատուկ նպատակով՝ մարզանքի ժամանակ, օդափոխելու համար թոքերի վերին մասերը, որոնք թոքախտի հետևանքով կարող են թուլացած և վատառողջ լինել: Ուային շնչառութիւնը ձայնադրման համար բոլորովին կիրառելի չէ: Այդպիսի շնչառութիւնը պիտանի չէ թե հոստորի և թե կրգչի համար: Ուաների ակամայից բարձրացումը, օդի կարճ ներշնչումը, թոքերի միայն վերին, շնչին մասը օդով լցվելը այդպիսի շնչառութիւնը դարձնում են հոգնեցուցիչ, ունկնդրի ու հանդիսականի համար տհաճ և ձայնադրման համար վնասակար:

Կրծքային շնչառութիւնն ժամանակ գործում են գլխավորապես կրծքավանդակի վերին և միջին մասերը. շնչառութիւնն այս ձևն ունի այն առավելութիւնը, որ կրծքավանդակը ամբողջովին օգտագործվում է, որը հանդիսանալով ձայնադարձիկ, մեծապես նպաստում է ձայնի ուժեղացմանը: Բայց քանի որ թոքերի ստորին մասերը իրենց բաղմամբով թոքային ընդհանրում չեն մասնակցում կրծքային շնչառութիւնը և կրծքավանդակի մշտական բարձրանալն ու իջնելը չափազանց հոգնեցնում ու ծանրացնում է շնչառութիւնը, գրանով իսկ խանգարելով ձայնական ապարատի բնական օգտագործմանը, կրծքային շնչառութիւնը յուրահատուկ դրական կողմերը նվազում են և նրա օգտագործումը հստակապես ու բեմական արվեստում դառնում է սահմանափակ:

Կողային և ստոծանային շնչառութիւնները, բնական և առողջ շնչառութիւնն տեսակետից, ավելի են համապատասխանում հոստորի առջև դրված տեխնիկական խնդիրներին: Շնորհիվ բնական շարժումների, շնչառական ապարատը, ստոծանային շնչառութիւնն ժամանակ շուտ չի հոգնում, արտաքնապես աչքի զարնող երևույթները՝ ուաների կամ կրծքավանդակի բարձրացումը և իջեցումը բացակայում են, իսկ ձայնական ապարատը դառնում է նորմալ, բնական վիճակում:

Կրծքավանդակը, որպես ձայնադարձիկ, մաքուր ստոծանային շնչառութիւնն ժամանակ չի օգտագործվում: Սա այդպիսի շնչառութիւնն բացասական կողմերից մեկն է:

Այս բոլորից հետևում է, որ անհրաժեշտ է գտնել շնչառութիւնն այնպիսի ձև, որը համապատասխանի շնչառութիւնն զանազան ձևերի դրական կողմերի պահանջներին: Այդպիսի շնչառութիւնը պետք է լինի բնական, հանգիստ, խոր, աննկատ և համաշափ: Անհրաժեշտութիւնն դեպքում (բայց ոչ միշտ) թոքերը, ջանքերի նվազագույն գործադրմամբ, պետք է օդով լցվեն առավելագույն չափով: Շնչառութիւնն այդպիսի մի ձև է խառը-ստոծանայինը, որը կողային շնչառութիւնն հետ միասին ձայնադրման հիմք է հանդիսանում:

Ստոծանային շնչառութիւնն ժամանակ ներշնչման ընթացքը ստոծանու կծկումով չի ավարտվում: Այնուհետև տեղի է ունենում կրծքավանդակի թեթևակի լայնացում՝ թոքերի միջին մասը լրացվում է օդով: Այսպիսով, կրծքավանդակը օդի պաշարով լայնացնելով, մենք ազատվում ենք այն մեխանիկորեն՝ մկանների օգնութիւնը բարձրացնելուց:

Այս երկու համակցված գործողութիւնները հանդիսանում են շնչառութիւնն խառը-ստոծանային ձևի զարգացման երկրորդ նախապատրաստական քայլը:

Կծկելով ստոծանին, թեթևակի լայնացնելով կրծքավանդակը, մենք այդ ամբացնում ենք փորի ստորին պատերի ձգումով: Իսկ արվում է ստոծանին փորի մկաններով կծկված վիճակում պահելու և արտաշնչումը կարգավորելու համար: Այդ հանգամանքը ձայնահնչման ժամանակ բացառիկ նշանակութիւնն ունի, քանի որ ստոծանու այդպիսի կայուն դրութիւնը խոսելու և երգելու ժամանակ դառնում է ձայնի հենարան: Երգելու և խոսելու ժամանակ կարևորը արտաշնչման պահն է. ուստի խառը-ստոծանային շնչառութիւնն ժամանակ ներշնչելով օդ, մենք մի վայրկյան շնչառութիւնը պահում ենք, որպեսզի հետո հետզհետե համաշափ արտաշնչենք: Արտաշնչումը պետք է կատարվի դանդաղ, համաշափ, որպեսզի ձայնահնչման ժամանակ դառնա հստակ, դիրասանի կամ երգչի հլու գործիքը:

Օդի ներշնչմամբ մենք ոչ միայն օդի պաշար ենք մատակարարում թոքերին, այլև վարժեցնում և զարգացնում ենք շնչառութիւնն մկանների գիմնացկունութիւնը, ճկունութիւնն ու առաձգականութիւնը:

Եթե ոչ գիտակցական, այսինքն՝ սովորական, բնական շնչառութիւնը կատարվում է հետևյալ հաջորդականութիւնը՝ ներշնչում—արտաշնչում—դադար, ապա գիտակցական շնչառութիւնն

Հաշորդականությունը փոխվում է հետևյալ ձևով՝ ներշնչում—գա-  
գար (կասեցում)—արտաշնչում:

Վարժությունների միջոցով զարգացնելով գիտակցական խա-  
ռը-ստոծանային շնչառությունը, մենք խոսելիս և երգելիս մեծ  
հմտությամբ կտիրապետենք ձայնահնչմանը:

### ՇՆՇԱՌՈՒԹՅԱՆ ՄԱՐՋԱՆԵ ԵՎ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հնդկաստանում, դեռ վաղ ժամանակներից սկսած, շնչառու-  
թյան մարզանքը կիրառվում էր որպես բուժիչ միջոց: Հնդիկ յոգի-  
բը մշակել էին շնչառության մի սիստեմ, որի միջոցով բուժում  
էին շատ հիվանդություններ, ամրացնում օրգանիզմը, նյարդային  
համակարգությունը և զարգացնում մտավոր ու հոգեկան կարողու-  
թյունները: Վերջին ժամանակներս սովետական գրականության մեջ  
լուսարանվում են «նաթխա յոգա»-ի ուսմանը՝ ընդհանուր մարմ-  
նամարզությանը և շնչառությանը վերաբերող մասերը<sup>1</sup>:

Սկզբնական շրջանում պետք է զարգացնել սիթմիկ շնչառու-  
թյունը: Դա հեշտությամբ կարելի է նաև համաշափ քայլելու ժա-  
մանակ, այսինքն՝ 4 քայլի ընթացքում շնչել, 4 քայլում՝ ներշնչած  
• դը պահել թոքերում և 4 քայլում՝ արտաշնչել: Թոքերը վարժեց-  
նելուց ու բավականաչափ ամրացնելուց հետո կարելի է քայլերի  
թիվը քիչ-քիչ ավելացնել՝ 5—5—5, մի քանի շաբաթից հետո՝  
6—6—6 և այլն:

Սիթմիկ շնչառություն զարգացնելուց հետո պետք է թոքերը  
վարժեցնել երկար սրտաշնչման: Այդ նպատակով, քայլելիս պետք  
է 2 քայլ լիաթոք ներշնչել, 1 քայլ դադարից հետո՝ 6—8 քայլի ըն-  
թացքում համաշափ արտաշնչել: Հետզհետե արտաշնչման տևողու-  
թյունը, նայած թոքերի ծավալին և առողջության վիճակին, կարելի  
է երկարացնել:

Վարժության ժամանակ թոքերը երբեք չպետք է լրիվ չափով  
լցնել օդով և ոչ էլ ամբողջ օդը արտաշնչել: Թոքերում միշտ պետք  
է օջի պաշար մնալ:

Այն անձանց, որոնց թոքերը կամ սիրտը հիվանդ է, չի հանձ-  
նարարվում ներշնչելուց հետո օդը թոքերում երկար պահել, որով-  
հետև նրանք այդպիսով կարող են վնաս հասցնել իրենց առողջու-  
թյանը: Օդը թոքերում պահելու և սպա արտաշնչելու տևողությունը  
նրանք պետք է դադարի չափով կրճատեն:

Երգելու և խոսելու ժամանակ բոլոր գեպքերում չէ, որ պա-

հանջվում է լրիվ ներշնչում: Խոսելուց կամ երգելուց առաջ կատարե-  
լով համեմատաբար լրիվ ներշնչում, մենք կարող ենք հետո լրաց-  
նել այն, նախադասության կամ երգի համապատասխան տեղերում՝  
կատարելով օդի շատ կարճ ու արագ ներշնչում:

Լրացուցիչ ներշնչման ժամանակ կրճալանդակը մնում է մի  
փոքր լայնացած, իսկ փոքի սլատերը՝ մի փոքր ձգված:

Հոստորի շնչառության մարզանքի իդեալական տևողությունն  
է՝ 3—1—30, այսինքն՝ 3 վայրկյան ներշնչում, 1 վայրկյան դադար  
և 30 վայրկյան համաշափ արտաշնչում:

Արտաշնչում կարելի է կատարել Փ, ս, շ կամ այլ բաղաձայն  
հնչյունով:

### ՇՆՇԱՌՈՒԹՅԱՆ ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սովորաբար, վարժությունները պետք է սկսել փոքր հատված-  
ներից: Շնչառության տեքստային վարժությունների ամենագործ-  
նական տեսակը իմացած ոտանավորը, կամ արձակ տեքստը ոչ  
շատ դանդաղ և ոչ էլ արագ, մի շնչով արտասանելն է: Շնչառու-  
թյան տեքստային վարժություն կատարելիս քերականական նշան-  
ները՝ ստորակետը, միջակետը, վերջակետը, պետք է պահպանվեն  
շատ աննշան շափերով, քանի որ վարժության նպատակն է շնչա-  
ռության զարգացումը և ոչ թե գեղարվեստական ընթերցումը, որի  
վրա հետագայում կանգ կառնենք շատ մանրամասն:

Վարժության օրինակներ.

1. Մագում է մանուկ արևը գարնան  
կովկաս լեռների ձյունի պատնեղից.  
Ձարթնում են մեկ մեկ սարերն աննման  
Ձմռան անվրդով քնի մշուշից:

(Շունչ)

Ահա կալվարի վիթխարի ուսին  
Բազմում է արփին թարմացած ուժով,  
Մարեր ու ձորեր իրար երեսին  
Նայում են, ժպտում ամպի մշուշով...

Կալ վարժվելուց հետո հետզհետե կարելի է ութնյակն ար-  
տասանել մեկ շնչով:

2. Աբու-Կալա Մահարին,  
Հուլակավոր բանաստեղծը Բաղդադի,  
Տասնյակ տարիներ ապրեց  
Խալիֆաների հոյակապ քաղաքում,

<sup>1</sup> Журнал «Знание — сила», 1959 г., № 3, стр 14—17.

Ապրեց փառքի և վայելքի մեջ,  
Հղորների և մեծատունների հետ սեղան նստեց,  
Գիտունների և իմաստունների հետ վեճի մտավ,  
Սիրեց և փորձեց ընկերներին,  
Եղավ ուրիշ-ուրիշ աղգների հայրենիքներում,  
Տեսավ և դիտեց մարդկանց և օրենքները:  
Եվ նրա խորաթափանց ոգին ճանաչեց մարդուն,  
Ճանաչեց և խորագին ատեց մարդուն  
Եվ նրա օրենքները:

Ձ. Զայրույթն երգիր, աստվածուհի, Պելիսածին Աքիլլեսի,  
Զայրույթն ահեղ, որ արայանց մատնեց անթիվ աղետների  
Եվ փառապանծ շատ քաջերի հոգիները դժոխք նետեց,  
Իսկ մարմինները կեր դարձրեց թռչունների ու շների:  
(Շունչ)

Զեսի կամքով դա կատարվեց, սկսվելով ա՛յն օրվանից,  
Երբ շարաղետ թշնամանքով պառակավեցին զարհուրելի  
Ագամեմնոն արանց արքան և Աքիլլեսն աստվածադարմ:

Եթե հոետորը կամ դերասանը կարողանա Հոմերոսի «Ելիա-  
կանի» այս 7 տողը արտասանել մի շնչով, ապա նրա համար,  
շնչառության տեսակետից, այլևս ոչ մի տեքստ դժվարություն չի  
ներկայացնի:

## ԱՌՈԳԱՆՈՒԹՅՈՒՆ (ԴԻԿՑԻԱ)

Հոետորի, դերասանի, մանկավարժի, ասմունքողի և հաղոր-  
դավարի մեծագույն արժանիքը, առաջին հերթին, նրանց արտա-  
սանությունն պարզությունն ու հստակությունն է, որն ամենից առաջ  
կախված է խոսքի ապարաաի նորմալ, առողջ վիճակից և ճիշտ  
գործունեությունից:

Լավ հոետոր, դերասան լինելու համար պետք է ունենալ հնա-  
դանդ և ենթարկվող խոսքի ապարատ: Քաղաքական-հասարակա-  
կան և բեմական ստպարեզը հոետորին և դերասանին առոգանու-  
թյան բնագավառում մեծ պահանջներ է առաջադրում:

Դերասանի համար պարզ առողջանության և հստակ արտասա-  
նության մշակումը հատկապես անհրաժեշտ է ներկայացման մառ-  
սայական տեսարանների, Երաժշտական ֆոնի վրա խոսելու, ձայ-  
նական աղմուկները (կրակոցներ, ձիու դոփշուն, անձրև, կարկուտ,  
ավտոմոբիլի ազդանշան, շոգեքարշի սուլոց, ամպի գոռոց և այլն)  
հազթահարելու համար: Մշուկով խոսելու և հոգեբանական տե-  
քստերի նրբությունները վարպետորեն հաղորդելու համար լավ  
առոգանությունը հույժ անհրաժեշտություն է: )

Քաղաքական հոետորների՝ մեկնաբանների, պրոպագանդիստ-  
ների, ագիտատորների առոգանությունը լայն մասսաներին հաս-  
կանալի լինելուց բացի, կապված է նաև մեծ գահլիճների, բացօթյա  
ժողովների ու միտինգների անհարմարությունների հետ, որտեղ  
պահանջվում է լավ առոգանություն և հնչեղ ձայն: ) Նույնը վերա-  
բերում է նաև դատական հոետորներին՝ դատախազներին և դատա-  
պալատականներին, որոնք մասնակցում են մեծ հետաքրքրություն  
առաջացնող խոշոր, ցուցադրական դատերին:

ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐ

Լավ առողջանության՝ բառերի արտաբերման պարզության, մաքրության, ճշտության ու հստակության հիմնական պայմաններից մեկը ձայնավորների ճիշտ արտասանությունն է:

Խոսքի մեջ ձայնավորներն ստեղծում են խոսքի ներդաշնակություն և նպաստում նրա հնչեղությունը:

Հայերենում մենք ունենք վեց ձայնավոր՝ ա, է, բ, ի, օ, ու, որոնք գրվում են ութ տառով, քանի որ է ձայնավորը բառասկզբին գրվում է է, իսկ բառամիջում՝ և տառով, իսկ օ ձայնավորը բառասկզբին գրվում է օ, իսկ բառամիջում՝ ո տառով:

Օրինակ՝ էջ, էակ, էգ, էություն, էլեկտրական,

բեր, ծեր, բեկանեղ, գրեթե, զեկուցել, մեղեդի և այլն:

օր, օգ, օգնել, օթյակ, օղաչու, օժիտ, օպերա,

բոլոր, նոր, հով, նորոգել, մորմոր և այլն:

Նշված ձայնավորներից բացի, կան նաև երկհնչյուններ, որոնք կազմվում են ձայնավորների սկզբից և վերջից յ կիսաձայնի ավելացումով՝ յա, յե, յո, յու, այ, ոյ, ույ:

Երկհնչյուններում յ հնչյունը ձայնավորին տալիս է փափկություն՝ ա—յա, է—յե (ե), օ—յո, ու—յու:

Ձայնավորների և երկհնչյունների արտաբերման ճշտությունը գլխավորապես հետևանք է խոսքի ապարատի ճիշտ դիրքի: Եթե ու ձայնավորի արտաբերման ժամանակ շրթունքները ձագարած հավաքվում են դեպի առաջ, ապա ա ձայնավորի արտաբերման ժամանակ բերանը բացվում է ավելի շատ, ի ձայնավորն արտաբերելիս բերանը կիսաբաց է և այլն:

Պետք է աշխատել ձայնավորներն արտաբերել հավաքված և խուսափել բաց, գոեհիկ հնչյունից:

ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐ

Հայերենում ունենք 29 բաղաձայն հնչյուն:

Ըստ արտաբերման տեղի նրանք բաժանվում են հետևյալ տեսակների:

1. շրթնային պայթական՝ բ, պ, փ,
2. առաջնալեզվային պայթական՝ դ, տ, թ,
3. շրթնա-ատամնային՝ վ, ֆ,
4. ետնալեզվային՝ գ, կ, թ, ղ, խ,
5. առաջնալեզվային շփական՝ ս, զ, ժ, շ,
6. ուղղային՝ մ, ն,

7. կոկորդային (հագագային)՝ հ:

Ըստ որակի լինում են.

ա) ձայնեղ՝ բ, գ, դ, զ, ժ, լ, ձ, ղ, մ, յ, ն, ջ, ու, վ, ր—արտաբերման ժամանակ ձայնալարերը թրթռում են:

բ) խուլ՝ պ, կ, տ, ս, շ, ծ, ճ, ֆ, հ, խ—ձայնալարերը չեն մասնակցում, այլ ձայնական ապարատի որոշ մասերը շփվելով արտաշնչվող օդի հետ, տալիս են այդ հնչյունները:

գ) շնչեղ խուլ՝ փ, թ, թ, ց, շ-ն խուլ լինելով, իրենց հետ ունեն նաև մի շունչ՝ «հ»:

Այս ստորաբաժանումից երևում է, որ բաղաձայնների արտաբերման ժամանակ պետք է հաղթահարել որոշ արգելք, և որ արտաբերումը պահանջում է ավելի ակտիվություն: Օրինակ՝ բ, պ, փ հնչյուններն արտաբերելիս հպված շրթունքները թոքերից եկող օդի ճնշման տակ պայթելով, բացվում են:

Դ, տ, ք հնչյուններն ստացվում են, երբ լեզվի ծայրը հպվում է վերին ատամնաշարի արմատներին ու քիմքին և թոքերից եկող օդի ճնշման տակ պայթում են:

Վ, ֆ հնչյուններն ստացվում են, երբ ներքևի շրթունքը մոտեցնում ենք վերևի ատամնաշարին և թոքերից արտամղվող օդը այդ արգելքի միջով դուրս է գալիս:

Ղ, ր, ռ հնչյուններն ստացվում են, երբ լեզվի ծայրը տարբեր նրբություններով կա՛մ հպվում է վերևի առջևի ատամնաշարին, կա՛մ բարձրանում է դեպի առաջաքիմքը՝ առանց հպվելու, կա՛մ էլ թրթռում է ավելի ուժեղ:

Ետնալեզվային՝ գ, կ, ք, ղ, խ հնչյուններն ստացվում են, երբ լեզվի ետևի մասը կա՛մ հպվում է վերջաքիմքին և օդի ճնշման տակ պոկվում քիմքից, կա՛մ էլ մոտենալով վերջաքիմքին, չի հըպվում և, օդը շփվելով կոկորդի վերին մասերի հետ, առաջացնում է խ, ղ հնչյունները:

Բնագային՝ մ, ն հնչյունների առանձնահատկությունն այն է, որ թոքերից եկող օդը մտնում է քթի խոռոչը և դուրս գալիս այնտեղից:

Մենք ունենք հայոց լեզվին առանձնահատուկ բաղաձայններ՝ ծ, ձ, ն, ջ, փ, թ, ք, ֆ, ղ, որոնց արտաբերումը բավական դժվար է և չուրացվում է մանկուց:

Բաղաձայնների ճիշտ արտաբերումն ամրապնդելու համար անպայման պիտի կատարել ձայնավորների արտաբերման վարժություններ հետևյալ հաջորդականությամբ: Օրինակ.

1 Արարատ Ղարիբյան, «Հայոց լեզու», 1960 թ., էջ 41:

1. Բա, բե, բի, բո, բու, բը—բյա, բյե, բյի, բյո, բյու  
պա, պե, պի, պո, պու, պը—պյա, պյե, պյի, պյո, պյու  
փա, փե, փի, փո, փու, փը—փյա, փյե, փյի, փյո, փյու
2. Բա—պպա, բե—պպե, բի—պպի, բո—պպո, բու—պպու,  
բը—պպը  
պա—բբա, պե—բբե, պի—բբի, պո—բբո, պու—բբու, պը—  
բբը, փա—պպա, փե—պպե, փի—պպի, փո—պպո, փու—  
պպու, փը—պպը:

Կրկնակ բբ, պպ հնչյունները պետք է և՛ շեշտել, և՛ ձուլել որպես մեկ երկարացված հնչյուն:

Նույնպիսի վաթուկները պետք է կատարել

- դ, տ, թ...
- գ, կ, ք...
- ձ, ծ, ց...
- ճ, ջ, շ...
- լ, ո, բ...
- մ, ն...
- վ, ֆ...
- ղ, խ...
- ս, զ...
- շ, ժ... հնչյուններն արտաբերելու:

**ՇՈՒՏԱՍԵԼՈՒԿՆԵՐ**

Շուտասելուկների միջոցով հետապնդվում է երկու նպատակ. ա) ճշտել և ամրապնդել բաղաձայնների արտաբերումը, բ) տիրապետել տեմպի դանդաղ, միջին, արագ և շատ արագ ձևերին:

Հաճախ դանդաղ խոսելը ավելի դժվար է, քան արագախոսությունը, որն ընդհանուր առմամբ բացասական երևույթ է: Արագախոսությունը, նախ, ազդում է տեքստի պարզության, հասկանալի ու լսելի լինելու վրա: Բացի դրանից, մեծ դահլիճներում արագախոսության հետևանքով բառերը չեն հասկացվում և ստացվում է խուլ աղմուկ:

Այնուամենայնիվ, շատ դեպքերում արագախոսությունն անհրաժեշտ է, ինչպես, օրինակ՝ կատակերգություններում, արտակարգ և հուզական դեպքեր հաղորդելու ժամանակ կամ քաղաքական ու դատական ճառերի որոշ պահերին, երբ արագախոսությամբ հաղորդվող մտքերին տրվում է հուզականություն և այլն:

Հոնտորը, դերասանը պետք է կարողանան ազատ ու վարժ խոսել լրոր տեմպերով: Արագախոսության կարելի է հասնել նյութի մանրամասն մշակմամբ, դժվարությունների համառ հաղթահարմամբ, դանդաղ տեմպի հետզհետե արագացմամբ: Արագախոսության հիմնական նպատակը պետք է լինի առաջնության հստակությունը:

- Շուտասելուկների օրինակներ.
1. Փոկակապ Հակոբ՝ ապի, ինձ համար մի փոկ կապի, քեզ սսեմ փոկակապ Հակոբ՝ ապի:
  2. Մեր տանը կա կարմիր պարկ, կարմիր պարկին կարմիր կտպ, ձեր տանն էլ կա՝ կարմիր պարկ, կարմիր պարկին կարմիր կապ:
  3. Ծեր Ծատուրենց տանձի ծառին տասը ծանր տանձ կա ծալրին:
  4. Ուլը ելավ ուռի ծառը, ուլ տեղովը ուռ ոլորեց, ուռ վեր բերեց:
  5. Ծիտը ճմրան ծերին, ծտի ճուտի ճիտը ծուռ:
  6. Մի ջուխտ շարուի դրին ջուրը, թրջավ թող թրջի, շթրջավ թող շթրջի:
  7. Պատուհանի բաց փեղկը փակի՛ր, փակ փեղկը բա՛ց:
  8. Շուշիկը Շուշիկին շուտասելուկ շշնչաց:

**ՏԵՄՊ**

Շուտասելուկները չափազանց նպաստում են տարբեր տեմպերով խոսելուն: Նայած տեքստի բովանդակությանը, խոսքի տեմպը կարող է լինել.

- ա) դանդաղ՝ ծանր, պաշտոնական-հանդիսավոր (ծանր հիվանդի, զառամյալ մարդու խոսելաձևը, դամբանականը, հանդիսավոր երգումը, խոստումը, դատավճռի ընթերցումը և այլն),
- բ) միջին տեմպ՝ սովորական, հանգիստ խոսք (նկարագրական կամ ինֆորմացիոն հաղորդում, դասախոսություն, բնության նկարագրություն, պաշտոնական գրությունների ընթերցում և այլն),
- գ) արագ տեմպ, որը կարող է լինել հուզմունքի, խուճապի, սազնաստի հետևանք, նկարագրվող դեպքերի սրընթացության արտահայտություն և այլն:

Բացառիկ դեպքերում արագ տեմպը կարող է վերածվել շատ արագ տեմպի: Մեկ տեմպից մյուսին անցնելու համար պետք է շուտասելուկ-

ների վարժությունները կատարել առանձին տեմպերով՝ նախ դանդաղ, ապա միջին և հետո արագ կամ շատ արագ՝ ըստ արագախոսության հնարավորությունների, եթե լեզուն, ինչպես ասում են, «փաթ չի ընկնում»:

Ինչպես դանդաղ, նմանապես և ամենաարագ տեմպով խոսելիս շպետը է մոռացվեն կետադրության նշանները՝ իրենց համապատասխան դադարներով, որոնց վրա մանրամասն կանգ կառնենք հետո:

#### ՎԱՐՇՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Լայն առողանություն ձեռք բերելու համար պետք է լավ տիրապետել խոսքի ազարաահին և բերանի, շրթունքների, լեզվի ու ներքին ծնոտի արտասանական թերությունները հաղթահարել սխտեմատիկ ու համառ մարզանքներով:

Բերանի լավ րացելը՝ առանց լարվածություն, ոչ բե թեք, այլ ուղղահայաց ձևով, կվերացնի չրացված բերանով կամ սեղմած առանների արանքից խոսելու արտաք:

Վերին ոչ ճկուն և խոսելիս ցրեթե անշարժ շրթունքը խոսքը դարձնում է ոչ պարզ, անհասկանալի և հնչման տեսակետից տհաճ:

Վերևի շրթունքը պետք է վարժեցնել հետևյալ ձևով. վերևի շրթունքը բարձրացնել դեպի քթի ծայրը, հանցիստ վիճակում պահելով ներքին շրթունքները և դեմքի մյուս մկանները:

Ներքևի շրթունքի վարժեցման ժամանակ այն պետք է ձգել դեպի ներքև այնքան, որպեսզի ներքին ատամնաշարը Երևա մինչև լինդր վարժության ժամանակ բերանը պետք է կխարաց լինի. ներքին ծնոտն անշարժ:

Վերևի և ներքևի շրթունքների շարժումները կատարել հերթականությամբ և այդ դեպքում միաժամանակ պետք է երևան վերևի և ներքևի ատամները մինչև լնդերը:

Կա շրթունքների վարժության մի այլ ձև. երբ վերևի ատամներով քորում են ներքևի շրթունքը և ներքևի ատամներով՝ վերևի շրթունքը, և կամ շրթունքները միացնում են իրար, կծկում, առաջ ցցում և շարժում նախ աջից դեպի ձախ, հետո ձախից դեպի աջ և հետո ուղորպատույտ:

Կան նաև ներքևի ծնոտի վարժություններ, որոնք, սակայն, պետք է կատարել քիչ և շատ զգույշ, որպեսզի ծնոտը դուրս չընկնի: Ներքևի ծնոտը պետք է սանել առաջ և ապա շարժել աջ և ձախ, հետո դեպի ցած և շրջանաձև:

Լեզվի վարժեցումը կատարվում է բաց բերանով, լեզվի ծայրը հաջորդաբար հպելով վերևի և ներքևի ատամների արմատներին, ապա լեզուն շարժել դեպի աջ ու ձախ և բերանից դուրս հանել:

2. Չայնավորների վարժությունները կատարել առանձին-առանձին և ապա միացած՝ ալիօուր, ձայնը երկարացնելով, խոք շնչառությամբ և հերթականությամբ շեշտելով առանձին ձայնավորները — ա'լիօուր, ալի'օուր, ալի'օուր և այլն:

3. Բաղաձայնների արտաբերման վարժություններին պետք է ավելի շատ ժամանակ նվիրել և հիշել, որ բաղաձայնների ճիշտ ու հստակ արտասանությունը կապված է ուղղախոսության հետ, որը հոետորական արվեստի կարևոր բաժիններից մեկն է և որի վրա շատ ավելի մանրամասն կանգ կառնենք իր տեղում:

4. Յուրաքանչյուր շուտասելուկ պետք է արտասանել՝ առաջին անգամ դանդաղ, հետո միջին արագությամբ, երրորդ անգամ արագ և չորրորդ անգամ շատ արագ, հատուկ ուղղորություն դարձնելով շուտասելուկի մեջ մշակվող այս կամ այն բաղաձայնի մաքուր-բջան, հստակության և բառերի լիահնչունության վրա:

#### ՏԵՄԳԻ ԳՐԱԿԱՆ ՆՄՈՒՇՆԵՐ

##### Դանդաղ տեմպ.

...«Պառավը գրկեց աղբյուրի քարերը, համբուրեց, հետո դառնալով իր շուրջը խմբված մարդկանց, ասաց.

— Նա եկավ, ահա՛ նա... Յոթերորդ աղբյուրն իմ Արամն է: Հետո նայեց խաղաղության աղավունն: Ժպտաց: Տեսավ նրա տակ փորագրված քառերն ու դառնալով ամուսնուն, ասաց.

— Կարդա՛...

Ծերունին կարդաց. «Թող է՛լ ոչ մի ծնող չկորցնի իր որդուն. լինի պատերազմ»: Մանուշակը լսեց ու ժպտաց: Հետո մոռացվեց, որից ժպտաց ու ձեռքը բարձրացնելով, գոչեց.

Թող է՛լ տչ մի ծնող չկորցնի իր որդուն. լինի՛ պատերազմ»:

(Ս. Խանզադյան)

##### Միջին տեմպ.

«Առավոտ էր, Արարատյան դաշտի լուսապայծառ առավոտներից մեկը: Արևի առաջին ճառագայթների ներքո Մասիսի սպիտակափառ գագաթը փայլում էր վարդագույն շողերով, որ աչք էին ընկնում: Արագածի պսակաձև գագաթը չէր երևում: Նա դեռ պա-

տած էր ձյունի պէս ճերմակ մշուշով, որպէս մի ամոթխած հարսիկ, որ սքողում է յուր դեմքը անթափանց շղարշով: Կանաչադարձ դաշտավայրը, ցողված վաղորդյան մարգարիտներով, վառվում էր ծիածանի ամենանուրբ գույներով: Փշում էր մեղմ հովիկը, ծաղիկները ժպտում էին, դալար խոտաբույսերը ծփում ու ծածանվում էին, և դաշտի խաղաղ տարածութիւնը օրորվում էր սքանչելի անկոծութեամբ:

Գեղեցիկ էր այդ առավոտը:

(Բաֆֆի)

Չ Ա Յ Ն

### Արագ տեւոյ.

Մին էլ եկավ, դարձյալ չրկար.  
էս անգամը գիպան իրար.  
էլ անսպասիվ, անկարգ խոսքեր,  
էլ հին ու նոր, էլ հերն ու մեր,  
էլ գող Փիսո, էլ քաշալ Շուն...  
Քանը հասավ դիվանբաշուն:

(Հովհ. Թումանյան)

— Կար ժամանակ մը, ուր խավարը լուսո դեմ կը կովեր. տգիտութիւնը գիտութեան դեմ, անցյալն ապանձիի դեմ, հրամայականը սահմանականին դեմ, սուրը գրիչի դեմ, ատելութիւնը սիրո դեմ, կրակը շուրթին զեմ, միսը բանջարեղենին դեմ. իսկ հիմա անցան այն ժամանակները. անոնք անցյալ են, մենք՝ ապստոնի. անոնք խալար են, մենք՝ լույս, անոնք տգեա են, մենք՝ գիտուն. անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելութիւն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն. անոնք վարունդ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ. անցան, անցան այն դարերը, ուր մարդկութիւնը տգիտութեան օրորոցին մեջ մեյ մը առդին, մեյ մը անդին կեբթար, կուգար...

(Հ. Պարոնյան)

Հոնտորական արվեստի և նրա կարևոր ճյուղերից մեկի՝ բեմական խոսքի ամենահիմնական դործոններից մեկը ձայնն է: Հոնտորի և դերասանի համար լավ ձայնը այն օղակներից մեկն է, որը նրանց կապում է լսարանի և հանդիսականի հետ: Ձայնը բաղմազան երանգների, տեմբրային գունավորումների միջոցով հոնտորը և դերասանը հանդիսականին ու լսարանին են հասցնում իրենց մտքերն ու հույզերը: Այստեղից էլ առաջանում է ձայնի լավագույն հատկությունների՝ հնչունության, հստակության, ուժեղության, ճկունության, բարեհնչյունության, մեծ ձայնածավալ ունենալու և այդ բոլորին տիրապետելու անհրաժեշտությունը:

Եթե ձայնը մասնագիտական պահանջների աեսակետից պիտանի չէ, այսինքն՝ ձայնական ապարատը հիվանդ վիճակի մեջ է գտնվում, բնականից թույլ է, ձայնալարերը գտնվում են քայքայված վիճակում և խանգարում են նորմալ ձայնահնչմանը, ձայնի տհաճ տեմբրի և ռեզոնանսության դեպքերում ձայնադրման և ձայնի մշակման մասին ոչ մի խոսք լինել չի կարող:

Հայ բեմի զարդ, մեծատաղանդ դերասան Պետրոս Ադամյանը ասել է. «Դերասանին հարկավոր է ձայն, ձայն, ձայն»:

Առաջին հերթին պետք է գտնել բնական ձևով խոսելու այն եղանակը, որը յուրահատուկ է տվյալ անձնավորության ձայնին, որից հետո մշակել այդ ձայնը: Որքան էլ լավ լինեն ձայնական տվյալները, մշակումն, այնուամենայնիվ, անհրաժեշտ է:

Ուժեղ և հնչուն ձայնը հոնտորի և դերասանի հաջողության մեծ գրավականն է: Նրանց խոսքը կլսվի մեծ դահլիճների ու թատերասրահների ամենահեռավոր անկյուններում:

Ձայնի ճկունությունն ստեղծում է երանգավորման բաղմազանություն, որը նպաստում է խոսողի մտքերի ու զգացմունքների երաժշտական արտահայտչականությանը: Ձայնի ճկունության հիմ-

նական տարրերն են՝ խոսքի տոնի ուժեղացումը և թուլացումը, արագացումը և դանդաղացումը, բարձրացումը և իջեցումը: Եթե ձայնն օժտված է այդ տվյալներով, ապա երանգավորման դժվարությունները կհաղթահարվեն:

Ձայնի բարեհնչյունությունը կապված է ձայնի հնչերանգային հատկությունների հետ և նրա էությունն այն է, որ նա շոյում է լսողությունը: Բարեհնչյուն ձայնի առանձնահատկությունը նրա թավ, խոր, կրծքային ընուլթի լինելն է: Կրծքավանդակը լինելով հիմնական և լավագույն ձայնադարձիկ, բոլոր պեպքերում ձայնը բարեհնչյուն է դարձնում, եթե այն օգտադործում են հմտորեն: Եթե ձայնը նվաղ է, թույլ, կոկորդային կամ անդային, ապա նա շատ քիչ դեպքերում կարող է բարեհնչյուն լինել:

Եվ վերջապես, ձայնի ծավալը մեծ նշանակություն ունի, քանի որ ձայնի՝ ամենացածր և ամենաբարձր տոներում հնչելը բոլոր ռեգիստրներում՝ վերին, միջին և ստորին, նրան դարձնում է լրիվ ու ամբողջական:

#### ՁԱՅՆԱՎՈՐՄԱՆ ԷՌԵՑՈՒՄԸ

Ձայնը դնել՝ նշանակում է դարգացնել և ամրապնդել ձայնի բոլոր տվյալները. նախ գտնել բնական ձևով խոսելու ձայնահնչումը, հետո մեծացնել ծավալը, ձայնը դարձնել հնչուն, ուժեղ, դիմացկուն, ճկուն և համելի: Եթե ձայնական ապարատը առողջ է, բայց սխալ շնչառության հետևանքով ձայնահնչումը աղավաղված է, ապա ունակ և հմուտ մանկավարժի ջանքերով ձայնահնչումը կարելի է շտկել և բնական հունի մեջ գցել:

Շատերը ձգտում են «բամբ» ձայնով խոսել, հատկապես նոր արբույնի հաստժ պատանիներն ու Լրիտասարդները, շնկատելով, որ՝ դրանով նրանք ձայնը ճնշում են, ձայնալարերը և կոկորդի շուրջը գտնվող մկանները լարում, ձայնը դրկում են իր բնական հրնշունությունից և սահմանափակում նրա ծավալը: Գրա անմիջապես հետևանքը լինում է կոկորդով խոսելը, որը սխալ շնչառության արդյունք է և որից ձայնը չի ստանում իր ճիշտ ընթացքը, կոկորդը սեղմվում է և կրծքավանդակը չի օգտադործվում որպես ձայնադարձիկ:

Այդ բոլոր երևույթները վերացնելու համար անհրաժեշտ է պարզել նրանց առաջացման պատճառներն ու վնասակար հետևանքները, աշխատել ձայնական ապարատը դնել աշխարհի դիրքով, որն առավելագույն շափով կապահովի բնական ձայնահնչումը:

#### ՁԱՅՆԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՐԱՏԻ ԷՆԻՄՆԱԿԱՆ ԳԻՐՔԸ

Խոսելիս ձայնական ապարատը իր հիմնական դիրքում պահեհամար անհրաժեշտ է, որ՝

- ա) բերանը լավ բացված լինի, ունենա ուղղահայաց դիրք, շրթունքները ընդունեն օ-ի ձև:
- բ) լեզուն պտոկած լինի բերանում, իր ծայրով հենվելով ներքևի առամնաշարին, արմատը իջեցված վիճակում, ինչպես հորանջելիս:
- գ) լեզվակը թեթևակի բարձրացած լինի:
- դ) կոկորդը մի փոքր լայնացած լինի, ինչպես հորանջի սկզբում:
- ե) կոկորդը իջեցված լինի:
- զ) կրծքավանդակը մի փոքր լայնացած լինի և օդի որոշ պաշար ունենա:

Նշված տարրերից յուրաքանչյուրն առանձին-առանձին և բոլորը միասին ձայնահնչման ընթացքում ապահովում և օժանդակում են աղատ ու բնական ձայնահնչմանը և ձայնադարձիկների համատեղ գործունեությանն ու մասնակցությանը: Օրինակ՝ ա կետում նշված բերանի բացվածքը՝ խոսափողի ձևով, թույլ չի տալիս, որ ձայնը ցրվի և այն ուղղում է դեպի մոտիկ ձայնադարձիկները:

Լեզվակի մի փոքր բարձրացմամբ վերացվում է ձայնի թթային-անդային երանգավորումը: Բացի դրանից, բարձրացված լեզվակը հնարավորություն է տալիս քիմքն օդատարծելու որպես ձայնադարձիկ:

Կրծքավանդակի մի փոքր լայնացումը հիշեցնում է, թե ձայնը որչափ կախում ունի շնչառությունից:

Կոկորդի մի փոքր լայնացումը աղատում է կոկորդային ձայնից, իսկ լեզվի արմատի և կոկորդի իջեցումը շատ է օգնում, որ կոկորդը շեղմվի և ձայնահնչումը կատարվի աղատ ու բնական:

Ձայնական ապարատի հիմնական դիրքը ճշտվում է մ հնչյունի միջոցով, որի համար մեղմ և երգեցիկ որոշ նոտայով, առանց ձայնալարի լարվածության, ձայնահնչումն ուղղվում է դեպի բերանի խոռոչի և թթայնորչի ձայնադարձիկները, հետևելով, որ ձայնը անդրադառնա նաև կրծքավանդակում: Այդ վարժության ժամանակ մ հնչյունը պետք է միադնել ձայնավորների հետ, միմամ, մմամմ, մմմմմ, մմմմմ, մմմմմ:

Օպերային երգիչները սովորություն ունեն բեմ դուրս գալուց առաջ ձայնը զցել «մասկայի մեջ», կատարելով «մամամիա» վարժությունը:

Մ հնչյունը նպաստում է, որպեսզի ձայնավորները միանգամից սուր ձևով, կամ պոկվելով շհնչեն:

Հոնտորը, դերասանը վարժության կիսաերգեցիկ ձայնահնչու-մից հետզհետե պետք է անցնեն խոսակցականին:

( ՁԱՅՆԻ ԾԱՎԱԼՐ ԵՎ ՌԵԳԻՍՏՐ )

Մարդկային ձայնը հիմնականում հնչում է 2—2½ օկտավա: Ձայնադրման անցնելիս անմիջապես հայտնի է դառնում ձայնի ծավալը, այսինքն՝ ամենացածր ու ամենաբարձր տոները: Տղամարդկանց և կանանց ձայները, ըստ հնչման որակի ու ծավալի, բաժանվում են հետևյալ խմբերի:

1. Տղամարդկանց ձայներ՝ տենոր, բարիտոն և բաս, որոնք իրենց երանգավորումներով լինում են լիրիկական, լիրիկա-դրամատիկական և դրամատիկական:

2. Կանացի ձայներ՝ սոպրանո, մեցցո-սոպրանո և կոնտրալտո: Սոպրանոյի երանգավորումներն ավելի շատ են՝ կոլորատուրային սոպրանո, լիրիկական, լիրիկա-դրամատիկական և դրամատիկական:

Ամենամեծ ձայնածավալը յուրահատուկ է կոլորատուրային սոպրանոյին: Օրինակ՝ պերուական երգչուհի Իմա Սուամակի ձայնածավալը մի քանի օկտավայով գերազանցում է կանացի նույն տիպի սովորական ձայնածավալին: Նրա ձայնի վերին նոտաների հնչյունը մթին անտառի երգեցիկ թռչունների ծվլոց է հիշեցնում, իսկ ցածր նոտաները նման են տղամարդկանց բարիտոնին:

Կոկորդի և ձայնալարերի անատոմիայից ու ֆիզիոլոգիայից երևում է, որ ցածր հնչյունների կարող են արձակել մեծ տրամաշափի, երկար ու հաստ ձայնալարերով կոկորդները, իսկ եթե կոկորդը փոքր է և ձայնալարերն էլ կարճ ու բարակ են, ձայնն ավելի բարձր կհնչի, ճիշտ այնպես, ինչպես դաշնամուրի լարերը:

Ձայնալարերի լարումը, որը սնհրածեղտ է բարձր կամ ցածր տոն ստանալու համար, կատարվում է կոկորդի վահանաձև ու շերտիվաձև մկանների կծկումից: Որքան ուժեղ է կծկումը, ձայնալարերն այնքան ավելի են ձգվում և ավելի բարձր ձայն է ստացվում:

Ձայնի ուժեղությունն ու հնչունությունը ստացվում է խառը-ստոծանային շնչառության միջոցով ձայնադարձիկների ճիշտ օգտագործումից:

Մարդը խոսելիս կամ երգելիս կարող է օգտվել ձայնի ոչ միայն ուժից, այլև ճկունությունից, ձայնի ծավալն օգտագործելով ըստ ռեգիստրների:

«Ռեգիստր» բառը փոխ է առնված երգահանի կառուցվածքից, որտեղ ձայների նոր շարք ստանալու համար, երգահանի որոշ լծակների տեղափոխություն է կատարվում: Հաստ երգիչ Գարսիայի և պրոֆ. էրբշտեյնի բնորոշման, «ձայնական ռեգիստր է կոչվում հերթական բարձրության և միևնույն բնույթի ձայների որոշ քանակ, որ արտաբերվում է ձայնական ապարատի մասերի մի զիրքով»<sup>1</sup>:

Սովորաբար տարբերում են երեք ռեգիստր՝ կրծքային կամ ստորին, գլխային կամ վերին, միջին կամ խառը և ձայնի մի առանձնահատուկ տեսակ՝ ֆալցետ, որն ստացվում է ձայնալարերի ոչ լրիվ, միայն նրանց եզրերի թրթռումից: Տղամարդկանց ձայնի ֆալցետը նման է կանացի ձայնին:

Ցածր նոտաներով խոսելիս մենք օգտվում ենք կրծքային ռեգիստրից և այդ ժամանակ էլ ձայնն անդրադարձնում է կրծքային ձայնադարձիկը՝ կրծքավանդակը: Վերին կամ գլխային ռեգիստրով խոսելիս ձայնն անդրադառնում է գլխային ձայնադարձիկներում՝ քիմքում, քթախորշում և ճակատախորշում:

Խոսելու ժամանակ ավելի գործածական ռեգիստրը միջին ռեգիստրն է, երբ ձայնը հավասարաչափ անդրադառնում է և՛ ստորին՝ կրծքային, և՛ վերին՝ գլխային ձայնադարձիկներում:

Ամենից ավելի հմուտ է այն հոնտորը, դերասանը կամ երգիչը, որը մեկ ռեգիստրից մյուսին է անցնում աննկատ ու սահուն: Դրան կարելի է հասնել երկարատև ու համառ վարժությունների միջոցով:

ՁԱՅՆԵՐԱՆԴ (ՏԵՄԲԸ)

Յուրաքանչյուր մարդ ունի ձայնական անհատական երանգ, որը կոչվում է տեմբր: Դա ձայնի այն հատկությունն է, որի շնորհիվ մենք խոսողին կտրող ենք ճանաչել ոչ թե տեսնելով, այլ լսելով: Մարդկային ձայնը շատ նման է երաժշտական գործիքի ձայնին, և ինչպես ամեն մի երաժշտական գործիք ունի ձայնի իր հիմնական, որոշիչ տոնը և լրացուցիչ, օժանդակ հնչերանգները՝ օրհրատոնները, որոնք հարստացնում են հիմնական տոնը ու նրան տալիս առանձնահատուկ երանգավորում, նմանապես և մարդկա-

<sup>1</sup> E. Суричева, «Техника сценической речи», Москва, 1939 г., стр. 105.

ինն ձայնը, ունենալով հիմնական տոն, բերանի խոտուչում և քթա-  
խորշում ստանալով հնչյունային ուրույն գունավորում, հարստա-  
նում է ու դառնում տվյալ անձնալորության համար առանձնա-  
հատուկ, բնորոշ ու անկրկնելի:

Տեմբրի բազմազանությունը առանձին ձայնադարձիկների մա-  
սերի ճկունություն և նրանց դիրքը փոխելու հմտություն արդյունք  
է: Որքան ձայնը հարուստ է օրերսուններով, այնքան նա գեղե-  
ցիկ, հմայիչ, դրավիչ ու երաժշտական է:

Մարդկային բնական, հիմնական ձայներանցը արհեստական  
կերպով փոխել մի այլ մշտական ձայներանցի հնարավոր չէ, սա-  
կայն տաղանդավոր դերասանները, էլնկուլ կերպարը ձայնական  
տվյալներով բնորոշելու անհրաժեշտությունից, կարճատև կարող են  
այլ ձայներանգով խոսել: Այս առումով կարող է խոսք լինել միայն  
բնական ձայներանցի պակասությունները վերացնելու և ոչ թե  
բնական ձայներանցը հիմնովին փոխելու մասին:

Հասելի ձայնի գրավչությունն ու հմայիչ լինելը միշտ էլ առընչ-  
վում է ձայներանցի հետ: Եթե հոստորը կամ դերասանը ձայնի մեծ  
ծավալ չունի, և դրա փոխարեն ունի թավշյա, կրծքային, լսելիքը  
շոյող ձայներանգ, ապա ձայնի ծավալի պակասը դառնում է ան-  
նկատելի:

#### ՁԱՅՆԻ ԱՐԳՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԸ (ՀԻՄՆԵԱՆ)

Ձայնը բնության ամենաթանկարժեք սյարգներից մեկն է և  
նրա ազդեցությունը լայն մասսաների վրա շատ մեծ է. ուստի ձայ-  
նական ապարատը պետք է պահպանել ամեն տեսակի խրոնիկա-  
կան հիվանդություններից և հատկապես շերտեղանկ քիթն ու կոկոր-  
դը: Ժամանակին պետք է դիմել բժշկի և հետազոտող ամեն տեսակ  
ուռուցքներ, լուծել քիթ լորձաթաղանթի բորբոքումը և հատկապես  
ձայնալարերի այս կամ այն հիվանդությունը: Անհրաժեշտության  
դեպքում պետք է վերադառնալ քիթ, քիթքի ու առամենի անագի-  
խումները:

Մխախտան ու ալկոհոլը ձայնի դարավոր, ամենաոխրերիմ թըշ-  
նամիներն են: Հոստորների, դերասանների ու երգիչների մեջ թյուր  
կարծիք կա, որ իրր խմիչքը երույթից առաջ «ձայնը բացում է»:  
Այդ միջոցին դիմողները վերջում դարձել են հարբեցողներ, և ոչ  
միայն կորցրել են իրենց ձայնն ու տաղանդը, այլև մարդկային  
արժանապատիությունը:

Մխախտի ծուխը մշտապես գրգռելով ձայնալարերը՝ օժանդա-  
կում է նրանց կոշտացմանը: Լորձաթաղանթի մշտական բորբոք-

ման հետևանքով ձայնադարձիկները կորցնում են ձայնն ուժեղաց-  
նելու իրենց որակը, կորչում են վերին նոտաները և ձայնի ծավալը  
հետզհետե փոքրանում է:

Հակատագրական նշանակություն ունի ձայնի մշակումը ժա-  
մանակից շուտ սկսելը: Առհասարակ ձայնադրումը պետք է սկսել  
արբունքի հասնելուց մեկ տարի հետո. տղամարդկանցը՝ 18—19  
տարեկանից, կանանցը՝ 16-ից ոչ շուտ:

#### ՎԱՐԺՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ձայնի ծավալը մեծացնելու համար առաջին տողը սկսել  
ցածր նոտայով՝ առաջին օկտավայի (ՎՕ-ով. երկրորդ տողը՝ ՎՕՊ,  
երրորդը՝ ԴԵ, չորրորդը՝ ԵՁ, հինգերորդը՝ ՄՍ, վեցերորդը՝ ԿՁ,  
յոթերորդը՝ ԿՁԶ, ութերորդը՝ ՏՕԼ, իններորդը՝ ԼՁ, տասներորդը՝  
ԼՁԶ, տասնմեկերորդը՝ ՏԻ և տասներկուերորդը՝ երկրորդ օկտա-  
վայի (ՎՕ-ով):

...Լուսաբացին, երբ կարմրածուփ հորիզոնում հրաշուշան,  
կարմիր վառվեց արևը բորբ, որպես կովի ազդանշան,  
երբ բոնկվեց արևելքում արևը՝ նոր լույսով վառված —  
Գուրս նևավեցին կայարանից ամբոխները խելագարված...  
Դեմը դաշան էր անծայրածիր, ուր մշուշ էր արևադույն,  
և մշուշում շողիացող, առավտի մարմանդ միգում,  
Կրկեփ պես մի վիթխարի, խաչաարդեա, խայտանկար —  
եզերքի մոտ ճանապարհի երևում էր քաղաքը քար...  
Աչքերն հառած հեռու-հեռուն կարմիր վառվող արևգակին՝  
Արևավառ հեռուներում նրանք կոպում էին կրկին.  
Հոծ խմբերով հաղարանուն, արևգակի հրով վառված՝  
Գեղի Արևն էին գնում ամբոխները խելագարված...

#### (Ե. Չարեկց)

Վարժությունն առաջին տողից սկսելով բարձր նոտայով՝ երկ-  
րորդ օկտավայի ՎՕ-ով, նույն հաջորդականությամբ, տող առ տող,  
կիսաձայններով իջնել՝

ՅԻ, ՅԻԵ, ԵԱ, ԵԱԵ, ՅՕԼ, ՅՕԼԵ, ԲԱ, ՄԻ, ՄԻԵ, ԴԵ, ԵԵ, ՎՕ.

2. Ձայնի ուժն ու հնչունությունը պետք է ղուգակցել ծավալի  
հետ: Իրա համար նույն առաջին վարժության ժամանակ, հաջորդ  
տողն արտասանել ավելի ուժեղ ու հնչել, գազաթնակետի հասցնե-  
լով վերջին տողը՝

Գեպի Արևն էին գնում ամբողջները իսկագարված...

3. Այս վարժությունը պետք է կատարել ձայնական ավելի մեծ ելևէջներով.

do	mi
Եվ քարավանը Աբու-Լալայի՝ աղբյուրի նման մեղմ կարկաչելով՝	
sol	do <sup>a</sup>
Քայլում էր հանգիստ, նիրհած գիշերով, հնչուն զանգերի անուշ	դողանջով:
do <sup>a</sup>	sol
Հավասար քայլով շարժվում էր ճամբան այն քարավանը որոնք ու	մոլոր,
mi	do
Եվ դողանջները ծորում քաղցրալուր՝ ողողում էին դաշտերը	անդորր:

(Ավ. Իսահակյան)

4. Դանդաղ ընթացքը սող առ սող արագացնել.

Սև ծովն էր այեկոծ փրփրում իր ափերին,  
Թմբել էր Պոլիսը փարբամ պուրակներում.  
Եվ մինարեների նիրհուն կատարների  
Վերջալույսի գունատ շողերն էին մարում:

(Գ. Սարյան)

5. Դանդաղ ընթացքն արագացնելով, հետզհետե բարձրացնել տոնը և ուժեղացնել ձայնը.

էյնե՛յ, լսեցե՛ք, ձայն տվե՛ք իրար,  
Ամե՛նք ե՛ք ոտի՛, մարդ-մե՛ս չկա՞.  
Շո՛ւտ հագե՛ք-կապե՛ք գե՛նե՛ք ու գրա՛ն.  
Գոտեպնդվեցե՛ք առելուքյամք վառ,  
Գոտեպնդվեցե՛ք անձնագո՛ն կամփով,  
Գոտեպնդվեցե՛ք ահեղ վրեժով,  
Շառաչե՛ք ուժգին, կաղնիներ հզոր,  
Խոլ վրնջացե՛ք, նժույզներ խիզախ,  
Մրրիկի նման գարկեցե՛ք շեփոր,  
Գեպի ուզվի դաշտ, դեպ հերոսացում,

Գեպի ուզվի դաշտ, սուրբ դրոշի տակ  
Գեպի բարձունքը մահի ու փառքի,  
Վանեցե՛ք՝ հեռու թշնամուն վայրագ,  
Մեր խրհիթներից, մեր հնձաններից,  
Մեր արտ ու կալից վանեցե՛ք հեռու:

(Ավ. Իսահակյան)

Այս վարժությունները կատարելիս չպետք է ընկնել երգեցիկ տոնի մեջ, այլ խոսել, այսինքն՝ բառերն արտասանել այնպես, ինչպես կյանքում առօրյա, սովորական խոսակցության ժամանակ: Եվ, որ ամենակարևորն է, կոկորդ չպետք է պատռել բարձր և ցածր տոներում, այլ պետք է աշխատել ձեռք բերել, նվաճել այդ նոտաները, առանց ձայնը վնասելու՝ վարժությունների ժամանակ ձայնի ուժն ու հնչունությունը չհասցնելով առավելագույն չափերի: Վարժությունը վերջացնելիս այնպիսի զգացում պետք է լինի, որ ձայնը կարող է դեռ հնչել է՛լ ավելի բարձր, և է՛լ ավելի ուժեղ:

## ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

Գրավոր խոսքը և բանավոր՝ կենդանի, խոսակցական խոսքը շատ դեպքերում չեն համընկնում, Հայոց լեզվի ուղղախոսության (օրթոեպիայի) կանոնների մշակումը հիմնականում լեզվաբանների գործն է, իսկ հոնտորական արվեստի ու բնական խոսքի բնագավառի աշխատողների խնդիրն է՝ գործնականորեն յուրացնել և կիրառել այդ կանոնները, իրենց գործնական հարուստ փորձով օգնել նորմավորելու հայոց լեզվի ուղղախոսությունը:

Հոնտորը, դերասանը, ասմունքողը և հաղորդավարը հանդիսանում են բանավոր, կենդանի, կուլտուրական խոսքի վարպետներ. նրանց լավագույններին ընդօրինակելով, պետք է մշակվի ու հրղվի խոսակցական լեզուն:

Միջնակարգ դպրոցներում, լեզուն ուսումնասիրելիս, առանձնապես ուշադրություն են դարձնում քերականական, շարահյուսական և ոճաբանական կանոնների յուրացման վրա:

Գեռ երկու հազար տարի առաջ հին Հռոմի ակնավոր քաղաքական ու դատական հոնտոր Ցիցերոնը, յուրաքանչյուր կուլտուրական հոմեոցու համար բացարձակապես պարտադիր էր համարում մայրենի լեզվի ուղղախոսությունը տիրապետելը: Ցիցերոնը դատապարտում էր «տառացի»՝ գրային արտասանությունը և անհոգությունը դեպի բանավոր խոսքը:

Հայոց լեզվի զարգացումն անցել է մի շարք փուլեր: Արտադրության և արտադրական հարաբերությունների զարգացման հետ միասին հարստացել է կուլտուրան, փոխվել է նաև խոսքը:

Հայերեն գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, ելնելով իր ժամանակի գրաբարի արտասանական կանոններից, սահմանեց և հայոց լեզվի ուղղադրական կանոնները: Հինգերորդ դարում հայերեն գրերը ճշտութամբ արտահայտել են գրաբարի արտասանությունը: Բանավոր, կենդանի լեզվի փոփոխության հետևանքով հետագա դարերի ընթացքում, բառերի արտասանության փոփոխության

պատճառով, փոփոխության ենթարկվեց նաև ուղղադրությունը: Իրոզն միջին դարերում առաջադավ միջին հայերենը, որն արտասանական տեսակետից շափազանց հեռացել էր գրաբարի արտասանությունից:

Միանգամայն այլ է եղել հինգերորդ դարի, միջնադարի և այնուհետև XIX դարի խոսակցական լեզուն թի՛ ձեի, դարձվածքների կառուցման և թե՛ արտարերման տեսակետից:

XIX դարում գրեթե միաժամանակ առաջացան արևելահայ և արևմտահայ գրական լեզուները: Արտասանական տեսակետից նրանք ունեն իրենց ուրույն ուղղախոսական կանոնները:

Կուլտուրական-գեղարվեստական խոսքի արտասանության օրինաչափությունների ուսումնասիրությունը հիմնականում ընդգրկում է երկու բնագավառ՝ լեզվի ուղղախոսության և շեշտադրության հարցերը և երկրորդ՝ խոսքի երանգավորման բարդ խնդիրները, որոնք առնչվում են խոսքի արտաքին ու ներքին բաղադրիչներին, այն է՝ տեմպին, շեշտին, դադարին և ներդաշնակությանը՝ որպես արտաքին, և տեմպերամենտին, կամքին, մտքին և հուլակա-նությունը՝ որպես ներքին բաղադրիչներին:

Մեր նպատակն է հնարավորին շափ ցույց տալ ժամանակակից հայոց լեզվի ուղղախոսության և շեշտադրության օրինաչափությունները:

## ՈՒՂՂԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԱՆՃՇՏՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

1. Տեղական բարբառներ: Մ. Գորկին, պաշտպանելով ռուսաց լեզվի մաքրությունը տեղական բարբառներից, ասում էր, որ լեզուն պետք է լինի պարզ, հասկանալի և անպայման գրադետ: Նրա կարծիքով, տեղական բարբառները շատ քիչ են հարստացնում գրական լեզուն և հաճախ ալտոտում են այն: «Մեզ մոտ յուրաքանչյուր նահանգում և անգամ շատ գավառներում կան իրենց խոսքերը, բայց գրականագետը պետք է գրի ռուսերեն և ոչ թե վյատկերեն կամ բալախներեն»<sup>1</sup>:

XIX դարի կեսերից արևելահայ աշխարհիկ լեզվի՝ աշխարհաբարի առանցքը կազմեց արարատյան բարբառը: Չպետք է ժխտել, որ աշխարհաբարի հետագա զարգացման վրա մեր բարբառները որոշ ազդեցություն ունեցել են, բայց ներկա շրջանում ժամանակակից հայ լեզվի զարգացմանը բարբառները կարող են նպաստել

<sup>1</sup> А. М. Горький, Собр. соч., «Письма начинающим писателям», 1953 г., т. XXV, стр. 135.

միայն աննշան չափով՝ երանգավորման ու կերպարի բնորոշման համար միայն: Բանավոր գրական-կուլտուրական խոսքի մեջ բարբառը ներկայումս դիտվում է որպես հետամնացություն, իսկ բարբառով խոսողը՝ որպես լեզվի բնագավառում իր տգիտությունը դեռևս չհաղթահարած մի անձ:

Գյուղական միջնակարգ դպրոցներում, իհարկե, լեզվին տիրապետելու ուղղությամբ մեծ աշխատանք է տարվում, սակայն ամեն տարի բարձրագույն ուսումնական հաստատություններն ընդունվելու համար շրջաններից Երևան են գալիս հազարավոր ուսանողներ, որոնք իրենց հետ բերում են Լոռու, Լենինականի, Ապարանի, Ախտալի, Ն. Բայազետ-Բասարգեչարի, Զանգեզուրի, Լեռնային Ղարաբաղի, Քրիլիսիի... բարբառային լեզուն, զրան ավելացրած նաև ներգաղթած հայերի տարբեր բարբառներ:

Բարբառաբար նկատվում է մի տենդենց, որ բարբառով խոսողները ամեն կերպ ձգտում են իրենց բարբառային արտասանական երանգավորումը ենթարկել գրական-գեղարվեստական, բեմական բարեհնչյունության:

2. Լեզվական գոեհկարանություն: Ուղղախոսության արատներից մեկն էլ լեզվական գոեհկությունն է, որը մեծ մասամբ գալիս է բարբառներից: Բանավոր խոսքի մեջ գոեհկարանությունն իր արտահայտությունն է գտնում որոշ բառերի ու դարձվածքների գործածությամբ: Արտասանության տեսակետից զրանք հնչում են կոշտ ու կոպիտ, տևիչ ու ժամանակի առնչությամբ անվայելուչ ու անպատշաճ ձևով: Օրինակ՝ խի, տո, ծո, ադա, հըլա, մըկա, աշե, պոտեւ, գոշտել, բոթել, շալել և այլն:

3. Ազգային ակցենտ: Սովետական Հայաստանում ապրում են հայախոս զանազան ազգություններ՝ եղիդիներ, ադրբեջանցիներ, ռուս-մոլդկաններ, հույներ, ասորիներ և այլն, որոնք հայերին խոսելիս ունեն յուրահատուկ ազգային ակցենտ: Ակցենտ նշանակում է երկրի կուլտուրական կենտրոններում ընդունված արտասանությունից որոշ շեղում, արտասանության մեջ մտցնելով տեղական կամ ազգային բարբառի հնչյունների առանձնահատկությունները: Օրինակ՝ հայախոս եղիդին մածունը արտասանում է մածուն, ադրբեջանցին՝ իմ անունը Յուլակը մտցրեց ցուցակի մեջ, կարտասանի՝ իմ անունը Մոլակը մասրես սուսակի մեջ. ռուս-մոլդկանը՝ էս տխան պետս վերցրես պախավ (էս տղան փետս վերցրեց փախավ) և այլն:

Ազգային ակցենտը հայոց լեզվի ուղղախոսության համար այնքան ցայտուն ու բնորոշ չէ, որքան ռուսերենի համար: Սովետական Միության բազմաթիվ աղգություններ ռուսերեն են խոսում

ուրույն ազգային ակցենտով: Շատ հեշտությամբ կարելի է տարբերել ըստ ակցենտի, թե ո՞վ է ռուսերեն խոսողը՝ վրացի, ադրբեջանցի, հայ, մոնղոլ, հրեա, ուկրաինացի և այլն:

4. Տառացի-գրային արտասանություն: Հայոց լեզվի ուղղախոսության անճշտությունները հիմնականում վերաբերում են տառացի-գրային արտասանությանը, այսինքն, երբ բառերն արտասանվում են այնպես, ինչպես նրանք գրվում են: Գրային արտասանության վտանգն ու անհաղթահարելիությունն այն է, որ խոսողը կառչում է բառի գրավոր ձևին, այն համարում օրինականացված, անխոցելի և ավանդական: Եթե լեզվաբաններն ու գիտուն մարդիկ, դատում են նրանք, գրում են՝ աղջիկ, դարբին, երգ, արդար, որդի, մարդ, վարդ, օձ, վերջ, արջ, աղբ, աղբատ, խևղղել և այլն, ուրեմն՝ գրվածի պես էլ պետք է արտասանել այդ բառերը:

Այս երևույթը հետևանք է նաև այն բանի, որ հայ, ինչպես և մյուս լեզուների զարգացման ընթացքում արտասանության գրային ձևը միշտ էլ ունեցել է ավանդական-պահպանողական բնույթ: Նա ետ է մնացել բանավոր, կենդանի, խոսակցական խոսքի զարգացման տեմպերից, ուստի և ժողովրդի կենդանի խոսքի արտաբերումը տարբերվել է գրային ձևից:

Բանավոր ուղղախոսական օրինաչափությունները սերտ առնչվում են քերականական կանոնների՝ հնչյունափոխության, ձայնավորների, երկհնչյունների և բաղաձայնների ուղղագրության և քերականական կառուցվածքի հետ: Հետևապես, ուղղախոսական օրինաչափությունների սահմանման հարցում քերականական կանոնների դեմ մեղանշելը կարող է ուղղախոսության արատների ու անճշտությունների առաջացման պատճառ դառնալ:

ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ

Բառերի փոփոխության և բառակազմության ժամանակ շեշտի ազդեցությամբ, այսինքն՝ երբ բառի վերջին վանկի շեշտն անցնում է հաջորդ՝ նոր ավելացած վանկին, որոշ ձայնավորներ և երկհնչյուններ փոփոխության են ենթարկվում, որը և կոչվում է հնչյունափոխություն:

Այստեղ հարկ չկա կանգ առնել հնչյունափոխության լեզվաբանական բոլոր մանրամասների վրա: Անհրաժեշտ է նշել ուղղախոսության հետ առնչվող հնչյունափոխական մի քանի օրինակափոխություններ:

1. Քերականությունից հայտնի է, որ ՈՒ ձայնավորը ենթարկվում է չորս տեսակ հնչյունափոխության.

ա) Փակ վանկում ՈՒ-ն փոխվում է Ռ ձայնավորի. օրինակ՝ բուն-բնի-բնավեր, բուք-բքի-բքաբեր-բքաշունչ, գուլ-գթալ-գթություն, դունչ-դնչի, դուռ-դռան, թուզ-թզի-թզենի, թուխս-թխսի, թուք-թքի-թքաման, լուր-լրաբեր, խուլ-խլանալ, խումբ-խմբական, ծուխ-ծխի-ծխական, ձուկ-ձկան-ձկնորս, մուկ-մկան-մկնդեղ, նուռ-նռան, շունչ-շնչել, ջուր-ջրի-ջրկիր, սուգ-սգալ-սգավոր, քուն-քնել-քնաբեր և այլն:

բ) Բաց վանկում ՈՒ-ն դառնում է Վ. օրինակ՝ բու-բվի, կու-կվի, լեզու-լեզվի-լեզվաբան, լու-լվի-լվածադիկ, առու-առվի, Բաբու-Բաբվի, կատու-կատվի-կատվախաղ, ձու-ձվի-ձվածեղ, մեղու-մեղվի-մեղվապահ, շու-շվել-շվացուցակ, օղաշու-օղաշվական և այլն:

Մ ա ն ո թ թ ու թ յ ու ն .— Որոշ բառեր, որոնք վերջանում են ու-ով, ձայնավորից առաջ պահպանում են ու-ի արտասանությունը. օրինակ՝ թեկնածուական, քարթուանալ, վաշխառուական, բուր-ժուական, ուրուի, վերարկուի, վերակացուի, երկուական, ստնտուի, ներուի և այլն:

գ) Մեռում է անփոփոխ. օրինակ՝ ութ-ութսուն-ութսունական, ութ-ութեղ, ուխտ-ութատավոր-ութատագնացություն, ուղեղ-ուղեղային, ուղտ-ուղտապան, ռուս-ռուսական-ռուսերեն-ռուսաստանյան և այլն:

դ) ՈՒ-ն սղվում է, դուրս է ընկնում. օրինակ՝ անասուն-անասնակեր, աշուն-աշնան-աշնանային, գարուն-գարնան-գարնանային, թմբուկ-թմբկահարել, թռչուն-թռչնակ-թռչնաբան, իրիկուն-իրիկնադեմ, ծածուկ-ծածկամիտ, կակուղ-կակղամորթ, հատուկ-հատկություն, մասուր-մասրենի, տաղտուկ-տաղտկալի, տեսուչ-տեսչական, փրփուր-փրփրադեզ, քարածուխ-քարածխային և այլն:

Ու ձայնավորի հնչյունափոխության հետևանքով դիտվում են ուղղախոսական հետևյալ անհշտությունները.

ա) Հոլովելիս կամ հոգնակի կազմելիս ու-ն ը ձայնավորի շեն փոխում, այլ արտասանում են նույնությամբ. օրինակ՝ բուն-բունի-բուներ, թուր-թուրի-թուրեր, թուփ-թուփի-թուփեր, խումբ-խումբի-խումբեր, շունչ-շունչի-շունչեր, փունջ-փունջի-փունջեր, քուրդ-քուրդի-քուրդեր և այլն:

Մ ա ն ո թ թ ու թ յ ու ն .— Կան որոշ բառեր, որոնք հոլովելիս շեն հնչյունափոխվում. օրինակ՝ սուրճ-սուրճի, ռումբ-ռումբի, տունկ-տունկի, կուռք-կուռքի, հուն-հունի, մուտք-մուտքի և այլն:

բ) Բաց վանկում ու-ն տշ թե փոխարինում են վ բաղաձայնով, այլ արտասանում են ու. օրինակ՝ բու-բուի, լու-լուի, մեղու-մեղուի և այլն:

գ) Ու-ն անփոփոխ պահելով, ավելորդ մասնիկ են ավելացնում, օրինակ՝ ութսուն-ութսունական բառերում, արտասանելով ութնասուն-ութնասունական, իսկ ռուսի, ռուսական, ռուսերեն բառերը սխալ արտասանում են որսի, որսական, որսերեն:

2. է ձայնավորի անհշտությունը.

Ժամանակակից հայերենում է ձայնավորը մեծ մասամբ գրում ենք Ե-ով, և, քանի որ գրաբարում միայն է ձայնավորն իր հնչյունափոխվում, ուստի Ե (է) ձայնավորի հնչյունափոխությունը տեղի է ունենում փակ վանկում, երբ Ե-ն դառնում է ի: Օրինակ՝ սեր-սիրել, վեճ-վիճել, զենք-զինել, կես-կիսել, դեզ-դիզել և այլն:

3. Ի ձայնավորի հնչյունափոխությունը.

ա) Փակ վանկում Ի-ն փոխվում է ը ձայնավորի. օրինակ՝ գիր-գրել-գրավոր, գիրկ-գրկել, թիվ-թվել-թվական, լիճ-լճակ-լճեր, կիր-կրաջուր, սիրտ-սրտոտ-սրտացավ, փիղ-փղեր-փղոսկր և այլն:

բ) Փակ վանկում Ի-ն սղվում է. օրինակ՝ ամիս-ամսի-ամսաթիվ, դահիճ-դահճի, մահիճ-մահճի-մահճակալ, ճահիճ-ճահճի-

ճահճային, բաժին-բաժնի-բաժնետոմս, աղախին-աղախինի, մարմին-մարմնի, լուսին-լուսնի, ամուսին-ամուսնու և այլն:

գ) Բաց վանկում և ձայնավորից առաջ՝ ի-ն կամ սղվում է կամ էլ միանալով ա-ի հետ, դառնում է յա կամ ե. օրինակ՝ բարի-բարություն, թշնամի-թշնամական, կենդանի-կենդանական, թերի-թերանալ-թերություն, վայրենի-վայրենական, գաղտնի-գաղտնապահ, վրացի-վրացական-վրացախոս, որդի-որդյակ-որդեսեր, հոգի-հոգյակ-հոգեբան, պատանի-պատանյակ, աղավնի-աղավնյակ, ոսկի-ոսկեզօծ-ոսկեգույն, բարի-բարեկամ, տարի-տարեկան, գինի-գինեգործ, գարի-գարեջուր, ուղի-ուղեգիր-ուղեմաս և այլն:

դ) Ի-ն չի հնչյունափոխվում՝ բաց միավանկ և բաց վանկով վերջացող մի շարք բաղմավանկ բառերում. օրինակ՝ ձի-ձիավոր, թի-թիակ, դի-դիակ-դիակառք, մի-միակ, լի-լիանալ, որդի-որդիական, շոգի-շոգիանալ, գյուղացի-գյուղացիական, քաղաքացի-քաղաքացիական, սպի-սպիացում, արի-արիաբար-արիություն և այլն:

4. Ա ձայնավորը հնչյունափոխության չի ենթարկվում, բայց ընկնում է՝ սղվում. օրինակ՝ ամառ-ամռան, անդադար-անդադրում, բերան-բերնի, ծիծաղ-ծիծղուն, կոճակ-կոճկել, ճակատ-ճակտի, մատաղ-մատղաշ, շինած-շինծու, քաղաք-քաղքի-քաղքենի և այլն:

5. Յա երկնչյունը փոխվում է ե-ի. օրինակ՝ ատյան-ատենակալ, առաքյալ-առաքելական, գործունյա-գործունեսություն, մատյան-մատենադարան-մատենավար-մատենագրություն, սենյակ-սենեկապետ, կյանք-կենսագրություն, վայրկյան-վայրկենական-վայրկենասլես-վայրկենաբար և այլն:

6. Ույ երկնչյունը՝

ա) Փակ վանկում դառնում է ու. օրինակ՝ ապացույց-ապացուցել, բույս-բուսական-բուսաբան, բույր-բուրել-բուրավետ, զեկույց-զեկուցել-զեկուցադիր, զրույց-զրուցել, լույս-լուսավորել-լուսաբողարկում, խույս-խուսափել, ծույլ-ծուլանալ, կույս-կուսական, հույս-հուսալ-հուսահատություն, փույթ-փութալ և այլն:

բ) Որոշ բառերում փոխվում է ը-ի. օրինակ՝ բույն-բնավեր, բույթ (բութ)-բթամատ, ճկույթ-ճկթամատ, կապույտ-կապտագույն, պտույտ-պտտել:

Հնչյունափոխության կապակցությամբ ուղղախոսական անճշտությունները կայանում են նրանում, որ աշխարհում են արվում նրշված օրինաչափությունները և բառերն արտասանվում են առանց համապատասխան հնչյունափոխության:

Ույ երկհնչյունը մի քանի բառերի մեջ արտասանվում է որպես ու. օրինակ՝ ույժ-ուժ, անույշ-անուշ, քնքույշ-քնքուշ, տույժ-տուժ, բույժ-բուժ, զգույշ-զգուշ, աշխույժ-աշխուժ և այլն:

#### ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հնչյունափոխության հետևանքով տեղի ունեցող ուղղախոսական անճշտություններից բացի, ձայնավորների արտաբերման ժամանակ, հաշվի առնելով նաև ուղղագրությունը, պետք է պահպանել հետևյալ կանոնները.

1. Ը ձայնավորը, եթե գրվում է, զբեթե բոլոր դեպքերում արտասանվում է. օրինակ՝ ընդամենը, ընդգծել, ընդգրկել, ընդմիշտ, ընդունիչ, ընտրել, անընդունելի, դասընկեր, նորընծա, անընդհատ, անընդունակ, դուրըմբռնելի, ճեպընթաց և այլն:

Բառամիջում սովորաբար չգրվող ը ձայնավորն արտասանվում է. օրինակ՝ բղեզ, լթամիտ, բրդոտ, բլրակ, բռնել, գզգզել, գթալ, գծովել, գլուխ, գծել, գրկել, դղում, դժբախտ, դղրոց, դոնբաց, թխել, թշնամի, թռչել, ծանր, լծակ, լկտի, լպտտել, լրջմտություն, խխլել, ծլկվել, ծլվլալ, ծղրտալ, կլկլալ, կշկշալ, կրկնվող, հնձել, հնչյուն, հսկել, ձմեռ, ճշգրիտ, ճոճուս, Մկրտիչ, մկնդեղ, նշել, նվնվալ, շշկվել, լխլխկոց, պլպլան, պրպտում, ջրծաղիկ, վստահ, որտոնջալ, ցնդած, փսլնքոտ, քաղցր, աստղ, արկղ, կայսր, վազր և այլն:

Սկ, սֆ, սպ, ստ, սփ, շպ, շտ, զք, զգ կապակցություններով սկսվող բառերի սկզբում ը ձայնավորը չի գրվում, բայց թույլ կերպով արտասանվում է. օրինակ՝ սկիզբ-ըսկիզբ, սկսել-ըսկսել, սքանչանալ-ըսքանչանալ, սթափվել-ըսթափվել, սպասել-ըսպասել, ստուգել-ըստուգել, սփոփել-ըսփոփել, շպարել-ըշպարել, շտապել-ըշտապել, զքոսնել-ըզքոսնել, զգալ-ըզգալ և այլն:

Ը ձայնավորը բառավերջում փոխվում է և բաղաձայնի, երբ հաջորդ բառն սկսվում է նույն՝ սկ, սֆ, սք, սպ, ստ, սփ, շպ, շտ, զք, զգ կապակցություններով կամ ձայնավորով. օրինակ՝ մայրն սփոփում էր իր աղջկան, Արմենն զքոսնում էր դաշտում, ուսանողն զգաց թույլ տրված սխալը, ջութակահարն սկսեց նվագը, հաշվապահն ստուգեց փաստաթղթերը, պահակն սթափվեց, բանվորն շտապում էր գործարան, զորամասն առաջ շարժվեց, օրն արևոտ էր, նա հայացքն ուղղեց դեպի լեռները, արևն ելավ և այլն:

Հոստորական արվեստի և բեմական խոսքի արտասանական պահանջներից ելնելով, բառավերջում ավելի հեշտ է արտասանել ը ձայնավորը, քան և բաղաձայնը, որը հաջորդ բառի երկու և ավել-

լի բաղաձայնների առկայութեամբ դժվարացնում է արտասանութեանը: Օրինակ՝ դուրին է արտասանել՝ ուսանողը սկզբունքորեն շատարկեց, քան ուսանողն սկզբունքորեն շատարկեց, որտեղ առաջանում է ղն և սկզբ վեց բաղաձայնների կոտակում: բացի դրանից, բանաստեղծության մեջ բառավերջում ը ձայնավորի դործածությունը ներկայումս համարյա ազատ է:

## 2. է, ե

Այս երկու տառերը թեև տարրեր գրելով են ունեն, բայց փաստորեն արտահայտում են մեկ ձայնավոր հնչյուն, քանի որ է, ձայնավորը բառակերպի և բառաբարդման դեպքում գրվում և արտասանվում է է, իսկ բառամիջում և բառավերջում թեև արտասանվում է է, սակայն գրվում է ն տառով: Օրինակ՝ էսկ, էջ, էոթյուն, բեմ, բեռ, բերք, զեշ, գետ, մեկնել, մերժել, նետել, շեն, շեշտ, բազև, բոպև, քարե, երկաթե և այլն:

Ն տառը բառակերպում արտասանվում է յն. օրինակ՝ եզ, եղակի, ելնել, ելույթ, էլք, եկամուտ, եսամուլ, երազ, երածիշտ, երևս և այլն:

Բարդման դեպքում ն տառով սկսվող բարդ կամ ածանցավոր բառը, բաղաձայնից հետո արտասանվում է է. օրինակ՝ աներես, անեղր, աներևույթ, աներկրա, աներեր, խաչեղբայր, մորեղբայր, հորեղբայր, կենթարկվի, շերևա, ձայնավորից հետո արտասանվում է յն. օրինակ՝ հակակեղևեղական, հակակերպական, հակակեղևական, ինքնաեռ, տիեզերք-տիեզերական-տիեզերադիտություն և այլն:

## 3. Օ, Ո

Գրելաձևով տարբեր, բայց ըստ էության մեկ ձայնավոր հնչյուն արտահայտող տառեր են, որոնցից օ-ն գրվում և արտասանվում է միայն բառակերպում և բառաբարդության ու ածանցման դեպքում օ-ով սկսվող բառերում. օրինակ՝ օաղիտ, օգնել, օգ, օձառ, օջախ, օսլա, օտար, օր, օրացույց, օրենք, օրհաս, օրոր, անօրինակ, անօգուտ, անօթևան, անօրգանական, այսօր, սակեղօժել, նախօրյակ, նախօրոք, ամենօրյա, հնգօրյակ և այլն:

Ո-ն բառակերպում արտասանվում է վո, իսկ բառամիջում և բառավերջում՝ օ: Օրինակ՝ ոգի, ոգեշունչ, ոգելից, ոգնի, ոխ, ոխերիմ, ոհմակ, ողբ, ողբաչար, ոճ, ոճարան, ոճիր, ոչ, ոչինչ, ոտ, որակ, որբ, որդի, Ոսկան, Ոսկեհաս, բոլորովին, շոգոթոթթ, սովոր, փողոց, Կարո, լոքո և այլն:

Մ ա ն ո թ ու թ յ ու ն: Բացառություն են կազմում ով և ովքեր բառերը, որոնք գրվում են ո-ով, սակայն արտասանվում են օ:

Փոքր թվով օտարազգի և տուսերեն բառերն սկսվելով վո կապակցությամբ, այդպես էլ գրվում և արտասանվում են. օրինակ՝ վոյա, վոյաժ, վոյաշափ, վոկալ, վոդկա, վոլֆրամ, վոլյունտաբիլ, վոլգա, վոլոգա, վոբոնեժ, վոլխով, վոբոշիով, վոդոպյանով, վոյտեր, վոլոգյա և այլն:

Նձանցման և բառաբարդման դեպքերում ո-ով սկսվող բառերը բաղաձայնից հետո արտասանվում են օ, իսկ ձայնավորից հետո՝ վո: Օրինակ՝ բարձրորակ, անորոշ, ձկնորս, միջնորմ, բոկոտն, քեռորդի, լուսնոսկի, փղոսկր, դիմորոշ, արջաորս, վերաորակել, ամենադրալի, ամենաողորմած, հակաոսկրային և այլն:

## Ի Ա Ն Ե Ր Կ Տ Ն Հ Յ Ո Ւ Ն Ի Ս Բ Ե Ր Կ Տ Ն Հ Յ Ո Ւ Ն Ե

Ի ա երկհնչյունը յա է արտասանվում հետևյալ բառերի մեջ՝ Անանիա, բամիա, Բենիամին, Բունիաթ, Եղիա, Եղիազար, Երեմիա, Զարբիա, օվկիանոս, խավիար, կրիա, հեթիաթ, Մարիամ, Սուբիաս, փախիան:

Ռուսերենից և եվրոպական լեզուներից փոխ ածված բառերի մեջ լիա երկհնչյունը արտասանվում է յա գրեթե բոլոր աշխարհագրական հատուկ անուններում. օրինակ՝ Անդիա, Ասիա, Ավստրալիա, Բուլղարիա, Լատվիա, Նորվեգիա, Շվեդիա, Կրուսիա, Լուսիտիա, Ելուվակիա և այլն, ինչպես նաև ինֆորմացիա, միլիարդ, պոլիտարիատ, մատերիա, ֆիլոսոֆիա, ալիաքիա, ալտոնոմիա, տսիգնացիա, ֆրակցիա, ֆիլիոնոմիա, օլագիա, օպոչիցիա, օկուպացիա, սպեկուլյացիա, ստադիա, սիմֆոնիա, ակադեմիա, ռեակպացիա, սպեկուլյացիա, ստադիա, սիմֆոնիա, ակադեմիա, մոբիլիզացիա, կոոպերացիա, կոնտուլիա, կոնտրակտացիա, կոնվենյիա, կոմունիկացիա, կոալիցիա և այլն:

Մարդկանց անունները գրվում և արտասանվում են յա. օրինակ՝ Մանյա, Ամալյա, Ժնյա, Վարյա, Սոֆյա, Օֆելյա, Վոլոգյա և այլն:

Ի ա է գրվում, երբ անունների վերջնամաս իա-ն շեշտված է. օրինակ՝ Լիա, Մարիա:

Օտարազգի բառերի մեջ իա երկհնչյունն արտասանվում է նույնությամբ, երբ բնկնում է առաջին վանկում. օրինակ՝ դիաբոլ, դիազրամ, դիալեկտիկա, Դիանա, դիալոգ, դիագնոզ, դիաֆրագմա, դիամետ, դիագագոն և այլն:

Հայկական բառերի մեջ, երբ նրանք կազմվում են լի, հի, դի, բի, ծի, ըի բառարմատներով, ինչպես նաև ի կամ աքի վերջավորող բառերի բառաբարդման և ածանցման դեպքում, իա երկհնչյուն

ներ գրվում և արտասանվում է որպես իա: Օրինակ՝ լիազոր, լիակատար, լիալուսին, լիահույս, լիարժեք, լիարյուն, լիաուստ, հիանալ, հիասթափվել, հիասքանչ, դիակ, դիազնություն, դիակառք, թիակ, թիանավ, ձիավոր, ձիապան, ձիաբարձ ձիազուրկ, միաբան, միաժամանակ, միալար, միախառնվել, միակ, միակցում, միակուռ, միահեծան, միածույլ, միամիտ, միավոր, միատեղ, որդիական, արդիական, հավաստիանալ, շարչիական, ռուբլիանոց, նոճիածածկ, փոշիանալ, գյուղացիական, դրացիական և այլն:

**Յ ՁԱՅՆԱԿԱՊԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Համաձայն 1922 թ. ապրիլի 4-ի ուղղադրական ակտի մի ծայրագույն հետո լավող յ-ն բոլոր դեպքերում գրվում էր, քանի որ ձայնավորների միջև այդ յ հնչյունը շատ դեպքերում լավում էր Ուղղախոսության տեսակետից դա միանգամայն ճիշտ էր, և ներկայումս կենդանի խոսակցության ժամանակ այդ յ հնչյունը լավում է ինչպես ա, ո, նույնպես և մյուս ձայնավորներից հետո: Օրինակ՝ այո, այսպիսի, այցելել, տղայի, հանրահայտ, կյանք, հսկայական, հոյակապ, բոյ, բոյկոտ, գոյական, գոյացում, լոյալ, խոյ, խոյակ, խոյանք, կոյուղի, շոյել, տոյա, Սարոյի, Մարոյի, էյական, էյություն, միյություն, տիյեզերք, գտնեյի, էյի, լինեյի, ձիյով, միյապին, մարգարեյություն, նեյիյի, կատարածույի, վերարկույի և այլն:

1940 թվի օգոստոսի 22-ի մասնակի բարեփոխության հետեւանքով յ ձայնակապը որոշվեց գրել ա և ո ձայնավորներից հետո, թակ իա, իե, իո, իու, եի, եո, եու, եա, էա, էու երկձայնավորների արանքում լավող յ ձայնակապը չգրել, համարելով այն յ-երի անտեղի գործածություն:

**ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ**

Ուղղախոսական հիմնական շեղումներն ու դժվարությունները վերաբերում են բաղաձայններին:

Բաղաձայններն ըստ իրենց ձայնի երեք տեսակ են՝ ձայնեղ, խուլ և շնչեղ խուլ. ըստ արտաբերման տեղի՝ յոթ տեսակ. շրթնային-պայթական, առաջնալեզվային-պայթական, ետնալեզվային, շրթնատամնային-շփական, առաջնալեզվային-շփական, ռնգային և կոկորդային:

Արտասանության տեսակետից գրեթե դժվարություն չեն առաջացնում շնչեղ-խուլ՝ փ, ֆ, ք, ց, շ բաղաձայնները: Նրանց գրությունն ու արտասանությունը համապատասխանում են միմյանց:

Առանձին դժվարություններ չեն առաջացնում նաև խուլ՝ պ, կ, տ, ս, շ, ծ, ն, ֆ, խ, և բաղաձայնները: Նրանցից միայն և բաղաձայնը մի շարք բառերում չի արտասանվում:

Հիմնականում ձայնեղ բաղաձայնների արտասանությունը չի համապատասխանում նրանց գրությանը և դրա հետևանքով առաջանում են ուղղախոսական անճշտություններ:

Ձայնեղ բաղաձայններն են՝ բ, գ, դ, զ, ժ, լ, ձ, ղ, մ, յ, ճ, չ, ո, վ, ր:

**1. Շրթնային-պայթական՝ բ, պ, փ**

Ձայնեղ բ-ն արտասանվում է որպես շնչեղ-խուլ փ

ա) ր բաղաձայնից հետո. օրինակ՝

գրվում է	արտասանվում է
հարբել	հարփել
երբ	երփ
որբ	որփ
սրբել	սրփել
սուրբ	սուրփ
լրբորեն	լրփորեն
հարբուխ	հարփուխ
արբունք	արփունք
երբև՛ն	երփև՛ն
երբևիցե	երփևիցե

Իացառություն են կազմում՝ դերբայ, արբանյակ, տարբեր, բորբ, բորբոզել, բորբոս, բարբարոս, գրբաց, ախտարորբոք, բարբառ, պարբերաբար, արշունարբու և այլն:

բ) Շարաթվա օրերի անունները.

գրվում է	արտասանվում է
երկուշաբթի	երկուշափթի
երեքշաբթի	երեքշափթի
չորեքշաբթի	չորեքշափթի
հինգշաբթի	հինգշափթի
ուրբաթ	ուրփաթ
շաբաթ	շափաթ և այլն:

դ) Բ-ն փ է արտասանվում մի քանի այլ բառերում՝  
 խարելի խափել  
 իբր իփր  
 իբր թե իփր թե  
 իբրև իփրև և այլն:

Իր գրային արտասանությունը Բ-ն պահպանում է.  
 ա) բառասկզբում. օրինակ՝ բարի, բաղձոց, բաժին, քամբակ, բանվոր, բեկանեղ, բեմ, բիբ, բնադդ, բնակիչ, բոցավառ, բռնություն, բուրձուկ և այլն.  
 բ) բառամիջում՝ բարդություններից Բ-ով սկզբվելու դեպքում. օրինակ՝ գրկաբաց, հոգեբան, լիարուխ, լուսաբանել, անբուժելի, ճամփաբաժան, ծաղկաբույր և այլն.  
 գ) օտարազգի բառերի մեջ. օրինակ՝ արոնեմենտ, արոսյուտ, արստրակցիա, արսուրդ, դերր, շարլոն, կոմբինաա, օրչեկտիվ, սուրչեկտիվ և այլն:

Արևմտահայ գրական լեզվի մեջ այ բաղաձայնով գրվող շատ բառեր արտասանվում են որպես ձայնեղ Բ. օրինակ՝ պտուտակ-բույրակ, նպաստ-նրսոտ, ճարտիկ-ջարբիկ, պանսիոն-բանսիոն, դոնադան-դոնաբան, պետք է-բետք է և այլն:

Շնչեղ-խույ փ բաղաձայնը գրվում և իր գրային արտասանությունը պահպանում է ր և ղ բաղաձայններից հետո՝ մի քանի բառերում. օրինակ՝ աբփի, փրփուր, տաբփան, եղփանալ, փոզփոզել և այլն:

2. Առաջնայլգվային-պայթական դ, տ, ք

Ձայնեղ դ-ն արտասանվում է որպես շնչեղ-խույ ք.  
 ա) ր բաղաձայնից հետո, օրինակ՝

գրվում է	արտասանվում է
գարդ	գարթ
բարդ	բարթ
մարդ	մարթ
վարդ	վարթ
որդի	որթի
կարգալ	կարթալ
բաժանորդ	բաժանորթ
արդար	արթար
ժողովուրդ	ժողովուրթ
անցորդ	անցորթ
արդյունք	արթյունք և այլն:

Բացառություն են կտրվում՝ սարդ, դարդ, նարդի, բարդի, գերդաստան, հորդորել, հրդեհ, բուրդ, խարդախ, կոկորդիլոս, հորդոս, արդ և այլն:

բ) Գ-ն ձայնավորից հետո արտասանվում է ք. օրինակ՝

օդ	օթ
օդաչու	օթաչու
դադար	դաթար
դղում	դթում
Թաղևադ	Թաթևոս
սաղայել	սաթայել
վառող	վառոթ
վառողաման	վառոթաման և այլն:

Բացառություններ՝ բադ, հոդ, դոդել, մահմուդ, մեղեդի, բղամիդ, Գվիդոն, Ադամյան և այլն:

Իր գրային արտասանությունը դ-ն պահպանում է.

ա) բառասկզբում՝ դանդաղ, դահիճ, դահուկ, դայակ, դաշտ, դատարան, դեղին, դեղձ, դեպի, դեսպան, դիրք, դաշար, դպրոց, դուրս և այլն.

բ) բառամիջում՝ բարդություններից Բ-ով սկզբվելու դեպքում. օրինակ՝ արտադրել, դավադիր, գործադուլ, շրջադարձ, հիմնադիր, օրենսդիր, մեղադրել և այլն.

գ) օտարազգի բառերի մեջ. օրինակ՝ ադեպտ, ադմինիստրացիա, աերոդրոմ, անեկոտո, լիդեր, լորդ, ֆոնդ, օրդեր, կոմեդիա, ակտորդ, ֆաստդ և այլն:

Արևմտահայերի մոտ ա բաղաձայնը շատ դեպքերում արտասանվում է դ. օրինակ՝ տղեղ-դղեղ, տիկին-դիզին, տկարամիտ-դղարամիտ, տաք-տաք—դաք-դաք, տնկել-դնգել և այլն:

3. Ետնայլգվային գ, կ, ֆ, դ, խ

Այս բաղաձայններից գ-ն և կ-ն համարվում են ետնալեզվային-պայթական, ֆ-ն՝ շնչեղ խույ, դ-ն՝ ձայնեղ շփական, իսկ խ-ն՝ շփական խույ:

Ուլախոսական շեղումների տեսակետից այս հինգ բաղաձայնները բաժանվում են երկու խմբի՝ ա) գ, կ, ֆ և բ) դ, խ: Առաջին խմբից գ-ն, իսկ երկրորդ խմբից դ-ն արտասանական խախտումների ավելի շատ տեղիք տվող հնչյուններ են:

Գ-ն բաղաձայնից հետո շատ դեպքերում արտասանվում է ֆ. օրինակ՝

գրվում է

արտասանվում է

երգ	երթ
գովերգ	գովերթ
քայլերգ	քայլերթ
միրգ	միրթ
կարգ	կարթ
բարեկարգ	բարեկարթ
թարգման	թարթման
պարդև	պարթև
մարգարե	մարթարե
Մարգարիտ	Մարթարիտ
Սարգիս	Սարթիս և այլն:

Բացառություններ են կաղմում՝ անարգանք, արգասիք, թուրգ, գորգ, Գուրգեն, գուրգուրել, դրամատուրգ, երգիծարան, զարգանալ, համերգ, ժամերգություն, նախերգանք, վիպերգություն, քնարերգու, տաղերգու, մարգ, արգավանդ, մեծարգո և այլն:

Չայնավորից հետո գ-ն արտասանվում է ք. օրինակ՝

գրվում է

արտասանվում է

ձիգ	ձիթ
ականաձիգ	ականաձիթ
հոգի	հոթի
բարեհոգի	բարեհոթի
ոգի	ոթի
շոգի	շոթի
շոգեքարշ	շոթեքարշ
հագնել	հաթնել
անդուգական	անդութական
մուգ	մութ
նորոգ	նորոթ
զուգարան	զութարան
սուգ	սութ
անօգուտ	անօթուտ
թագավոր	թաթավոր
իգական	իթական
ծագել	ծաթել և այլն:

Կան բացառություններ՝ ագահ, ագարակ, ագի, անհագ, արագ, արձագանք, բագին, գպիել, գագաղ, հագուրդ, հեղանք, ճառագայթ, ճառագել, մթագնել, լոգանք, մուկգին, պարագա, ստուգում, սիգաճեմ, տագնապ, տուգանք, փափագ և այլն:

Վ-ն իր գրային արտասանությունը պահպանում է բարդության երկրորդ բաղադրիչը Վ-ով սկսվելու դեպքում. օրինակ՝ օրագիր, օրինագիծ, փակագիծ, գբագետ, անգիր, անգին, անգութ, բանեգործ, բնագավառ, գինեգործ, դժգոհ, թանկագին, ինքնագլուխ, սակագին, տարագիր և այլն:

Օտարազգի բռների մեջ Վ-ն պահպանում է իր գրային արտասանությունը. օրինակ՝ օրգան, խուլիգան, ագենտ, ավանգարդ, բարդած, դեմագոգիա, կատեգորիա, էգոիզմ, պրոգրես, ռեզլամենտ և այլն:

Արևմտահայերի մոտ կ և գ բաղաձայնների փոխարեն գործաձական են գ և ք բաղաձայնները. օրինակ՝ Կարապետ-Գարաբետ, կարմիր-գարմիր, կարգ-գարք, կարեկցել-գարեկցել, զաղաթ-քաղաթ, գանգուր-քանքուր, գործադուրկ-քործադուրկ, կապտագույն-գարթագույն և այլն:

Նտնալեզվային ձայնեղ-շփական դ-ն բաղաձայնից առաջ արտասանվում է խ. օրինակ՝

գրվում է

արտասանվում է

ազբյուր	ախայուր
աղբ	ախպ
աղտ	ախտ
աղքատ	ախքատ
ազցան	ախցան
աղջիկ	ախշիկ
առողջ	առոխշ
դեղձ	դեխց
դաղձ	դախց
մաղձ	մախց
մեղք	մեխք
կեղտ	կեխտ
թուղթ	թուխտ
ողբ	ոխպ
ողջ	ոխշ
շղթա	շխթա
եղբայր	եխպայր
պղտոր	պխտոր
սանդուղք	սանդուխք
տաղտկալի	տախտկալի
շղջիկ	շխջիկ և այլն:

4. Շրթնատամնային վ, ֆ

Այս երկու բաղաձայններից վ-ն ձայնեղ-շփական է, իսկ ֆ-ն՝ խուլ-շփական:

Ձայնեղ վ-ն արտասանվում է որպես խուլ ֆ-ը միայն ա ձայնավորից հետո և տ, ք բաղաձայններից առաջ. օրինակ՝

գրվում է	արտասանվում է
ավտո	աֆտո
ավտոնոմ	աֆտոնոմ
հարավ	հարաֆ
նավթ	նաֆթ
զավթել	զաֆթել
դավթար	դաֆթար և այլն:

Չարբարդի բարբառում ֆ-ն շատ բառերում արտասանվում է ֆ. օրինակ՝ ֆայտոն-փայտոն, ֆրոնտ-փրոնտ, ֆարաշա-փարաշա, ֆոնդ-փոնդ, ֆերմա-փերմա և այլն:

5. Առաջնալեզվային շփական ս, զ, ժ, շ

Ս, զ շփականները կոչվում են նաև սուլական, որովհետև նրանց հիմնական որակը սուլական աղմուկն է, իսկ շ և ժ՝ շշական, այդ բաղաձայններն արտաբերելիս ստացվող հատուկ շշական աղմուկի պատճառով:

Ս, շ շփական բաղաձայնները խուլ են, և որպես այդպիսին, արտասանության տեսակետից համապատասխանում են իրենց գրության, իսկ զ և ժ բաղաձայնները ձայնեղ են և նրանց ուղղախոսական անճշտությունը ոչ թե կապված է հնչյունավորական որևէ կանոնի հետ, այլ զուտ ֆիզիոլոգիական է և հնչյունի անճշտությունն առաջանում է ատամների բացակայության, կամ ատամնաշարի վնասվածքի ու անառողջ վիճակի հետևանքով. այս դեպքում զ, ս, և ժ, շ բաղաձայններն արտաբերելիս իրարից շեն տարբերվում և զգվելի բառը հնչում է որպես սավելի, իսկ ժուժկալը՝ շուշկալ:

6. Բնզային մ, ն

Շրթնային բ, պ, փ բաղաձայններից առաջ գրվում և արտասանվում է մ. օրինակ՝ ամպ, ամպլուա, ամպրոպ, ամբար, ամրա-

րիշա, ամբոխ, ամբարտակ, ամբաստանել, ամբիոն, ամբուլատորիա, բամբակ, դամբարան, թամբ, թումբ, ամփոփ և այլն:

Նույն բ, պ, փ շրթնային բաղաձայններից առաջ և գրվում և արտասանվում է միայն ան նախածանցով կազմված բառերում. օրինակ՝ անբաժան, անբախտ, անբավ, անբավարար, անբարոյական, անբերրի, անբովանդակ, անբուժելի, անպակաս, անպայման, անպետք, անպտուղ, անփայլ, անփառունակ, անփույթ և այլն:

Ուղղախոսական անճշտություն է տեղի ունենում, երբ մ բաղաձայնի փոխարեն գործ են ածում և. օրինակ՝ անպ, անբար, անպրոպ, անբարիշտ, անբարտակ, անբաստանել, թանբ, թունբ, անփոփել և այլն: Եվ ընդհակառակը՝ և-ի փոխարեն գործ են ածում մ բաղաձայնը. օրինակ՝ ամբախտ, ամբան, ամբիժ, ամպայման, ամպետք, ամպարտ, ամփորձ, ամփույթ և այլն:

7. Կոկորդային (նազագային) ն

Ն խուլ բաղաձայնը, Ե բաղաձայնից հետո, մի շարք բառերում չի արտասանվում. օրինակ՝

գրվում է	արտասանվում է
աշխարհ	աշխար
խորհուրդ	խորուրթ
արհամարհել	արհամարել
շնորհքով	շնորբով
ճանապարհ	ճանապար
խոնարհել	խոնարել
շնորհակալ	շնորակալ
ժպիրհ	ժպիր
խորհրդակցել	խորրթակցել և այլն:

Բացառություն է կազմում խորհել բառը, որտեղ ն-ն հնչվում է:

8. Ձայնեղ ձ բաղաձայնի արտասանությունը

Բ և ղ բաղաձայնները, որպես հիմնական կանոն, խիստ ազդեցություն ունեն ձայնեղ բաղաձայնների արտասանության վրա: Բացառություն չի կազմում նաև ձ բաղաձայնը, քանի որ Ե-ից և Ղ-ից հետո գրվող ձ-ն, մի շարք բառերում, արտասանվում է Գ. օրինակ՝

1 Վ. Առախչյան, «Ժամանակակից հայերենի հնչյունաբանություն», էջ 25:

գրվում է  
 արձակ  
 արձակագիր  
 արձակել  
 արձակուրդ  
 արձակուրդային  
 արձան  
 արձանագրություն  
 բարձ  
 բարձել  
 բարձիթոդ  
 բարձր  
 բարձրաբերձ  
 դարձ  
 դարձվածք  
 դերձակ  
 խուրձ  
 հարձակվել  
 համարձակ  
 որձ  
 վարձ  
 վերամբարձ  
 փորձ

արտասանվում է  
 արցակ  
 արցակագիր  
 արցակել  
 արցակուրթ  
 արցակուրթային  
 արցան  
 արցանագրություն  
 բարց  
 բարցել  
 բարցիթոդ  
 բարցր  
 բարցրաբերց  
 դարց  
 դարցվածք  
 դերցակ  
 խուրց  
 հարցակվել  
 համարցակ  
 որց  
 վարց  
 վերամբարց  
 փորց և այլն:

Կան բացառություններ՝ մերձավոր, մերձակա, մերձափնյա, մերձբայթյան, մերձենալ, մերձեցում, մերձքաղաքային, մահամերձ, ճակատամերձ, լորձ, լորձաթաղանթ, լորձունք, հորձանուտ, հորձանք, հերձել, հերձված, հերձարան, հերձաբար և այլն:

Ղ-ից հետո գրվում է ձ, բայց արտասանվում է ց. օրինակ՝ ատաղձ-ատախց, բողձալի-բախցալի, գեղձ-գեխց, դեղձ-դեխց, դեղձանիկ-դեխցանիկ, դեղձաչիր-դեխցաչիր, դեղձան-դեխցան, դաղձ-դախց, գուղձ-գուխց, իղձ-իխց, ըղձական-ըխցական, մաղձ-մախց, մղձավանջ-մխցավանջ, ջրահեղձ-ջրահեխց, շնչահեղձ-շնչահեխց, հեղձուկ-հեխցուկ, փղձկալ-փխցկալ և այլն:

Ձայնավորից հետո ձ-ն արտասանվում է ց. օրինակ՝ օձ-օց, օձաբարո-օցաբարո, օձային-օցային և այլն:

Ձ-ն պահպանում է իր գրային արտասանությունը բարդության երկրորդ բաղադրիչում. օրինակ՝ բանաձև, բաղաձայն, համաձայն, ծնկաձև, տձև, աղեղնաձև, հրձիգ, կենտրոնաձիգ, ոտնձգություն, անձեռնահաս, անձեռնտու, միաձույլ, կարթաձող, օձաձև, օձաձուկ և այլն:

Ձ-ն իր ձայնեղությունը պահպանում է ն-ի ազդեցության տակ. օրինակ՝ անձ, անձամբ, անձայն, անձավ, անձեռագործ, անձեռնահաս, անձեռոցիկ, անձև, անձկալի, անձնագիր, անձնակազմ, անձնական, անձրև, անձուկ, անսանձ, առանձին, գանձ, գանձակ, գանձատուն, ընձենի, ընձեռում, ընձուղ, թանձր, թախանձել, ինձ, ինձոր, խանձ, խանձարուր, կաղկանձ, հանձնել, հանձնարարել, հնձել, ձանձրույթ, նախանձ, սինձ, սոսինձ, Փառանձեմ և այլն:

### 9. Ձ բաղաձայնի արտասանությունը

Վերը նշված նույն օրինաչափությամբ, ձայնեղ ջ բաղաձայնը, ը և ղ բաղաձայններից հետո, արտասանվում է որպես շ. օրինակ՝ արջ-առշ, անվերջ-անվերշ, բաղարջ-բաղարշ, թրջել-թրշել, թրջց-թրշոց, Լրջանիկ-Լրշանիկ, մրջուն-մրշուն, վերջ-վերշ, վերջաբան-վերշարան և այլն:

Ձ-ն ղ-ից հետո արտասանվում է շ հետևյալ բառերում՝ աղջիկ-ախշիկ, աղջամուղջ-ախշամուխշ, ողջ-ոխշ, ողջույն-ոխշույն, առողջ-առոխշ, զղջում-զխշում, զղջալ-զխշալ, ողջամիտ-ոխշամիտ, ողջակեղ-ոխշակեղ և այլն:

Ր և Ղ բաղաձայններից հետո ջ-ն պահպանում է իր գրային արտասանությունը հետևյալ բառերի մեջ. լուրջ, լրջամիտ, կամուրջ, կամրջակ, անուրջ, անբջանք, շուրջ, շրջել, շրջան, շրջաբերական, շրջագիծ, շրջադարձ, շրջագեատ, շրջակա, շրջակայք, որջ, հորչորջում, եղջուր, այծեղջուր, եղջերաթաղանթ, ռնգեղջուր, եղջերու, գաղջ, շեղջ, շեղջաբար, շղջիկ և այլն:

Ձայնավորից հետո ջ-ն արտասանվում է շ հետևյալ բառերում. աջ-աշ, աջակից-աշակից, աջակցել-աշակցել, աջակողմյան-աշակողմյան, առաջ-առաշ, անմիջապես-անմիշապես, գիջել-գիշել, գիջում-գիշում, իջնել-իշնել, իջևան-իշևան, նախիջևան-նախիշևան, էջմիածին-էշմիածին, վայրէջք-վայրէշք, մեջ-մեշ, մեջք-մեշք, մեջբերում-մեշբերում, մեջտեղ-մեշտեղ, միջակ-միշակ, միջնորմ-միշնորմ, միջատ-միշատ, միջև-միշև, միջին-միշին, միջօրե-միշօրե, միջնորդ-միշնորդ, ոչիլ-ոշիլ և այլն:

Քացառություններ՝ քաջ, օջախ, անշեջ, շիջուցել, բջիջ, բողբոջ, բարբաջանք, մարմաջ, խոխոջ, գշիլ, ջոջ, քուջուջ, բրբիջ, հաջող, հաջորդ, պղպջակ, ֆարաջա և այլն:

Ն բաղաձայնից հետո ջ-ն պահպանում է իր գրային արտասանությունը. օրինակ՝ նահանջ, նինջ, նարինջ, ջինջ, ականջ, ականջաբույժ, ականջօղ, ականջափող, ասպնջական, խխունջ, մունջ, ասնջար, լանջ, լանջաթաղանթ, տանջանք, վրնջալ և այլն:

Բառաբարդման դեպքում նույնպես ջ-ն պահպանում է իր գրա-

յին արտասանութիւնը. օրինակ՝ անջուր, անջրդի, անջնջելի, արի-  
աջան, ժրաջան, գարեջուր, ջախջախել, ջրջրուկ, բնաջինջ և այլն:

Օտարազգի բառերում ջ-ն պահպանում է իր գրային արտասա-  
նութիւնը. օրինակ՝ բյուջե, խարջ, խորջին, հաջի, հաջաթ, տա-  
ջիկ, պիջակ, Միքելանջելո և այլն:

#### 10. Չայնեղ ր և ո բաղաձայնների արտասանութիւնը

Հայերենում միայն Րաֆֆի և ռոպե բառերն են սկսվում ր բա-  
ղաձայնով և արտասանվում են փափուկ:

Քառամիջում և բառավերջում կրկնակ ր-ը ունեցող բառերը շատ  
քիչ են՝ բերրի, երբորդ, շորորդ, մրբիկ, օրբան, անդորր, տարբ, —  
նույնպես արտասանվում են փափուկ՝ երկար ր:

Օտարազգի բառերը բառասկզբում գրվում և արտասանվում են  
ռ. օրինակ՝ ռադիո, ռադիում, ռայոն, ռասա, ռադիոնալ, ռաֆինադ,  
ռեալիզմ, ռեակցիա, ռեզլամենտ, ռեդիոն, ռեժիմ, ռեժիսյոր, ռեյս,  
ռեկլամ, ռեկորդ, ռեաբիլիտացիա, ռենեգատ, ռենտա, ռեպլիկա,  
ռեպորտաժ, ռեստորան, ռեսպուբլիկա, ռեիզիտնիզմ, ռետլուցիա,  
ռեցիդիվիստ, ռեֆերատ, ռեֆլեկտ, ռեֆորմ, ռիթմ, ռիսկ, ռոմ, ռո-  
ման, ռոմանս, ռոմանտիզմ և այլն:

Նմանաձայնութիւններ կազմված բառերը գրվում և արտասան-  
վում են ռ-ով. օրինակ՝ զոռզոռալ, գոռոռալ, հոհոռալ, մոմոռալ և  
այլն:

Ռ-ով վերջավորվող արմատի կրկնութիւններ կազմված բարդ  
բառերի մեջ թեև առաջին ռ-ն դառնում է ր, բայց այդ հնչյունը չի  
տարբերվում ռ-ից. օրինակ՝ բարբառ-բարբառ, գրգրո-գրգրո, թըր-  
թիռ-թռթիռ, մրմուռ-մոմուռ և այլն:

Օտարազգի բառերի մեջ գրվում է ր, բայց արտասանվում է ռ.  
օրինակ՝ լորդ, լոմբարդ, Բորդո, բուրժուազիա, գվարդիա, ինտեր-  
նացիոնալ, պարտիա, պրոֆեսոր և այլն:

#### ԿՐԿՆԱԿ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Հայերենում կրկնատառ բաղաձայններով բառեր քիչ կան և  
գրանք մեծ մասամբ փոխ առնված օտարազգի բառեր են: Բուն հա-  
յերեն կրկնատառ բառերը բնածայն բառեր են, օրինակ՝ բզզալ,  
տզզալ, դոռալ, զոռալ, թշշալ, ճոռալ, սղղալ, սլլալ և այլն:

Ր-ը, սս, լլ, կկ, մմ, նն և վվ կրկնատառերի հանդիպում ենք  
փոխառյալ, ինչպես նաև հայերեն բառերում:

Վերը՝ ձայնեղ ր բաղաձայնի արտասանութիւն մասին խոսելիս  
եջվեց, որ բառամիջում և բառավերջում կրկնակ ր-ը ունեցող բա-

ռերն են բերրի, երբորդ, շորորդ, մրբիկ, օրբան, անդորր, տարբ,  
որոնք արտասանվում են փափուկ՝ երկար ր:

Սս կրկնատառ բաղաձայններ ունեցող բառերը սովորաբար  
փոխառյալ բառեր են. օրինակ՝ մասսա, Ռոսսի, Ռոսսինի, Ռուստ,  
պեսսիմիզմ և այլն: Այս բառերի մեջ երկու ս-երը արտասանվում  
են որպես մեկ երկար ս:

Կրկնակ լլ-ով գրվում են սովորաբար փոխառյալ բառերը՝  
բիլլ, բալլադա, գալլ, դոլլար, ալլեգորիա, պրոպիլլեր, վիլլա, շիլ-  
լինգ, Շիլլեր և այլն: Կրկնակ լ-երը արտասանվում են որպես մեկ  
երկար լ:

Հայերեն բառերի մեջ կրկնակ լ-երի մեջտեղը արտասանում  
ենք չգրվող ը ձայնավորը. օրինակ՝ լլկել-լլկել, լլկանք-լլկանք,  
խկ սլլալ բառը արտասանվում է սլլալ:

Կրկնակ կկ բաղաձայններով բառերը փոխառյալ բառեր են.  
օրինակ՝ ալկորդ, ալկոհոլիտիվ, Ջիլետ և այլն, իսկ հայերեն բա-  
ռաբարդված՝ երկկերպ, երկկողմանք, երկկենցաղ բառերում կկ  
արտասանվում է որպես մեկ երկար կ:

Հայերեն կկու, կկոցել, կկզել բառերում կրկնակ կ-երի մեջ  
արտասանվում է ը ձայնավորը:

Մմ կրկնակ բաղաձայններով բառերի սովորաբար հանդիպում  
ենք օտարազգի բառերի մեջ՝ գամմա, դիլեմմա, էմմա, Ջեմմա,  
որոնք արտասանում են որպես մեկ երկար մ:

Կրկնատառ նն-ով գրվող հայերեն սակավաթիվ բառերում՝  
ղննել, քննել, քննութիւն, Աննա, Հովհաննես և ն հնչյունով վեր-  
ջացող բաղաձայնակ բառերի հոգնակի թվում ստացվող երկու  
ն-երը՝ սեղաններ, նստարաններ, գազաններ, արձաններ, մարմին-  
ներ և այլն արտասանվում են որպես մեկ երկար ն:

Վվ գրվող հայերեն՝ հովվերգու, հովվութիւն, ապահովվել,  
թովվել, նզովվել, խորովվել և այլ բառերում կրկնակ վվ արտա-  
սանվում է որպես մեկ երկար վ:

#### ՍՆԱԼ ՇԵՇՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզուն, ինչպես և ֆրանսերենը, ունի բառաշեշտի կա-  
յուն սիստեմ: Հայերենում, որպես հիմնական կանոն, շեշտը դըր-  
վում է վերջին վանկի վրա: Օրինակ՝ ազա՛տ, ազատութիւն՛ն, ազ-  
նի՛վ, ազնիվացե՛ղ, գույթալի՛ն, զվարճալի՛, հեռո՛ւ, թոշակատո՛ւ,  
սոցիալի՛զմ, կոմունիստակա՛ն և այլն:

Բացառութիւն են կազմում.

ա) այն բառերը, որոնք վերջանում են ը ձայնավորով, որը չի շեղավում. օրինակ՝ բանակը, բանվորը, ընտանիքը, Հայաստանը, քաղաքավարութիւնը, շնորհավորանքը և այլն.

բ) գաղտնավանկ, կամ մեկուկես վանկ ունեցող բառերը, որոնց վերջին կիսավանկում ը ձայնավորը լսվում է, բայց չի գրվում. օրինակ՝ դո՛ւստր, հա՛մր, լո՛ղր, ա՛ստղ, վա՛գր, ծո՛ւնր, կա՛յսր, քա՛ղցր, ա՛րկղ, ո՛ղն, նո՛ւր, նե՛գր, ծա՛նր, կա՛րծր, սա՛նր, մե՛ղր, ա՛նգղ, բա՛րձր, ցա՛ծր, տե՛տր և այլն.

գ) նույն կարգի այլ բազմավանկ բառերի մեջ շեղավում է նախավերջին վանկը. օրինակ՝ այսի՛նքն, ուրե՛մն, երբե՛մն, առնը՛վա՛զն, մանրամա՛սն և այլն.

դ) մի շարք բառեր, որոնց շեղան ընկնում է առաջին վանկի վրա. օրինակ՝ մի՛թե, գրե՛թե, նո՛ւյնիսկ, նա՛մանավանդ, ո՛րեէ՛, նա՛ն և այլն.

ե) որոշ բառեր, որոնց շեղան ընկնում է նախավերջին վանկի վրա. օրինակ՝ մինչև՛ իսկ, իհա՛րկե, որպե՛սզի.

զ) փոփոխական շեղտ ունեցող բառերը, որոնք երկու ձևով էլ շեղավում են՝ երբեմն առաջին, երբեմն վերջին վանկով. օրինակ՝ ինչքան, որքան, այսքան, այդքան, այնքան, որչափ, այնչափ, ինչպես, այսպես, այսպիսի, նույնպիսի, որտեղ.

է) կոչականները և դասական թվականները նույնպես շեղավում են երկու ձևով, այսինքն՝ առաջին կամ վերջին վանկով. օրինակ՝ Գա՛վիթ-Գավի՛թ, Շո՛ւշան-Շուշա՛ն, Մա՛րտիրոս-Մարտիրո՛ս, ա՛ռաջին-առաջի՛ն, հի՛նգերորդ-հինգերո՛րդ, ո՛ւթերորդ-ութերո՛րդ և այլն:

Թվարկված բացառություններն ապացուցում են, որ հայոց լեզվում կան մի շարք բառեր, որոնց վերջին վանկը չէ, որ շեղավում է: Այս հիմունքով էլ պետք է մոտենալ ուսուցիչներից և եվրոպական լեզուներից փոխ առնված բառերի շեղտագրութանը: Օտար լեզուներից փոխառյալ բառերի շեղտագրութունը մեծ մասամբ պետք է մնա նույնը, հատկապես հատուկ անունների, քաղաքական, գիտական հանրածանոթ և իր-ով վերջացող բառերը պետք է արտասանել այն լեզվի շեղտագրութամբ, որտեղից փոխ են առնված այդ բառերը: Օրինակ՝ Ամե՛րիկա, Ա՛սիա, Եվրո՛պա, Ա՛ֆրիկա, Ա՛նգլիա, Կո՛ւբա, Ինդոնե՛զիա, Ֆրա՛նսիա, Բրազի՛լիա, Կանա՛դա, Լե՛նին, Վորոշի՛լով, Գյո՛թե, Շի՛լլեր, Պո՛ւլկին, Շո՛լոխով, է՛մմա, Լի՛զա, Իզե՛ա, ռեյոն՛ցիա, դիալեկտիկա, դիաֆրա՛զմա, ինֆորմացիա, դեկլարացիա, գետլո՛գիա, ֆիլոլո՛գիա, լիբրե՛տտո, ռեսպոնդենտիկա, ֆա՛բրիկա, ֆի՛զիկա, քի՛միա, ֆի՛րմա, օ՛պերա, օպերա՛զիցիա և այլն:

Փոխառյալ բառերի հոլովված ձևերը շափազանց հեշտութամբ են ենթարկվում հայերենի շեղտագրութանը և այդ օրինաչափութիւնը չպետք է դիտել որպես «միջին ճանապարհ»: Եթե Լե՛նին հատուկ անունը շեղտը կրում է առաջին վանկի վրա, ապա նրա հոլովված ձևը՝ Լե՛նինի՛ գաղափարը, Լե՛նինի՛ց օրինակ վերցնել, Լե՛նինի՛ն նմանվել — հայերենի շեղտագրութան օրինաչափութիւնն է: Նույնը վերաբերում է և աշխարհագրական անուններին. օրինակ՝ Ա՛նգլիա—Անգլիայի՛, Անգլիայի՛ց, Գերմա՛նիա—Գերմանիայի՛ բանվորութիւնը, Ա՛ֆրիկա—Աֆրիկայի՛ց եկած նեգրերը, Լո՛նդոն—Լոնդոնի՛ շուկան և այլն:

Օտար լեզուներից փոխառյալ քաղաքական և գիտական բառերի հոլովված ձևերը նույն օրինաչափութամբ վերջնաշեղտ վերցնում են. օրինակ՝ ինֆորմացիա—ինֆորմացիայի՛ց, օպուլիցիա—օպուլիցիայի՛ ջախջախումը, դիալեկտիկա—դիալեկտիկայի՛—դիալեկտիկայի՛ց—դիալեկտիկայով, քի՛միա—քիմիայի՛ զարգացումը և այլն:

## ԽՈՍՔԻ ՀՆՉՄԱՆ ԿՈՒՆՈՒՐԱՆ

Կուլտուրական-գեղարվեստական և հոետորական խոսքի հընչման օրինաչափություններն ընդգրկում են բառապաշարի, ոճի, ուղղախոսության, շեշտադրության և հնչման արտահայտչականության չափազանց հետաքրքրական ու բարդ խնդիրները:

Մոսքի ոճական կառուցումը, առաջին հերթին, կախում ունի նյութի բառապաշարի լավորակությունից և հարստությունից: Մեր հայ լեզուն հարուստ է, գունեղ և բարեհնչյուն, ուստի խոսքի վարպետության համար պայքարը պետք է մղվի բառապաշարի հարստացման բնագավառում: Բառապաշարի հարստությունը ձեռք է բերվում գեղարվեստական և այլ գրականության, գիտությունների, բառարանների, ինչպես նաև մեր կյանքի բազմազանության ու խորության ուսումնասիրության շնորհիվ: Մ. Գորկին ասել է. «Անհրաժեշտ է նաև կարողանալ ընտրել ամենաճիշտ, ամենապարզ և ամենաուժեղ խոսքերը», — քանի որ լեզվի իսկական գեղեցկությունը, որպես ներգործոն ուժի, ստեղծվում է նրա «ճշտությամբ, գունեղությամբ ու հնչունությամբ»<sup>1</sup>:

Չնայած բառապաշարի հարստության արժեքավորությանը, այնուամենայնիվ նա չի կարող ապահովել խոսքի կուլտուրան, եթե չի մշակված խոսքից օգտվելու մեթոդը: Բառերը հասկանալը դեռ չի նշանակում հասկանալ միտքը, առավել ևս՝ արտահայտել այդ միտքը: Խոսքը դառնում է մտքի, զգացմունքի, կամքի արտահայտիչ միայն այն դեպքում, երբ յուրացված են բառերի օգտագործման մեթոդները: Յուրաքանչյուր հոետոր պետք է գտնի ու մշակի իր խոսքի կառուցման և օգտագործման այն ձևերը, որոնք մեծ մասամբ կախում ունեն խոսողի անհատական առանձնահատկություններից:

Խոսքի ժազման ու զարգացման բազմադարյան պատմությունը

<sup>1</sup> М. Горький. «О прозе», Собр. соч., 1953 г., т. XXV, стр. 387, 407.

ցույց է տալիս, որ նրա հարստացման ու կատարելագործման համար մղվող պայքարը հավասար չափով վերաբերում է թե՛ բանավոր և թե՛ գրավոր խոսքին: Բանավոր խոսքի առավելությունը նրա արտահայտչական ներգործությունն է լսողի վրա, իսկ գրավոր խոսքը այդ բացը փոխհատուցում է մեծ բառապաշարով և հղկված ոճով: Եթե ոճը մեր մտքերն ու զգացմունքներն արտահայտելու ստեղծագործական յուրահատուկ ձևն է՝ օրգանապես զոդված նրա բովանդակության հետ, ապա բոլոր ժամանակներում էլ խոսքի ոճը հանդիսացել է ազդեցիկ միջոց, միշտ էլ ձգտելով դառնալ կատարյալ և արտահայտիչ:

Խոսքի հնչման տեսակետից թե՛ մեծահարուստ բառապաշարը և թե՛ վեհագույն ոճը ենթակա են ուղղախոսական-շեշտադրական կանոնների: Խոսքի կուլտուրայի այդ տարրեր, բայց միմյանց հետ սերտ կապ ունեցող բնագավառներից յուրաքանչյուրը կարող է առանձին տեսումնասիրության նյութ հանդիսանալ: Սակայն մեր նպատակն է պարզաբանել խոսքի հնչման արտահայտչական կուլտուրային վերաբերող միայն մի քանի հարցեր:

Բանավոր, կենդանի խոսքը, որն արտասանվում է անկեղծ, մտածված ու զգացմունքով, մեզ գրավում է ոչ միայն մտքի տրամաբանությամբ, ոճի կառուցվածքով և ինքնատիպությամբ, այլև տոնալ-հնչման արտահայտչականությամբ:

Խոսքի հնչման արտահայտչականությունն իր մեջ ունի անբավ հնարավորություններ, որոնք հոետորին, դերասանին կամ ասմունքողին հնարավորություն են տալիս ամենանուրբ թելերով կապվելու և շփման մեջ մտնելու հանդիսականի կամ լսողի հետ: Ունկնդիրների հետ այդ շփումը հոետորին թելադրում է խոսքի հնչման գունավորումներին տալ պատկերավորություն և ցայտուն արտահայտչականություն: Ունկնդիրների հետ այդ գործուն շփումը միաժամանակ ծնում է համապատասխան դիմախաղ, շարժումներ:

Բանավոր խոսքը, արտասանական տոնի տեսակետից, շատ ավելի բարդ ու հարուստ կուլմեր ունի, քան գրավոր խոսքը:

Բանավոր խոսքը խոսողի կենդանի շունչն է, համեմված նրա դիմախաղով, շարժումներով, անմիջականությամբ, որով և նա կենդանի կապ է ստեղծում իր և ունկնդիրների միջև:

Յուրաքանչյուր խոսող ձգտում է իրեն հատուկ խոսելատոնին, որը բխում է նրա անհատական գծերից՝ բնավորությունից, խառնըվածքից, մտածելակերպից և այլն:

Մեր սովորական խոսակցությունների ժամանակ մենք պահպանում ենք այն հիմնական տոնը, որը խոսելաձևի նորման է: Բայց գեղարվեստական ընթերցման կամ հասարակական ելույթի

ժամանակ այդ հիմնական տոնը՝ ձայնի բարձրությունը, ուժը, խոսքի արագությունը՝ տեմպը, դադարները սկսում են իրենց նորմալից դուրս գալ. ուստի այդ տարրերի՝ նորմալից թեքումը խոսքին տալիս է որոշ աստիճանի արտահայտչականություն: Օրինակ, հանգիստ կամ նորմալ վիճակից դուրս գալով, մենք ջղայնանալով մեկի վրա, բղավում ենք. «Ռո՛ւրս...», նորմալ վիճակի համեմատությամբ սա հակադրական վիճակ է, և խոսքի սովորական նորմալ խախտումով ուժեղանում է նրա արտահայտչականությունը:

Հակադրության դերն արվեստի մեջ շատ մեծ է: Խոշորագույն արվեստագետներից շատերը կարծում են, որ չկա արվեստ, եթե չկա հակադրություն: Իրոք, երևույթների հակադրումը արտահայտչականության լավագույն միջոցն է:

Խոսքի մեջ տոնալ միջոցների հաջորդականությունը նույնպես հակադրություն է. օրինակ՝ ձայնի ուժեղացումից-թուլացում, բարձրացումից-իջեցում, արագացումից-դանդաղեցում:

Ուշադրությամբ անալիզի ենթարկելով խոսքը, մենք կտեսնենք, որ նա ունի երկու կողմ՝ արտաքին և ներքին:

Արտաքինը դա խոսքի հնչելն է: Խոսքի ուժը կախված է շեշտադրումից. որը խոսքի դինամիկան է:

Խոսքի ֆիզիոլոգիական շարժումը՝ զարգացումը, այսինքն՝ նրա ուղղությունը կախված է խոսքի ներդաշնակությունից, խոսքի արագությունը՝ դա նրա տեմպն է, իսկ խոսքի շարժման ընդմիջումը դադարն է:

Այսպիսով, ներդաշնակությունը, տեմպը, շեշտը և դադարը խոսքի արտաքին բաղադրիչներն են:

Խոսքի ներքին բաղադրիչներն են՝ զգացմունքը, տեմպերամենտը, կամքը և միտքը:

Խոսքի ներքին և արտաքին բաղադրիչները օրգանապես ձգտում են ձուլվել, զոդվել, ըստ որում արտաքին բաղադրիչները հակում ունեն սպասարկելու ներքին բաղադրիչներին, նկատվում է, որ արտաքին յուրաքանչյուր բաղադրիչ ձգտում է իր սիրած ներքին բաղադրիչին: Օրինակ՝ միտքը ձգտում է դադարին, քանի որ լուելը համակենտրոնացված ներքին խոսքն է: Յուրաքանչյուր մարդ պետք է տիրապետի լուելու դժվարին գործին, մինչև որ կհասնի նրա խոսելու պահը: Խոսքի ներքին բաղադրիչ զգացմունքը ձգտում է արտաքին բաղադրիչ ներդաշնակությանը, կամքը՝ դինամիկային (շեշտին), իսկ տեմպերամենտը՝ տեմպին<sup>1</sup>:

<sup>1</sup> И. Я. Блинов, «Выразительное чтение и культура устной речи». Москва, 1946 г., стр. 89—95.

Խոսքն ավելի արտահայտիչ է դառնում, երբ մեր ձայնը չի հնչում միանման, միապաղաղ, այլ բարձրանում է և իջնում: Մեղեղու կամ մելոդիայի այդ երանգախաղերը ձայնի մեջ կոչվում են բարեննչյունություն:

Քարեննչյունությունը լինում է երկու տեսակ.

ա) Եռմալ, որը վերաբերում է քերականորեն և տրամաբանորեն նորմավորված խոսքին և

բ) կենդանի, որն հանդիսանում է ամբողջ իմաստային-հուղական համակցության արդյունք և ըստ էության հանդիսանում է նորմալ բարեննչյունության կանոնների խախտում:


Նորմալ բարեննչյունությունը մեզ սովորեցնում է կիրառել ձայնական որոշակի ելևէջներ որոշակի, կոնկրետ, կայուն և կանոնի ուժ ստացած դեպքերում. օրինակ՝ ստորակետից առաջ ձայնը բարձրանում է, վերջակետից առաջ՝ իջնում, հարցական բառի վրա զգալիորեն բարձրանում և այլն: Նորմալ բարեննչյունության այս ստանդարտ չնթացքը, թեև դպրոցական ընթերցանության երանդ ունի, բայց պարտադիր է բոլոր դեպքերում, քանի որ նա առնչվում է բարեննչյունության տրամաբանական դերի հետ, իսկ սա օրգանապես կապված է կետադրության նշանների հետ, որոնք կոչված են ցույց տալու և ընդգծելու խոսքի արտահայտչական կողմերը՝ հարցը, բացականչությունը, շեշտը և դադարը:

Կենդանի խոսքի բարեննչյունությունը ամբողջովին իմաստի հետևանք է: Որչափ մենք պարզ պատկերացնենք խոսքի իմաստը, այնչափ հարուստ ու գեղահնչուն կլինի խոսքը: Այստեղ շափազանց կարևոր դեր է խաղում բարեննչյունության հոգեբանական դերը: Եթե նորմալ բարեննչյունությունը գերազանցապես ստանդարտային է, ապա հոգեբանական բարեննչյունությունը կենդանի-ստեղծագործական է և հենվում է լիարժեք և երազանքալիկ վրա, այսինքն՝ մարդու ներքին դիտավորությունների վրա, որոնք տեքստում հաճախ չեն արտացոլվում: Խոսքի մեջ բարեննչյունությունն ավելի մեծ ուժով և համոզականությամբ արտահայտում է հույզը: Եթե դերասանի կամ հոստորի մեջ այդ հույզը չբռնկի, ապա նա չի կարող վարակել և հուղել ունկնդրին: Հուզական խոսքը հարուստ է ձայնական ելևէջներով. առանց ձայնի փոփոխման՝ ուժեղացման կամ թուլացման, բարձրացման կամ իջեցման, ինչպես նաև առանց խոսքի տեմպի արագացման կամ դանդաղեցման չի կարող ստացվել հուզական խոսք:

Խոսքի ներդաշնակությունը, ինչպես և երաժշտության մեջ,

կապ՝ ունի ձայնի ելևէջները, տատանումների հետ: «Ամո՛ք, Բեզ Սոսի» նախադասության մեջ խոսքի ներդաշնակությունը չափազանց ցայտուն է «ամոք» բառում, որտեղ ա ձայնավորի համեմատությունը ու ձայնավորը հնչում է գրեթե մեկ օկտավա բարձր: Հոետորը և դերասանը պետք է համարձակ կերպով օգտվեն իրենց ձայնածավալից: Որչափ մեծ լինեն տատանումները և ըստ խոսքի իմաստի անհրաժեշտ ձայնական փոփոխությունները, այնչափ ցայտուն և հուզական կլինի արտասանությունը կամ հոետորական ճառը:

«Քայլի՛ր, Բարավան, ի՛նչ ենք թողել մենք, որ կառուտանա՞նք ցանկանա՞նք մե՛ր դարձը» — այս ոգեշունչ բանաստեղծական խոսքի մեջ կենդանի ներդաշնակությունը՝ միանգամից թափ առնելով «Քայլի՛ր» բառի ի ձայնավորի վրա, իր գաղաթնակետին է հասնում «ի՛նչ ենք» բառի դարձյալ ի ձայնավորի վրա, իսկ հետո, հաջորդ բառերն արտասանելիս ձայնը հանդարտ, սահելով, իջնում է: Գծադրական սխեմայով կատարվի հետևյալ պատկերը:



Որևէ նախադասության վերաբերող ներդաշնակությունը ամբողջությամբ վերաբերում է նաև ամբողջ կտորին կամ ճառին: Ճառի մի մասը կարող է գնալ ցածր ձայնով, մի որոշ մասը՝ բարձր, ապա միջին, նորից բարձր և այլն: Դրանով իրագործվում է ամբողջ ճառի էրանգավորման կոմպոզիցիան:

Կենդանի բարեհնչյունությունն ավելի ակնբախ է հուզական խոսքի մեջ, որի բնորոշ կողմերն են ձայնական համարձակ և ցայտուն ելևէջները, իրենց համապատասխան հուզական երանգավորումներով (օրինակ՝

սերը պահանջում է քնքույշ և կրքոտ ձայն,  
բարկությունը՝ սրընթաց, շոր, խիստ, ընդհատվող,  
վիշտը՝ խորտակված, գանգատվող, հառաչող,  
ուրախությունը՝ թեթև, հուզված,  
ատելությունը՝ կծու, խիստ,  
առհամարհանքը՝ թեթև, հեղնական,  
գաղտնիքը՝ շուկ, խորհրդավոր և այլն:

Այս բնորոշումները պայմանական են, քանի որ հուզական որևէ տիպի խոսքը չափազանց շատ երանգներ ունի և յուրաքանչյուր երանգ պետք է արտահայտվի ձայնական տարրեր նրբության ներդաշնակությամբ, հակառակ դեպքում՝ ընդհանուր բնորոշումները շտամպ կստեղծեն:

Չնայած բարեհնչյունությունը խոսքի մեջ տարբեր բնույթի դերեր է կատարում և արձագանքում մտքին, կամքին ու զգացմունքին, բայց հիմնականում նա զգացմունք է արտահայտում: Հոգեբանական դերին զուգահեռ նա իր սրամարանական դերը կատարում է «ըստ համատեղության» ընկերաբար օգնելով և՛ շեշտին, և՛ դադարին, սակայն իր հիմնական էներգիան նվիրում է հուշվին:

**ԽՈՍՔԻ ՏԵՄՊԸ**

Խոսքի արագությունը կոչվում է տեմպ: Տեմպը կարող է լինել՝ դանդաղ, միջին, արագ և շատ արագ:

Տեմպը յուրահատուկ է բանավոր խոսքին: Որչափ խոսքը բարդ է, այնչափ բաղձազան է տեմպը:

Սովորական խոսակցության ժամանակ յուրաքանչյուր անձնավորություն ունի իր խոսելու նորմալ տեմպը: Գեղարվեստական ընթերցումը և հոետորական ճառը նորմալ տեմպի շեղումն է:

Ըստ Բենեդիկտի՝ տոնը ունի երեք զույգ լծակ. ա) բարձրացում-իջեցում, բ) ուժեղացում-թուլացում և գ) արագացում-դանդաղեցում: Կենդանի խոսքի մեջ վերջին՝ երրորդ լծակը տեմպի լծակն է և նա է, որ աշխուժացնում է խոսքը:

Տրամարանական խոսքը դյուրըմբռնելի է դառնում դադարների միջոցով, կամք արտահայտող խոսքը՝ շեշտի, իսկ հուզական խոսքը՝ բարեհնչյունության միջոցով: Ինչ վերաբերում է տեմպին, ապա նա խոսքի վերոհիշյալ երեք տեսակների մեջ կատարում է սպասարկու-օժանդակող դեր: Տեմպի դերը սրամարանական խոսքի մեջ նվազագույնի է հասնում, կամք արտահայտող խոսքի մեջ՝ զգալի չափերի, իսկ հուզական խոսքի մեջ՝ առավելագույն չափի:

Տրամարանական խոսքի մեջ, որտեղ գերակշռում է բառերի իմաստը, տեմպը և դադարը առաջին հայացքից իրար հակադիր են թվում, բայց խոսքի տեմպը, մինչև դադարը և դադարից հետո, այդ խոսքն ուժեղացնող և արտահայտիչ դարձնող ձևերից մեկն է: Օրինակ՝ «Տիեզ այն ժամը լուսլուսնը, որ կառկամեցնում է սիրտը և լեզուն, երբ խոսքը դառնում է անգուր ասելու այն մեծ տագնապն ու հուզումը, որ տիրում է մարդկանց մի նակատագրական գործ սկսելուց առաջ» (Դ. Դեմիտրյան, «Վարդանանք»):

Տեմպի առնչությունը շեշտի հետ արտահայտվում է նրանում, որ շեշտը, հանդիսանալով կամքի արտահայտություն, շփման մեջ մտնելով տեմպի հետ, խոսքին տալիս է հոգեբանական վեհություն և լայնություն: Նման դեպքերում տեմպը դանդաղում է և արտասանվող յուրաքանչյուր բառ շեշտվում է: Դրա հետևանքով շեշտվող բառը դառնում է ցայտուն, արտահայտիչ և երաժշտական: Օրինակ՝

«Ահա՛ թե ինչո՛ւ է երգս հաղթական,  
Ահա՛ թե ինչու է իմ ձայնն այսօր  
Հավերժի նման համա՛ն ու հաստա՛տ»:  
(Ե. Զարենց, «Դեպի ապագան»)

Բարեհնչունության մեջ տեմպը կատարում է օժանդակ-սպասարկողի դեր, բայց ընդհանուր առմամբ, հատկապես դանդաղ և շեշտված խոսքի մեջ, տեմպը նրան հաղորդում է սահունություն, վեհություն և զեղահնչունություն: Օրինակ՝

«Արդյո՞ք հիշո՞ւմ ես. անտառ էր, առու...  
Նեֆիաթի պես էր — երազի նման.  
Խաղաղ երեկոն խոսում էր անձայն,  
Արդյո՞ք հիշո՞ւմ ես. — հեռո՞ւ էր, հեռո՞ւ...»  
(Վ. Տերյան, «Սենտիմենտալ երգ»)

Այսպիսով տեմպի վանազան հատկությունները ցուցանիչ են այն բանի, որ տեմպը խոսքին կյանք տվող, շունչ տվող կողմ է, առանց որի խոսքը կդառնա անկենդան ու դալուկ:

ՇԵՇՏ

Պետք է տարբերել բառաշեշտը արամբանական շեշտից: Հայոց լեզվի ուղղագրության հիմնական կանոնների համաձայն՝ բառի մեջ շեշտը դրվում է վերջին վանկի վրա: Կան մի շարք բացառություններ, որոնց մասին նշված է ուղղագրությանը նվիրված գլխում:

Եթե բառաշեշտը դրվում է բառի որևէ վանկի ձայնավորի վրա, ապա արամբանական շեշտը դրվում է նախադասության որևէ բառի վրա և շեշտվող բառի օգնությամբ նախադասության միտքն իմաստավորվում է և դառնում դուրբմբռնելի: Խոսքի մեջ արամբանական շեշտը դա ձայնի՝ սովորականից ավելի օժեղ հնչումն է որևէ բառի, կամ բառախմբի վրա: Շեշտը հանդիսանալով մեր կամքի արտահայտությունը, խոսքին եռանդ, էներգիա է տալիս: Շեշտը կարելի է նմանեցնել լապտերի, որի լույսով մթության

մեջ լուսավորվում է առարկան՝ շեշտված բառը: Նախադասության մեջ, սովորաբար, արամբանական շեշտը դրվում է մեկ բառի վրա՝ քայց այդ չի նշանակում, որ պետք է անտեսվեն մյուս բառերը, քանի որ նախադասության մեջ գոյություն ունի բառերի ստորակարգություն՝ կարևոր, երկրորդական և սպասարկող խոսքեր, և մենք, սահելով օժանդակ և երկրորդական բառերի վրայով, ձգտում ենք գլխավոր, կենտրոնական բառին: Այս առումով քարոզ նախադասությունների մեջ շատ ավելի դժվար է որոշել, թե արամբանական շեշտը ո՞ր բառի, կամ ո՞ր բառախմբի վրա պետք է դրվի: Նախադասության մեջ կիրառվող շեշտը պետք է արտահայտի մեր կամքը, արամբանորեն իմաստավորի նախադասության հիմնական միտքը՝ և ձայնի հնչման տեսակետից, նախադասության մեջ շեշտվող մյուս բառերի ֆոնի վրա, լինի ավելի ցայտուն ու արտահայտիչ: Օրինակ՝ «Երբեմն մայրերը կարող են իրենց հարազատ զավակների քնամիկ լինել» (Շիրվանզադե, «Արտիստը»): Այս նախադասության մեջ հեղինակի միտքը ճիշտ բռնկելու համար պետք է շեշտվեն՝ մայրերը և թշնամի բառերը, քանի որ հետագա նախադասությունների մեջ հեղինակը պարզաբանել է, որ թեև և՛ունի մայրը սիրում էր իր որդուն, և որդին էլ իր հերթին մորը, բայց իրար շահականալու, մոր անվերջ նախտինքների ու հանդիմանությունների հետևանքով նրանց մեջ մի ահագին վիճ էր առաջացել, որը և և՛ունի դժբախտության ու ող-տերգական վախճանի պատճառը դարձավ:

Տրամբանական շեշտը, որպես կանոն, ընդունում են.

1. նախադասության մեջ ենթական և ստորոգյալը, որոնք հանդիսանալով գլխավոր անդամներ, ամենից առաջ ձգտում են դառնալ շեշտված բառեր: Մեզնից է կախված, թե դրանցից, տրվյալ դեպքում, որին առաջնություն տալ: Օրինակ՝ նրանք խուզարկեցին բնակարանը. այստեղ նպատակն է՝ պարզել գործողությունը, ուստի և շեշտվում է ստորոգյալը: Հրամանատարը մոտեցավ զինվորներին. ցանկանում ենք ընդգծել, որ մոտեցողը հրամանատարն է, ուստի և շեշտվում է ենթական:

2. Սեռական հոլովով գործածվող բառերը. օրինակ՝ առաջնորդի դերը, ուսանողի վարքը, Աննայի գիրքը և այլն:

3. Ածականներն ու մակդիրները. օրինակ՝ կանաչ դաշտ, գյուղացիական շարժում, ֆար սիրտ, ազնիվ մարդ և այլն:

4. Կոչական և բացականչական բառերը. օրինակ՝ «Ն՛յ, ազատության անպարտ զինվորներ»: «Ա՛խ, մեր սիրտը լիքը դարդ, ցավ»: Արա՛մ, արդեն ուշ է:

5. Հարց պարունակող բառերը. օրինակ՝ ո՞ր ես գնում, նա քեզ ապականե՞ց, ի՞նչ ես ուզում դու նրանից:

6. Բայի ժխտական ձևը. օրինակ՝ ես չեմ երգի, դու չես խոսի, նա չի կարդա, նրանք չլիմացան գրոհին: Ը

7. Համեմատվող բառերը. օրինակ՝ սալիտակ, ինչպես ձյունը, սև, ինչպես ածուխը:

8. Հակադիր բառերը. օրինակ՝ նա մեկնեց ոչ թե աջ, այլ ձախ ձեռքը: Գեմուկրատիզմի փոխարեն երկրում ծավալվեց ռեակցիան:

9. Հարադրական բարդությունների մեջ շեշտվում է նախորդ բաղադրիչը. օրինակ՝ թո՛ւյլ տալ, վե՛ր կենալ, սի՛րտ անել, մո՛տ գալ, լո՛ւյս ընկնել, կառե՛լ անցնել և այլն:

10. Նոր իմաստ հաղորդող բառերը. խոսքի մեջ արդեն շոշափված բառերը չեն շեշտվում, բայց այն ինչ նոր է, դեռ անծանոթ է, որի մասին դեռ չի խոսված, շեշտ է պահանջում:

Օրինակ.

Մանկույթում է իմ քնքշագին, ես քեզ ինչպե՞ս մոռանամ.

Ցավով լցրիր իմ հոգին,—ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

Դեռ չծաղկած թռչնեցիր, հանգառ ինչպես ուր մանուկ,

Կարոտ խինդի կրակին,—ես քեզ ինչպե՞ս մոռանամ:

(Սարմեն, «Գազել մանկություն»)

11. Մի հայտարարություն արտահայտող բառերի վերջին բառը. օրինակ՝ վախճանվեց Սովետական Միության ժողովրդական արտիստ, դրամատուրգ Վաղարշ Վաղարշյանը:

12. Հանրագումարի բերող բառերը. օրինակ՝ ամեն ինչ վերջացավ, այսպիսով ամփոփելով մեր միտքը:

13. Թվարկվող բառերը. օրինակ՝ գործարանում աշխատում էին ռուս, հայ, վրացի բանվորներ:

14. Կրկնվող բառերը. օրինակ՝ ո՛չ, ո՛չ, դա անհնարին է. Բավակա՛ն է, բավակա՛ն է, դուք ինձ ձանձրացրիք:

15. Գիմում, որով սկսվում է նախադասությունը. օրինակ՝ ֆաղաֆացի՛ դատավորներ, ընկերնե՛ր, սիրելի՛ս և այլն:

16. Մակրայները, որոնք ցույց են տալիս բայի գործողության կամ եղելության

ձևը՝ ուժգին, դարձյալ, նորից, շարունակ, իսկույն...

տեղը՝ ամենուրեք, ներքուստ, սարնիվեր...

ժամանակը՝ հիմա, այժմ, նախ, այսուհետև...

Բանակը և աստիճանը՝ բազմիցս, եռակի, չափազանց, ավելի

ևս, քիչ-քիչ և այլն:

Շեշտը մեր կամքի արտահայտությունը լինելուց բացի, ունի

նաև հոգեբանական դեր: Հոգեբանական շեշտը խոսքին տալիս է հուզականություն, ուժեղացնում է հոետորի տրամադրության հաղորդումը: Հոգեբանական շեշտը հաճախ չի ենթարկվում տրամաբանական շեշտի կանոններին, այլապես նա ևս կդառնար խոսքի տրամաբանական միտքը իմաստավորող միջոց: Հոգեբանական շեշտը հետապնդում է ոչ թե խոսքը ճշտելու կամ իմաստավորելու, այլ նրան բարձր հուզականություն տալու նպատակ: Շատ անգամ մի որևէ շաղկապ՝ և, բայց, սակայն, այլ, իսկ, մանավանդ, եթե, քեև, ուստի և այլն, իր վրա վերցնելով հոգեբանական շեշտ, խոսքը դարձնում է վերին աստիճանի լարված ու հուզական: Օրինակ՝ երկարատև դատավարությունից հետո, մարդասպանի վերաբերյալ գործին մասնակցող դատախազը ավարտելով իր մեղադրական ճանար, պահանջում է՝ մեղադրյալին դատապարտել պատժի առավել լազույն չափի՝ գնդակահարության..., բայց նկատի ունենալով, որ հանցանքը կատարելու ժամանակ մեղադրյալի 18 տարին լրացած չի եղել, գնդակահարությունը փոխարինել ազատազրկմամբ՝ 15 տարի ժամանակով: «Դատասպարտել գնդակահարության» բառերն արտասանելուց և դատական դահլիճում տիրող լարված մթնոլորտում որոշ դադարից հետո հոգեբանական շեշտով արտասանված «բայցը», կարող է հուզականությունը հասցնել իր գաթնակետին:

Ամփոփելով, կարող ենք ասել, որ խոսքի մեջ շեշտը արտահայտում է մեր կամքը, համոզմունքը, վճռականությունը, էներգիան, որով և նա խոսքին տալիս է ճշտություն, հստակություն, ակտիվություն և հուզականություն:

#### ԳԱՐԱՐ

Խոսքը չի կարող անընդհատ հնչել. նա հաճախ ընդհատվում է և այդ ընդհատումները կոչվում են դադարներ:

Խոսքի մեջ դադարը նախ ֆիզիոլոգիական պահանջ է: Խոսքը հնչում է արտաշնչման ժամանակ, իսկ ներշնչման ժամանակ պետք է լռել: Խոսքի կենսաբանական այդ ընդհատումները հոգեբանորեն հարմարեցվում են խոսքի արտահայտչական պահանջներին: Երբ խոսողը դադար է տալիս, հանգստանում է նրա ձայնը, մյուս կողմից էլ՝ լսողի ականջը: Հմուտ հոետորները, դերասաններն ու երգիչները գիտեն գնահատել այդ կարճատև հանգիստը: Խոսողը դադարի ժամանակ ոչ միայն հանգստանում է, այլև ժամանակ է ունենում կենտրոնանալու, կանոնավորելու իր մտքերը, կապ է ստեղծում խոսքի ու մտքի միջև:

Դադարները լինում են՝ քերականական, տրամաբանական, հոգեբանական, ձևական և ֆիզիոլոգիական:

Քերականական դադարները լինում են գրավոր խոսքի մեջ, որտեղ կետադրական նշանների միջոցով խոսքը մասերի վերածելով, կարողանում ենք հասկանալ այն և իմաստավորել:

Քերականական դադարների տեղումը որոշվում է կետադրական նշաններով. եթե ստորակետի և բուժի համար պայմանական ընդունենք մեկ վայրկյանի տեղումը դադար, ապա միջակետի տեղումը հավասար կլինի 2 վայրկյանի, վերջակետինը՝ 3-ի, իսկ բազմակետի ու կախման կետերի տեղումը՝ 4 և ավելի վայրկյանի, նայած զգացմունքի ու հուզականության աստիճանին:

Նորմալ դադարը քերականական դադարն է, իսկ նրանից շեղվելն ընդգծում է խոսքի գեղարվեստական կողմը, որը կատարվում է տրամաբանական և հոգեբանական դադարներով:

Տրամաբանական դադարը մի ներգործիչ միջոց է խոսքը և նրա իմաստը տրամաբանորեն հարստացնելու համար:

Տրամաբանական դադարի դերն այն է, որ նա խոսքի մեջ ստորարժանման սկզբունք է մտցնում, որն ապահովում է խոսքի հստակությունը, պարզությունը և հասկանալի լինելը: Դադարի միջոցով նախադասությունը մասերի բաժանելով, մենք իշխում ենք դարձվածքին ու նրան հաղորդում խելացի, ընդգծված և տրամաբանական միտք: Սրինակ՝ «Քեստայած աղաւնին V ճախրում էր՝ V կացին մի կանաչ ծղլ պահած, V ճախրում էր / վարպետ Մարգարի մտքերի նման, V սլանում V դեպի դարերի խորքը» (Ս. Խանդավան, «Յոթերորդ աղբյուր»):

Տրամաբանական ոչ ճիշտ, չհիմնավորված դադարները խոսքը դարձնում են անըմբռնելի և անիմաստ: Հոնտորները, դերասանները, ասունքողները և հաղորդավարները հաճախ խախտելով տրամաբանական դադարների կանոնները, իջեցնում են ճառի, արտասանության և ընթերցանության գեղարվեստական որակը:

Տրամաբանական և քերականական դադարները մեծ մասամբ համընկնում են, բայց խոսքի մեջ արժարժող մտքին համեմատ տրամաբանական դադարի տեղումը կարող է տարբեր լինել և չհամընկնել քերականական դադարի հետ:

Դադարը, բացի տրամաբանականից, ունի նաև հոգեբանական դեր. խոսքի մեջ հոգեբանական դադարը արտասանած նախկին խոսքի հոգեկան ապրումների դադարն է և նոր հոգեբանական կյանքի ծնունդը: Կյանքում, ինչպես և բեմում, ամենակրթոտ դիտողները հաճախ ավարտվում են լռությամբ, և այդ դադար-լռու-

ծյունը դիտողի ժայռ աստիճանի լարվածության արտահայտությունն է: Որքան հուզական, խորը, հոգեբանական է խոսքը, այնքան նա հարուստ է հոգեբանական դադարներով: Սրինակ՝

Ալիբաա աշխարհ՝ V ուր հզոր ոսկին գարձնում է գողին՝

V ազնիվ, բարեհույս.

Ապուշին՝ V հաճնար, վախկոտին՝ V կարիճ, տգեղին՝ V շքեղ և պոռճիկին՝ V կույս:

(Ավ. Բաանկյան, «Աբու-Կալա Մահարի»)

Այստեղ բանաստեղծը հակադրություններով և հոգեբանական դադարներով ընդգծում է իր փոթորկված հուզական աշխարհը:

Այսպիսով, տրամաբանական և հոգեբանական դադարները խոսքը դարձնում են ոչ միայն ըմբռնելի, այլև պատկերավոր և արտահայտիչ:

Ձևական դադարը հիմնականում կիրառվում է բանաստեղծությունների մեջ՝ ընդգծելու համար ոտանավորի շափը. դրա համար յուրաքանչյուր շափածո տողից հետո աննշան դադար է տրվում՝ պահպանելու համար տաղաչափական կառուցվածքն ու սոսնձահատկությունը: Եթե տողավերջի այդ ձևական դադարը չպահպանվի, ապա ոտանավորը կվերածվի արձակի:

Եթե բանաստեղծական տողի հետ միտքը չի վերջանում, ապա ձայնական տվյալներով պետք է ընդգծել, որ նա շարունակելի է: Պրինակ՝

Մենք բաժանված ենք: Օրերի փոշին V

Դեռ չի աղոտել քո դեմքը գունատ.

Բայց ես օտար եմ առդեն այն հուշին,

Ու վեհ էր երգն ու բախտը ժլատ:

(Վ. Տերյան, «Անդարձություն»)

Եթե առաջին տողավերջում ձևական դադարը չպահպանենք, ապա բանաստեղծությունը կկարգացվի որպես արձակ զրվածք՝ «Օրերի փոշին դեռ չի աղոտել քո դեմքը գունատ»: Ոտանավորի շափը պահպանելու համար, տողավերջում ձևական դադարի հետ միասին, «Օրերի փոշին» ձայնական տվյալներով պետք է արտասանվի այնպես, որ լսողի համար առանց տարակուսանքի ըմբռնելի լինի, որ միտքը պետք է շարունակվի ու ավարտվի հաջորդ տողում:

Ֆիզիոլոգիական դադարը, ինչպես բառն է ցույց տալիս, հետևանք է ֆիզիոլոգիական դրությունների՝ հիվանդության, շնչահեղձության, ահաբեկման, շփոթվածության, մկանային կաշկանդ-

վածութեան և այլն: Նման դեպքերում խոսողի համար գոյութիւն չունի դադարի ոչ մի կանոն, քանի որ ֆիզիկական և հոգեկան նորմալ վիճակի խանգարման հետեանքով խանգարվում է նաև խոսքի բնական ու սովորական ընթացքը և դադարներն էլ արվում են պատահական ձևով, անկախ մտքի պահանջներից: Օրինակ՝ դպրոցից տուն վերադառնալու ժամանակ փոքրիկ Արմիկը նկատում է, որ հարևանի շունը, շղթայից պոկվելով, վազում է դեպի իր կողմը: Արմիկը, պայուսակը նետելով, խելակորույս վազում է դեպի մայրը՝ ճշալով, «Մամա՛... Վ մամա՛... Վ Այիկենց շունը, Վ շղթան... Վ վա՛լ... պայուսակ... Վ քրքրեց... Վ շունը... փոշոտեց... գրքերս...»:

#### ՌԻՔՄ

Ռիթմ կոչվում է զանազան տեղութիւն հնչյունների հաջորդականութիւնը, որը կազմվում է առանձին ուժեղ ու թույլ հնչյունների—վանկերի ուժեղացմամբ՝ շեշտերի ու ձայնական ելևէջների օգնութեամբ: Ռիթմը արտահայտում է մեր վերաբերմունքը դեպի հաղորդվող մտքերն ու զգացմունքները: Իր համաշափ բարախումով նա կենդանացնում է խոսքը:

Ռիթմը ցայտուն ձևով երևում է այն ոտանավորի մեջ, որտեղ շափի միավորն է բանաստղն իր օրինաշափ տեղութիւնամբ, շեշտերով և հապաղումներով: Օրինակ՝

Տխուր մեռան կապուտաշյա

Երազները երկնաշող.—

Գագաթներից էս ցած իջա

անդունդները սիրտ մաշող...

(Վ. Տերյան, «Տխուր մեռան...»)

Ուժի, այսինքն՝ դինամիկայի և տեմպի, այսինքն՝ ժամանակի օրինաշափ համաձուլումը ստեղծում է ռիթմ և այդ ռիթմը հիշեցնում է երաժշտական խաղ, որի մեջ տեմպը առանձնապես կարևոր է: Ռիթմը նախազգուշացնում ու կարգավորում է խոսքի անտեղի և անպատեհ արագացումն ու դանդաղեցումը:

Նախադասութեան մեջ կարևոր տեղ է գրավում տրամաբանական ռիթմը: Ինչպես տրամարանական շեշտադրութեան ժամանակ, մենք սահելով սպասարկու և երկրորդական բառերի վրայով, ձգտում ենք դեպի գլխավոր, կենտրոնական բառը և կանգ ենք առնում նրա վրա, նույն կենտրոնաձիգ սկզբունքի կիրառմամբ ստեղծելով տրամարանական ռիթմ, խոսքը դարձնում ենք ավելի ըմբռնելի, զգացմունքային ու հուզական: Օրինակ՝

Ինչպիսի՞ հերոս բնկերենք մեռան,—

Մեռա՞ն՝ շիրան...

Կրա՛կն էր ցայտում նրանց աչք-ունեից,

Շանքը՝ շրթունքից,

Երբ խոսում էին ծով-ամբոխի մեջ

Վիշտ ու կարիքից.

Վրեժի, ցամառն ճով բորբոխված

Նրանք բեմ էլան՝

Եվ բեմը դարձավ արյունով ներկված

Զոհերի սեղան:

Ինչպիսի՞ հերոս բնկերենք մեռան...

(Հ. Հակոբյան, «Մեռան՝ շիրան»)

Ռիթմը, այսպիսով, մի դաստիարակիչ միջոց է հոետորի, դերասանի և ասմունքողի համար, նա պարտավորեցնում է նրանց ուշադիր լինել դեպի խոսքի արտաքին ու ներքին տարրերը, քանի որ ռիթմիկ խոսքը արտահայտչականութեան բնագավառում ծով հնարավորութիւններ է ստեղծում և խոսքի հնչման վարպետութեան լավագույն ցուցանիշներից մեկն է:

#### ԶԱՅՆԵՐԱՆԳ

Մենք ունենք մեր ֆիզիկական, հիմնական նորմալ ձայներանգը<sup>1</sup>, որից շեղվելը մեղ տանում է դեպի գեղարվեստական՝ հոգեբանական ձայներանգը: Հոգեբանական ձայներանգը կախում ունի անձնավորութեան հոգեկան առանձնահատկութիւններից: Առողջութիւնը, հիվանդութիւնը, բարձր տրամադրութիւնը, թախիծը, բնկծվածութիւնը անդրադառնում են ձայներանգի վրա:

Սովորաբար ասում են, որ այս կամ այն դերասանը, հոետորը, երգիչը ունի հաճելի՝ թավշյա կամ շոր, կամ խուլ ձայներանգ: Հիմնականում պետք է ամեն մարդ տիրապետի իր բնական ձայներանգին: Հիմնական ձայներանգի մյուս գունավորումները պետք է օգտագործել, ելնելով կոնկրետ իմացական-հուզական պահանջներից:

Ամփոփելով խոսքի հնչման կուլտուրայի վերաբերյալ շարադրված այս բաժինը, պետք է նշել, որ բանավոր խոսքի գեղարվեստական հնչման վարպետութիւնը պահանջում է նշված

<sup>1</sup> Ձայներանգի մասին տես նաև «Ձայն» բաժնի «Ձայներանգ» (տեմբր) ենթաբաժնում:

վեց տարրերի՝ բարեհնչյունության (մելոդիկայի), տեմպի, շեշտի, դադարի, ռիթմի և ձայներանգի (տեմբրի) օրգանական կապ, ըստ որում գեղավեստական-ստեղծագործական այդ կապողականերում յուրաքանչյուր տարր դրսևորվելով որպես առաջատար, պետք է իր հերթին ենթարկվի տեքստի հիմնական իմացական-հուզական պահանջներին, ձայներանգում արտացոլելով տեքստի գեղարվեստական մեկնաբանությունը:

## ԴԻՄԱԽԱՂ (ՄԻՄԻԿԱ) ԵՎ ՇԱՐԺՈՒՋԵՎ

Խոսելիս մեր մարմինն ապրում է հուզական լարում և նույնպես ձգտում է «խոսել»: Դա խոսքի երրորդ ձևն է՝ կինեմտիկ խոսքը՝ դիմախաղի և շարժումների (ժեստի) խոսքը: Մեր մտավոր արտահայտությունները ձգտում են ֆիզիկական ձևերի: Արտահայտիչ խոսքը և արտահայտիչ ֆիզիկական շարժումներ միմյանց օգնում են: Ցածր կուլտուրայի մարդկանց դիմախաղն ու շարժումներ գերակշռող են: Ուշագրավ է, որ կուլտուրական մարդկանց դիմախաղի և շարժումների լեզուն չի անհետանում: Ըստ Գարվինի՝ «մեր զգացմունքների (կրքերի) մեծագույն մասն այնքան սերտորեն է կապված նրանց արտաքին արտահայտության հետ, որ նրանք աներևակայելի են, երբ մարմինը գտնվում է հանգիստ գրության մեջ»:

Այդ տեսակետից արտահայտիչ դիմախաղը ծնում է արտահայտիչ խոսք:

Հայտնի է շարժումների երեք տեսակ՝ մեխանիկական, նկատագրական, հոգեբանական:

Մեխանիկական շարժումներ իրենից ոչ մի հետաքրքրություն չի ներկայացնում և, որպես վատ սովորություն, արտահայտություն, պետք է պայքարել նրա դեմ: քանի որ նա ստեղծում է շտամպ: Օրինակ՝ շատ հոնտորներ խոսելուց առաջ հարդարում են իրենց մազերը: Հնում դա ունեցել է իր արդարացումը. հոգեորականները կրոնական քարոզ ասելուց առաջ հարդարում էին իրենց երկար մազերը, ասես ստուգում էին նրանց կարգին լինելը:

Մեխանիկական շարժումն են համարվում՝ աչքերի հաճախակի թարթելը, գլուխը բացասական կամ դրական իմաստով շարժելը, հոնքերը խոժոռելը, լեզուն բերանի մեջ շարժելը, ծամելը, ատամները կրճատացնելը, լեղձով ճթթացնելը, բերանը չպպացնելը, շրթունքները լիզելն ու կծելը, ունքներն ու ականջները շարժելը, հա-

Ճախակի ու անտեղի հազարը, տեղում օրորվելը, ոտքերի մատնե-  
րի վրա բարձրանալը, ծնկները դողացնելը, գարշապարը հենա-  
կետ դարձնելով ոտի թաթը շարժելը, ուսերի շարժելը, ձեռքերը  
մարմնին սեղմելը և այլն:

Կան, այսպես կոչված, իրենց բուռններ, որոնք անտեղի բո-  
րում են իրենց գլուխը, մորուքը, ականջը, ճակատը, քիթը, աչքի  
ծայրը:

Կան նաև մազեր ոլորողներ, բեղեր կրծողներ, ձեռքերը, մատ-  
ները և եղունգները շփողներ, քիթ մաքրողներ, բուռնցք սեղմող-  
ներ, ձեռքի ափը բորողներ, հազալիս ձեռքը դեպի բերանը տա-  
նողներ, ձեռքը միապաղաղ մի ուղղությամբ շարժողներ, ձեռքերով  
հաճախակի իրենց աղդերին խփողներ և այլն:

Շատերն էլ սովորություն ունեն բռնել խոսակցի հագուստը  
կոճակից, ձեռք տալ նրա ուսերին, կրծքին և այլն:

Հոնտորի մեջ արմատացած մեխանիկական շարժումները նրան  
անհարմար և նույնիսկ ծիծաղելի պրոֆյան մեջ է դնում:

Հոնտորը նկարագրական շարժումներով ձգտում է նկարագրել  
ու պատկերել այն առարկան, որի մասին խոսում է: Օրինակ՝ ձմե-  
րուկի մասին խոսելիս ձեռքերով կլոր շարժում անելը, կամ իր  
գլխի, սրտի, ստամոքսի մասին խոսելիս ձեռքը դեպի գլուխը,  
սիրտը, ստամոքսը տանելը:

Դրանք բոլորը ձանձրալի, ավելորդ շարժումներ են և անվըս-  
տահույժան արդյունք դեպի խոսքը:

Հոգեբանական շարժումները արտահայտում է մեր զգացմունք-  
ները և հարստացնում խոսքը: Հոգեբանական ժեստը գալիս է են-  
թատեքստից, իսկ ենթատեքստը խոսքը հարստացնում է բարե-  
հնչունության միջոցով: Հոգեբանական ժեստը կարող է նախորդել  
խոսքին և համընկնել նրան:

Դիմախոսությունն ընդգրկում է դիմախաղը, մարմնի դիրք  
ընդունելը, նրա բոլոր շարժումները, ժեստերը, անդամ լացը, ծի-  
ծաղը և բացականչությունները:

Թանկանություն, կամք, ցասում, բարկություն արտահայտե-  
լիս ունեքերը հավաքվելով իջնում են և ճակատի վրա առաջանում  
են ուղղահայաց կնճիռներ:

Կամքի թուլացման, տատանվելու, զարձանալու դեպքերում  
ունեքերը բարձրանում են և ճակատի վրա հորիզոնական կնճիռ-  
ներ են առաջանում:

Ակտիվություն, վճռականություն, հիացմունք, ցանկություն,  
աղաչանք, սպառնալիք արտահայտելիս մարմինը հենվում է առ-  
ջևի ոտքի վրա, առաջ շարժելով նաև գլուխը:

Անվճռականություն, վախ, զգվանք, կասկած, արհամարհանք  
արտահայտելիս մարմինը հենվում է հետին ոտքի վրա:

Խոր հուզմունքի և տարակուսանքի դեպքում ուսերը վեր են  
բարձրանում:

Մարմնի շարժումն ուսումնասիրել է ֆրանսիացի թատերա-  
կան մանկավարժ Դելսարտը (1811—1871): Ըստ նրա տերմինա-  
բանության, կոնցենտրիկան՝ դա շարժում է դեպի իրեն, իսկ էքս-  
ցենտրիկան՝ շարժում դեպի դուրս, էքսցենտրիկան (ոտքը առաջ)  
ընդգծում է ձգտումը դեպի առաջ, խոսքի ակտիվություն, բարձր  
տրամադրություն, տեմպերամենտ:

Կոնցենտրիկան՝ մեկուսացում, ցանկությունների կենտրոնա-  
ցում, ինքնասուզում:

Այսպիսով, դիմախաղը և շարժումները նպաստում են խոսքի  
արտահայտչականությանը, սակայն շպետք է մոռանալ մի հիմ-  
նական կանոն՝ դիմախաղի և շարժումների մեջ լինել շափավոր ու  
համեստ, և որպեսզի դրանք ներգործող լինեն, պետք է հազվադեպ  
գործածվեն:

ՀՈՒՅՏՈՐԸ ԵՎ ԼՍԱՐԱՆԸ

Քանավոր խոսքի սկզբնական ձևը դիտարկել է, այսինքն՝ զրույցի միջոցով անմիջական կապը խոսակցի հետ։ Այս հանգամանքը մեզ պարտավորեցնում է բացառիկ ուշադրություն դարձնել խոսողի և ունկնդրի միջև եղած փոխադարձ կապի խնդիրներին։ Լավ խոսողը պետք է լինի և լավ լսող, լավ ունկնդրող, քանի որ խոսակցին լավ լսելուց, լավ հասկանալուց հետո է, որ մարդ կարող է նրան լիարժեք պատասխան տալ։ Իսկ եթե մեր ունկնդիրը կուլեկտիվն է, երբ մենք դիմում ենք լսարանին, ապա այդ փոխադարձ կապը դառնում է էլ ավելի պատասխանատու։

XVI դարի ֆրանսիական նշանավոր գիտնական և գրող Մոնտենը նշել է, որ կենդանի խոսքի միայն կեսն է պատկանում խոսողին, իսկ մյուս կեսը ունկնդրին է։

Խոսելու ընթացքում լսարանի հետ մշտական ու անմիջական կապը ակտիվացնում, աշխուժացնում ու հարստացնում է խոսքը։ Ունկնդիրների պահանջկոտությունը, նրանց երբեմն ուժեղացող, երբեմն թուլացող ուշադրությունը, նրանց անսթող անվստահությունը դեպի հեռուորը, դերասանն ու ասմունքողը, անսխալ կերպով զգացվում է խոսելու ընթացքում, և այդ բոլոր բարդ երեփույթները ուրախացնում կամ երկյուղ են պատճառում խոսողին և ազդում թե՛ խոսքի որակի և թե՛ խոսողի վրա։ Խոսքի միջոցով է, որ հեռուորը լսարանի հետ ստեղծում է «բարի դրացիական» հարաբերություններ և ճառի ընթացքում ստիպված է լինում վերակառուցվելու, փոխելու իր խոսքի բնույթը և հատկապես նրա արտահայտչական ձևերը։ Դրա փայլուն օրինակն է սղագրված ճառը, որի մեջ դուք չեք գտնի այն կենդանի, ներազդող շունչն ու ոգին, որ լինում է կենդանի խոսքում։

Նույն բանը նկատվում է նաև միկրոֆոնի կամ ձայնագրող ապարատի՝ մագնիսոֆոնի առջև, առանց լսարանի արտասանած

ձառում։ Անգամ ամենահմուտ հեռուորը այդպիսի պայմաններում շատ բան է կորցնում։ Բոլոր դերասանները խոստովանում են, որ ոչ լրիվ, առավել ևս կիսադատարկ թատերասրահում նրանց խոսքն ու խաղը միշտ ցածրորակ է լինում, որը հոծ հասարակության հետ ոչ լրիվ կապի ու շփման հետևանք է։ Ուշադիր հասարակությունը մագնիսական ներգործություն ունի հեռուորի և դերասանի վրա։ Կենդանի, զգայուն, պահանջկոտ, փնտրող, պայքարող և համաձայնող ունկնդիրը հեռուորի խոսքի հարստացման մեծագույն գործոնն է, քանի որ նրանք՝ այդ ունկնդիրներն են, որ հնարավորություն են տալիս հեռուորի կենդանի խոսքին դառնալու լսարանը՝ դրավելու և հպատակեցնելու միջոց։

Հեռուորի և լսարանի միջև շփման հիմնական, անմիջական ձևն ու միջոցը հեռուորի աչքերն են։ Ծառ քիչ դեպքերում միայն հեռուորը ճառի ժամանակ կարող է իրեն թույլ տալ մտածմունքի մեջ րնկնելու և իր հայացքն ուղղելու դեպի որևէ շեղոք առարկա։ Գրանուշադիր և ծանծարացնող ունկնդրի համար հեռուորից ամբողջովին կտրվելու հարմար առիթ է։

Լսարանի հետ թափնված շփումն ավելի բարդ ու նուրբ ձև է, քանի որ շփման այդ ձևը հեռուորին չի պարտավորեցնում անմիջականորեն ու մշտապես նայելու լսարանին, այլ ունկնդիրների ուշադրությունը կենտրոնացվում է ճառի մտքերով ու բովանդակությամբ։ Հեռուորը, իհարկե, իր տեսադաշտում է պահում լսարանը և, չկտրվելով նրանից, հոգեբանորեն վստահություն է ցույց տալիս ունկնդիրներին, որ նրանք իրոք կլանված են իր՝ հեռուորի արծարծած մտքերով։

Լսարանի հետ հեռուորի շփումն ու կենդանի կապն ավելի սերտ է դառնում, երբ հեռուորը ոճական ձևերի մեջ գործ է ածում այլաբանություն և հումոր։

Ժամանակի լիմիտը՝ ռեզյամենտը (լսարանի ուշադրությունը թուլացնելու կարևոր գործոններից մեկն է)։ Մտավոր մակարդակի տեսակետից լինում են տարբեր լսարաններ։ Ունկնդիրների ուշադրությունն անկայուն է, և ոչ բոլոր նյութերն են, որ կարող են լսարանի ուշադրությունը գրավել ևրկար ժամանակ, ճառի բովանդակության և ժամանակի լիմիտի տեսակետից տարբեր, օրինակ՝ գիտնականների, ուսանողների, բանվորների, կոլտնտեսականների, տնային տնտեսուհիների, զորակոչիկների և այլ լսարանների ուշադրությունը գամված պահելու տեղությունը շափազանց տարբեր է։ Թե աստրոֆիզիկայի մասին գիտնական և ուսանող ունկնդիրների ուշադրությունը դասախոսը կարողանա կենտրոնացված պահել մեկ ժամվա ընթացքում, ապա նույն բանը դժվար է անել, ա-

սենք, բանվորների, կոլտնտեսականների կամ բանակայինների լսարանում՝ ունկնդիրների տեսական ավելի քիչ պատրաստակա- նություն հետևանքով)։

Դիմախաղի և շարժուձևի կիրառման խնդրում հոետորը պետք է շատ զգույշ լինի և չպիտի թույլ տա, որպեսզի լսարանը նրան դիտելով վթարվի։

Խոսողը պիտի ձգտի ակտիվացնել ունկնդիրների լսողությունը և վառի նրանց երևակայությունը՝ հուզականորեն վերապրելու ճա- ոույժ արժարժվող մտքերը և ըմբռնելու նրանց իմաստը։

Իդեալական է համարվում հոետորի և լսարանի այն կապը, երբ հոետորը կարծեք դառնում է անտեսանելի, ձուլվում է իր ճա- ոհին, կապը վեր է ածվում լսողական ներգործության։

Ճառի ժամանակ հոետորի տեղը կարևոր նշանակություն ունի։ Պետք է նախօրոք ունենալ ամբիոն, սեղան, աթոռ, լուսավորու- թյուն, հաշվի առնելով նաև դահլիճի ծավալը՝ հնչականության (ա- կուստիկայի) տեսակետից, ևլթի ու մուտքի դռները, ունկնդիրների էլումուտը։ Այս բոլոր մանրությունները ճառի հաջողությանը նպաստող կամ տապալող հանգամանքներ են։

Առանձնապես նշանակություն ունի հոետորի հոգևրանական վարքագիծը։ Ամբիոն բարձրանալով, նա պետք է կենտրոնանա, լինի լուրջ։ Նա պետք է թույլ չտա, որ որևէ պատահականություն իրեն շփոթեցնի։ Նա չպետք է շտապի խոսքն սկսել։ Հոգեբանական դադարն այստեղ մեծ դեր է խաղում։ Ներքին հանգստությունը և ինքնավստահությունը անմիջապես հաղորդվում է ունկնդիրներին և դա հոետորի հաջողության առաջին գրավականն է։

Ճառն սկսելուց առաջ գրեթե բոլոր հոետորները ապրում են տարրեր վիճակ։ Ցիցերոնը իր մասին գրել է, «Սկսելով ճառը, ես հաճախ երկնչում էի. դեմքս գունատվում էր, հուզվում էի ու դո- ղում»։ Եթե Ցիցերոնի նման փորձառու և տաղանդավոր հոետորը ճառն սկսելու ժամանակ այդպիսի հուզմունք ու ապրումներ է ու- նեցել, ապա սկսնակ հոետորները առավել ևս պետք է հիշեն, որ այդ վիճակը հաղթահարելու միակ միջոցը ինքնաներշնչմամբ իրեն սառնասրտությունը վարժեցնելն է։ Ճառից առաջ վախը հաղթահա- րելու, ինքնավստահ լինելու համար շատ հոետորներ գրում են ճառի առաջին նախադասությունները և աննկատ օդտագործում։

Լսարանի համակրանքը գրավելու հիմնական միջոցը հոետո- րական տակտն է, հոետորի հարգանքը դեպի ունկնդիրները, վերա- բերմունքը, որպես հավասարների, առանց թերազնահատելու նրանց կրթական մակարդակը և ոչ էլ իր խելոքությունը մեծամտո- րեն ցուցադրելը։ Իր բազմամյա փորձից ելնելով, Մ. Ի. Կալինինը

նշում է, որ բանվորը և ընդհանրապես շարքային մարդը չի սի- րում այն մարդկանց, որոնք իրենց բարձր են դասում, շեշտում են իրենց խելոքությունն ու կրթվածությունը։

Հոետորական այդ նախազգուշության մասին Քվինտիլիանը, բերելով Պերիկլեսի օրինակը, ասել է, թե նա իր մեջ այնչափ էր զարգացրել հոետորական նախազգուշությունը, որ հետագայում գանգատվում էր, թե իր մտքով անգամ չի անցնում ժողովրդի հաս- ցեին որևէ վիրավորական խոսք ասելը, և գուցե մասամբ հենց դրանով է բացատրվում ժողովրդի սերը դեպի նա։

Ա. Ց. Կոնին, իր «Խորհուրդներ դասախոսներին» աշխատու- թյան մեջ նշում է հոետորի հագուստի մասին։ Նա խորհուրդ է տալիս, որպեսզի հոետորը հագնվի պարզ և վայելուչ։ Հագուստը չպետք է լինի արտասովոր տարազի ու գույնի և ոչ էլ կեղտոտ, կամ փնթի հազնված, քանի որ դա տհաճ տպավորություն է թող- նում։ Պետք է միշտ հիշել, որ ունկնդիրների համար հոգևական ազ- դեցությունն սկսվում է մինչև ճառը, այն պահից, երբ դասախոսը երևում է հասարակությանը։

## ՀՌԵՏՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Հոետորական արվեստը, ըստ խոսքի նպատակի, բովանդակության և լսարանի, կարելի է բաժանել հետևյալ տեսակների.

1. Քաղաքական-պառլամենտական,
2. Դատական,
3. Գիտական-դասախոսական,
4. Բեմական-գեղարվեստական,
5. Ռազմական,
6. Հոգևոր,
7. Ներբողական,
8. Դամբանական,
9. Խրախճանքի:

### 1. ՔԱՂԱՔԱԿԱՆ—ՊԱՐԼԱՄԵՆՏԱԿԱՆ

Հնագույն ժամանակներից սկսած ոչ մի բնագավառում հոետորական արվեստն այնպիսի կիրառում ու զարգացում չի ունեցել, ինչպես քաղաքական կյանքում: Իշխանության ու փառքի հասնելու համար ճարտասանությունը եղել է մի հզոր միջոց: Բոլոր ժամանակների ու ժողովուրդների առաջավոր մարդիկ միշտ էլ բարձր են գնահատել այդ մեծ ու դժվարին արվեստի ուժը:

Հոետորական արվեստի նախնական ու հնագույն ձևերից մեկը քաղաքական ճարտասանության ճյուղն է: Պետական կառավարման ռեսպուբլիկական-դեմոկրատական բնույթը միշտ էլ նպաստել է հոետորական արվեստի ծաղկմանը: Վ. Գ. Բելինսկին ասել է. «...կառավարման ռեսպուբլիկական ձևը ճարտասանությունը դարձրեց ամենակարևոր և ամենաանհրաժեշտ արվեստը...»:

Հոետորական արվեստի օրորանը պիտի համարել հին Հունաստանը և, հատկապես, Աթենքը: Սոլոնի, Կլիսթենեսի, Պերիկլեսի ռեֆորմները, երկրի կառավարման ձևերի դեմոկրատացումը, դա-

տկարգերի ու հասարակության զանազան խավերի ներկայացուցիչների կողմից իրենց մտքերն ու քաղաքական հայացքները ալատ կերպով արտահայտելու հնարավորությունները ճարտասանության զարգացման համար մեծ ազդակ հանդիսացան:

Հոետորական արվեստը Աթենքում մեծ զարգացման հասավ V դարի վերջերին և գլխավորապես IV դարում (մ. թ. ա.), տալով մի շարք տաղանդավոր հոետորներ, ինչպիսիք են՝ ճարտասանության ուսուցիչ Իսոկրատը, Լիսիոսը, Պերիկլեսը, Դեմոսթենեսը, Էսքինեսը և ուրիշներ (Դեմոսթենեսի ճառը «Քաղաքացուական փասին» տե՛ս գրքի հավելվածում):

Հին Հռոմում նույնպես հոետորական արվեստի քաղաքական ճյուղը զարգացավ ռեսպուբլիկայի գոյության ընթացքում, տալով ականավոր հոետորներ, որոնց մեջ ամենից ավելի աչքի էին ընկնում Կատոնը, Ացիլիոնը, Գրաբոս եղբայրները, Հորտենսիասը և ի վերջո, հռչակավոր Ցլոցերոնը (Կատիլինայի դեմ նրա առաջին ճառը տես գրքի հավելվածում):

Ռեսպուբլիկայի անկումից հետո, հռոմեական կայսրների ժամանակ, քաղաքական ճարտասանությունը այլևս հարգի չէր և հալածվում էր:

Միջին դարերում, ֆեոդալական իրավակարգի սլայմաններում, հոետորական արվեստը խոր անկում էր ապրում: Միջնադարը՝ սխոլաստիկայի և աստվածաբանության գերիշխանության ժամանակաշրջանը, քիչ թե շատ աչքի ընկնող քաղաքական հոետորներ չուղեց: Այդ շրջանի հոետորական արվեստն իր դրսևորումը գտավ միայն մի նեղ ասպարեզում՝ հոգևոր ճառերի և եկեղեցական քառուղիների բնագավառում:

Մինչև XVII դարը, այսինքն՝ մինչև պառլամենտական հյուսարկների ծագումը Անգլիայում, քաղաքական ճարտասանությունը մոռացության էր տրված: Պառլամենտարիզմի հետ միասին հետըզհետե զարգացավ քաղաքական-պառլամենտական տիպի ճարտասանությունը, տալով այնպիսի նշանավոր հոետորներ, ինչպիսիք էին Կրոմվելը, Պիտտը, Բրայտը, լորդ Ջոն Ռոսսելը, Գլադստոնը, Պալմերսոնը, Պիլը, Դիզրաելին, Պաոնելը, Չեմբերլենը, Ռ. Մակդոնալդը, Լյոյդ Ջորջը, Չերչիլը և շատ ուրիշներ:

Ֆրանսիայում քաղաքական ճարտասանության զարգացումը համընկնում է բուրժուական ռևոլյուցիայի ժամանակաշրջանի հետ, տալով քաղաքական այնպիսի հռչակավոր հոետորներ, ինչպիսիք են Միրբոնը, Դանտոնը, Մարատը, Ռոբեսպիերը, հուլիսյան միապետության ժամանակ՝ Գիլոնը, Թիերը, Լամարտինը, երրորդ ռեսպուբլիկայի ժամանակ՝ Գամբետտան, ավելի ուշ՝ Ժորեսը, Կլեման-

սոն, Գեղը, Լաֆարզը, Բրիանը, Պոանկարեն, Բլյումը, Մարսել Կա-  
շենը, Մորիս Թորեզը, Ժակ Դյուկլոն և ուրիշներ:

XIX դարում քաղաքական հոստոթական արվեստը լայն կեր-  
պով զարգանում է Արևմտյան Եվրոպայի մի շարք երկրներում՝  
Իտալիայում, Գերմանիայում, Ավստրիայում, որտեղ բուրժուական  
և բուրժուա-դեմոկրատական հեղափոխությունները երևան բերե-  
ցին մի շարք հոստոթներ, որոնք իրենց քաղաքական ճառերով կա-  
րողանում էին մեծ տպավորություն գործել: Օրինակ՝ Գերմանիա-  
յում Լասսալը, նրա հակառակորդ Բիսմարկը, սոցիալ-դեմոկրատ  
Բեբելը և ուրիշներ:

Բանավորական դասակարգի առաջնորդների ու զեկավարների  
միջից հանդես են գալիս ականավոր հոստոթներ, որոնց հեղինա-  
կությունն ընդունում էին անգամ նրանց թշնամիները: Կ. Մարքսից  
և Ֆ. Էնգելսից բացի մեծատաղանդ հոստոթներ էին Ֆ. Լասսալը և  
Ա. Բեբելը:

Կ. Մարքսի մասին Լիբկնեխտն իր հիշողություններում գրում  
է. «...Իր միտքը պարզ արտահայտելու մեծ ընդունակությունը,  
նրանից բացի, ոչ ոք չունի: Լեզվի պարզությունը արդյունք է  
պարզ դատողության, իսկ պարզ միտքը անխուսափելիորեն պայ-  
մանավորում է ձևի պարզությունը»<sup>1</sup>:

Ուսաստանում, XIX դարի վերջում, ռեուլյուցիոն շարժման  
զարգացման հետ միասին, զարգանում է նաև մասսաների քաղա-  
քական գործունեությունը: Մարքսիզմի գաղափարների պրոպա-  
գանդման ասպարեզում առանձնապես աչքի է ընկնում Պլե-  
խանովը:

Հետագայում մարքսիզմի ստրածման ու զարգացման ասպա-  
րեզում քաղաքական հոստոթների ավանզարդումն էր Վ. Ի. Լենինը,  
որի ճառերը հազեցված էին ոչ միայն ամենապրոգրեսիվ, ռեուլյու-  
ցիոն գաղափարներով, այլև՝ իրենց խոր գիտական բովանդակու-  
թյամբ, շափազանց պարզ էին, մատչելի և համոզիչ: Մ. Գորկին  
Լոնդոնյան համադումարում Լենինի ունեցած ելույթի առթիվ գրել է.  
«Սա առաջին անգամ էի լսում, որ քաղաքականության ամենաբարդ  
հարցերի մասին կարելի է խոսել այդպես պարզ»<sup>2</sup>:

Ականավոր քաղաքական հոստոթներ են եղել Սվերդլովը, Վո-  
լոդարսկին, Չերժինսկին, Կիրովը, Օրջոնիկիձեն, Ստ. Եահումյանը,  
Ս. Սպանդարյանը, Լուինաչարսկին, Կալինինը և ուրիշներ:

Բուրժուական երկրներում, որտեղ պառլամենտական կարգեր

են տիրում, քաղաքական հոստոթների մեծագույն մասը անցել է  
պառլամենտարիզմի բովով, և այդ երկրներում տարբերություն է  
գրվում պառլամենտական և արտապառլամենտական ճառերի միջև.  
Վերջիններս կոչվում են քաղաքացիական-քաղաքական ճառեր:

Պառլամենտական ճառերի ունկնդիրներն են պառլամենտի  
պատգամավորները, մինիստրները, վերջիններիս օգնականները.  
նրանց մեծագույն մասը կրթված, փորձված, քաղաքական բովում  
թրծված անձինք են և այնքան էլ հեղտությամբ չեն ենթարկվում  
ճարտասանական ներգործության: Պառլամենտական հոստոթը  
պետք է կարողանա համոզել ունկնդիրներին, ապացուցել իր տե-  
սակետի ճշմարտացի լինելը, և երբ նա զգա, որ այդ բանին արդեն  
հասնում է, ապա միայն կարող է դիմել զգացմունքին՝ վերջնական  
հաղթանակ տանելու համար:

Պառլամենտական հոստոթների մեծագույն լիցնալից շատա-  
խոսությունն է: Պետք է քիչ խոսել, բայց շատ բան ասել, ուստի  
պառլամենտական յուրաքանչյուր ճառ պետք է լինի մտածված,  
հիմնավորված, փաստարկումներն ու ապացույցները լինեն ծանրա-  
կշիռ ու համոզիչ:

Քաղաքացիական-քաղաքական ճառերի ունկնդիրները, ընդհա-  
կառակը, ժողովրդական լայն մասսաներն են, և, բուրժուական տե-  
սաբանների կարծիքով, այդ կարգի ունկնդիրները մտավոր ավելի  
ցածր մակարդակի վրա են կանգնած: Այդպիսի լսարանը հոստոթից  
պահանջում է ոչ այնքան խորիմաստ փաստարկումներ, որոնք  
հասկանալու համար պահանջվում է լարված ուշադրություն, որքան  
զգացմունքի վրա ազդող արտաքին ներգործություն:

Ելնելով հոստոթական արվեստի հիմնական սկզբունքներից,  
քաղաքական ճառերի նման ստորաբաժանումը ավելորդ է, անհիմն  
ու արհեստական, քանի որ մեր ժամանակներում ժողովրդական  
լայն մասսաների համար արտասանած քաղաքական ճառերը պետք  
է հիմնավորված լինեն ավելի շատ փաստարկումներով ու ապա-  
ցույցներով, քան ճարտասանական պաճուճանքներով:

ՍՍՌՄ Գերագույն Սովետի և ռեսպուբլիկական Գերագույն Սո-  
վետների սեսիաներում ղեպուտատների ճառերը առաջին հայացքից  
թվում է, թե պետք է ըստ ձևի հիշեցնեն պառլամենտական հոս-  
տոթների ճառերը, սակայն կյանքն ու պրակտիկան ցույց են տա-  
լիս, որ մեր պետական-սոցիալիստական-դեմոկրատական կարգե-  
րը, գաղափարախոսությունը և ընտրական հիմնարկներում ժողո-  
վրդական դեպուտատների կողմից առաջ քաշվող քաղաքական-  
հասարակական հարցերի բովանդակությունն ու խոսելու ձևը իրենց  
գաղափարական հազեցվածությամբ, լրջությամբ և ձևի պարզու-

<sup>1</sup> А. Толмачев, «Об ораторском искусстве», Москва, 1958 г., стр. 8.

<sup>2</sup> Մ. Գորկի, Երկեր, հ. 22, էջ 194:

Քյամբ էապես տարբերվում են բուրժուական պառլամենտների պատգամավորների ճառերից:

## 2. ԴԱՏԱԿԱՆ

Հոնտորական արվեստի երկրորդ և հիմնական ճյուղերից մեկը դատական ճարտասանությունն է, որը զիջում է միայն քաղաքական ճարտասանությանը:

Դատական ճարտասանության օրորանը նույնպես համարվում է Հին Հունաստանը՝ սկսած Սոլոնի ժամանակաշրջանից: Նախահայրն է համարվում Հունաստանի յոթ հիմաստուններից մեկը՝ Բիասը, որը եղել է պերճախոս իրավագետ: Դատական հոնտորական արվեստի տեսությունը ու պրակտիկայով զբաղվել են նաև Քեմիստոկլեսը, Կորակար, Տիգիստը, Գորգին, ինչպես նաև քաղաքական ակնավոր հոնտոր Պերիկլեսը, որը մասնակցել է երկու դատական պրոցեսների. առաջին անգամ նա պաշտպանում էր իր ուսուցիչ Անաքսագորին՝ աստվածներին չհարգելու ծանր մեղադրանքով, իսկ երկրորդ անգամ՝ ակնավոր քաղաքական գործիչ, իր սիրուհի Ասպազիային: Չնայած Պերիկլեսի քաղաքական բարձր դիրքին, նրա բոլոր ջանքերն իզուր անցան և Անաքսագորը դատապարտվեց Աթենքից արտաքսման, իսկ Ասպազիայի պաշտպանության ժամանակ, Պերիկլեսը, արտասուրն աչքերին, դատավորներին խնդրում էր ներողամիտ լինել, «Զգացված այդ տնասարանից և բավարարված նրանով, որ գոռոզամիտ Պերիկլեսին տեսնում են իրենց ոտքերի մոտ, դատավորները արդարացրին կուրտիզանուհուն»<sup>1</sup>:

Դատական ճարտասանության ուսուցման առաջին դպրոցը բացեց Անտիֆանը: Նա, որպես լոգոգրաֆ, ոչ միայն ճառեր էր գրում կլիենտների համար, այլև իր աշակերտների համար կազմում էր վարժություններ, այսպես կոչված տետրալոգիաներ, որոնք բաղկացած էին չորս ճառից՝ մեղադրական, պաշտպանական և երկու ռեպլիկաներից:

Հին Հունաստանում մեղադրյալն իրավունք չուներ պաշտպան վարձելու և պարտավոր էր ինքն իրեն պաշտպանել, ուստի և լոգոգրաֆները կլիենտների համար պաշտպանական ճառեր էին գրում:

Լավագույն լոգոգրաֆ էր համարվում Լիսիոսը, Ցիցերոնի ժամանակակիցը, որի համբավը անհանդուստացնում էր վերջինիս:

<sup>1</sup> А. Морилло и Г. Дебена, «Судебные ораторы в древнем мире». С.-Петербург, 1895 г., стр. 12.

Լոգոգրաֆ էր նաև Իսոկրատը, որի ճարտասանական դպրոցն ավարտեցին մի շարք դատական հոնտորներ:

Կլիենտների համար դատական ճառեր էր գրում նաև հուշակավոր Դեմոսթենեսի ուսուցիչ, լոգոգրաֆ Իսիոսը, որը դատական ճարտասանության մեջ ոճարանական նոր ձևեր մտցրեց:

Դատական ճարտասանության լավագույն ներկայացուցիչներից մեկն էր նաև քաղաքական գործիչ և օրենսդիր Լիկուրգոսը, հեգնանքի ու սարկազմի հմուտ վարպետը:

Նշանավոր լոգոգրաֆ և հոնտոր Հիպերիդոսը հաճախ մասնակցում էր քաղաքական խոշոր պրոցեսներին: Նա այն տասը հոնտորներից մեկն էր, որոնց հանձնարարված էր մեղադրել Դեմոսթենեսին՝ ոմն Գարպալոսի մոլթ գործի համար:

Դեմոսթենեսի ժամանակակիցն ու հակառակորդն էր էսքինեսը: Աթենքում տիրող բարձր ալյասերվածության հետ կապված մի դատավարության ժամանակ էսքինեսը այնպես բնութագրեց դատի տրված ալյասերված Տիմարկին, որ նրա պաշտպան Դեմոսթենեսը անգամ չհամարձակվեց տեղից վեր կենալ և պաշտպանել մեղադրյալին: Սակայն «Պսակի մասին» իր ճառով Դեմոսթենեսը այնպես ջախջախեց էսքինեսին, որ նա, որպես մեղադրող, շկարդապալ ստանալ, ըստ դրժոզ օրենքի, ձայների անգամ մեկ հինգետորդը և հարկադրված եղավ աքսոր գնալ:

Էսքինեսը չուներ Դեմոսթենեսի թափն ու ոգևորությունը: Նրա իրավաբանական կրթությունը մակերեսային էր: Մինչև դատական հոնտոր դառնալը էսքինեսը եղել էր դերասան և ավելի շատ զբաղվել էր գրական հարցերով:

Այսպիսով, Հին Հունաստանի դատական ու քաղաքական հոնտորների մեջ առաջին տեղը իրավամբ պատկանում է Դեմոսթենեսին, որն իր ճառերի մեջ շգերազանցված նրբություններով նկարագրել է Աթենքի հասարակության բարձրը և, լինելով մեծ հայրենասեր, Փիլիպոս Մակեդոնացու դեմ իր քաղաքական ճառերում խարազանել է իր հայրենակիցների ուխտադրժությունն ու դավաճանությունը:

Դեմոսթենեսի մահից հետո թե՛ դատական և թե՛ քաղաքական ճարտասանությունը Հին Հունաստանում արագ թափով դեպի անկում է գնում: Աթենքի հասարակության քաղաքական ազատության կորուստով կորչում է և հոնտորական արվեստը:

Հին Հռոմի ռեսպուբլիկական կարգերը և հոմեակական իրավունքը հանդիսացան այն բազան, որի վրա ծաղկեց ու զարգացավ Լատինական դատական հոնտորական արվեստը:

Մինչև հունական կուլտուրայի հետ ծանոթանալը ճարտասան-

նությունը Հոռմում դարգացած չէր: Երրորդ դարի երկրորդ կեսից (մ. թ. ա.) սկսվում է հունական կուլտուրայի ազդեցությունը Հոռմի վրա:

Մեսպուրիկական Հոռմում բոլոր պաշտոնյաները, սկսած ամենաբարձր պաշտոնյայից մինչև պրովինցիայի հետին ծառայողը, իրենց գործունեության համար հաշվետու էին ժողովրդի առաջ: Հոռմում յուրաքանչյուր քաղաքացի քրեական դատարանի առաջ կարող էր հանդես գալ որպես մեղադրող, անգամ մեղադրելով ժողովրդական տրիբունների, կոնսուլների քաղաքական գործունեությունը և պրովինցիաների կառավարիչների վարչական կարգադրությունները: Այդ ամենը կատարվում էր հրապարակալորեն, ժողովրդի առաջ՝ ֆորումում:

Հոռմում փաստաբանները խոսում էին բաց երկնքի տակ, հրապարակում և դիմում էին ոչ թե դատավորներին, այլ ժողովրդին: Այդպիսի պայմաններում հեռուորի ժեստերը, ձայնը և պերճախոսությունը ոչ թե անհրաժեշտ պայման էին, այլ հեռուորի զրոխավոր արժանիքը:

Հոռմի բոլոր տաղանդավոր մարդիկ, հռչակավոր ղորավարներն ու քաղաքական գործիչները իր ժամանակին եղել են փաստաբան. օրինակ՝ Պոմպեոսը, Հուլիոս Կեսարը, Անտոնիոսը, Կրասոսը, Կատոն-ավագը և ուրիշներ:

Այն ժամանակ փաստաբանական կորպորացիա դոյություն չունեին: Պաշտպանությունը կաարվում էր ձրի և վարձատրվում էր համբավով և պետական-հասարակական պաշտոնների նշանակումով: Բարձր պաշտոնների հասնելով, նրանք չէին թողնում ազդեկատուրան, այլ խոշոր գործերով հանդես գալով ֆորումում, միշտ փայլում էին իրենց պերճախոսությամբ ու վայելում ժողովրդի սերն ու համակրանքը: Ազդեկատուրան հանդիսանում էր քաղաքական կարիերայի նախադուռը:

Այդ տիպի գործիչների ամենափայլուն դեմքն է Կատոնը: Իր ժամանակի համար նա բազմակողմանի զարգացած անձնավորություն էր՝ մեծ հեռուոր, իրավագետ, սլատմաբան, բարոյախոս և ազդեցուն: Նա անդուր կերպով հետապնդում էր շարաշահություններն ու շարաշահողներին, անկախ դեմքից ու դիրքից, որի պատճառով շատացրել էր իր թշնամիների թիվը, որոնք անընդհատ մեղադրանք էին հարուցում նրա դեմ: Քառասունչորս անգամ նա նստել է մեղադրական աթոռին և միշտ արդարացել է: Դրա համար նա պարտական էր ոչ միայն իր ազնվությունն ու համաժողովրդական վստահությանը, այլև իր հեռուորական տաղանդին, ուստի և համարվում էր լատինական պերճախոսության հայրը:

Դատական հեռուորների մեջ նշանավոր էին Անտոնիոսը և Կրասոսը: Հոռմը չի ունեցել մի կատարյալ ազդեկատ, որն այնքան նվիրված լիներ իր կլիենտներին, ինչպես Անտոնիոսը: Նա կլիենտի գործի հաջողության համար նույնիսկ ծախսում էր իր անձնական միջոցները:

Կրասոսը, որպես քաղաքական հեռուոր, գերազանցում էր Անտոնիոսին: Լինելով ազնիվ ու անդրդվելի համոզմունքների տեր, նա աներկյուղ պաշտպանում էր իր կուսակցության շահերը:

Մինչև Ցիցերոնը չգերազանցված հեռուոր էր Հորտենսիոսը: Նրա պերճախոսությունը համեմատում էին Ցիցիլիայի արձանների հետ, նրա միայն երևալը դարձանք ու զմայլանք էր առաջ բերում: Հորտենսիոսի արտաքինը իր կանացի գեղեցկությամբ, հաճելի ձայնը և արժանավայել ու ճկուն շարժումներ միանգամից գերում էր հասարակությանը: Ցիցերոնի հանդես գալուց հետո, տասներկու տարի շարունակ նա Ցիցերոնի հետ միասին մասնակցում էր նշանավոր պրոցեսներին, բայց հետզհետե, իր արտաքին գեղեցկության հետ միասին, կորցրեց հեռուորական հմայքը և այլևս չէր կարող Ցիցերոնի հակառակորդը լինել<sup>1</sup>:

Հին Հոռմում Ցիցերոնը մնում է միակ ու չգերազանցված դատական ու քաղաքական հեռուոր: Նա իր ճարտասանական րնական րնդունակությունը անընդհատ զարգացնում էր անխոնջ աշխատանքով: Մեղ հասած նրա մոտ երեսուն դատական ճառերը ցույց են տալիս, որ Ցիցերոնի մեծությունը արտացոլված է նրա դատական և ոչ թե քաղաքական ճառերում: Իր քաղաքական կարիերայով նա պարտական է փաստաբանի իր պրոֆեսիային:

Ցիցերոնը իր բարձր հասակով, առնական դիմագծերով, ուժեղ և հաճելի ձայնով, կատարելության հասցրած, արտահայտիչ ու շափավոր շարժումներով, անգերազանցելի լատիններենով և անխորտակելի տրամաբանական փաստարկումներով հասարակության պաշտամունքի առարկա էր դարձել:

Ցիցերոնի ճառի ձևն ու բովանդակությունը համարժեք էին: Լիզարիուսը դատի էր տրված Հուլիոս Կեսարի դեմ դավադրություն կազմակերպելու մեղադրանքով: Լիզարիուսի պաշտպանությունը հանձնարարված էր Ցիցերոնին: Կեսարը դիմելով իր ընկերներին, ասաց. «Մեղ ի՞նչն է խանգարում լսել Ցիցերոնին, որին մենք վաղուց չենք լսել: Լիզարիուսը, այդ հայտնի հանցագործն ու մեր թշնամին, արդեն դատապարտված է...»: Սակայն

<sup>1</sup> А. Морилло и Г. Дебена, «Судебные ораторы в древнем мире», С.-Петербург, 1895 г., стр. 100.

Յիցերոնի ճառի ժամանակ Կեսարի դեմքի գույնը մի քանի անգամ փոխվեց, նա դողաց, կորցրեց ինքնազսպումը, թղթերն ընկան նրա ձեռքից: Ի վարժանք բուլորի, նա ներեց կիզարիտահին<sup>1</sup>:

Յիցերոնի մասին Քվինտիլիանն ասել է. «Երկինքը Յիցերոնին երկիր է ուղարկել, ըստ երևույթին, նրա համար, որպեսզի նրանով օրինակ տա, թե ինչ աստիճանի զորեղ կարող է լինել խոսքը»<sup>2</sup>:

Յիցերոնի մահից հետո լատինական ճարտասանությունը դեպի անկում է գնում: Հիշատակության արժանի են Քվինտիլիանը, որը հատուկ գիրք գրեց հռետորական արվեստի մասին, և Պլինիոս Կրտսերը, որն իր փաստաբանական պարտականությունները կատարում էր մեծ բարեխղճությամբ ու անշահախնդիր: Դատական ճարտասանությունը հանձինս Պլինիոսի կորցրեց իր վերջին ու ազնիվ ներկայացուցչին, չհաշված Ռեգուլին, որը Դոմիցիան կայսեր ժամանակ հայտնի էր որպես մատնիչ և հանդես էր գալիս որպես Պլինիոսի հակառակորդ: Նման մատնիչ-փաստաբաններ Հռոմում այդ ժամանակ շատ կային, որոնց Տակիտոսը, մերկացնելով, ասել է. «Չկա ավելի անարգ բան, քան փաստաբանի ուխտադրությունը»<sup>3</sup>:

Երրորդ դարի (մ. թ.) սկզբներում հայտնի իրավագետ Ուպիանի ժամանակ, ադվոկատուրան ժամանակակից իմաստով ձևակերպվեց որպես ինքնուրույն կորպորացիա, սակայն այդ ինստիտուտը այլևս չկարողացավ տալ այնպիսի ներկայացուցիչներ, որոնք կարողանային հռչակել Հռոմը:



Դատական հռետորական արվեստի զարգացման համար միջնադարը մի անապատ էր, որտեղ Ֆեոդալական բռնապետությունները և ճիզվիտական պրոցեսներն անհնարին էին դարձնում դատապաշտպանությունը և դրանով իսկ խեղդում դաժակալի ճարտասանությունը, լայն հնարավորություններ ստեղծելով հոգևոր հռետորական արվեստի համար:

Դատական հռետորական արվեստը վերածնվեց Յրանսիայում XVІІІ դարի վերջին, երբ Ազգային ժողովի 1791 թ. սեպտեմբերի 16-ի ակտով հիմնվեց երգվյալների դատարանը և քրեական գործերի քննության մրցակցական ձևը դատական խոսքի ֆրանսիա-

կան վարպետներին հնարավորություններ տվեց զարգացնելու դատական ճարտասանությունը:

Յրանսիական երգվյալների դատարանը ըստ էության բուրժուական դատական հիմնարկ էր և ոչնչով չէր տարբերվում մյուս կապիտալիստական երկրների նույնատիպ դատական հիմնարկներից: Բուրժուա-դեմոկրատական մի շարք ռեֆորմների շարքին էր պատկանում նաև երգվյալների դատարանի հիմնումը, որը մինչ այդ դրություն ունեցող դատարանների համեմատությամբ առաջադեմական էր ու դեմոկրատական, բայց կոչված էր պաշտպանելու շահագործող նոր դասակարգի՝ բուրժուազիայի շահերը:

Յրանսիական դատական հռետորները կարողացան օգտագործել քաղաքական հռետորների ճառերը, որոնք, Հին Հունաստանի ու Հռոմի դատական հռետորների ճառերի հետ միասին, նրանց համար հանդիսանում էին ճարտասանության լավագույն դպրոց:

Դատական հռետորական արվեստի պատմության մեջ ֆրանսիական իրավաբաններն ու խոսքի վարպետները աչքի ընկնող տեղ են գրավում: Դեռ XVІІ դարում հայտնի էին Լեմետրը և Պաարյուն, XVІІІ դարում՝ դե Սասին, դե Մոլեոնը, Ժերբյեն, Կոչենը, XІX դարում՝ Տուրյեն, Տարթեն, Տրոնշեն, Դ. Անդրեն, Բաբնավան, Լաբորին, Մանոն, Ֆիլիպ Դյուպենը, Մորնարը, Լաշոն, Շե դ'Էստ Անժը և ուրիշներ<sup>4</sup>:

Յրանսիական դատական հռետորական արվեստի զարգացմանը զգալի չափով նպաստել է նաև փաստաբանների կորպորացիայի կազմակերպումը, որպես դատական և պետական հիմնարկներից համեմատաբար անկախ հասարակական մի կազմակերպություն, որը ֆրանսիական փաստաբաններին հնարավորություն տվեց ավելի համարձակ ու սկզբունքորեն բնադատելու դատարանների, վարչական ու ոստիկանական օրգանների սխալ գործողությունները:

Յրանսիական դատական ճարտասանությունը բեղմնավոր ազդեցություն գործեց մյուս երկրներում նույն արվեստի զարգացման վրա:

Մինչև XІX դարի երկրորդ կեսը ֆրանսիական իրավաբաններն իրենց ճառերում սովորաբար մեծ ուշադրություն չէին դարձնում հանցագործության ներքին պատճառների հոգեբանական անալիզի վրա և չէին դիմում գրական համեմատությունների: Այդ ձևերը նրանք սկսեցին կիրառել ռուսական դպրոցի ակադեմիկոսներ կայացուցիչ Ա. Ֆ. Կոնիի ազդեցությամբ:

<sup>1</sup> E. M. Ворожейкин, «Судебные ораторы Франции XIX века», Москва, 1959 г., стр. 10—11.

<sup>1</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>2</sup> Նույն տեղում, էջ 113:

<sup>3</sup> Նույն տեղում, էջ 115:

Հոնտորական արվեստի բոլոր տեսակները ցարական Ռուսաստանում ավելի ուշ զարգացան: Պետական կառավարման միապետական ձևը քաղաքական ճարտասանության զարգացման համար ոչ մի ասպարեզ ու հնարավորություն չէր ստեղծում, իսկ դատական ճարտասանությունը սկսեց զարգանալ միայն 1864 թ. դատական ռեֆորմից հետո: Մի քանի տասնամյակի ընթացքում երևան եկան դատական հոնտորական արվեստի հուշակավոր վարպետներ՝ Ա. Յ. Կոնին, Պ. Ա. Ալեքսանդրովը, Ս. Ա. Անդրեևսկին, Վ. Ի. Ժուկովսկին, Ն. Պ. Կարաբչևսկին, Յ. Ն. Պլևակոն, Վ. Ա. Մակլակովը, Վ. Գ. Սպասոկիչը, Ա. Ի. Ուրուսովը, Կ. Յ. Խարտուլարին, Ն. Ի. Խոլևը, սովետական ժամանակաշրջանում՝ Ա. Յա. Վիշինսկին, Ի. Գ. Քրատոչեն, Ս. Կ. Կազնաչևեր, Ն. Վ. Կոմոզովը, Է. Ս. Ռիվլինը, Ա. Ի. Յուդինը և ուրիշներ, իսկ Սովետական Հայաստանում՝ Գրիգոր Զուբարը:

Ռուսական դատական հոնտորական արվեստի առանձին ներկայացուցիչների մասին կանգրադառնանք «Դատական խոսք» գլխում:

### 3. ԳԻՏԱԿԱՆ.—ԴԱՍԱԽՈՍԱԿԱՆ

Հոնտորական արվեստի գիտական-դասախոսական ճյուղը ծագել ու զարգացել է գիտություններին զուգընթաց: Հին Հունաստանի փիլիսոփաներն իրենց իդեալիստական ու մատերիալիստական ուսմունքները աշակերտներին բացատրելիս, ակադեմիայում և ապա լիցեյում դասավանդելիս, իրենց մտքերը դյուրեմբունելի դարձնելու համար, դիմում էին հոնտորական արվեստի օգնությունը: Գիտության ճյուղերը լծազմազան են և յուրաքանչյուր ճյուղի առանձնահատկությունների, հիմունքների, սկզբունքների մասին խոսելիս դասախոսի կողմից պահանջվում է մտքերի արտահայտության ճշտություն, հստակություն: Եթե Սոկրատը իր ուսմունքը աշակերտներին հաղորդում էր զրույցի ձևով, ապա հետագայում Պլատոնը և Արիստոտելը զրույցի այդ ձևին սկսում են ակադեմիական բնույթ տալ: Գիտական հարցերի մասին զրույցի ձևով խոսելն այնքան էլ դյուրին չէ: Նյութին լավ տիրապետելը և հարցերին պատասխանելիս համոզվածություն ցուցաբերելը դասախոսի հաջողության հիմնական գրավականն է: Դասախոսի և ունկնդիրների միջև կենդանի, անմիջական կապն ու շփումը կենտրոնացնում է ունկնդիրների ուշադրությունը, իսկ դի-

տական դժվարամարս հարցերի մասին ըստ հնարավորին պարզ ու հասկանալի խոսելը ունկնդիրներին տրամադրում է հետաքրքրություն: Հափշտակությունը լսել դասախոսությունը կենդանի կապը, դասախոսի սենտուն հայացքը, անմիջական դիմումը լավագույն կապն է լսարանի հետ, դասախոսն անընդհատ հնարավորություն ունի հաշվի առնելու ունկնդիրների տրամադրությունը, ուշադրությունն ու պահանջները: Բավական է կտրվել ունկնդիրներից և թաղվել թղթերի մեջ, միապաղաղ կարգալ գրված դասախոսությունը, և կապը կտրվում է, ամենահետաքրքրական նյութն անգամ լսվում է ցրված ուշադրությամբ կամ ձանձրացնում ունկնդիրին:

Անյնը իր դասախոսությունների ժամանակ միշտ աչքի առաջ է ունեցել այդ հանգամանքը և միշտ էլ ձգտել է, որ իր խոսքը լինի հասկանալի, պարզ ու մատչելի:

Պատմարան Վ. Օ. Կլյուչևսկին և իրավաբան, սոցիոլոգ Մաքսիմ Կովալևսկին, անկախ նրանց գաղափարական-պարտիական պատկանելությունից, հանդիսացել են գիտական-դասախոսական տիպի լավագույն հոնտորներ: Նրանց դասախոսություններն իրենց մտքերի հարստությամբ, հաղորդման պարզությամբ ու գեղարվեստականությամբ մեծ լսարան էին ունենում և ունկնդիրների կողմից լսվում էին մեծ ուշադրությամբ ու հափշտակությամբ:

### 4. ԲՆՄԱԿԱՆ.—ԳԵՂԱՐՎԵՍԱԿԱՆ

Խոսքի ծագման ու զարգացման բազմադարյան պատմությունը ցույց է տալիս, որ խոսքի հարստացման և կատարելագործման ուղղությամբ տարվող պայքարն ու աշխատանքը հավասար շափով ընդգրկում են նրա երկու ճյուղերը՝ դրավոր խոսքը և խոսակցական, բերանացի կամ բանավոր խոսքը:

Բանավոր խոսքի ամենացայտուն ձևերն են՝ հոնտորականը և արտասանականը (ղեկլամացիոնը): Հոնտորն իր ճառի հանպատրաստից ստեղծողն է (իմպրովիզատորը) կամ ճառի տեքստի հեղինակը և կատարողը: Արտասանողը (ղեկլամատորը) արտահայտչական ձևերով արտասանում է ուրիշի տեքստը:

Հին Հունաստանում հոնտորական արվեստը կապված էր նաև դատական պրոցեսների հետ: Մեղադրյալը, ինչպես արդեն հիշատակել ենք, դատավարության ժամանակ իրավունք չունեի օգտվելու դատապաշտպանի ծառայությունից և ինքը պետք է արտասաներ իր պաշտպանական ճառը: Սոփեստները և լոգոգրաֆները

Նախօրոք գրում էին այդպիսի ճառեր ու վաճառում: Այսպիսով ստացվում էր, որ ճառի հեղինակը և նրա կատարողը տարբեր մարդիկ էին:

Արտասանության բնագավառում հակառակն է տեղի ունեցել: Հունաստանում առաջին արտասանողները եղել են բանաստեղծները, որոնք արտասանել են իրենց բանաստեղծությունները, իրենց տեքստը: Հետագայում քաղաքական կյանքը պահանջել է, որ հետտորներն իրենք լինեն իրենց ճառի տեքստի կատարողները և կիրառեն ճառի հանպատրաստից ձևերը, իսկ բանաստեղծ-արտասանողը, մեկ անգամ մշակելով տեքստը, դադարել է դառնալ հանպատրաստից կատարող և այդ տեքստը սկսել են օգտագործել արտասանողները:

Արտասանության ժամանակ խոսքի զարգացման ընթացքում ամենից շատ տարբերություններ և փոփոխություններ են դիտվում կենդանի, բանավոր խոսքի մեջ, այնինչ գրավոր խոսքի մեջ այդ փոփոխությունները շատ ավելի դանդաղ են կատարվում:

Ընդունված գրական լեզուն, որից օգտվում են միջին և ավելի բարձր կուլտուրական մակարդակի մարդիկ, ամենից ավելի ճիշտ է հնչում բեմից, քանի որ բեմական արվեստն է, որ հատուկ ուշադրություն է դարձնում խոսքի վրա: Բեմից է, որ հնչում է խոսքի մաքուր ու ճիշտ արտասանությունը: Բեմն է, որ հավաքում ու պահպանում է արտասանության տրադիցիաները:

Գիդրոն, Գյոթեն, Պուշկինը, Գոգոլը, Ստանիսլավսկին և ուրիշ խոշոր արվեստագետներ մի շարք հետաքրքրական մտքեր են արտահայտել դերասանի խոսքի մասին: XIX դարի երկրորդ կեսի Ֆրանսիական նշանավոր դերասան Կոկլեն-Ավազը պահանջում էր, որպեսզի դերասանը բեմի վրա ոչ թե խոսի, այլ «արտասանի»: Այս տեսակետն է զարգացնում նաև ռեժիսյոր Ն. Գորչակովը՝ իր «Զրույցներ ռեժիսյորայի մասին» գրքում<sup>1</sup>: Արտասանությունն այստեղ սկսվել է հասկանալ ո՛չ թե նրա կեղծ-դեկլամացիոն ձևվերով, այլ խոսքի կենդանի, ճշմարիտ ու երաժշտական մատուցումով: Ռուսական բեմի հուշակավոր ռեժիսյոր և դերասան Կ. Ս. Ստանիսլավսկին իր ստեղծագործական ամբողջ կյանքի ընթացքում միշտ էլ զբաղվել է բեմական խոսքի մշակման հարցերով և իր «Իմ կյանքն արվեստում» աշխատության մեջ հատուկ գլուխ է նվիրել այդ հարցին հետևյալ վերնագրով. «Գերասանը պետք է

կարողանա խոսել»<sup>2</sup>: Այս վերնագրում արդեն շատ բան է ասված:

Մոսկվայի հին բնակիչները Փոքր թատրոնը անվանել են «Խոսքի համալսարան»: Այդ թատրոնը տվել է բեմական խոսքի այնպիսի նշանավոր վարպետներ, ինչպիսիք էն Սաղովսկայան, Ֆեդոտովան, Երմոլովան, Լենսկին, Պրավդինը, Յուսիկը, Օստոժևը և ուրիշներ:

Մոսկվայի Գեղարվեստական թատրոնի ուղին այլ է եղել: Նա հետապնդել է բեմի վրա կյանքը ճշմարտագիտորեն ու կենդանի կերպով պատկերելու նպատակը, ջանալով հեղինակի տեքստը, մտքերը, զգացմունքները, դիտավորությունները րացահայտել «Լեռնաթափանքներով», որի հետևանքով սուստ է խոսքի բանաստեղծական կողմը: Այդ զգացել են նույն թատրոնի խոշորագույն արտիստներ Կաշալովը, Լեոնիդովը, Մոսկվինը և ուրիշներ, որոնք պահանջում էին խոսքի մշակման վրա մեծ աշխատանք թափել:

Անցյալում հայ բեմի որոշ ներկայացուցիչներ, հատկապես Կ. Պոլսից եկած դերասան-դերասանուհիները, խոսքի արտասանության բնագավառում տուրք են տվել խոսքի երգայնությանը, ընդօրինակելով Ֆրանսիական բեմի տրադիցիաները: Սակայն ռուսական բեմի խոշորագույն վարպետների ազդեցությամբ ազատագրվել են բեմական խոսքի արտասանության այդ ոչ ռեալիստական ձևերից:

Հայ բեմի մեծատաղանդ դերասանուհի Սիրանուշը, խոսքի անկեղծության ու ճշմարտացիության հետ զուգակցված իր բացառիկ արտահայտչական-հուզական երաժշտական տվյալներով, բեմական խոսքի անգերազանցելի վարպետ էր: Հանճարեղ Պ. Աղամյանը հասարակությանը գերում էր խոսքը իմաստավորելու և հուզականությամբ արտասանելու իր մեծ ընդունակությամբ: Ժամանակակիցները մամուլում և իրենց հիշողություններում հիացմունքով են խոսում Համլետի «Լինել, թե՛ չլինել» խոսքերը արտասանելու ժամանակ այն աննկարագրելի ազդեցության մասին, որ վաղամեծ մեծ արտիստը թողնում էր զահ-իճի գերեզմանային լուսության մեջ իր յուրաքանչյուր հնչյունը կլանող հասարակության վրա:

Հայ բեմի սյուն Հովհ. Աբելյանը իր ծավալուն ձայնով, խոր հուզականությամբ ոչ միայն արտահայտում էր մեծ կրթեր, այլև լիրիկական հույզեր:

<sup>1</sup> И. Я. Блинов, «Выразительное чтение и культура устной речи». Москва, 1946 г., стр. 39.

<sup>2</sup> К. С. Станиславский. «Моя жизнь в искусстве». Москва, 1939 г., стр. 647.

Իր լիրիկ, երաժշտական ձայնով խոսքի վարպետ էր Իսահակ Ալիխանյանը: Արեղայի գերում նա առնական Շահխաթունուն գեղազանցում էր իր ձայնական, արտահայտչական ելևէջներով:

Ով բախտ է ունեցել տեսնելու Սաթենիկ Աղամյանի խաղը Սեղայի («Հին աստվածներ») դերում, երբեք չի մոռանա այն հմայիչ ազդեցությունը, որ նա թողնում էր «Իջե՛ք, իջե՛ք երազնե՛ր» մենախոսության ժամանակ:

Արուս Ոսկանյանը Երևանի թատերական ստուդիայում իր մանկավարժական գործունեությամբ բեմական-գեղարվեստական խոսքի վարպետության իր հարուստ փորձը հազորդեց դերասանական երիտասարդ սերնդին:

Գեղարվեստական ասմունքի խոշոր վարպետ է Սուրեն Քոչարյանը, որի տաղանդը ըստ արժանվույն գնահատել է նաև բեմական-գեղարվեստական խոսքի խոշորագույն վարպետ Կաշալովը:

Գեղարվեստական ասմունքի բնագավառում զգալի նվաճումներ են ձեռք բերել Հայկունի և Լիլիկ Գարագաշները, Ժան Էլոյանը, Պահարեն, Քամարա Դեմուրյանը, Հրաչունի Ջինանյանը, Գ. Խաժակյանը, Ալ. Աղամյանը, Բ. Ներսիսյանը, Մ. Սիմոնյանը և ուրիշներ:

## 5. ՌԱԶՄՍԱԿԱՆ

Աշխարհահռչակ զորավարներն իրենց հաղթանակները, ի թիվս այլ գործունեների, ձեռք էին բերում նաև շնորհիվ ռազմիկներին մարտի ներշնչելու իրենց հոեոտորական ընդունակություն:

Մեծ զորավարը միշտ հետաքրքրվել է ռազմիկի կյանքով, հոգացել նրա մասին, շփում ունեցել նրա հետ, նրա խոսքը հարգվել է զինվորի կողմից: Ամենահին ժամանակներից սկսած մեծ ճակատամարտերից առաջ զորավարը ռազմաշունչ ճառով դիմել է իր զորաբանակներին, ոգեշնչել ռազմիկներին, վառել նրանց հայրենասիրությունը, բարձրացրել մարտական ոգին, կոչ արել խիզախության, սխրագործության:

Ավարայրի դաշտում հայկական զորքերի սպարապետ Վարդան Մամիկոնյանը, ըստ Եղիշևի, սկսեց խոսել զորքի հետ և ասաց.

«Շատ պատերազմներ եմ մղել ես և դուք էլ ինձ հետ. տեղ կար, որ քաջաբար հաղթեցինք թշնամիներին, տեղ էլ կար, որ նրանք հաղթեցին մեզ. բայց ավելի շատն այն է, որ հաղթող ենք դուրս եկել և ոչ թե հաղթված: ...Արդ, ազաչում եմ ձեզ, ով իմ

քաջ նիզակիցներ. մանավանդ որ ձեզանից շատերը քաջությամբ ինձնից ավելի լավ եք և հայրենական զահի պատվով՝ ավելի բարձր. բայց երբ ձեր հոծար կամքով ինձ կարգեցիք ձեզ առաջնորդ և զորագլուխ, թող իմ խոսքերը ախորժալուր և բազմալի թվան մեծերիդ ու փոքրերիդ ականջներին: Չերկնչենք ու չվախենանք հեթանոսների բազմությունից և ոչ էլ մահականացու մարդու ահագին սրի դեմ թիկունքներս դարձնենք. որպեսզի տերը հաղթությունը մեր ձեռքը տա, ոչնչացնենք նրանց զորությունը, որպեսզի բարձրանա ճշմարտության կողմը. իսկ եթե հասել է ժամանակը մեր կյանքը սուրբ մահով ավարտելու այս պատերազմում, ընդունենք ուրախ սրտով, միայն թե արիության ու քաջության մեջ վախկոտություն չխառնենք: ...Վախը թերահավատության նշան է. թերահավատությունը մենք վաղուց ենք մերժել մեզանից. նրա հետ թող վախն էլ փախչի մեր մտքերից ու խորհուրդներից»<sup>1</sup>:

Ռուս հանձարեղ զորավար Ա. Վ. Սուվորովը իր «հրաշագործ դուլցադուններով» Շվեյցարական Ալպերը հաղթահարեց և նապոլեոնյան գեներալներին պարտության մատնեց շնորհիվ իր ստրատեգիական մեթոդի և խրախուսական ու քաջալերիչ խոսքի:

Հայրենական Մեծ պատերազմի ժամանակ մեր միլիոնավոր զորաբանակները, խրախուսված իրենց զորավարների հայրենասիրական կոչերից, մարտի էին նետվում հանուն հայրենիքի, հերոսաբար ոչնչացնելով թշնամուն:

## 6. ՀՈԳՆՎՈՐ

Հին Հունաստանում և Հռոմում ռեսուրսիկական կարգերի վերացման և միապետական կարգերի սահմանման հետ միասին, հետզհետե սկսեցին թուլանալ ու վերանալ հոեոտորական արվեստի ամենակարևոր՝ քաղաքական և դատական ճյուղերը:

Քրիստոնեության տարածման կապակցությամբ մեծ թափով սկսում է զարգանալ հոգևոր ճարտասանությունը: Նոր կտակարանում հիշատակված առաքյալներից քրիստոնեության տարածման գործում ամենաակտիվ դեր է խաղացել Պողոս առաքյալը, որի ճառը անտեսանելի աստծո մասին Աթենքի արեոպագի առաջ խորապես ցնցել է աթենացիներին: Անկախ Պողոս առաքյալի գոյության և նրա գրական ժառանգության ճշմարիտ լինելուց, նոր կտա-

<sup>1</sup> Եղիշև, «Վարդանանց պատմությունը», թարգմ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1946 թ., էջ 176—179:

կարանի մեջ նշված նրա թղթերը՝ ուղղված քրիստոնեական եկեղեցիներին ու առանձին անձանց, հոգևոր հոստորական արվեստի լավագույն նմուշներ են:

Ավարայրի դաշտում Վարդան զորավարի ռազմական ճառից հետո, հոգևոր ճառով հանդես գալով, Առնոդ երեցը ասաց.

«...Հիշեցեք Իսրայելի բոլոր նախկին զորավարներին՝ Հեսուսին, Գեղեոնին, Եփթայային և բոլոր մյուսներին, որոնք ճշմարիտ հավատ ունեին: Նրանք շարդեցին-կոտորեցին հեթանոսների զորքը և երկիրը պիղծ կռապաշտությունից մաքրեցին: Եվ իրենց հաստատուն ու արդար գործունեության համար, որ ամենևին չհրկամտեցին իրենց մտքերի առաջ, արեգակն ու լուսինն՝ ականջներ չունենալով՝ լսեցին ու կատարեցին նրանց հրամանն ու խոսքը. ծովն ու գետերը՝ ճանապարհ բաց արին նրանց առաջ՝ հակառակ իրենց սովորության: Եվ Երիբով քաղաքի բարձր պարիսպները լոկ ձայնից ընկան կործանվեցին՝ արդարության օրենքների վրեժխնդրության համար: Եվ բոլոր մյուսները, որոնք չտրաքանչյուրն իր դարում հավատի համեմատ քաջություններ կատարեցին, գովարանվեցին մարդկանց կողմից և Աստված էլ նրանց արդար համարեց:

...Այս գիտենալով, եղբայրներ, յթույանանք ու լվհատվինք, այլ պինդ սրտով և հաստատուն հավատով հոժարակամ հարձակվենք այն թշնամիների վրա, որ վեր են կացել—գալիս են մեզ վրա: Մեր հույսը կրկնակի է երևում մեզ. եթե մեռնենք՝ կապրենք և եթե մեռցնենք՝ միևնույն կյանքն է կանգնած մեր առաջ:

...Դուք բոլորը գիտեք, որ առաջվա ժամանակները, երբ զուր պատերազմ էիք գնում, թևակտե սովորություն ունեիք քահանաներին միշտ բանակում պահել, բայց ճակատամարտի ժամանակ ձեզ հանձնելով նրանց աղոթքին՝ որևէ ամուր տեղ էիք թողնում նրանց. իսկ այսօր եպիսկոպոսները և երեցներն ու սարկավազները, սաղմոսերգուներն ու գրակարդացները, ամեն մեկը սահմանված կանոնով իբրև սպառազինված և պատերազմի պատրաստված՝ կամենում են ձեզ հետ միասին հարձակվել ու շարդել ճշմարտության թշնամիներին...»<sup>1</sup>:

Հոգևոր նշանավոր հոստորների շարքին են պատկանում Հովհան Ռսկեբերանը, Ֆրանցիսկը, Թոմա Աքվինացին, Այուսթերը, Յվինգլին, Կալվինը, Գրիգոր Նարեկացին, Ներսես Շնորհալին, Հովհան Որոտնեցին, Գրիգոր Տաթևացին, Խրիմյան Հայրիկը և ուրիշներ:

<sup>1</sup> Եղիշե, «Վարդանանց պատմությունը», թարգմ. Ե. Տեր-Մինասյան, Երևան, 1946 թ., էջ 180—187:

Ներբող, ներբողական կամ պանեգիրիկ՝ հոստորական արվեստի մի ձև է, որը շատ էր տարածված Հին Հունաստանում և Հռոմում: Ներբողական ճառերում հոստորները գովարանում ու փառաբանում էին հերոսի սխրագործությունները, հայրենասիրությունը, նախնիների քաղաքացիական քաջությունները և այլն:

Հռոմեական կայսրների ժամանակ ներբողական ճառերն սկսեցին կրել շափազանցված գովքի բնույթ, զարդարված հոստորական պաճուճանքներով, զուրկ իսկական ներշնչանքից, բայց արտասանվում էին կեղծ ոգեծրությամբ և նրբաճաշակ ոճով:

Ֆրանսիական դատական հոստորների ճառերի սկիզբը յուրատեսակ պանեգիրիկ է դատարանի կազմի (երգվյալների) հասցեին: Ճառի այդ մասում գովաբանվում է ատենակալների անշահախնդրությունը, սրաթափանցությունը, զթասրտությունը և այլն: Դատասպաշտպան Լաշոն Պոմբերի գործով իր պաշտպանական ճառն սկսել է այսպես. «Ես ձեզ ուսումնասիրեցի, ես ութ օրվա ընթացքում տեսնում էի ձեր անվրդով սատնասրտությունը և ի դեմս այդպիսի դատավորների, ես կարող եմ հանգիստ լինել»<sup>1</sup>:

Ներկա ժամանակաշրջանում հեզնանքով պանեգիրիկ են անվանում այն ճառերը, որոնց մեջ որևէ անձնավորության գովքը հասցվում է շափազանցության, կամ երբ ճառում գերակշռում է ստրկամտորեն շողոքորթելու և քծնելու դիտավորությունը:

Ներկայումս ներբողական ճառեր են արտասանվում քաղաքական, հասարակական, գրական, արվեստի դործիչների հորելյանական հանդեսներին, ստեղծագործությունները քննարկելիս, դանական կոնֆերանսներում և բանկետներում:

## 8. ԳԱՄՐԱՆԱԿԱՆ

Դամբանականի նախնական ձևը ներբողականն էր, երբ գովաբանվում և փառաբանվում էր մեռածի գործունեությունը: Հետզհետե տրադիցիա դարձավ կենդանի մարդկանց մասին ներբողական ճառեր ասելը. մեռածների դագաղի կամ գերեզմանի վրա արտասանված ճառերը կոչվեցին դամբանական և մահախոսական կամ նեկրոլոգ, եթե հրապարակվում էին մամուլում:

Դամբանական ճառերը, առհասարակ, ընդարձակ չպետք է լինեն: Համառոտ կենսագրական տվյալներից հետո կամ մեջընդմեջ

<sup>1</sup> E. M. Ворожейкин, «Судебные ораторы Франции XIX века». Москва, 1959 г., стр. 15—16.

պետք է նշվեն հանգուցյալի գործունեության այն դրական կողմնաբեր, որոնց քաղաքական-հասարակական նշանակությունը հանրա հայտ է: Հանգուցյալին այնպիսի արժանիքներ վերագրելը, որոնցի նա շատ հեռու է եղել, ունկնդիրների մեջ ակամա հեղնական ժպիս կարող է առաջացնել:

Դամբանական ճառ արտասանող հոնտորը պետք է աշխատի այդ բավական դժվար պարտականությունը, որից շատերը խուսափում են, կատարել պատշաճ լրջությունը, ճառն արտասանել սահուն լեզվով, զգացմունքով և որոշ խորհրդավոր հանդիսավորությունը:

Դամբանական ճառի լավագույն օրինակ են էնգելսի ճառը Մարքսի գերեզմանի վրա (տե՛ս «Հավելվածում»), Պոլ Լաֆարգի և Վ. Ի. Լենինի ներքևում բերված ճառերը:

Պոլ Լաֆարգի դամբանական ճառը էնգելսի դագաղի մոտ.

«Գնաս բարով, թանկագին ընկեր: Ծս երբեք այլևս չեմ գտնի այդպիսի քնքուշ, բարի ու համբերատար բարեկամ: Մարքսի հետ միասին դու մեզ տվեցիր «Կոմունիստական Մանիֆեստը», Մարքսի հետ միասին դու տվել ես նաև Ֆրանսիական պրոլետարիատին մի ծրագիր, որը մեր մեջ արթնացրել է դասակարգային զիտակցություն և մեզ համար որպես մշտական ուղեցույց է ծառայում քաղաքական իշխանություն նվաճելու համար մղվող պայքարում: Գնաս բարով, Ֆրիդրիխ էնգելս: Ֆրանսիայի բանվորները երբեք չեն մոռանա այն լուղունգը, որ դու Մարքսի հետ տվեցիր մեզ 1847 թվականին. «Պրոլետարներ բոլոր երկրների, միացե՛ք»: Դուք մեզ ցույց տվեցիք պայքարի ասպարեզ, դուք մեզ տվեցիք զենք և լուղունգներ: Մենք կպայքարենք և մենք կհաղթենք»<sup>1</sup>:

Վ. Ի. Լենինի դամբանական ճառը, արտասանված Պոլ և Լաուրա Լաֆարգների թաղման ժամանակ.

«Ընկերներ:

Ծս խոսք եմ վերցնում, որպեսզի ՌՍԳՊ անունից արտահայտեմ խոր վշտի զգացմունք Պոլ ու Լաուրա Լաֆարգների մահվան առթիվ: Ռուսաստանի զիտակից բանվորները և բոլոր սոցիալ-դեմոկրատները տակավին ռուսական ռեվոլյուցիայի նախապատրաստության շրջանում սովորեցին խորապես հարգել Լաֆարգին, իբրև

մարքսիզմի գաղափարների ամենատաղանդավոր ու խոր տարատողներից մեկին, գաղափարների, որոնք այնքան փայլուն կերպով հաստատվեցին ռուսական ռեվոլյուցիայի և կոնտրռեվոլյուցիայի մեջ դասակարգների պայքարի փորձով: Այդ գաղափարների դրոշի ներքո համախմբվեց ռուս բանվորների առաջավոր ջոկատը, իր կազմակերպված մասսայական պայքարով հարված հասցրեց արսոլյուտիզմին և պաշտպանեց ու պաշտպանում է սոցիալիզմի գործը, ռեվոլյուցիայի գործը, դեմոկրատիայի գործը, հակառակ լիբերալ բուրժուազիայի բոլոր դավաճանություններին, երերումներին ու տատանումներին:

Ի դեմս Լաֆարգի — ռուս ս.-դ. բանվորների մտքերում — միանում էին երկու դարաշրջան՝ այն դարաշրջանը, երբ Ֆրանսիայի ռեվոլյուցիոն երիտասարդությունը ֆրանսիական բանվորների հետ, հանուն ռեսպուբլիկական գաղափարների, զենում էր գրոհի ընդդեմ կայսրության, — և այն դարաշրջանը, երբ ֆրանսիական պրոլետարիատը, մարքսիստների ղեկավարությամբ, տոկուն դասակարգային պայքար էր մղում ամբողջ բուրժուական հասարակարգի դեմ, պատրաստվելով վերջին պայքարի համար ընդդեմ բուրժուազիայի՝ հանուն սոցիալիզմի:

Մենք, ռուս սոցիալ-դեմոկրատներս, որ զգում ենք ասիական բարբարոսությամբ սնված արսոլյուտիզմի ամբողջ ճնշումը և բախտ ենք ունեցել Լաֆարգի ու նրա ընկերների երկերից քաղելու անմիջական ծանոթություն եվրոպական բանվորների ռեվոլյուցիոն փորձի ու ռեվոլյուցիոն մտքի հետ, մենք առանձնապես ակնբախ կերպով տեսնում ենք հիմա, թե ինչպես արագորեն մոտենում է այն գործի հաղթանակի ժամանակը, որի պաշտպանությանը Լաֆարգը նվիրել էր իր կյանքը: Ռուսական ռեվոլյուցիան բաց է արել դեմոկրատական ռեվոլյուցիաների դարաշրջան ամբողջ Ասիայում, — և այժմ 800 միլիոն մարդ, իբրև մասնակիցներ, մտնում են ամբողջ քաղաքակիրթ աշխարհի դեմոկրատական շարժման մեջ: Իսկ Եվրոպայում շարունակ ավելի են բազմապատկվում այն նշանները, թե վախճանին է մոտենում այսպես կոչված խաղաղ բուրժուական պառլամենտարիզմի տիրապետության դարաշրջանը, որպեսզի իր տեղը զիջի մարքսիզմի գաղափարների ոգով կազմակերպված ու դաստիարակված պրոլետարիատի ռեվոլյուցիոն ճակատամարտերի դարաշրջանին, պրոլետարիատի, որը կտապալի բուրժուազիայի տիրապետությունը ու կհաստատի կոմունիստական հասարակարգ»<sup>1</sup>:

<sup>1</sup> «Հիշողություններ Մարքսի և էնգելսի մասին», Երևան, 1958 թ., էջ 409.

Խրախճանքի ճառերը կամ բաժակաճառերը՝ ճաշկերույթների, պաշտոնական ընդունելությունների, հանդիպումների, հոբելյանական բանկետների, պարգևատրումների, դիսերտացիաների պաշտպանության, միջնակարգ դպրոցը, տեխնիկումը կամ ԲՈՒՀ-ն ավարտելու, ծննդյան, անվանակոչության, նշանդրերի, հարսանեկան և նման այլ առիթներով արտասանվող ճառերն են: Ոչ բոլոր հոստորներն էն, որ կարող են «սեղան կառավարել» և լավ կենացներ առաջարկել: Բաժակաճառերի հմուտ մասնագետները իրենց շրջապատի կողմից ճանաչված մարդիկ են, փրոնց մշտապես «թամաղա» են բնտրում: Լավ թամաղան խրախճանքի ողին է և ուրախության տոն տվողը: Լինում էն տարբեր թամաղա-հոստորներումանք լուրջ էն ու պաշտոնական և իրենց բաժակաճառերն ասում են խիստ ու պատշաճ հաջորդականությամբ, չեն սիրում ավելորդ աղմուկ և միջամտություն: Ոմանք շատ սրամիտ են ու կատակաբան, իրենց ճառերը համեմուտ են անեկոտներով, կատակներով, սրախոսությամբ ու հաճույախոսությամբ, հոգ են տանում, որ կենացները «ծաղկեցվեն» երգերով, արտասանությամբ, պարերով ու երաժշտությամբ:

Ըստ ավուր պատշաճի, տարրերություն կա կենցաղային խրախճանքի և պաշտոնական բանկետների ժամանակ արտասանվող ճառերի միջև: Վերջին դեպքերում ճառերում կարող են շոշափվել քաղաքական-հասարակական, գիտական-գեղարվեստական հարցեր: Բանկետներում արտասանվող ճառերը ավելի զուսպ են, մըտածված, հաշվով և հեշտությամբ ներքողականի են վերածվում: Կենցաղային խրախճանքի ճառերը, ընդհակառակն, ավելի անմիջական են, սրտաբուխ և հուզական: Ծառերի թեմաները և՛ սաանդարտ են, և՛ երբեմն էլ անսպասելի: Բաժակաճառեր են արտասանվում հավաքույթի պատճառի, օջախի «քոթուկի», ծնողների, զավակների, մերձավոր և հեռավոր բարեկամների, սեղանի շուրջ գտնվող Լրիտասարդության, բարեկամության, հայրենասիրության, աշխատանքի հերոսների, պարտիայի ու կառավարության ղեկավարների, խաղաղության, հաշտության, լիության, հաջողության մասին, հաճախ հարգվում է Հայրենական պատերազմում հերոսաբար զոհվածների կամ պաշտոնի ու աշխատանքի կապակցությամբ անձնագոհ մարդկանց հիշատակը: Թեմաների բազմազանությունը, սեղանակիցների խայտաբղետությունը, նրանց «խաթրին շղիպչելու» վտանգը, խրախճանքը դեպի գագաթնակետը տանելու մտահոգությունը հոստորական արվեստի այս ճյուղին պատկանող անձանց

թիվը դարձնում է սահմանափակ: Բարձրագույն կրթություն ստացած շատ մարդիկ սեղանի շուրջը կա՛մ չեն կարողանում խոսել, կա՛մ, քրտնելով, կարմրելով, մի կերպ մի քանի կցկտուր նախադասություն են ասում, ապա նստում և թաշկինակով շտապ երեսն ու ճակատը սրբում, չնայած այդ նույն անձնավորությունները իրենց դիտական, մասնագիտական հարցերի շուրջը կարող են լուրջ դասախոսություններ կարդալ:

Ներկայումս զանազան առիթներով կազմակերպվող քաղաքական ընդունելությունների ժամանակ արտասանվում են բաժակաճառեր և շատ քաղաքական հոստորներ մեծ հմտություն էն ձեռք բերել արդիական քաղաքական հարցերի մասին խոսելու բաժակաճառերին յուրահատուկ ձևով՝ երբեմն զուսպ, երբեմն զավեշտական շտրիխներով, ստեղծելով ընկերական-բարեկամական ջերմ, հաճելի ու բարձր տրամադրություն:

**ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱՌԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ**

Քաղաքական ճառը, լինի դա պառլամենտական, դիվանագիտական, պրոպագանդիստական, թե ազդեցիկ, հիմնականում պետք է բաղկացած լինի երեք մասից՝ ներածությունից, շարադրումից և եզրափակումից:

Արխատուելը բաժանում էր 5 մասի՝ ներածություն, առաջարկություն, շարադրում, ապացույց և եզրակացություն:

**ՆԵՐԱՇՈՒԹՅՈՒՆ**

Լսարանի ուղադրության կենտրոնացումը հիմնականում կախված է հաջող ներածությունից: Ունկնդիրների վրա հոստորի թողած առաջին տպավորությունը, եթե անզամ շունենա վճռական նշանակություն, ապա համենայն դեպս ճառի հաջողության համար կարևոր նշանակություն ունի:

Հնում հոստորները գործածում էին ներածության երեք ձև՝ արհեստական, բնական և հանկարծակի կամ անսպասելի: Արհեստական ներածության դեպքում հոստորը ունկնդիրներին աստիճանաբար նախապատրաստում է գլխավոր թեմային: Բնական ներածության ժամանակ խոսողը, առանց որևէ նախնական խորհրդածությունների, ուղղակի սկսում է շարադրել իր հիմնական միտքը: Հանկարծակի կամ անսպասելի ներածության դեպքում հոստորը, հուզված իրեն համակող խոր զգացմունքից, իր ճառն սկսում է միանգամից, ուժեղ ու ցնցող արտահայտություններով:

Ներկայումս ավելի գործածական են հետևյալ ձևերը.

1. Դիմում: Հոստորը պարզապես դիմում է լսարանին որևէ բանով կամ կարճ նախադասությամբ: Օրինակ՝ «Ընկերներ», «Հարգելի քաղաքացիներ», «Գերագույն Սովետի ընկեր դեպուտատներ», «Համագումարի մեծարգո պատգամավորներ»:

«Ընկեր զինվորներ» և նավաստիներ, սերժանտներ և ավագներ:

Ընկեր սպաներ, զեներալներ և ծովակալներ:

Արտասահմանյան մեր թանկագին հյուրեր»:

Դատական ճառերի ներածությունն սկսվում է պարզ դիմումով. «Քաղաքացի դատավորներ», «Ընկեր դատավորներ», «Գերագույն դատարանի քրեական (քաղաքացիական) գործերի դատական կոլեգիայի հարգելի անդամներ», «Զինվորական տրիբունալի մեծարգո դատավորներ» և այլն:

2. Ժամանակագրական հարցադրում: Հոստորը նշում է պատմական այն տարեթիվը, երբ տեղի է ունեցել դեպքը՝ ունյուցիան, ապստամբությունը, բանվորական կամ գյուղացիական շարժումը, ծնունդը, մահը և այլն: Օրինակ՝ դեկաբրիստների ապստամբությանը նվիրած իր ճառը Գ. Վ. Պլեխանովը սկսել է այսպես.

«Ուղիղ 75 տարի առաջ, 1825 թվականի դեկտեմբերի 14-ին, մի դեպք տեղի տվեցավ Պետերբուրգում, որը խորապես հիացրեց ժամանակակիցներին և արժանի է սերունդների լիակատար ուղադրությանը»:

Մի այլ օրինակ.

«1889 թվականի հուլիսին Փարիզում, Երկրորդ Ինտերնացիոնալի 1-ին կոնգրեսում, Պոլ Լաֆարգի առաջարկով որոշվեց ամեն տարի տոնել աշխատավորների միջազգային տոնը՝ Մայիսի մեկը», և այլն:

3. Հարցի կարևորության ընդգծում: Դանտոնն իր նշանավոր ճառերից մեկը սկսում է հատկապես շեշտելով շոշափվող հարցի կարևորությունը.

«Ես առաջարկում եմ բոլոր ազնիվ քաղաքացիներին շհոանալ իրենց տեղերից... (բոլոր ներկա եղողները լուռ մնում են իրենց տեղերում): Ինչպե՞ս թե, քաղաքացիներ, մի՞թե ահեղ վտանգի պահին... դուք կարող էիք ցրվել առանց վճռական միջոցառումների, որպիսիք ձեզանից պահանջում է ժողովրդական գործի փրկությունը: Հասկացե՞ք, թե որքան կարևոր է ժամանակին ձեռք առնել այնպիսի իրական միջոցներ, որոնք պատժելու են կոստրոկայուցիոններներին, որովհետև տրիբունալն անհրաժեշտ է նրանց համար»<sup>1</sup>:

4. Պարզ ներածություն: Հոստորն առանց դեռ ու դեռ ընկնելու, պարզ, հասարակ, անկաշկանդ ձևով սկսում է իր ճառը, ունկնդիր:

<sup>1</sup> Լ. Ասլանյան, «Հոստորական արվեստ», Երևան, 1942 թ., էջ 14—15.

Ներին հայտնելով իր նպատակը և ճառի թեման: Ներածության այս ձևը կիրառվում է այն դեպքերում, երբ շոշափվող հարցը շատ պարզ է, կարևոր, այժմեական, հոետորը վստահ է, որ ունկնդիրներն իրեն ուշադրությամբ կլսեն: Օրինակ՝ «Պարոններ: Ես հրավեր ստացա ճառ ասելու այս հարգելի ժողովում և ընտրեցի այնպիսի նյութ, որն ինքնին պետք է գրավի ձեր ուշադրությունը, որպես ամենաարդիական հարց: Ես կխոսեմ կոնստիտուցիայի էության մասին» (Լասսալ):

5. Հանդիսավոր ներածություն: Ներածության այս ձևը կիրառվում է որևէ անձի կամ նշանակալից հանդիսավոր իրադարձության առթիվ և ներբողական բնույթ ունի: Իր ճառի ներածությունն սկսող հետորը պետք է ճանաչված ու հեղինակավոր անձնավորություն լինի, քանի որ նա իր խոսքն ուղղում է նույնպես հեղինակություն ու սեր վայելող՝ քաղաքական, հասարակական, գրական, երաժշտական կամ բնական որևէ գործչի՝ նրա հոբելյանական հանդեսի ժամանակ: Չճանաչված և ոչ հմուտ հետորի կողմից ներածության այս ձևի կիրառումը կարող է ծիծաղ առաջացնել և հենց ճառի սկզբում շփոթեցնել իրեն և ձախողել ելույթը:

6. Հանկարծակի կամ անսպասելի ներածություն: Կիրառելի է միայն այն դեպքերում, երբ հետորը համոզված է, որ ունկնդիրները զայրացած են, բողոքում են տեղի ունեցած անարդարության կամ վայրագ գործողության դեմ և անհամբեր սպասում են, որ հանդիսականներից մեկնումեկը արտահայտվի, ընթացք տա ու ձևակերպի այդ ցասումը:

Ճառի հանկարծակի ներածության կլասիկ օրինակ է Ցիցերոնի առաջին ճառը սենատում՝ Կատիլինայի դեմ:

«Մինչև ե՞րբ պիտի, վերջապես, շարաշահես մեր համբերատարությունը, Կատիլինա՛, Դեռ երկա՞ր պիտի համառես քո վայրի խելագարությունը: Ե՞րբ պիտի, վերջապես, մոռանալով ամեն շափ ու սահման, դարարես ամբարտավանալ քո սանձարձակ հանդգնությունը»:

Հռոմի առաջին կոնսուլը հիանալի օգտագործեց սենատորների զայրույթը Կատիլինայի դեմ՝ նրա հանցագործության առթիվ, և իր անսպասելի ներածությամբ էլ ավելի բորբոքեց նրանց ցասումը<sup>1</sup>:

<sup>1</sup> К. Л. Луцкий, «Судебное красноречие». С.-Петербург, 1913 г., стр. 42.

Քաղաքական ճառի կամ առհասարակ հետորական որևէ խոսքի հիմնական ու կարևոր մասը ճառի շարադրումն է: Հետորը իր խոսքի այս մասում պետք է շոշափի բուն նյութը, հիմնական թեման, ունկնդիրներին համոզելու համար պետք է հանդես գա իր մտավոր, տրամաբանական, ճարտասանական ողջ պաշարով:

Ճառի այս մասի հաջողության գրավականը, առաջին հերթին, հետորի կուռ տրամաբանությունն է: Եթե բերվող փաստարկումները հետորի կողմից միայն թվարկվում են մեխանիկորեն, առանց տրամաբանական կապի, ապա այդպիսի ճառը ունկնդրին չի համոզում:

Քաղաքական ճառերը, բացի կուռ տրամաբանություն ունենալուց, պետք է լինեն նպատակասլաց: Հին Հունաստանի հռչակավոր հետոր Դեմոսթենեսը իր հակառակորդ էսքինեսին ասել է.

«Բայց չէ՞ որ, էսքինես, բառերը շեն և ոչ էլ ձայնի հնչունությունն է, որ կազմում է հետորի փառքը, այլ նրա քաղաքական ուղղությունը, որ պետք է համապատասխան լինի մեծամասնության ցանկությունը, և սերը կամ ատելությունը դեպի նրանց, ում սիրում կամ ատում է հայրենիքը»:

Անբովանդակ, դատարկ, փքուն ֆրազներով լի ճառը երբեք իր նպատակին չի հասնի: Ցիցերոնն ասել է.

«Խոսքի արվեստը անհնար է, երբ խոսողը լիովին չի յուրացրել ընտրած թեմատիկայի բովանդակությունը... Իրոք, ի՞նչը կարող է ավելի անհեթեթ լինել, քան խոսքերի դատարկ հնչյունը, թեկուզ հենց ամենաընտիր և ամենագեղեցիկ, բայց որևէ մտքի, գիտության հետ կապ չունեցող խոսքերի»:

Վ. Ի. Լենինը իր բոլոր աշխատություններում և ճառերում աչքի էր ընկնում փաստարկումների ուժեղ տրամաբանությամբ:

Վ. Ի. Լենինի մասին իր հիշողություններում Ա. Ա. Անդրեևը գրում է. «...Նա միշտ խոսում էր գլխավորի մասին, ընտրում էր հիմնական օղակը, որի վրա և կենտրոնացնում էր ամբողջ ուշադրությունը: Նրա ճառն ամբողջական էր, կուռ ու միաձույլ: Նա զրնում էր հիմնական խնդիրը, և մյուս բոլոր հարցերը, որ նա շոշափում էր, ելույթի գլխավոր թեմայի հետ գտնվում էին միացություն, սերտ կապի մեջ, մեկ թեզիսը՝ սերտ, անխզելի կերպով կապված էր մյուսի հետ»<sup>1</sup>:

Պարզ է՝ որ մտքի այդպիսի կենտրոնացումը դառնում է հզոր

<sup>1</sup> А. А. Андреев, «Воспоминания о В. И. Ленине», т. 2, стр. 32—34.

ուծ, որն իր ճանապարհին հաղթահարում է ամեն մի խոչընդոտ: Վ. Ի. Լենինի ելույթները լսողները միաբերան վկայում են, որ նրա շիտակությունը, հարցի կարևորությունը, ճշմարտության ուժը, խոր համոզմունքն ու կրքոտությունը՝ նրա անձնական հմայքի հետ միասին, նրա ճառերը դարձնում էին համոզիչ ու գրավիչ:

Հոեւորն իր մտքերը կարող է շարադրել երկու ձևով՝ անալիզի և սինթեզի միջոցով: Հոեւորի հիմնական նպատակն է՝ համոզել ունկնդիրներին, աղոճել նրանց զգացմունքի ու կամքի վրա և հասնել իր առջև դրված նպատակին: Ունկնդրի ուշադրությունը սրելու և այն ճառի մեջ շոշափվող կարևոր մտքերի վրա ուղղելու համար հոեւորական արվեստի կողմից հանձնարարվող անալիտիկ կամ սինթետիկ մեթոդի ընտրությունը կախված է ճառի բովանդակությունից և ունկնդիրների կազմից:

Անալիտիկ-վերլուծական մեթոդը ինդուկտիվ մեթոդ է և դատողություն ժամանակ մասնավորից գնում է դեպի ընդհանուրը, առանձին փաստերից, մտքերից՝ դեպի ընդհանրացումները: Թվարկելով եզակի դեպքերը, երևույթները և փաստերը, հոեւորը իր հիմնական միտքը պարզարանելու համար ունկնդիրներին հետզհետե նախապատրաստում է հետևություն:

Սինթետիկ-համադրական մեթոդը դեդուկտիվ մեթոդ է՝ ընդհանուրից գնում է դեպի մասնավորը՝ ընդհանուր դրույթներից դեպի մասնավոր եզրակացությունները: Հոեւորը սկզբում հայտնում է հիմնական միտքը, իսկ հետո բերում է այդ միտքը հիմնավորող ապացույցներ: Տրամաբանական այս մեթոդով՝ զանազան փաստերի, երևույթների ու մտքերի համադրությամբ, ստացվում է ամբողջական պատկերացում:

Քաղաքական ճառերի և, հատկապես, պրոպագանդիստական ու ագիտացիոն ճառերի համար ո՞ր մեթոդն է ավելի շատ կիրառելի: Ինչպես հայտնի է, պրոպագանդան ընդգրկում է գաղափարների ավելի լայն շրջան, առավելապես տեսական բնույթի, և պահանջում է խոր ու մանրամասն ուսումնասիրություն, քաղաքական լուրջ պատրաստականություն հոեւորի և որոշ շափով էլ ունկնդիրների կողմից: Այս առումով անալիտիկ մեթոդն ավելի շատ կիրառվում է պրոպագանդիստական ճառերում:

Ագիտատորներն իրենց ճառերը կառուցում են սինթետիկ մեթոդով, քանի որ պրոպագանդայի համեմատությամբ ագիտացիան ավելի մասսայական է և ընդգրկում է գաղափարների ավելի նեղ, կոնկրետ շրջան, ուստի հմուտ ագիտատորը, հաշվի առնելով, որ բազմամարդ լսարանի ուշադրությունը և լարվածությունը երկար չի կարելի պահել և զգալով, որ հավաքված մասսան ի վիճակի չի լինի

հետևել իր մտքի զարգացմանը, միանգամից ունկնդիրներին հրամցնում է իր ընդհանուր դրույթը, որպեսզի նրանք կարողանան ավելի արագ ու դյուրին կերպով ըմբռնել հիմնական միտքը և ուշադրությամբ հետևեն մասնավոր փաստարկումներին:

Վ. Ի. Լենինը, լինելով լավագույն պրոպագանդիստ և ագիտատոր, միշտ շեշտում էր դրանց միջև եղած տարբերությունը, նշելով, որ պրոպագանդիստը պետք է տա «շատ գաղափարներ», իսկ ագիտատորը՝ մեկ. ուստի «պրոպագանդիստը գործում է գլխավորապես տպագիր խոսքով, ագիտատորը՝ կենդանի խոսքով: Պրոպագանդիստից պահանջվում են ոչ այնպիսի հատկություններ, ինչպիսիք պահանջվում են ագիտատորից: Օրինակ՝ կառուցկուն և Լաֆարգին մենք կտնվանենք պրոպագանդիստներ, Բեբելին և Գեդին՝ ագիտատորներ»<sup>1</sup>:

Ինչ մեթոդով, ինչ ձևով էլ ուզում է հոեւորը արտահայտի ու հիմնավորի իր հիմնական միտքը, նա պետք է հաշվի առնի, որ ճառի շարադրման բաժնումն է, որ նա պետք է ամենայն մանրամասնությամբ բացատրի, հիմնավորի այդ միտքը, ապացուցի, որ այն ճշմարտացի է, ապա հերքի հակառակ կարծիքները:

Երբ հոեւորը զգում է, որ ունկնդիրները բավարար չափով պատրաստ են ընկալելու իր հիմնական միտքը, նա իր տոժերը պետք է կենտրոնացնի ունկնդիրների զգացմունքը շարժելու վրա, նրանց վարակելով իր խոսքի հուզականությամբ ու անկեղծությամբ: Ծառի այս պաթետիկական մասը երկարատև չի կարող լինել, որից հետո պետք է անցնի եզրափակման:

#### ԵԶՐԱՓՈՒԿՈՒՄ

Եզրափակումը քաղաքական ճառի վերջին և ամենակարևոր մասերից մեկն է: Հաճախ ճառի հաջողությունը կամ անհաջողությունը կախված է դրանից: Շատ երգիչներ իրենց երգը վերջացնում են բարձր, հնչեղ նոտայով: Երբ խզվում է այդ նոտան, ձախողվում է երգի ամբողջ կատարումը: Նույնպիսի վիճակ է ապրում նաև քաղաքական հոեւորը: Լավ եզրափակման համար անհրաժեշտ է ճիշտ ընտրել այն պահը, երբ անհրաժեշտ է վերջացնել ճառը: Շատ հաճախ հոեւորները տարվելով ճառով, վերջում համապատասխան ձև տա խոսքեր չեն գտնում ամփոփելու և եզրափակելու ճառը: Կան հոեւորներ, որոնք սկսում են թույլ տալ կրկնություններ: Նման հոեւորների մասին Ցիցերոնն ասել է, որ նրանք հիշեցնում են

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 5, էջ 543:

օձին, որն իր գալարումները վերջացնում է նրանով, որ խայթում է հենց իր պոչը:

Ծգրափակումը հետապնդում է երկու նպատակ՝ համոզել և հուզել մարդկանց: Համոզելու համար պետք է ուժեղ, գեղեցիկ, համառոտ և վառ գույներով հիշեցնել ճառի հիմնական փաստարկումները: Իսկ հուզելու համար պետք է լարել բոլոր ուժերը, կիրառել ճարտասանության բոլոր միջոցները և, ինչպես ասել է Քվինտիլիանը, «...Քացել ու ձգել պերճախոսության բոլոր առաջաստները»:

Ճառը կարելի է եզրափակել որևէ նշանավոր քաղաքական գործիչի, րանաստեղծի, վիպասանի ասույթով կամ կոչով:

Հայրենական Մեծ պատերազմի օրերին հայ ժողովրդի կոչը վերջանում էր հետևյալ բառերով.

«Հիշեցեք մեր ժողովրդի իմաստուն խոսքերը. «Զգիտակցված մահը՝ մահ է, գիտակցված մահը՝ անմահություն»: Հանուն Հայրենիքի, հանուն երջանիկ կյանքի արհամարհեցե՛ք մահը, հիշեցեք մեր ժողովրդի պանծալի զավակի՝ Միքայել Նալբանդյանի խոսքերը.

«Ամենայն տեղ մահը մի է,  
Մարդ մի անգամ պիտ մեռնի,  
Բայց երանի, որ յուր ազգի  
Ազատության կզոհվի»<sup>1</sup>:

1959 թ. օգոստոսի 30-ին վեշենսկայա սասնիցայում Ն. Ս. Խրուշչովն իր ճառը եզրափակեց այսպես.

«Ընկերներ, ես վերջացնում եմ իմ ելույթը: Ուզում եմ մեկ անգամ ևս ընդգծել, որ Ամերիկայի Միացյալ Նահանգներ եմ գնում լավ մտադրություններով, միջազգային լարվածությունը վերացնելու գործում պատշաճ լուծա մտցնելու շերմ ցանկությունը: Մենք չի ենք վճռականությամբ դիմելու այնպիսի միջոցառումների, որոնք կօգնեն հալեցնելու «սառը պաակերազմի» սառույցը և ժողովուրդներին հնարավորություն տալին լիաթոք շունչ քաշելու: Կուզենայի հուսալ, որ ԱՄՆ-ի կառավարությունը ևս առաջնորդվում է նույն նկատառումներով:

Ամեն մի ողջամիտ մարդու համար պարզ է, որ սովետա-ամերիկյան հարաբերությունները բարելավվելուց կշահեն ոչ միայն Սովետական Միության և ԱՄՆ-ի ժողովուրդները, այլև բոլոր մեծ ու

փոքր երկրների ժողովուրդները, քանի որ նրանք չեն ցանկանում պատերազմ, այլ ծարավի են կայուն ու տևական խաղաղության: Քանկագին ընկերներ, ձեզ նոր, մեծ հաջողություններ եմ ցանկանում ի բարօրություն մեր մեծ Հայրենիքի»:

#### ՓԱՂԱՔԱԿԱՆ ՃԱՌԻ ԼԵՋԱՐՆ ԵՎ ՈՇԱՐԱՆԱԿԱՆ ՁԵՎԵՐԸ

Ամեն մի հետադի հիմնական նպատակն է՝ լավագույն ձևով արտահայտել իր մտքերը, զգացմունքներն ու կամքը: Նկատված երևույթ է, որ շատ անգամ նեղ, ընկերական շրջապատում, ժողովներում խոսողը դժվարանում է համապատասխան ձևով արտահայտել իր միտքը, քանի որ բառերը այդ միտքը լիովին չեն սպառում, դրա հետ միասին չեն արտահայտում այն զգացմունքը, որը սերտորեն առնչվում է այդ մտքի հետ, խոսքը ստացվում է սովորական ու տաղտկալի: Համապատասխան բառերի ընտրությունը շատ է թեթևացնում մտքի ճիշտ դրսևորումը: Բայց բառերի ընտրությունը դեռ քիչ է. պետք է այդ բառերն այնպես շղկապել, որպեսզի թե միտքը ճիշտ արտահայտվի, թե դյուրին լինի արտասանել և հաճելի լինի լսել: Այս հմտությունն այնքան էլ հեշտությամբ ձեռք չի բերվում: Հետոքը նախ պետք է մեծ բառապաշար ունենա: Բուլալուն ասել է. «Բառերի ընտրությունն իսկ պետք է ներդաշնակություն ստեղծի»: Հետոքի համար դա շատ կարևոր է, քանի որ բառերի բարեհնչյուն կապակցությունից ստացվում է դարձվածքների ներդաշնակություն: Այսպիսով, հետոքի ճառի կառուցվածքի աղյուսները բառերն են: Հարուստ բառապաշարը բարձր կուլտուրայի ցուցանիշ է: Այդ տեսակետից չափազանց հետաքրքրական է համեմատել կուլտուրական դանազան աստիճանների վրա կանգնած մարդկանց բառապաշարի հարստությունը:

Ավստրալիական վայրենիին իր պարզունակ կուլտուրայի պատճառով գործ էր ածում մի քանի տասնյակ բառ: Մաքս Մյուլլերը XIX դարում ուսումնասիրելով անգլիական անգրագետ գյուղացու բառապաշարը, գտել է, որ նա գործածում է ոչ ավելի, քան 300 բառ: Ժամանակակից ինտելիգենտը կենցաղում գործածում է 1000—1500 բառ: Գեղարվեստական ստեղծագործություններում գործածել են. Մոլիերը՝ 7.000 բառ, Միլտոնը՝ 8.000, Հոմերոսը՝ ավելի քան 9.000, Պուշկինը՝ մոտ 10.000 բառ: Ամենահարուստ բառապաշարն ունեցել է Շեքսպիրը, գործածելով 15.000, իսկ ոմանց հաշվով՝ մոտավորապես 24.000 բառ<sup>1</sup>:

<sup>1</sup> И. Я. Блинков, «Выразительное чтение и культура устной речи», Москва, 1946 г., стр. 16.

<sup>1</sup> «Հայ ժողովրդի խոսքը ռազմաճակատում գտնվող իր զավակներին», Հայ-պետհրատ, 1943 թ., էջ 33.

Հայ գրողների բառապաշարի մանրամասն ուսումնասիրությունը մենք շունենք, բայց թե՛ հայ կլասիկ և թե՛ ժամանակակից գրողների՝ Բաֆֆու, Շիրվանդադեի, Նար-Ռոսի, Քումանյանի, Իսահակյանի, Դ. Դեմիրճյանի, Վ. Տերչյանի, Ե. Չարենցի, Ա. Բակունցի, Ստ. Զորյանի, Ն. Չարյանի, Հ. Շիրազի, Պ. Սևակի և ուրիշների բառապաշարը բավական հարուստ է:

Հայոց լեզուն իր բառապաշարով հարուստ լեզուներից մեկն է՝ «Ոչ մի լեզվի բառապաշար հնարավոր չէ հաշվել մաթեմատիկական ճշտությամբ, որովհետև, նախ, աշխարհում ոչ մի բառարան չի կարող լրիվ ընդգրկել իր ժողովրդի գործածած բոլոր բառերը և, երկրորդ, լեզվի բառային կազմը գտնվում է անընդհատ փոփոխության մեջ» — ճիշտ կերպով նշում է Մ. Ասատրյանը<sup>1</sup>: Բայց մտաւորապես պարզված է, որ Դաղբաշյանի 1911 թ. լույս տեսած բառարանն ընդգրկում է մոտ 70 հազար բառ, իսկ «Արդի հայերենի բացատրական բառարանը»՝ մոտ 90—100 հազար բառ, չհաշված գիտություն ու տեխնիկայի առանձին բնագավառների բառերը:

Լավ հոստորը լեզվի այս հարուստ բառապաշարի շտեմարանից պետք է շատ բառեր վերցնի և յուրացնի: Բուն-Բրուելին իր հիշողություններում նշում է, որ Վ. Ի. Լենինը «միշտ ուսումնասիրում էր Դալի ուս լեզվի բառարանը»:

Հոնտորն, ունենալով բառապաշարի մեծ ֆոնդ, հեշտությամբ կկարողանա «այնտեղից ընտրել ամենաճիշտ, ամենապարզ և ամենաուժեղ բառերը», ինչպես ասել է Մ. Գորկին:

Մեծ բառապաշար ունեցողը պետք է աշխատի բառերն ունախադասությունները քերականորեն ու շարահյուսորեն ճիշտ կապակցել, քանի որ ճիշտ արտահայտությունից է կախված մտքի ճշտությունը: Ունկնդիրը կարող է ներողամիտ լինել, երբ հոնտորը միտքը լրիվ չի կարողանում արտահայտել, բայց նա չի ներում, երբ խոսքի մեջ թույլ է տրվում քերականական կամ շարահյուսական սխալ կամ անճշտություն:

Խոսքի ճիշտ կառուցման և մտքի ճիշտ արտահայտման համար պետք է հաշվի առնել հոմանիշների, բազմիմաստ բառերի և օտարազգի բառերի գործածությունը: Օտարազգի բառերի գործածության առթիվ Լենինը ասել է. «...Օտար բառերը գործ ենք ածում առանց անհրաժեշտության: Այդ բառերը սխալ ենք գործածում... Արդյոք ժամանակը չէ՞, որ մենք պատերազմ հայտարարենք օտար բառերի առանց անհրաժեշտության գործածությանը...»<sup>2</sup>: Այն բոլոր դեպքերում, երբ օտարազգի բառի փոխարեն մենք ունենք նույն իմաստն

արտահայտող հայերեն բառ, ապա պետք է գործածել այդ հայերեն բառը: Մանրամարտ, բարդ նախադասություններից պետք է խուսափել և գերադասել սլարգ նախադասությունները: Բոլոր դեպքերում հոնտորը պետք է լինի գրագետ, լավ իմանա իր մայրենի լեզուն:

«Մայրենի լեզվի ուսումնասիրությունը, — գրում է Մ. Ի. Կալինինը, — մեծ գործ է: Մարդկային մտքի ամենաբարձր նվաճումները, ամենախոր գիտելիքները և ամենակրակոտ զգացմունքները անհայտ կմնան մարդկանց համար, եթե նրանք պարզ և ճիշտ չձևավորվեն բառերի մեջ: Լեզուն մտքի արտահայտման գործիք է: Եվ միտքը միայն այն ժամանակ միտք կդառնա, երբ ասված է խոսքով, երբ նա արտահայտվել է լեզվի միջոցով, երբ նա, ինչպես կասեին փիլիսոփաները, միջնորդավորվել է, առարկայացել ուրիշների համար: Ահա թե ինչու եմ ասում, որ մայրենի լեզուն իմանալը ամենահիմնականն է, որ պահանջվում է ձեր հետագա աշխատանքի համար»<sup>3</sup>:

Զնայած բառապաշարի կուլտուրայի արժեքավորությունը, այն, բայց և այնպես, չի կարող ապահովել խոսքի կուլտուրան, եթե չի մշակված խոսքից օգտվելու ձևն ու մեթոդը: Բառերը հասկանալը դեռ չի նշանակում հասկանալ միտքը: Խոսքը կդառնա ճառ, մտքի, զգացմունքի, կամքի արտահայտիչ միայն այն դեպքում, երբ յուրացված են բառերի օգտագործման մեթոդները: Կուլտուրական խոսքը բարդ երևույթ է, նա պահանջում է հմտություն, որը ձեռք է բերվում հատուկ ու անհոնջ աշխատանքով: Յուրաքանչյուր հոնտոր պետք է գտնի ու մշակի իր խոսքի կառուցման և օգտագործման ձևերը, ոչոնք մեծ մասամբ կախում ունեն անհատական առանձնահատկություններից:

Շատերն այն կարծիքին են, որ տիրապետելով լեզվին, կարելի է լավ հոնտոր դառնալ: XIX դարի ֆրանսիացի գրող Քեոֆիլ Գոտինեն ասել է. «Ես իմ խոսքերը օդ եմ նետում այնպես, ինչպես կատուներին, և համոզված եմ, որ նրանք կրնան են թափել վրա... Դա շատ հասարակ բան է, Լիթ իմանալ մայրենի լեզվի օրհնքները»: Այս միտքը համոզիչ չէ, եթե նկատի առնենք նույն XIX դարի ֆրանսիացի գրող, խոսքի մեծ վարպետ Ֆլոբերի տեսակետը, թե մեծ գրողները տանջանքով, լարված աշխատանքով են ստեղծում խոսքը, հույս չդնելով լեզվային կուլտուրայի վրա, որն առանց այն էլ ենթադրվում է:

Խոսքի հնագույն վարպետներից խոշորագույնը՝ Ցիցերոնը ասել է, որ անհրաժեշտ է մշակել ոչ միայն բառապաշարի, այլև խոսքի կառուցման կուլտուրան:

<sup>1</sup> Մ. Ասատրյան, «Խոսքի կուլտուրայի մասին», Երևան, 1958 թ., էջ 31:

<sup>2</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 375—376:

<sup>3</sup> М. И. Калинин, «О коммунистическом воспитании», «Молодая гвардия», 1956 г., стр. 225.

խոսքի կուլտուրայի հարստացման ջատագով Մաքսիմ Գորկին սովետական գրողներին միշտ կոչ էր անում տիրապետել խոսքի վարպետության բոլոր ձևերին ու արտահայտություններին:

Շատ անգամ թարմ, առողջ միտքը մենք այնպես անշնորհք կերպով ենք արտահայտում, որ նա ծաղկի նման թառամում է, դալկանում: Հաճախ էլ մի աղբատիկ, լղբ միտք այնպես ենք զարդարում, որ նա կորչում է իր սեփական խոսքերի մեջ:

Ձգտելով, որ խոսքը մաքսիմալ շահով արտահայտիչ դառնա, մենք նրա մեջ դնում ենք մեր անհատական առանձնահատկությունները: Արտահայտվելու ժամանակ մենք որչափ անկեղծ ենք ու անմիջական, այնչափ էլ մեր խոսքում արտահայտվում է մեր հոգեկան հատկությունները, մեր ոճը:

Վոյտեքը ասել է խոսքի ոճի հետևյալ բնութագիրը. «Համարյա այն բոլորը, ինչ որ մարդիկ առում են, ավելի քիչ տպավորություն է գործում, քան այն ձևը, որով դա ասվում է, քանի որ բոլոր լսողներն էլ մոտավորապես նույն մտքերն ունեն, ինչ արտահայտում է խոսողը, բայց միայն արտահայտվելու ձևն է կազմում տարբերությունը»:

Ոճը մեր մտքերն ու զգացմունքներն արտահայտելու յուրահատուկ ձև է, որի մեջ արտահայտություն է գտնում ոչ միայն մեր մտավոր զարգացումը, դաստիարակությունը, կրթությունը, այլև մեր բնավորության հատկությունները:

Հոետորի ճառը նման է քանդակագործի ձեռքում գտնվող կավին, որից նա շնաշխարհիկ արձաններ կարող է կերտել: Ծառի գեղեցկության դադտնիքը նրա ոճի մեջ է:

Յուրաքանչյուր գրող և հոետոր ձգտում է ունենալ իր սեփական ոճը, և լեզվական արտահայտություններից ու դարձվածքներից, երևույթների, դրությունների, կերպարների, անգամ բնության նկարագրության ձևերից մենք հեշտությամբ կարողանում ենք անսխալ կերպով ճանաչել հեղինակներին: Արովյանին տարբերում ենք Դեմիրճյանից, Հովհ. Քումանյանին՝ Իսահակյանից, Վ. Տերյանին՝ Գ. Սարյանից, Գ. Սունդուկյանին՝ Հ. Պարոնյանից և այլն:

Նույնը վերաբերում է նաև հոետորական ճառին: Դեմոսթենեսի ոճը տարբերվում է Ցիցերոնի ոճից, Դանտոնի ոճը՝ Ռոբեսպիերի ոճից, Լենինի ոճը՝ Պլեխանովի ոճից և այլն:

Հոետորական արվեստը պատկերավոր և արտահայտիչ խոսքին մեծ տեղ է հատկացնում, քանի որ զանազան առաքանական ձևերի շնորհիվ հոետորի խոսքը դառնում է ոչ միայն պատկերավոր, արտահայտիչ, այլև համոզիչ, հմայիչ և հուզիչ:

Հոետորական արվեստի մեջ հայտնի են շատ ձևեր, որոնցից կանգ կառնենք հետևյալների վրա:

1. Համեմատություն: Հոետորական արվեստի ուժեղ ձևերից մեկն է: Նրա էությունն այն է, որ հոետորը համեմատությունների և օրինակների միջոցով իր ճառը դարձնում է պարզ, ցայտուն, ակնառու և դյուրըմբռնելի: Ծառը արտահայտիչ դարձնելու համար հոետորը համեմատության համար պետք է վերցնի այնպիսի առարկաներ, հատկություններ և մտքեր, որոնք ունեն որոշ նմանություն և այդ նմանությունը հայտնի է բոլորին: Ոչ մի միտք չունի և նպատակին չի ծառայի անծանոթ առարկաները կամ երևույթները համեմատել անծանոթ առարկաների կամ երևույթների հետ: Երբ երկու ծանոթ հասկացողություններ են համեմատվում, ապա կապը նրանց միջև պարզ ու հասկանալի է դառնում: Դրանից շահում է հոետորը, որի խոսքն ավելի արտահայտիչ է լինում:

Համեմատության օրինակներ.

«Հայտնի է հին լեգենդը սրոյական ձիու մասին: Երբ թշնամիները շկարողացան պաշարումով և հրոսումով վերցնել Տրոյա քաղաքը, ապա նրանք սրոյացիներին «նվիրեցին» փայտե ձի, իսկ նրա ներսում թաքցրին իրենց մարդկանց, որպեսզի զիջերը նրանք բացեն քաղաքի դարպասները»:

Ժամանակակից ռեկլոնիզմը՝ դա իր անսակի տրոյական ձի է... Ռեկլոնիստները ջանում են ներսից քայքայել ռեկլոցիտն պարտիաները, պայթեցնել միասնականությունը, ցրվածություն ու խառնաշփոթություն մտցնել մարքս-լենինյան դադափարախոսության մեջ»<sup>1</sup>:

(Ն. Ս. Խոնչով)

«Հայ ժողովուրդը կանգուն է, ինչպես իր հայրենի լեռները, հողարտ ու բարձր, ինչպես այդ լեռների արժիվները»:

«Ինչպես մանգաղով կտրած հացահատիկի հասկ, ինչպես իր սրտի տակ մահաբեր երկաթ զգացող գառնուկ, նա զլուխը կախեց և վայր ընկավ խոտերի վրա»:

(Գոգոլ, «Տարաս Բուլբա»)

2. Փոխաբերություն (մետաֆորա): Հիշեցնում է համեմատությունը, քանի որ մեկ առարկայի հատկությունը փոխաբերական

<sup>1</sup> Н. С. Хрущев, «К победе в мирном соревновании с капитализмом», Москва, 1959 г., стр. 342.

իմաստով վերագրվում է մեկ ուրիշ առարկայի և ճառը, հակիրճ համեմատություններ, դարձնում է կենդանի և պատկերավոր: Նման համեմատության ժամանակ երբեմն անշունչ առարկայի հատկությունը վերագրվում է շնչավոր առարկայի: Փոխաբերությունները պետք է աչքի ընկնեն իրենց նորություններ, միատեսակ ու տաղտկալի չլինեն: Փոխաբերությունների ժամանակ երբեմն օգտագործվում են առարկաների կամ երևույթների ոչ թե որոշ նմանությունները, այլ տարբերությունները:

Մետաֆորայի օրինակներ. քոհար աստղեր, թունոտ լեզու, այրող կշտամբանք, պայծառ միտք, սիրուց հարբած, ծերության սառույց, բոցավառ սիրտ, մտքի կուրություն, դատարկ գլուխ, սարսափից քարանալ, գլուղը քնած է, բշխարհող առվակ, մանուշակը գլուխը խոնարհել է, կրակի հրեղեն լեզուներ, արցունքի գետեր:

Արիստոտելը, Հոմերոսից օրինակ բերելով, Աքիլլեսի մասին ասում է.

«Նա առաջ նետվեց ինչպես առյուծ». սա համեմատություն է, բայց «Առյուծը առաջ նետվեց»—մետաֆորա է, քանի որ Աքիլլեսը, և՛ առյուծը ունեն քաջություն, և բանաստեղծը Աքիլլեսին անվանել է առյուծ:

3. Մակդիր (էպիտետ): Միտքն ավելի խոր և ավելի ակնառու դարձնելու համար որոշ առարկայի, երևույթի կամ հասկացողության վառ, պատկերավոր սահմանում: Մակդիրները լինում են հաստատուն և զարգարող-գեղարվեստական: Հաստատուն մակդիրները ճառը շեն զարդարում, որովհետև նորություն չեն ներկայացնում, շարլոն են, տաղտկալի: Օրինակ՝ կապույտ ծով, կանաչ դաշտ, անուշ քուն, քաղցր երազներ, անտաշ մարդ և այլն:

Զարդարող-գեղարվեստական մակդիրը իր նշանակությունն ու հատկությունը փոխանցելով բնորոշվող բառին, նրան պատկերավորություն է տալիս: Օրինակ՝ ծով սիրտ, երկաթե կամք, սև ուսակցիա, դալուկ այտեր, մետաքսյա գանգուրներ, զնացքը հեալով սլանում է և այլն:

Համեմատությունը, փոխաբերությունը և մակդիրը, հանդիսանալով փոխակերպությունների տեսակներ, շատ անգամ շփոթ ձևով են գործածվում: Օրինակ՝ առարկայի բնական հատկությունը սահմանող բառերը. քարե տուն, պողպատե դանակ, կապույտ երկինք և այլն սխալմամբ համարում են մակդիրներ: Փոխաբերությունները համեմատությունների հետ են շփոթում, մոռացության տալով, որ փոխաբերությունը մեկ առարկայի հատկությունը փոխաբերական իմաստով վերագրում է մեկ ուրիշ առարկայի:

Մակդիրը առարկայի էական հատկությունն ընդգծող պատկեր

րավոր սահմանումն է, իսկ փոխաբերությունը առարկայի հատկությունը փոխաբերական իմաստով ուրիշ առարկայի վերագրելն է, ուստի շատ դեպքերում բերվող օրինակը կարող է լինել և՛ մակդիր, և՛ փոխաբերություն: Օրինակ՝ ծանր տրամադրություն, պարզ միտք, հիմար դրություն, բոցավառ սիրտ և այլն:

4. Փոխանունություն (մետոնիմիա): Փոխակերպության մի տեսակն է, երբ առարկայի, երևույթի կամ հասկացողության անունը փոխարինվում է այլ անունով և օգտագործվում փոխաբերական նշանակությամբ. օրինակ՝ «անտառը հառաչում է», փոխանակ՝ «անտառում գտնվող բոլոր ծառերը, թռչուններն ու կենդանիները հառաչում են», մյուսը՝ երբ հեղինակը փոխարինում է երկին. օրինակ՝ «Զարեհնց եմ կարգում», փոխանակ՝ «Զարեհնցի ստեղծագործություններն եմ կարգում», երրորդը՝ պարունակողը պարունակելիքին. «երկու բաժակ խմեցի», փոխանակ՝ «երկու բաժակ թեյ խմեցի», «էյ, հրաշալի սփռոց, հյուրասիրիր մուծիկներին» (Նեկրոսով) և այլն:

Մետոնիմիան հարստացնում է խոսքը, անհատականացնում երևույթի հատկությունը:

5. Սինեկդոխա: Մետոնիմիայի տեսակներից մեկն է, երբ երկույթի կամ առարկայի մասը փոխարինում է ամբողջին. օրինակ՝ «գլուխս մեռնի, թե սուտ եմ ասում», փոխանակ՝ «ես մեռնեմ...», «կարգադրությունը Երևանից է», այստեղ «Երևանը» փոխարինում է որևէ կենտրոնական գերատեսչության: Եզակի թիվը դործ է ածվում հոգնակիի փոխարեն. օրինակ՝ «ժողովում շատ մարդ կար», փոխանակ՝ մարդիկ, կամ ընդհակառակն, հոգնակիի փոխարեն՝ եզակի. օրինակ՝ «կոլիտոզում հարվածային՝ ինչքան ուղես». հարվածայինը գործածված է հարվածայինների փոխարեն:

6. Այլաբանություն (ալեգորիա): Փոխակերպության մի այլ տեսակն է. կյանքի մի որևէ կոնկրետ, շատերին հայտնի պատկերի միջոցով վերացական հասկացության կամ երևույթի այլաբանական դրսևորում. օրինակ՝ սպիտակ աղալնին խաղաղության այլաբանությունն է, խարիսխը՝ հույսի, փշրված շրթաները՝ ազատության, սիրտը՝ սիրու: Այլաբանական իմաստ ունեն առարկաները, որտեղ մարդկային շատ հատկություններ այլաբանորեն պատկերվում են թռչունների, սողունների, զազանների և անգամ ծաղիկների կերպարով. օրինակ՝ աղվեսը խորամանկության մարմնացումն է, զայլը՝ ազահության, արջը՝ անճոռնիության, անշնորհքության, օձը՝ խարդախության, հավը՝ անմտության, թուփակը՝ դատարկախոսության, շատախոսության, շուշանը՝ անմեղության, մաքրության, արծիվը՝ փառքի, առյուծը՝ ուժի և այլն:

7. Հեզնանք (իրոնիա): Գեղարվեստական փոխակերպություններից մեկն է հոնտորը բառն օգտագործում է իր հակառակ նշանակությամբ և սքողված ձևով ծաղրում երևույթը կամ մարդուն. օրինակ՝ հիմարին անվանում է խելոք, իմաստուն, թույլ, անուժ մարդուն՝ Հերկուլես. ժլատին՝ առատաձեռն, աշառու, անարդարադատ մարդուն՝ Սոզոմոն իմաստուն, շարասիրտ, վրեժխնդիր մարդուն՝ մեծահոգի և այլն:

Հեզնանքը լսարանում ծիծաղ է առաջացնում, աշխուժացնում և կենտրոնացնում է ունկնդիրներին: Նայած հեզնանքի բնույթին, նա կարող է լինել՝ բարեսիրտ, հումորիստական, երբ ծաղրվում է լավ մարդկանց առանձին ծիծաղելի գծերը: Հումորը առաջացնում է նաև թախծալի ծիծաղ: Հումորը հեզնանքի կամ, ըստ Գոգոլի, «արտասովխառն ծիծաղ»-ի է վերածվում, երբ ծաղրվում են այնպիսի մարդիկ, որոնք չեն գիտակցում կյանքի բացասական կողմերը: Բայց երբ հեզնանքը շար, կծու ձևով է արտահայտվում, առաջացնելով թունոտ ծաղր, դա սարկազմ է, մարտական մի գենը, որն ուղղված է հակառակորդի դեմ, նրան ծաղրով տապալելու համար:

8. Չափազանցություն (հիպերբոլա): Ոճարանական մի ձև է, որով այս կամ այն երևույթը կամ նրա առանձին հատկությունները չափազանցվում են, նպատակ ունենալով շեշտելու նրա հիմնական գծերը: Հիպերբոլան նույնպես գեղարվեստական փոխակերպություններից մեկն է և հոնտորների կողմից լայն կերպով օգտագործվում է տպավորությունն ուժեղացնելու համար: Հիպերբոլան գլխավորապես գործածվում է ժողովրդական առասպելների, դիցարանության, ինչպես նաև գեղարվեստական գրականության և հոնտորական արվեստի մեջ:

Հիպերբոլայի օրինակներ. «Ծն քեզ հազար անգամ ասել եմ», «արյունը սառեց երակներում», «արցունքները հեղելի պես էին հոսում», «ալիքները լեռնանում էին»:

«Անցավ ֆառույն զովջի կաշին,  
Անցավ ֆառսուն ֆաբեր ցած,  
Միջից կտրեց ժանտ հրեշխն,  
Օխտը գազ էլ դենը գճաց»:

(Հովհ. Թումանյան)

Թացի վերը նշված հիմնական փոխակերպություններից (տրոպներից), կան նաև ոճարանական այլ ձևեր, որոնք ճարտասանության մեջ արտահայտում են մտքեր և տրամադրություններ: Եթե փոխակերպությունները առնչվում են բառերի հետ, ապա ճարտասանական այդ ձևերն էլ առնչվում են մտքերի հետ: Խոսքի համար մտքերի այդ ձևերը նույնն են, ինչ որ դիմախաղը դեմքի համար. դրանք արտահայտությանը կենդանություն, փայլ, եղանդ և գեղեցկություն են տալիս:

Ճարտասանական ձևերը շատ են, բայց ուշադրության արժանի են հետևյալները.

9. Կրկնություն (անաֆորա): Հոնտորական խոսքի ամենաուժեղ ձևերից մեկն է: Նրա էությունն այն է, որ հոնտորը, ցանկանալով տնկնդիրների ուշադրությունը բեռնել մի որևէ մտքի վրա, միևնույն բառը կամ ամբողջ նախադասությունը կրկնում է մի քանի անգամ, ըստ որում կրկնությունը տեղի է ունենում ոչ թե մեկը մյուսի հետևից, այլ որոշ ընդմիջումներով:

Ըստ Արիստոտելի՝ կրկնությունների ժամանակ պետք է փոխել հնչման արտահայտչականությունը և բառերը շարտասանել նույն ձայնով և նույն արտահայտությամբ:

Կրկնությունն ուժեղացնում է խոսքի ներգործությունը և հաղորդող միտքը մեխվում է հիշողության մեջ:

Կրկնության օրինակներ.

«Ահա մեր ծրագիրը:

Մենք ցանկանում ենք արդարություն և պայքարում ենք անարդարության դեմ:

Մենք ցանկանում ենք ազատ աշխատանք և պայքարում ենք վարձու ստրկության դեմ:

Մենք ցանկանում ենք ընդհանուր բարօրություն և պայքարում ենք աղքատության դեմ:

Մենք ցանկանում ենք ընդհանուր կրթություն և պայքարում ենք սոցիալության դեմ:

Մենք ցանկանում ենք ժողովրդական պետություն և պայքարում ենք դասակարգային պետության դեմ:

(Վիլկենխտ, «Մեր նպատակները») <sup>1</sup>

<sup>1</sup> М. Н. Попов, «Политическое красноречие», С.-Петербург, 1906 г., стр. 45.

«Քայց մենք ստիպված պետք է լինենք ընդունելու չլսված ժանր հաշտությունը, մենք ստիպված պետք է լինենք ընդունելու սոսկալի պայմաններ, մենք ստիպված պետք է լինենք ընդունելու նահանջը, որպեսզի քանի դեռ ժամանակ կա՝ շահենք, որպեսզի հասնեն մեր դաշնակիցները, իսկ դաշնակիցներ մենք ունենք»<sup>1</sup>։  
(Վ. Ի. Լենին)

«Եվ թող ձեր կուրծքն ամուր լինի, ինչպես հայրենի լեռների ու կիրճերի ժայռերը։ Թող թշնամու դեմ ձեր գրոհը իր ճանապարհին ջնջի ու ոչնչացնի ամեն ինչ... Թող ձեր սրբնթաց գրոհը հասնի թշնամիների հետևից և ջնջի, հողմացրիվ անի նրանց բոլորին մինչև վերջինը»։

### (2. Օրբելի)

10. Ծարտասանական հարց։ Ոճաբանական մի ձև է և գործածվում է, երբ հոնտորի միաբեր գրսևորվում է հարցի ձևով։ Որքան սրությամբ է տրվում հարցը, այնքան ցայտուն է դառնում հոնտորի միտքը, լարվում է ունկնդրի ուշադրությունը և ունկնդիրը ակտիվանալով, ջանում է գտնել տրված հարցի պատասխանը, որը սակայն թաքնված է հենց հարցի մեջ։ Ծարտասանական հարցը Հին Հունաստանի և Հռոմի ականավոր հոնտորների սիրված ձևերից մեկն էր։ Փիլիպոս Մակեդոնացու դեմ ուղղված իր ճառերում Դեմոսթենեսը շատ հաճախ էր դիմում այդ ձևին։

«Քաղաքացիներ Աթենքի, մի՞թե դուք սպասում եք մի որևէ այլ ժամանակի, հանգամանքների այլ զուգակցություն, որն ավելի բարենպաստ լինի, քան արդին է. էլ ե՞րբ, եթե ոչ հիմա, դուք կսկսեք անել այն, ինչ անհրաժեշտ է։ Մի՞թե այդ մարդը չի գրավել մեր բոլոր ամրացված վայրերը, իսկ եթե նա իշխանություն ստանա նաև այդ երկրի վրա, մի՞թե դա մեզ համար չի լինի մեծագույն անարգանք։ Մի՞թե հիմա չեն պատերազմում այն ժողովուրդները, որոնց մենք խոստացել էինք շուտափուլթ ազատություն, եթե նրանք հարկադրված լինեն սկսելու պատերազմը։ Մի՞թե նա մեր թշնամին չէ...»<sup>2</sup>։

Մեկը մյուսին հաջորդող հարցերով հայրենասեր Դեմոսթենեսը օթենացիներին թիլադրում է իր կամքը և նրանց անելիքը։

Որպես ճառի հանկարծակի կամ անսպասելի ներածության դասական նմուշ, նշվեց Ցիցերոնի առաջին ճառը Հռոմի սենատում՝ Կատիլյանյի դեմ։ Այդ ճառը միաժամանակ հանդիսանում է Ծարտասանական հարցի դասական օրինակ։

Ծարտասանական հարցի բազմաթիվ օրինակների ենք հանդիպում Վ. Ի. Լենինի ճառերում։

«Եվ, ամենից առաջ, հարց է ծագում՝ ինչո՞վ է պահպանվում պրոլետարիատի ուսուցիչին պարտիայի կարգապահությունը, ինչո՞վ է ստուգվում այն, ինչո՞վ ամրապնդվում»<sup>3</sup>։

11. Անտիթեզ (հակադրություն)։ Ծարտասանության, ինչպես և բանաստեղծական խոսքի մեջ հաճախ դործածվող և ուժեղ ձևերից մեկն է։ Դեպքերի, տիպերի, հասկացողությունների հակադրությամբ հոնտորի հիմնական միտքն ավելի որոշակի ու ցայտուն է դառնում, և հակադիր հասկացողությունները լրացնում են միմյանց։

Անտիթեզի օգտագործման ժամանակ հոնտորի ուշադրությունից չպետք է վրիպի այն, որ պետք է հակադրել իմաստը, գաղափարը, հասկացողությունը և ոչ թե առանձին բառերն ու դարձվածքները, հակառակ դեպքում կստացվի երկիմաստ բառախաղ։ Անտիթեզը չպետք է հանդիսանա հոնտորական խոսքի հասարակ զարդարանք, այլ պետք է նպաստի ճիշտ և խոր կերպով լուսաբանելու արծարծվող միտքը։

Բանաստեղծական անտիթեզի օրինակ.

Ես մի լուսնահար, ես մի խենթ լուսնոտ,  
Դու ցուլ, դու ցնոբ հավիայան խաբող։

Իմ ֆույր, իմ դահին, իմ սուրբ սիրեկան,  
Ես քեզ սիրում եմ, դու դեռ չես մեռել...

(Վ. Տերյան)

Ծարտասանական անտիթեզի օրինակ.

«Երբ ամեն ինչ հանգիստ է, դու աղմկում ես, երբ բոլորը հուզվում են, դու հանգիստ ես, անտարբեր գործում՝ տաքանում ես, հուզող հարցերում՝ սառն ես. երբ պետք է լռել, դու բղավում ես, երբ պետք է խոսել՝ լռում ես...»։

(Ցիցերոն)

«Ես՝ արքա, ես՝ ստրուկ, ես՝ ճիճու, ես՝ աստված»։

(Դեմոսթենես)

12. Դիալոգ (երկախոսություն)։ Հունարեն բառ է և նշանակում է խոսակցություն, զրույց երկու մարդու միջև։ Հոնտորական արվեստի մեջ, որպես ձև՝ օգտագործվում է լսարանը աշխուժացնելու և ունկնդիրների ուշադրությունը լարելու համար, ուստի հոնտորը հարց է դնում և ինքն էլ պատասխանում է։

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, IV հր., հ. 27, էջ 191, Հայպետհրատ

<sup>2</sup> О. Мищенко, «Речи Демосфена», Москва, 1903 г., стр. 25.

<sup>3</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 21, էջ 266, Հայպետհրատ, 1950 թ.

Ն. Ս. Խրուշչովը հաճախ է օգտագործում ոճական այդ ձևը: Հունգարիայում գտնված ժամանակ, դիմելով Չեկոսլովակիայի մետաղագործական կոմբինատի բանվորներին, մի շարք հարցեր է դնում ու պատասխանում.

«Ի՞նչ է իրենից ներկայացնում պրոլետարիատի դիկտատուրան: Դա բանվոր դասակարգի ղեկավար դերն է կապիտալի իշխանության տապալման, աշխատավորների պետական իշխանության նվաճման ու ամրացման, կոմունիստական հասարակության կառուցման համար մղվող պայքարում»:

«...Իսկ ո՞վ է ընտրում պառլամենտ, ումի՞ց է բաղկացած ժողովրդական Հունգարիայի կառավարությունը: Դրանք՝ բանվոր-մետաղագործներն են, մեքենաշինարարները, կաշեգործները, ատաղձագործները, հացթուփները, դրանք՝ աշխատավոր գյուղացիներն են, դրանք՝ գիտության, գրականության, արվեստի գործիչներն են... Նրանք բոլորը աշխատանքի մարդիկ են»<sup>1</sup>:

13. Գրադացիա (աստիճանական ուժեղացում, սաստկացում): Հոնոարական խոսքի ձևերից մեկն է, երբ ավելի թույլ արտահայտությունները հետզհետե փոխարինվում են ավելի ուժեղ արտահայտություններով, պատկերներով կամ հասկացողություններով, առաջացնելով զգացմունքի վերընթաց կամ վարընթաց: Օրինակ՝

«Ծն տեսել եմ ածխահատին աշխատելիս, և ոչ ոք նրանից չավ չի աշխատում: Ծն տեսել եմ նրան իբրև քաղաքական գործիչ, և նրանից ավելի զգաստ ոչ ոք չկա: Ծն լսել եմ, թե ինչպես է նա երգել. ոչ ոք չի երգում ավելի դուրեկան, քան նա: Ծն տեսել եմ նրան ֆուտբոլ խաղալիս, և այն ժամանակ նա սարսափելի է: Ծն տեսել եմ նրան գործադուլ անելիս...»<sup>2</sup>:

(Լյուդ Զորջ)

«Տաղով եկավ,  
Ախով գնաց Սայաթ Նովան.  
Երգով եկավ,  
Վերբով գնաց Սայաթ Նովան.  
Սիրով եկավ,  
Մրով գնաց Սայաթ Նովան,  
Սիրով մնաց Սայաթ Նովան»:  
(Հովն. Թումանյան)

<sup>1</sup> Н. С. Хрущев, «К победе в мирном соревновании с капитализмом». Москва, 1959 г., стр. 238, 241.

<sup>2</sup> Հ. Ասլանյան, «Հոնոարական արվեստ», Երևան, 1942 թ., էջ 28:

14. Չուգանեակաճուրջուն (պարալելիզմ): Ոճական ձևերից մեկն է: Երկու երևույթների շուրջահոսքար համադրման միջոցով հոնոտորն արտահայտիչ կերպով ընդգծում է իր միտքը, մասնանշելով երևույթների նմանությունը կամ տարբերությունը: Հոնոտորական խոսքի մեջ սովորաբար համադրվում են բնության երևույթները և մարդկանց կյանքի զանազան դեպքերը: Օրինակ՝ Լեռ-մոնտովը «Ամպեր երկնաչի՜ն, ճամբարդներ հավերժ» բանաստեղծության մեջ շուրջահոնոտորություն է անցկացնում ամպերի և ճամբարդների միջև, կամ՝

Երգը...

Կարծես տնից ելած մի սյանդուխտ էր բազմաթափառ  
Եվ ուզում էր կրկին փարվել հայրենիքին:

(Պ. Սևակ, «Անյութի ղանդակատուն», էջ 61)

«Տանջալի հիվանդություն է քոսը: Իսկ երբ մարդիկ բռնվում են ուղեցրիտն ֆրազի քոսով, ապա այդ հիվանդության սոսկ դիտումն արդեն անտանելի տառապանքներ է պատճառում»:

(Վ. Ի. Լենին, Երկեր, 4-րդ հրատ., Հայպետհրատ, 1951 թ., հ. 27, էջ 22):

15. Ինվերսիա (շրջադասություն): Հոնոտորական խոսքի մի ձև է, որի էությունն այն է, որ նախադասության մեջ բառերը դասավորվում են այլ ձևով և սովորական քերականական կարգի որոշ խախտումով, այն է՝ ենթական զրվում է ստորոգյալից կամ մակդիրը՝ որոշվող բառից հետո և այլն:

Հոնոտորը, խոսքի մեջ վերադասավորելով բառերը, դրանով իսկ ընդգծում է իր տեղում գտնվող բառերը, որով և միտքը դառնում է ցայտուն, իսկ խոսքը՝ օրիգինալ և արտահայտիչ:

Օրինակ՝

«Ու վառվում է սիրտը նրանց, որպես հրդեհ արեգնաձիգ...»

(Ե. Չարենց, «Ամբոխները խելագարված»)

«Վիշապ հողմիդ հետ ազատությունը թող զահալալե աշխարհը  
հանուր,

Եվ ոսկեվառե վսեմ արևը ազատությանը աշխարհասփյուռ»

(Ավ. Բաբանյան, «Արու-կալա-Մահարի»)

16. Հոնոտորական բացականություն և կոչ: Հոնոտորը զանազան ձայնարկությունների միջոցով իր խոսքը դարձնում է ավելի տպավորիչ, իսկ կոչի միջոցով, ուղղակի դիմելով ունկնդիրներին, կենտրոնացնում է նրանց ուշադրությունը: Օրինակ.

«...Օ՛, ժամանակներ, օ՛, բարբեր»

(Յիգերոն)

«Ընկերներ, վերհիշեցեք, թե ինչ ուղիներով է ընթացել՝ ուսական ուսուցիչիան»:

(Վ. Ի. Լենին)

«Ընկերներ, Դուք գիտեք, որ մեր պարտիան և կառավարությունը ամեն բան անում են, որպեսզի ապահովեն խաղաղությունը ամբողջ աշխարհում»:

(Ն. Ս. Խուլաչով)



Հոստոթական խոսքի հարստացման համար բոլոր ժամանակների լավագույն հոստոթներն օգտագործել են ժողովրդական առածներն ու ասացվածքները, աֆորիզմները, առակները, առասպելները, հեքիաթները, սրամտությունները, իմաստալից անեկզոտները և թեկավոր խոսքերը:

Առածներն ու ասացվածքները ժողովրդական բանավոր ստեղծագործություններ են, որոնցից շատերը գալիս են դարերի խորքից և իրենց սեղմ ու պատկերավոր ձևի մեջ արտահայտում են ժողովրդի իմաստությունը: Ըստ Հովհ. Քումանյանի՝ առածներն ու ասացվածքները «անգին գանձեր են», «ժողովրդի հանճարի ծնունդներ»:

Առածը երկար չի լինում, սովորաբար՝ չափածո, երբեմն ոտանավորի ձևով, դիպուկ ու վառ կերպով, հաճախ երգիծանքով, խրատի ձևով պատմում ու պատկերում է ժողովրդի իղձն ու տառապանքը, կարիքն ու բողոքը, մեծ մասամբ ուղղված է աշխարհիկ և հոգևոր կեղեքիչների, հարստահարիչների դեմ: Օրինակ՝ «Օրենքը հարստի համար, պատիժը՝ աղքատի», «Ով դատի, ով ուտի», «Մի ձեռք ծափ չի տա», «Գեղ կանգնի գերան կկտորի», «Կուշտը քաղցածին մանր կբրդի», «Ուղտը փայլանով կուլ կտա», «Աշխատողը անոթի չի մնա», «Պտղատու ծառը գլուխը կախ կգցի», «Լեզուն մեղր, սիրտը լեղի», «Դրսից քահանա, ներսից սատանա», «Մինչև հաստի բարակելը, բարակի հոգին դուրս կգա», «Հարկս հարկավորաց, պատիվս արժանավորաց», «Մի ձեռքով երկու ձմերուկ չեն բռնի», «Քարի մեջ արուն կա» և այլն:

Ասացվածքները ուղղակի խրատական իմաստ չունեն, ինչպես առածները, այլ սահմանափակվում են երևույթի պատկերավոր, այլաբանական բնորոշումով: Օրինակ՝ «Թագավորը թախտից ընկավ, կուլակը՝ բախտից», «Քանի լեզու գիտես, այնքան մարդ ես», «Աշխարհում ունես, լավ օր ունես», «Տերովին տերն է տարել, անտերին գելն է տարել», «Ամեն բանի սկիզբն է գծվար» և այլն:

Ա. Ղանալանյանի կաղամած հայկական «Առածանին» յուրաքանչյուր հոստոթի սեղանի դարը պետք է լինի:

Աֆորիզմները ժողովրդական ստեղծագործություններ չեն, ինչպես առածներն ու ասացվածքները, այլ անհատական ստեղծագործություններ, որոնք հակիրճ ու դիպուկ կերպով, մի բանի խոսքով արահայտում են խորիմասա միտք կամ ասույթ: Օրինակ՝ «Ազատությունը ամենամեծ գանձն է» (Սևրվանտես)։

«Սողալու համար ծնվածը թուլ է չի կարող» (Մ. Գորկի)։

«Մրտեղ ուժեղ լույս, այնտեղ ուժեղ սուլեր» (Գյոթե)։

«Ով մեղ մտա սրով դա, նա սրից էլ կընկնի» (Ալ. Նևսկի)։

«Լավ է կուշր աչքը, բան կուշր մտքը», «Մահ ոչ իմացյալ մահ է, մահ իմացյալ՝ անմահություն է» (Նիշի)։

«Ոչնչից միայն ոչինչ կստացվի» (Լուկրեցիոս)։

«Մարդը մարդուն՝ դալլ» (Հոբբս)։

«Սեփականությունը գողություն է» (Պրուդոն)։

«Ճանաչիր ինքդ քեղ» (Սոկրատ)։

Առակները բարոյախոսական, երգիծական կամ ծաղրական բովանդակություն ունեցող կարճ պատմվածքներ են, հաճախ չափածո, այլաբանական իմաստով և բարոյախոսական եզրակացություններ, որպես խրատ: Առակները շատ հին ծագում ունեն և դեռևս Հին Հունաստանում հայտնի էին փոյուզացի ստրուկ Եղոպոսի առակները, որոնք ուղղված էին արիստոկրատիայի դեմ: Ֆրանսիացի առակախոս Լաֆոնտենի առակները, որոնք հազեցված էին բուրժուական զաղափարախոսություններ, ուղղված էին կղերա-ֆեոդալական աշխարհայացքի դեմ: Ռուս առակագիր Ի. Ա. Կոխլովի առակները հռչակ ստացան իրենց խրատական բարոյախոսություններ: Սովետական ռուս գրականության մեջ հայտնի են Դեմյան Բեդնու ուսուցիչին առակները, ինչպես նաև բանաստեղծ Միխայլովի առակները:

Հայ առակագիրներից հայտնի են Վ. Ալգեկցին, Մ. Գոշը, Հ. Պարոնյանը, Աթ. Խնկոյանը, Արշ. Դարբինի և ուրիշներ:

Առասպելը հին ժամանակներում առաջացած ավանդություն է աստվածների, հերոսների, ոգիների, բնության երեույթների մասին: Հայտնի են հին հունական առասպելները Անթեյի, Իկարի և Պրոմեթեոսի կամ թե հայկականը՝ Տորք Անգեղի մասին, որոնց լեղենդար բովանդակությունը և բանաստեղծական հմայքը միշտ էլ գրավել են հոստոթների ուշադրությունը և նրանք իրենց ճանաչում օգտագործել են առասպելների կերպարները:

Թեկավոր խոսք: Ճառի մեջ երբեմն կարճ հեքիաթների, սրամտությունների, իմաստալից անեկզոտների տեղին ու ժամանակին

օգտագործումը աշխուժություն է մտցնում, ճառը դարձնում է մատ-  
չելի և գունեղ:

Այդ տեսակետից ուժեղ պատկերավորություն են արտահայ-  
տում և ճառը տալովորիչ դարձնում, այսպես կոչված, թևավոր  
խոսքերը, որոնք բոս Վ. Ս. Լենինի՝ «դարմանալի շեշտակիությամբ  
արտահայտում են բավական բարդ երևույթների էությունը»:

Օրինակ.

«Հաղթելու համար հարկավոր է համարձակություն, համարձա-  
կություն և կրկին համարձակություն» (Գանտոն).

«Եթե թշնամին անձնատուր չի լինում, նրան ոչնչացնում են»  
(Թեև Մ. Գորկու աֆորիզմն է, բայց միաժամանակ նաև թևավոր  
խոսք է):

«Հասնել ու անցնել».

«Արյան դիմաց արյուն, մահվան դիմաց մահ».

«Արիստեսյան գարշապար».

«Գորգյան հանգույց».

«Գամոկիլյան սուր».

«Ավզյան ախոռ».

«Եսաղաղություն խրճիթներին, պատերազմ պալատներին» և  
այլն:

Ոճարանական ձևերը ճարտասանության մեջ պետք է օգտա-  
գործել չափի դրացումով: Ճառի մեջ այդ ձևերի առատությունը  
վատ ճաշակի ցուցանիչ է. դրանք ճառը փոխանակ պարզեցնելու,  
ավելի են մթազնում: Միայն և ձևերը միմյանց պետք է լրացնեն:  
Ճառի արժանիչը կազմում են արժարժովոլ մտքերը և ոչ թե դար-  
դարանքը՝ ոճարանական ձևերը, որոնց նպատակն է համոզել, գի-  
րել և հուզել: Եթե ճարտասանական ձևերը չափավոր գործածվեն և  
չլզացվեն, այսինքն՝ ունկնդիրները նրանց մասին չմտածեն, ապա  
դա կլինի հոետորական արվեստի բարձրագույն ձևը:

## ԴԱՏԱԿԱՆ ԽՈՍՔ

Դատավարության ընթացքում դատախազի և դատապաշտպա-  
նի վրա դրվում են մեղադրանքի և պաշտպանության համապա-  
տասխան ֆունկցիաներ: Այդ ֆունկցիաները, նրանք, որպես իրա-  
վահավասար կողմեր, դատավարության ընթացքում կատարում են  
մրցակցության ձևով՝ օգնելով դատարանին հավաքելու, բննար-  
կելու ստացած բոլոր ապացույցները, որոնց հիման վրա դատարա-  
նը պետք է հանգի եզրակացության և կայացնի իր դատավճիռը:

Դատական հոետորական արվեստը հիմնականում երևում է  
դատավարության վերջում՝ կողմերի ընդդիմախոսության ժամա-  
նակ: Սակայն դատավարության ընթացքում լինում են զեպքեր,  
երբ կողմերը առաջ քաշվող կոնկրետ հարցերի մասին արտահայ-  
տում են իրենց տեսակետները, և քանի որ նման հարցեր հաճախ  
առաջանում են անսպասելի կերպով, ապա անմիջապես աչքի է  
զարնում դատախազի կամ դատապաշտպանի օժտվածությունն ու  
հմտությունը դատական հոետորական արվեստի բնագավառում:

## ԴԱՏԱԿԱՆ ՃԱՌԻ ԶԵՎՆ ՈՒ ԲՈՎԱՆԿԱՌԻՔՅՈՒՆԸ

Դատախազի և դատապաշտպանի ճառերը իրարից տարբեր-  
վում են միայն ֆունկցիոնալ տեսակետից, այսինքն՝ դատախազին  
իր ճառը կառուցում է մեղադրական թեքումով, իսկ դատապաշտ-  
պանը՝ պաշտպանական: Այս միտքը չպետք է հասկանալ այն  
իմաստով, որ բոլոր զեպքերում դատախազն անպայման ձգտում է  
մեղադրել, Սովետական դատախազը դատարանում պաշտպանում է  
այն մեղադրանքը, որի ճշտության մեջ ինքը խորապես համոզված  
է: Լինում են զեպքեր, որ դատախազը դատաբնություն ընթացքում

ձեռք բերված տվյալների հիման վրա հանգում է այն եզրակացության, որ նախաքննական տվյալներն անբավարար են մեղադրանքը հիմնավորելու համար, ուստի և նա սյատճառաբանված ձևով հրաժարվում է մեղադրելուց: Բայց քանի որ դատախազը դատավարության մեջ մեղադրող է, ապա նրա ճառը գերազանցապես մեղադրական ճառ է, իսկ դատապաշտպանի ճառը՝ պաշտպանական:

Դատական ճառի կառուցվածքը հիմնականում չի տարբերվում քաղաքական ճառի կառուցվածքից: Եթե քաղաքական ճառի հիմնական ու կարևոր մասը շարադրումն է, ապա դատական ճառի ամենակարևոր մասը ստացված ապացույցների վերլուծությունն է: Ինչպես դատախազը, նմանապես և դատապաշտպանը այստեղ պետք է դրսևորեն իրենց ամբողջ շնորհքը և ունակությունը՝ ջանալով տրամաբանական և հոգեբանական փաստարկումներով հիմնավորել գործում եղած մեղադրական և պաշտպանական ապացույցները, գնահատել յուրաքանչյուր ցուցմունք, փաստաթուղթ, իրեղեն ապացույց կամ վերսիս: Եթե գործում կան հակասություններ, ապա առաջին հերթին դատախազը պիտի խոսի դրանց մասին, վերլուծի յուրաքանչյուր կասկած հարուցող ապացույց: Եթե դատախազը չկարողանա այդ անել, ապա այդ հանցամանքը կօդատագործվի պաշտպանության կողմից՝ ապացուցելու համար, որ մեղադրանքը հիմնավորված չէ:

Դատախազի և դատապաշտպանի կարողությունը ակնբախ կերպով ի հայտ է գալիս այն հորժերում, որտեղ բացակայում են ուղղակի ապացույցները և մեղադրանքը հիմնված է ինչում անուղղակի ապացույցների վրա: Նման դեպքերում պետք է հաստատել կամ ժխտել գործողության և հետևանքի միջև եղած պատճառական կապի առկայությունը, քանի որ ապացույցների վերլուծության մեջ այդ հանգամանքը զգալի դեր է խաղում:

Դատապաշտպանի աշխատանքը շատ ավելի ծանր է, քան դատախազինը, քանի որ գործը, նախաքննության ժամանակ ստացված տվյալների հիման վրա կազմված մեղադրական եզրակացության հետ միասին, ուղարկվում է համապատասխան դատարան ե դատախազի համար շատ ավելի դյուրին է պաշտպանել այդ մեղադրանքը՝ առաջադրված պատրաստի, գուցե և վիճելի, ապացույցներով: Իսկ դատապաշտպանը ամենայն աշխրջությամբ ու հմտորեն պետք է երևան բերի գործի թերի կողմերը, կասկածելի և վիճելի ապացույցները, մեղադրանքի տարբեր վերսիսները և, հետևվողականորեն հավաքելով պաշտպանական փաստարկումները, տանրանց համոզիչ վերլուծությունն ու ամփոփումը:

Մի դատավարության ժամանակ, երբ լսվում էր կողոպուտի նպատակով բազմանդամ ընտանիքի միակ աշխատավորի սպանությունը, գործին մասնակցող դատախազը երկար ճառում էր այդպիսի հանցագործության վտանգավորության մասին, ի վերջո, եզրափակելով, որ այդ նկատառումներով տվյալ գործով չի կարելի արդարացման վճիռ կայացնել: Այնինչ պաշտպանությունը զարգացնում էր այն տեսակետը, թե կասկածից վեր է, որ այդպիսի հանցագործությունը շատ ծանր է, հասարակականորեն վտանգավոր, բայց ըստ գործի տվյալների դատախազը չկարողացավ ապացուցել ու հիմնավորել, որ այդ հանցանքը կատարված է մեղադրական անձին նստած անձի կողմից, և ոչ թե մեկ ուրիշի կողմից, որը քննչական օրգանների ոչ օպերատիվության պատճառով խուսափել է պատասխանատվությունից և որի փոխարեն անհիմն կերպով ու մտացածին տվյալներով դատի է տրվել այդ ահավոր հանցագործության հետ կապ չունեցող մի անմեղ անձնավորություն: Դատախազի միակ փաստարկումն այն էր, որ մեղադրյալի ազգականները այդ սպանությունը կատարողի թելադրանքով ու սպառնալիքի ազդեցության տակ հետաքննության ժամանակ ցուցմունք էին տվել, որ սպանությունը մեղադրյալը կատարել է խանդի հոգի վրա: Դատաքննության ընթացքում պարզվեց այդ վերսիսյի անհեթեթությունը: Այնուամենայնիվ, իր մեղադրական ճառում դատախազը զարգացնում էր այն տեսակետը, թե այդպիսի հակահասարակական, վտանգավոր հանցագործությունը չի կարելի անպատիժ թողնել, և պետք է պատժել դատի տրված մեղադրյալին...

Դիտավորո թյան, անվգուշության, հանցագործության զրդապատճառի, կանխամտածվածության, նախնական համաձայնությունի, կատարողների, մասնակիցների՝ զրդողների և օժանդակողների հիմնական իրավաբանական հարցերի մանրամասն վերլուծությունը կազմում է դատական ճառի այն առանցքը, որի շուրջը պետք է պտտվեն և նրանից հետևողականորեն ու տրամաբանորեն բխեն ճառի մյուս հարակից մասերը:

«Բրեական հռետրի առաջին ու գլխավոր արսիտման է. մեղադրանքի և պաշտպանության հիմքը կազմում է դեպքի իրավաբանական գնահատությունը: Ով չկարողացավ ապացուցել փաստը, կամ համոզել դատավորներին, նա արժանի է կարեկցության, բայց ոչ դատապարտման. ով չկարողացավ գտնել պետք եղած օրենքը, նա չի կատարել իր պարտքը, նա մեղավոր է: Օրենք չիմանալը՝ հանցագործություն է»<sup>1</sup>:

<sup>1</sup> II. Сергеев, Искусство речи на суде, Москва, 1960 г., стр. 140.

Ցարական ռեժիմի տարիներին գյուղացիական մի շարժման առթիվ, որը ձևակերպված էր՝ որպես գյուղացիների միջև նախօրոք կայացրած համաձայնություն՝ իշխանությունը դիմադրություն ցույց տալու համար, գյուղացիներին պաշտպանող նշանավոր փաստաբան և դատական հետաքննական խոսքի մեծ վարպետ Պլեվակոն, ձգտելով ապացուցել, որ գյուղացիների միջև նախնական համաձայնություն չի եղել, դիմելով երգվյալ ատենակալներին, ասել է.

«Մտե՛ք դազանանոց այն սյահին, երբ կերակուր են նետում քաղցած դազաններին: Մտե՛ք մանկանոց, երբ արթնացած երեխաները շեն տեսնում իրենց դայակին: Այնտեղ՝ գազանանոցում լավում է մռնչոն, այստեղ՝ մանկանոցում՝ լաց: Գտե՛ք նրանց դրդիչին... Եվ նա կգտնվի ոչ թե առանձին գազանի մեջ, ոչ թե տարիքով մեծ կամ փոքր երեխաների մեջ, այլ դուք այն կգտնեք քաղցի կամ սարսափի մեջ, որ համակել է բոլորին միաժամանակ»<sup>1</sup>:

Այսպիսի համեմատությունը, որն արդարացվում է գործի կոնկրետ հանգամանքներով, ցայտուն է և նպատակասլաց:

Սովորաբար յուրաքանչյուր մեղադրական ճառ իր մեջ պարունակում է հետևյալ տարրերը.

1. գործի քաղաքական նշանակության գնահատականը.
2. ըստ գործի ձևի բերված ապացույցների գնահատականը և գործի փաստական հանգամանքների սահմանումը.
3. մեղադրանքի որակումը.
4. մեղադրանքի անհատականացումը (եթև գործում կան մի քանի մեղադրյալներ) և յուրաքանչյուր մեղադրյալի բնութագրումը.
5. եզրափակումը:

Դատական ճառի կառուցվածքի որևէ մշտական, կայուն ձև գոյություն չունի, ուստի և պաշտպանական ճառերում շատ դեպքում չեն պահպանվում մեղադրական ճառերի վերը նշված տարրերի հաջորդականությունը:

Գործի քաղաքական-հասարակական նշանակության մասին գլխավորապես պետք է խոսեն դատախազները: Պաշտպանությունը, ելնելով գործի փաստերից, կարող է տալ գործի քաղաքական-հասարակական նշանակության գնահատականը, սակայն պաշտպանական ճառի մեջ այդ հարցի սրումը շատ դեպքերում վատթարացնում է մեղադրյալի վիճակը և դատապաշտպանները այդ հարցի մասին չեն խոսում, անմիջապես անցնում են ապացույցների վերլուծությանն ու գնահատականին: Երբեմն էլ բավարարվում են շատ լակոնիկ հայտարարությամբ, թե պետական մեղադրողի կողմից գործի քաղաքական նշանակությանը տրված գնահատականի հետ համաձայն են:

Կոնտրոլայինները, վարչակարգի դեմ առանձնապես ծանր հանցագործությունների, սոցիալիստական սեփականության խոշոր հափշտակությունների, մարդասպանության, մարմնական ծանր վնասվածքների հասցնելու, բռնաբարության և խուլիգանության վերաբերյալ գործերի քննության ժամանակ անհրտժեշտ է, որպեսզի դատախազը կանգ առնի և հիմնավորի նման հանցագործությունների դեմ մղվող պայքարի կարևորությունը:

Դատական գործունեության մեջ եղել են դեպքեր, երբ պետական-հասարակական գույքի ոչ մեծ հափշտակության համար դատախազները, ծայրահեղության մեջ ընկնելով, պահանջի են խրատաբան պատիժներ, դրանով իսկ խեղաթյուրելով սովետական պատժական քաղաքականության սկզբունքները:

Ցարական ռեժիմի օրոք դատապաշտպանությունը երբեմն քաղաքական գործերում առաջադիմական, քննադատական դեր է կատարել: Հիշատակության արժանի է հետևյալ դեպքը: Ցարական ներքին գործերի մինիստր Պլեվեն սպանվեց մեղադրյալ Սազոնովի նետած ռումբից:

Սազոնովին պաշտպանում էր նշանավոր փաստաբան Կարաբչևսկին: Նա իր պաշտպանական ճառը վերջացրեց այսպես.

«Սազոնովի բորբոքված գիտակցությանը Պլեվեն պատկերաբանում էր որպես մի շար գե, որն իր կապարե ծունկով ճղմում էր իր սիրելի հայրենիքի կուրծքը»:

Նախագահը զգուշացնում է:

Կարաբչևսկի.— Այդ ումբը լցված էր ոչ պայթուցիկ սնդիկով և ոչ էլ դինամիտով, այլ ուսա ժողովրդի արցունքներով:

<sup>1</sup> Судебные речи известных русских юристов, Москва, 1956 г., стр. 385.

<sup>2</sup> С. А. Голунский, «Методика подготовки и произнесения обвинительной речи на суде», Юридическое издательство НКЮ СССР, Москва, 1939 г., стр. 5.

նախագահ.— Ես զրկում եմ ձեզ ձայնից, պարոն պաշտպան, Կառաբշևսկի.— Ես վերջացրի, պարոնայք դատավորնե՛ր:



Ապացույցների վերլուծությունից հետո դատախազը և դատապաշտպանը պետք է պարզորոշ ասեն, թե մեղադրյալի արարքն արդյոք հանցակազմ պարունակո՞ւմ է թե ոչ և, եթե հանցակազմ կա, ապա պետք է տրվի հանցանքի որակումը՝ ելնելով օրենքի պահանջից: Ուղղակի ապացույցների առկայության դեպքում մեղադրանքի որակումն անվիճելի է դառնում և պետք է պահանջել կիրառել քրեական օրենսգրքի համապատասխան հոդվածը: Ճառի այս մասը հետաքրքրական է դառնում այն դեպքում, երբ կողմերը ապացույցների վերլուծության տվյալների հիման վրա առաջ են քաշում հանցագործությունը դիտավորյալ, թե՛ անզուրաբար կատարելու և հանցագործության շարժառիթների գնահատականի հարցերը: Օրինակ՝ սպանությունը կարող է կատարվել կանխամբտածված, կամ անզուրաբար, ինչպես նաև անհրաժեշտ ինքնապաշտպանության սահմաններն անցնելու հետևանքով, կամ տուժողի կողմից գործադրված բռնության կամ ծանր վիրավորանքի ազդեցության տակ առաջացած հոգեկան և վայրկենական հուզման վիճակում: Հանցանքի որակման տեսակետից դրանք շահագանց կարևոր հարցեր են և պահանջում են իրավաբանական թուրջ փաստարկումներ:

Եթե ըստ գործի մեղադրանք է առաջադրվել մի քանի հոդվածներով, կան հանցակիցներ, կամ կատարված է հանցափորձ, ապա մեղադրանքի որակմանը նվիրված ճառի այս մասը պետք է ընդարձակվի, քանի որ կողմերը պարտավոր են պարզաբանել ու ճիշտ որակել դատաքննության ժամանակ քննարկված մեղադրանքի բոլոր կետերը: Համենայն դեպս, դատախազը պարտավոր է մեղադրանքի բոլոր կետերի վերաբերյալ ասել, թե յուրաքանչյուր արարք Քրեական օրենսգրքի ո՞ր հոդվածով պետք է որակվի: Տրվյալ դեպքում դատախազի եզրակացությունը պետք է լինի որոշակի. երկրնորակյան առաջարկությունը միանգամայն անթույլատրելի է:

Դատախազը կարող է միջնորդել և փոխել մեղադրանքի որակումը միայն թեթևացման, մեղմացման ուղղությամբ, իսկ եթե հրապարակ են եկել նոր հանգամանքներ, որոնք ծանրացնում են մեղադրանքը, ապա դատախազն իրավունք չունի միջնորդելու և

արարքը վերաորակելու ավելի ծանր պատիժ նախատեսող հոդվածով, նա պետք է դատարանի առաջ միջնորդություն հարուցի՝ գործը լրացուցիչ քննության ուղարկելու համար:

Պաշտպանության դատական փորձը ցույց է տալիս, որ մեղադրանքի երկրնորակյան որակման միջնորդություններ են լինում: Շատ իրավաբաններ այս ձևի միջնորդությունները համարում են անթույլատրելի, պատճառաբանելով, թե «կամ... կամ-երբ», այսինքն՝ մեղադրյալին անպարտ ճանաչելու միջնորդությունից հետո արարքը վերաորակելու կամ մեղմ պատիժ նշանակելու մասին լրացուցիչ միջնորդությունը թուլացնում է պաշտպանությունը:

Շատերն էլ այս խնդիրը վիճելի են համարում, պատճառաբանելով, որ դատապաշտպանը հանցակազմի բացակայության մասին իր տեսակետը հայտնեցուց հետո միաժամանակ կարող է կասկածել, որ դատարանը կարող է չհամաձայնվել այդ տեսակետի հետ և, իր՝ պաշտպանյալի շահերից ելնելով, կարող է հարևանցիություն նշել, որ եթե դատարանը չհամաձայնվի իր տեսակետի հետ, ապա արարքը պետք է որակվի մի այլ հոդվածով՝ որոշ վերապահությամբ:

Մեղադրանքի որակումից հետո արդեն անհրաժեշտ է դառնում քննութազրկելու մեղադրյալին և որոշելու պատժաչափը:

«Բնութագրիր դատախազի ճառում պետք է լինի անաչառ, պաշտպանի ճառում՝ զուսպ»<sup>1</sup>:

Կողմերը պարտավոր են իրենց ճառերում նշել մեղադրյալների ենթությունը բնորոշող տվյալները՝ դատախազը ծանրացնող, դատապաշտպանը՝ մեղմացնող, սակայն մեղադրյալներին բնութագրելիս դատախազը պետք է լինի անաչառ, մեղադրյալին անձնական վիրավորանք չհասցնի:

Միևնույն հանցանքի համար մեղադրվող երկու անձանց հասարակական վտանգավորության աստիճանը կարող է տարբեր լինել: Այլ կերպ պետք է բնութագրել մեղադրական աթոռին նստած կրկնահանդագործին, այլ կերպ՝ հանրային օգտավետ աշխատանքով զբաղվող և արտադրության մեջ օրինակելի ճանաչված բանվորին, որը պատահական ձևով հանցագործ է դարձել: Պետք է տարբերություն դնել սխտեմատիկաբար սպեկուլյացիայով ղեկավարվող անձի և նրա հետ առաջին անգամ որևէ ապրանքի վաճառքին քնկերացած անձի միջև:

Գործի քաղաքական նշանակության գնահատականը տալու

<sup>1</sup> П. Сергеев, Искусство речи на суде, Москва, 1960 г., стр. 119.

ժամանակ, եթե դատախազն արդեն խոսել է հանցագործության առաքելային, պետության համար նրա նշանակության, հասցրած վնասի չափի մասին, տպա մեղագրյալներին բնութագրելիս պետք է խոսվի հանցագործության մեթոդների ու ձևերի, մեղադրյալի դերի, համառության, հետևողականության մասին, և արդյոք նա՝ է հանդիսացել կազմակերպիչ, դրոշմ, օժանդակող, թե՛ մասնակցել է հարկադրաբար՝ սպառնալիքի ազդեցության տակ: Այնուհետև պետք է ցույց տրվի մեղադրյալի սոցիալ-տնտեսական դեմքը՝ անցյալ գործունեությունը, դատվածությունը, կապը հանցագործ տարրերի հետ, վերաբերմունքը դեպի հասարակական-արտադրական աշխատանքը, կենցաղը, տարիքը, կրթությունը և այլն:

Շատ անգամ նկատի է առնվում մեղադրյալի վարքագիծը դատավարության ընթացքում, սակայն տյո խնդրին պետք է մոտենալ: շատ զգուշ, քանի որ դատավարության ժամանակ, հուզված վիճակում մեղադրյալի պատահական բռնկումը և խույլ աված կուպտությունը կարող է դատարանի կողմից սխալ զնահատվել:

Խոստովանությունը, զղջումը, իշխանության օրգաններին ներկայանալը, իր նախաձեռնությամբ հետագա հանցագործությունները կանխելը կամ դրանց հետևանքները մեղմացնելը միշտ էլ հանդիսացել ու հանդիսանում են մեղմացուցիչ հանգամանքներ:

Նախառնություններն ականավոր դատապաշտպան Անդրեևսկին, տալով վատ վարքի տեր կնոջ բնութագիրը. ասել է. «Տուժողը պատկանում է այն կանտնց թվին... որոնց շատ շուտ է ձանձրացնում ընտանիքը: Նման դուրիները ավելի շուտ ստեղծված են մոգայական լայնեզր գլխարկների համար, որոնք՝ ինքնին ընկնում են առաջին իսկ հանդիպակաց բաժնուց»:



Եզրափակումը դատական ճառի կառուցումը մասն է: Այն պետք է պարունակի կոնկրետ եզրակացություն և առաջարկ՝ մեղադրյալին հանցավոր կամ անպարտ ճանաչելու և տատժաչափի վերաբերյալ, ըստ որում տատժաչափի ո՞ր տեսակի՝ զնդակահարության, բանտարկության՝ բանտում, թե ուղղիչ-աշխատանքային ճամբարներում, ադատազրկման, ուղղիչ աշխատանքների, տուգանքի և այլն: Դատախազը պետք է նշի նաև պատժի չափը: Քայք պահանջել, որ դատարանը մեղադրյալներից մեկին ռատապարտի բանտարկության՝ 13 տարի ժամանակով, մյուսին՝ 7 տարի 6 ամիս, իսկ երրորդին՝ 2 տարի 6 ամիս, նպատակահարմար չէ, դատախազը

պետք է խուսափի նման չափեր սահմանելուց, թողնելով այն դատարանին:

Դատական ճառի եզրափակումը պետք է ավարտվի պատկերավոր մտքով և հիշողության մեջ տպավորվող նախադասությամբ: Օրինակ՝ 1898 թվականին, ֆրանսիական ակադեմիոր գրող Էմիլ Զոլան, ի պաշտպանություն Ալֆրեդ Դրեյֆուսի, հրապարակեց «Ես մեղադրում եմ» իր պատմական նամակը: Այդ նամակում Զոլան քերել էր Դրեյֆուսի անմեղությունը հաստատող մի շարք ապացույցներ և նշել, որ Դրեյֆուսի դատավարությունը իայտառակություն է Ֆրանսիայի և նրա բանակի համար, պահանջելով, որ վերանայվի այդ գործը: Էմիլ Զոլայի դեմ բրեական գործ հարուցվեց ֆրանսիական կառավարությանն ու բանակին զրպարտելու և անվանարկելու համար:

Զոլային պաշտպանում էր երիտասարդ դատապաշտպան Լաբորին, որն իր պաշտպանական ճառը եզրափակեց հետևյալ խոսքերով.

«Եվ այսպես, պարոնայք երզվյալներ՝, ձեր արդարացման դատավճռով հաստատակամության օրինակ տվեք: Զէ՞ որ բոլորն էլ զգում են, որ այս մարդը Ֆրանսիայի պատիվն է... Պարտված Զոլան՝ դա Ֆրանսիան է, որը պարտության է մատնում ինքն իրեն: Քաօություն ունեցեք զգալու այդ և տեղի տալու ձեր բնական հակամարտ:

Կասեմ միայն մեկ խոսք ևս, որպեսզի վերջացնեմ. ձեր դատավճիտը, պարոնայք երզվյալներ, նշանակում է մի քանի բան. նախ՝ կեցցե՛ բանակը: Ես նույնպես ցանկանում եմ բզավել՝ կեցցե՛ բանակը: Բայց դրա հետ միասին բացականել նաև՝ կեցցե՛ Ռեսուրսիկան և կեցցե՛ Ֆրանսիան, այսինքն, պարոնայք երզվյալներ, կեցցե՛ արդարությունը, կեցցե՛ հավերժական իդեալը:

Ահա թե ես ինչ էի ցանկանում ասել ձեզ, ահա թե ինչ եմ ես ննդրում, որ հայտարարեք ձեր դատավճռում» (Երկարատև ծափահարություններ և աղմուկ)<sup>1</sup>:

Դատական ճառերի կառուցվածքային ձևի ու բովանդակության մասին կա նաև այն տեսակետը, թե «որքան քիչ լինեն առանձին շրույթները, այնքան լավ. որքան շատ լինեն, այնքան հեշտույթյամբ Երզվյալները կարող են մոռանալ զրանցից մի քանիսը»<sup>2</sup>: Այդ նկատառումով, նույն հեղինակը՝ Պ. Սերգեյևը Մ. Անդրեևի հորձով, որը մեղադրվում էր իր կնոջ սպանության մեջ, փաստա-

<sup>1</sup> Судебные ораторы Франции XIX века, Москва, 1959 г., стр. 132.

<sup>2</sup> П. Сергеев, Искусство речи на суде, Москва, 1960 г., стр. 117.

բան Ս. Ա. Անդրեևսկու պաշտպանական ճառի համար (այդ ճառը բերված է գրքի հայկերենում) նշել է հետևյալ երեք հիմնական դրույթը.

- 1) Անդրեևսկու շահագրգռող սիրում էր իր կնոջը, որի սերը նրա կյանքի բախաժողովությունն էր:
- 2) Զինախոս Անդրեևսկու բարոյական զգացմունքներից բոլորովին զուրկ մի էակ էր:
- 3) Սպանությունը կնոջ խելառ վարմունքի ճակատագրական հետևանքն էր<sup>1</sup>:

Յուրաքանչյուր դատավարություն ունի իր առանձնահատուկ տարրերը: Մի դեպքում կարևոր կետ կարող է հանդիսանալ գործի քաղաքական-հասարակական դնահատականը, ուստի և, առաջին հերթին, որպես հիմնական տարր, պետք է առաջ քաշել այդ հարցը: Մեկ ուրիշ դեպքում հանցագործության որակումը և վտանգավորությունն, սկզբի կարևոր հանգամանքներ կարող են հանդիսանալ: Մի երրորդում կարող է հարց առաջանալ, թե արդյո՞ք հանցագործությունը կատարված է սովորական կողմից, և այլն: Այս վերջին դեպքում, եթե դատախազը, փոխանակ խոսելու և հիմնավորելու մեղադրանքը գործի փաստական սովորությունով, համապատասխան ապացույցներով, սկսի ճառել միտյն արարքի հասարակական վտանգավորության մասին, ապա այդպիսի ճառը անորակ ու անօգուտ կլինի:

Մեղադրական և պաշտպանական ճառերը պետք է աչքի ընկնեն իրենց կուռ տրամաբանությամբ և նպատակային հետևողականությամբ, առանց ավելորդ կրկնությունների:

ՄԻՋՆՈՐԳՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՐՈՒՑՎՈՂ  
ՀԱՐՑԵՐԻ ԾՈՒՐՋԸ

Դատավարության ընթացքում շատ հաճախ կողմերը հանդես են գալիս դանազան միջնորդություններով: Սկզբում նման միջնորդությունները գրեթե միշտ վերաբերում են գործը լսելու կամ հետաձգելու խնդրին՝ մեղադրյալի կամ վկաների, տուժողի և էքսպերտի բացակայության պատճառով: Դատախազի և դատապաշտպանի միջնորդությունն այդպիսի դեպքերում պետք է լինի հակիրճ, ամփոփ և հիմնավորված: Լինում են դեպքեր, երբ անգամ մեկ վկայի բացակայությունը գործի համար կարող է ունենալ բացառիկ կարևոր նշանակություն, քանի որ նրա ցուցմունքներով մեղադրանքը կարող է հիմնավորվել կամ ժխտվել:

<sup>1</sup> II. Сергеев, Искусство речи на суде, Москва, 1930 г., стр. 117.

Միջնորդություններ կարող են հարուցվել էքսպերտ հրավիրելու, փաստաթուղթ պահանջելու, տեղատեղություն կամ տեղազենություն կատարելու, գործը լրացուցիչ քննության ուղարկելու և այլ հարցերի շուրջը: Նման միջնորդությունների համար որևէ մշակված պատրաստի ձև չկա և չի կարող լինել: Այդպիսի կոնկրետ միջնորդությունները բացառիկ դեպքերում, նայած հարցի կարևորությանն ու բարդությանը, կարող են վերածվել երկար ճառի, որն այնքան էլ նպատակահարմար չէ, և պրոցեսի մեջ, հենց սկզբից, կարող է մտցնել ոչ ցանկալի նյարդայնություն:

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քրեական գործերի վերաբերյալ մեղադրական և պաշտպանական դատական ճառերի կառուցվածքն ու ձևը միանգամայն անհանդուրժելի են քաղաքացիական գործերի նկատմամբ:

Համաձայն Քաղաքացիական Դատավարական օրենսգրքի 2-րդ հոդվածի, դատախազն իրավունք ունի թե՛ գործ սկսելու և թե՛ գործին միջամտի լինելու, եթե, իր կարծիքով, այդ պահանջում է պետության կամ աշխատավոր մասսաների շահերի պաշտպանությունը: Այդպիսի դեպքերում դատախազի եզրակացությունը մի փոքր կարող է հիշեցնել քրեական գործի քաղաքական-հասարակական նշանականության գնահատականի առթիվ արտասանած ճառի ձևը: Եթե քննվում են ալիմենտի, երեխաների խնամքի, անհիմն առիթներով ապահարզանի և աշխատանքային գործեր, ապա նման կարգի գործերը հասարակական-քաղաքական նշանակություն ունեն և խստիվ կերպով կարգավորվում են օրենսդրությամբ: Ելնելով սոցիալիստական օրինականության պահպանման և գործող օրենսդրության ճշգրիտ կիրառման սկզբունքներից, դատախազն իր ճառը պիտի կառուցի այդ հիմունքներով, թույլ չտառով «նպատակահարմարության» անսկզբունք պատճառաբանություն:

Քաղաքացիական փոխհարաբերությունները կարգավորվում են համապատասխան օրենքներով և ՍՍՍՄ Գերագույն Դատարանի Պլենումի պարզաբանություններով:

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՍՔԸ ԲԵԿՄԱՆ ԱՍՏԱՆՈՒՄ

Մեղադրական և պաշտպանական ճառերը դատական առաջին երկրորդ՝ այսինքն բեկման ատյաններում հիմնովին տարբեր են:

Օրենքի պահանջից ելնելով, բեկման ատյանում խոսք կարող է լինել միայն շորս հիմնական խնդիրների շուրջը:

1. Առաջին ատյանի թերի և ոչ ճիշտ դատաքննության մասին, այսինքն, եթե նախաքննության և դատաքննության ընթացքում մնացել են շուտաբանված հարցեր, որոնց պարզաբանումը կարող էր ազդել դատավճռի վրա:

2. Դատաքննության ձևերի՝ դատավարական էական խախտումների մասին, եթե շեն պահպանվել մեղադրյալի՝ օրենքով նախատեսված երաշխիքները՝ պաշտպան ունենալու, մեղադրական եղբակացությունը ժամանակին և մեղադրյալին հասկանալի լեզվով հանձնելու, անօրինական կազմով գործը քննելու, մեղադրյալի օրինական միջնորդությունները համառ կերպով մերժելու մասին և այլն:

3. Օրենքի խախտման կամ ոչ ճիշտ կիրառման մասին, եթե դրա հետևանքով նշանակվել է ոչ ճիշտ պատիժ:

4. Ակնհայտ անարդարացի դատավճիռ կայացնելու մասին, երբ դատարանը, դուրս չգալով հողվածի սանկցիայի սահմաններից, նշանակել է այնպիսի պատիժ, որը խիստ կերպով անհամապատասխան է արարքին: Օրինակ՝ միլիցիայի աշխատողը ապտակել է քաղաքացուն և իշխանադանցության համար, Քրեական Օրենսգրքի 136 հոդվածով դատապարտվել է հինգ տարի ժամանակով ազատազրկման: Ծիշտ է, այդ հողվածի առաջին մասով պատիժ է նախատեսվում ազատազրկում՝ վեց ամսից մինչև տասը տարի և դատարանը դուրս չի եկել հողվածի սանկցիայի սահմաններից, բայց արարքի համեմատությամբ հինգ տարի ազատազրկում սահմանելը՝ ակնհայտ անարդարացի դատավճիռ է եղել:

Բացի նշված խնդիրներից, կողմերը բեկման ատյանում այլ հարցերի մասին չպետք է խոսեն: Բայց շատ անգամ, հատկապես դատապաշտպանները, առաջին ատյանում արտասանած ճառը նույնությամբ կրկնում են երկրորդ ատյանում:

Ճատի ձևն ու կառուցվածքը երկրորդ ատյանում կախված է այն բանից, թե ավելի գործով ինչպիսի՞ խախտումների կան և ո՞ր խնդիրների լուսաբանությունն է առաջին ատյանում եղել թերի և ըստ այնմ պետք է կանգ առնել այդ հարցերի վրա, բերված պատճառաբանությունները հիմնավորել դատական նիստի արձանագրությամբ և գործի այլ ավելաներով:

Բեկման ատյանում կողմերն առհասարակ պետք է խոսեն շատ կարճ, բացառությամբ, իհարկե, բարդ գործերից: Կինում են դեպքեր, երբ դատախազի եզրակացությունը կազմված է լինում մեկ նախադասությունից. «Դատարանի դատավճիռը ըստ գործի բոլոր ավելաների գտնում եմ հիմնավորված ու լրիվ ապացուցված, ուստի միջնորդում եմ այն ուժի մեջ թողնել անփոփոխ ձևով»:

Նկատի ունենալով, որ բեկման ատյանում դատախազն իր եզրակացությունը տալիս է դատապաշտպանի ճառից հետո, նա միշտ էլ հնարավորություն ունի քննադատելու պաշտպանական ճառում բերված փաստարկումները, և քանի որ երկրորդ ատյանում կողմերին ռեպլիկայի կարգով կրկին անգամ խոսք չի տրվում, ապա դատապաշտպանը պետք է նախատեսի դատախազի բոլոր առարկությունները և իր համառոտ, բայց խիստ հազեցված պաշտպանական ճառում նշի բոլոր հիմնական և գործի համար կարևոր նշանակություն ունեցող փաստարկումները:

#### ՃԱՌԻ ՆԱԽԱԳԱՏՔԱՍՏՈՒՄԸ

Մեղադրական կամ պաշտպանական ճառը և առհասարակ բոլոր տեսակի ճառերը՝ քաղաքական, գիտական, ադիտացիոն և այլն, չի կարելի հանպատրաստից արտասանել:

Դատական ճառը նախապատրաստելու համար նախ պետք է ծանոթանալ քննվող գործի հետ: Գործի հետ կարելի է ծանոթանալ երկու ձևով՝ վերջից, այն է՝ մեղադրական եզրակացության ուսումնասիրությունից, հետզհետե գնալով դեպի գործի սկիզբը՝ գործը հարուցելու նախնական փաստաթղթերը:

Ուսումնասիրության այս ձևն ավելի դործնական է, քանի որ մեղադրական եզրակացությունը գործի հայելին է, որի մեջ խտացված ձևով բերվում են մեղադրական կետերը, հիշատակվում են ապացույցները, կարևոր վկաների ցուցմունքները և այլն: Ուսումնասիրվելով մեղադրական եզրակացությունը, արդեն կարելի է ընդհանուր գծերով սրբապատկերացում ունենալ քննվող գործի էություն մասին:

Մեղադրական եզրակացությունից հետո պետք է ծանոթանալ մեղադրյալին մեղադրանք առաջադրելու որոշման և այդ առթիվ մեղադրյալի կողմից տրված նրա վերջին բացատրության հետ, այն համեմատել հետաքննության և նախաքննության ընթացքում նրա տված ցուցմունքների հետ, նշելով ցուցմունքների միջև եղած տարբերություններն ու հակասությունները: Առանձնապես պետք է ուշադրություն դարձնել մյուս մեղադրյալների, տուժողների ու վկաների առերես կատարված հարցաքննությունների ժամանակ տրված ցուցմունքներին: Ուսումնասիրության ժամանակ պետք է անել համապատասխան քաղվածքներ:

Այնուհետև նույն ձևով պետք է ծանոթանալ մյուս մեղադրյալների, տուժողի և վկաների ցուցմունքներին, բժշկական ակտերին:

էրսս էրտների եզրակացությունը և քաղվածքներ անելիս նշել գործի էջերը:

Առանձին պետք է նշվեն գործում եղած կարևոր փաստաթղթերը, նրանց համառոտ բովանդակությունն ու ամսաթիվը:

Համաձայն ուսումնասիրության էրկորոգ ձևի, ուսումնասիրությունն սկսվում է գործի առաջին էջերից, ուշադրությամբ հետևելով գործի հետագա զարգացմանը՝ մինչև մեղադրական եզրակացությունը: Ուսումնասիրության այս ձևը շատ ժամանակ է խլում և գործնական չէ: Այս ձևի ուսումնասիրության կողմնակիցներ են այն դատախազները, որոնք գործի հարուցման պահից հետևում են հետաքննությանն ու նախաքննությանը ըստ պաշտոնի:

Ելույթի համար նախօրոք պետք է ուսումնասիրել համապատասխան գրականություն և ճառի համար ընտրել պատմական, գրական օրինակներ: Մասնագիտական հարցերի վերաբերյալ ոչ միայն պետք է ուսումնասիրել անհրաժեշտ գրականություն, այլև խորհրդակցել մասնագետների հետ և պարզել քննության ենթակա բոլոր մուկ հարցերը, որոնց մասին հարկ կլինի անդրադառնալ ճառում:

Չի հանձնարարվում նախօրոք գրել ճառի տեքստը, մինչև գատաքննության ավարտվելը: Շատ դեպքեր են եղել, որ դատախազը կամ դատապաշտպանը նախօրոք իրենց ճառը պատրաստել են ըստ նախաքննության տվյալների, բայց դատաքննության ընթացքում փոխվել են գործի հանգամանքները և հնարավոր չի եղել գրած տեքստը օգտագործել:

Միայն դատաքննությունն ավարտվելուց հետո կարելի է կազմել մեղադրական և պաշտպանական ճառերի պլանները, հաշվի առնելով դատաքննությամբ ձեռք բերված տվյալները:

Ճառի պլանը, կամ ելույթի դրույթները կազմելիս պետք է նկատի ունենալ վերևում նշված հինգ տարրերը և որոշել, թե գրանցից ո՞րն է հանդիսանում տվյալ գործում հիմնականը և թե՛ չի՞ սկսել:

Դրանից հետո պետք է նշել ճառի հիմնական բաժինները և նրանց համառոտ բովանդակությունը, հիշատակելով անհրաժեշտ ալյուցույցները՝ ցուցմունքները, փաստաթղթերը, էքսպերտների եզրակացությունը, համեմատությունները, օրինակները, որոնք ճառում պետք է օգտագործվեն: Պետք է մտածել և ձևակերպել ճառի եզրափակումը: Դա շատ անհրաժեշտ է սկսնակների համար: Շատերը գրում են նաև ճառի սկիզբը, որը նրանց ինքնազատահոսություն է ներշնչում:

Սխալ է այն տեսակետը, թե դատական պերճախոսությունն առանձնահատուկ է միայն բուրժուական դատարանին: Չափազանց տաղտկալի ու ձանձրալի կլինի այն դատական ճառը, որտեղ բացակայում են ոճական և ճարտասանական ձևերը, գրական, պատմական մեջբերումները, որոնք ճառը դարձնում են ոչ միայն համոզիչ, այլև ըստ ձևի՝ գրավիչ: Դատապարտելի է, իհարկե, հետադարձական դատարկ ճոտամաքանությունը, բայց առավել ևս դատապարտելի է այն, երբ դատական հետադարձները իրավաբանական շոր ու ցամաք տերմիններով շարադրում են իրենց տեսակետը ըստ գործի ձեռք բերված ապացույցների վերաբերյալ ու շոր պաշտոնականությամբ տալիս նրանց զնահատականը:

Հին աշխարհի կլասիկ հետադարձներ Յիցերոնը և Քվինտիլիանը գտնում էին, որ հետադարձ պետք է կա՛մ համոզի, կա՛մ հուզի, կա՛մ գրավի: Համոզում են ապացույցներով, հուզում են՝ համապատասխան տրամադրություն կամ զգացմունք առաջացնելով, գրավում են իրենց անձնավորությամբ, այսինքն՝ բնավորության գծերով<sup>1</sup>:

Շատ դատական հետադարձներ գտնում են, որ նախօրոք գրված տեքստը կաշկանդում է հետադարձին և նրա ճառը դարձնում անկենդան ու դալուկ:

Դատական խոշորագույն գործիչ և դատական խոսքի հմուտ վարպետ Ա. Յ. Կոնին խորհուրդ էր տալիս.

«Նախօրոք ճառեր մի՛ գրեք, ժամանակ մի՛ կորցրեք, հույս մի՛ դրեք առանձնասենյակի լուծության մեջ հորինված և դանդաղությամբ թղթի վրա գրած տողերի օգնության վրա, այլ ուշադրությամբ ուսումնասիրեցե՛ք նյութը, հիշե՛ք այն, լրջորեն մտածեցեք նրա մասին և հետո հետևեցեք Ֆաուստի խորհրդին. «Խոսի՛ր համոզված, խոսքերը և ազդեցությունը ունկնդիրներին կհասնեն ինքնին»<sup>2</sup>:

Տրամազգծորեն հակառակ տեսակետի վրա էր կանգնած Հին Հռոմի ականավոր քաղաքական ու դատական հետադարձ Յիցերոնը, որը գտնում էր, թե «գրիչը լավագույն ուսուցիչն է»:

Նույն տեսակետն էր սլաշտպանում նաև Պ. Սերգեևիչը. «...Եթե չգրեք մի քանի սածեն կամ արշին թուղթ, դուք չեք կարող ուժեղ

<sup>1</sup> К. Л. Лужский, «Судебное красноречие», 1913, стр. 7—8.

<sup>2</sup> А. Ф. Кони, Избранные произведения, Москва, 1956 г., стр. 106.

ճառ ասել ընդ գործի վերաբերյալ: Եթե միայն դուք հանձար չեք, ապա ընդունեցեք սա որպես արսիոմա և ճառը պատրաստեցեք գրիչը ձեռքում»<sup>1</sup>:

Նախառնություններն դատական մեծ հռետոր վ. Դ. Սաստվիչը նույնպես շատ քիչ դեպքերում էր դիմում իմպրովիզացիայի: Նրա ճառերը նախօրոք ամենայն մանրամասնությամբ գրի էին առնվում, սակայն պրոցեսում ճառն արտասանվում էր աչնախի անմիջականությամբ, կենդանի, համոզիչ ու գրավիչ, որ կարծես թե հենց նոր ծնունդ առավ դատավարության ընթացքում:

Իրենց ճառերը նախօրոք չգրող և հանպատրաստից հանդես եկող դատական հռետորների շարքին են պատկանում Պլեվակոն և Կարաբչևսկին: Երբ Կոնին և Սպաստվիչը ձեռնարկ էին մնում պերճախոսական ձևերից, փրուն ֆրազներից ու սլաթոսից, ջանալով հանդիստ ու ինքնավստահ կերպով շարադրել իրենց մտքերն ու համոզել, Պլեվակոն և Կարաբչևսկին առաջին հերթին ձգտում էին ազդել զգացմունքի վրա իրենց տեմպերամենտով, հրաբորբոք, վառ, պատկերավոր խոսքերով և հռետորական պաճուճանքներով, որոնք այնքան բնորոշ են իմպրովիզացիայի համար:

Իմպրովիզացիայի շատագույց, ֆրանսիացի շերման դե-Բետսը իր «Պատական ճառի արվեստը» գրքում ասել է. «Հավատացե՛ք ինձ՝ որպեսզի ճառը լավ ստացվի, նա պետք է լինի կենդանի, ակտիվ, այլ կերպ ասած՝ հանպարաստի: Նա ամբողջովին ու բացարձակ պետք է հանպատրաստից ստեղծագործվի»<sup>2</sup>:

Սակայն իմպրովիզատորների մասին Բվինտիխանը ասել է, որ նրանք ջանկանում են խելոք երևալ հիմարների առաջ, բայց հիմար են դուրս գալիս խելոք մարդկանց առաջ<sup>3</sup>:

Այդ իսկ ասումով Պ. Սերգեևիչը ասում է. «Ձգուշացե՛ք իմպրովիզացիայից: Հանձնվելով ներշնչմանը, դուք կարող եք բաց թողնել էականը և անգամ ամենակարևորը»<sup>4</sup>:

Այնուամենայնիվ բոլոր դատական հռետորները, ինչպես այդ նշում է իր հիշողությունների մեջ Ս. Ա. Անդրեևսկին, իրենց ճառերը գրում էին կամ ամբողջությամբ, ինչպես Սպաստվիչը, կամ կոնսպեկտի ձևով, ինչպես Պլեվակոն:

1938 թվականին Դատախազների համամիութենական խորհրդակցության ժամանակ ելույթ ունեցողները նշեցին, որ դատարանում դատախազը իրեն պետք է պահի որպես իսկական բուշեիկ, որի լավագույն զարդը պետք է հանդիսանա համեստությամբ: Իր ամբողջ վարքով, մեղադրյալին տրվող հարցի բնույթով, դատարանին, պաշտպանությանն արվող իր դիմումներով դատախազը պետք է ցույց տա, որ նա հարգում է օրենքը և դատավարությանը մասնակցող կողմին: Դատական տակտը՝ վարվեցողությունը քաղաքական խոշոր կարևորություն ունեցող հարց է:

ՍՍՌՄ դատախազության մեթոդական նամակներից մեկում ասված է. «Դատարանում դատախազի բոլոր ելույթները պետք է ներթափանցված լինեն հարգանքով դեպի դատարանը: Միանգամայն անթույլատրելի է, երբ դատախազը վեճի է բռնվում դատարանի հետ և գրգռիչ ու զայրացուցիչ կերպով է պահում իրեն: Դատախազը պետք է նկատի ունենա, որ բոլոր հարցերի նկատմամբ վճռական խոսքը պատկանում է դատարանին և նա պետք է ենթարկվի նրա որոշումներին: Եթե դատարանը թույլ է տալիս օրենքի որևէ խախտում, ապա դատախազը կարող է միջնորդել՝ դատարանի նման գործողությունները մտցնել արձանագրության մեջ, որպեսզի դատավճիռ կայացնելուց հետո բողոքարկվի: Բայց այդ բոլորը պետք է դատախազը կատարի այնպիսի ձևով, որպեսզի նվազագույն շահով անգամ չխախտի դատարանի հեղինակությունը»:

Նույնը վերաբերում է դատապաշտպաններին: Մոսկվայի դատապաշտպանների ընդհանուր ժողովում, երբ քննարկվում էին պաշտպանական էթիկայի հարցերը, նշվեց, որ դատարանում պաշտպանը իրեն երբեմն այնպես չի պահում, ինչպես հարկն է. երբեմն նա հանդուգն է, խիստ տոն է գործածում, վեճի է բռնվում դատարանի հետ, շատ անգամ էլ դիմում է շողոքորթության և գցում է իր արժանապատվությունը:

Դատարանի կազմին և դատական դահլիճում գտնվող ունկընդիրներին գրավելու համար դատախազը և դատապաշտպանը չպետք է թույլ տան անվայել արտահայտություններ: Նման դեպքերում դատախազի նկատմամբ կատարվող այն տպավորությունը, թե մեղադրանքի լուրջ հիմքեր չկան, իսկ դատապաշտպանի նկատմամբ՝ որ պաշտպանական դիրքերը շատ թույլ են և հռետորը մի բաժակ ջրում փոթորիկ է բարձրացնում, լուրջ, համեստ և արժանավայել ձևով արտասանված թե՛ մեղադրական և թե՛, առավել

<sup>1</sup> H. Sergeev, Искусство речи на суде, Москва, 1960 г., стр. 305.

<sup>2</sup> Hermann de Baets, «Искусство судебной речи», перевод с французского, 1912 г., стр. 20.

<sup>3</sup> H. Sergeev, Искусство речи на суде, Москва, 1960 г., стр. 306.

<sup>4</sup> Նույն տեղում, էջ 305:

ես, պաշտպանական ճառի տպավորությունը շատ ավելի մեծ է, քան մեծամիտ, գոռոզ ու արհամարհական տոնով արտասանած ճառը, որը հակակրանք է առաջացնում:

Լինում են դեպքեր, երբ միևնույն դատավարությանը մասնակցում են մի քանի դատապաշտպաններ, պաշտպանելով զանազան մեղադրյալների շահերը, որոնք խիստ հակասական են: Յուրաքանչյուր պաշտպան, գործի տվյալներից ելնելով, պետք է պաշտպանի իր պաշտպանյալի շահերը, անհրաժեշտության դեպքում հիմնավորելով, որ տվյալ արարքը իր պաշտպանյալը չի գործել, այլ մեղադրյալներից մեկ ուրիշը: Սակայն այս հանգամանքը պետք է օգտագործել շատ բարեգուսպ կերպով և չպետք է դառնալ մի երկրորդ դատախազ, և հեռանալով իր իսկ պաշտպանյալի կոնկրետ պաշտպանությունից, վիրավորանքի և սուր բանավեճի հասնող լեզվակովի մեջ մտնել մյուս պաշտպանների հետ: Պաշտպանական ընկերական էթիկայի տեսակետից՝ դա անթույլատրելի է: Նման բանավեճերը կարող են ալկոլի հիմնավորել մեղադրանքը, և պաշտպանությունն իր վրա դրած դերի կատարումից կհեռանա:

Հին Հռոմի իրավաբաններից շտուերը գտնում էին, որ ազնիվ աշխատատեղ պետք է պաշտպանի և ոչ թե մեղադրի:

Նախառևտյուցիոն հայտնի դատապաշտպան Ա. Ի. Ուրտսովը, պաշտպանելով Գմիարիևային, որը զնդապետ Կոստրուբ-Կարիցկու հետ միասին դատի էր տրված 33 հազար ռուբլու տոկոսաբեր թղթերի հափշտակության և արքայի մեղադրանքով, հարկադրված եղավ մեղադրելու զնդապետ Կոստրուբ-Կարիցկուն, որի դոճն էր գաղթել իր պաշտպանյալ Գմիարիևան:

«Նմանեցեք թույլերին, որոնք խոնարհում են իրենց հողնած գլուխը ձեր առաջ, բայց երբ ձեր առջև կանգնում է մի մարդ, որն օգտվելով իր դիրքից, աջակցությունից, հանդգնում է մտածել, որ նա կարող է հեշտությամբ խաբել հասարակական արդարադատությունը, — դուք, հասարակական դատի ներկայացուցիչները, կհայտարարեք, որ ձեր դատը իրական ուժ է, — ըմբռնման ու խղճմտանքի ուժ, — և կծոնք նրա գլուխը հավասարության և օրենքի երկաթյա լծի տակ»<sup>1</sup>:

Վերջապես, դատավարության ընթացքում կարող է տեղի ունենալ այնպիսի երևույթ, երբ բախվում են մեղադրյալի և իր պաշտպանի տեսակետները: Կարող է արդյոք պաշտպանը հեռանալ իր կլիենտի դիրքից ու տեսակետից:

Քուրժուական իրավագետներից շատերը այդ հարցը լուծում են հետևյալ ձևով. պաշտպանը, հանդիսանալով իր կլիենտի շահերի ներկայացուցիչը, պետք է լիովին ենթարկվի նրա կամքին ու պաշտպանի կլիենտի վերսիան ու տեսակետը: Պրոֆ. Վլադիմիրովն այդ առթիվ գտնում է. «Դատապաշտպանը երբեք չպետք է մոռանա մի հասարակ բան, որ նա դատավոր չէ, այլ միայն մասնավոր շահերի պաշտպան՝ պետության շահերի դեմ մղվող օրինական պայքարում... նա իրավունք չունի հակառակ գնալ իր պաշտպանյալին»:

Սակայն կային և այլ տեսակետներ, որոնցից արժանի է ուշադրության Ֆոյնիցկու կարծիքը. «...Եթե մեղադրյալի կամքը անպայման պարտադիր ճանաչվի պաշտպանի համար, ապա պաշտպանության հասարակական նշանակությունը դրանով կվերանա...»:

Սովետական դատապաշտպանությունը ելնում է այն սկզբունքից, որ պաշտպանությունը մեղ մոռ ոչ թե մասնավոր գործ է, այլ հասարակական ծառայություն: Դատապաշտպանը համարձակ պաշտպանելով քաղաքացիների շահերը, նախ և առաջ հանդիսանում է պաշտպանության ինստիտուտի ներկայացուցիչ, և նա պաշտպանելով իր կլիենտի օրինական շահերը, կատարում է պետական-հասարակական նշանակություն ունեցող գործ: Սովետական դատապաշտպանը, շինելով իր կլիենտի ծառան՝ բուրժուական-էգոիստական հասկացություններով, այլ պաշտպանելով քաղաքացիների օրինական շահերը, դրանով իսկ գործում է հօգուտ հասարակական շահերի և կախում չունի իր կլիենտի կամքից:

Դատաքննության ընթացքում կաբող է պարզվել և ապացուցվել, որ մեղադրյալը իրոք հանցանք կատարել է և պաշտպանը նպատակահարմար է գտնում առաջ քաշել միայն մեղմացուցիչ հանգամանքներ, իսկ կլիենտը կարող է հրաժարվել առաջադրված մեղադրանքից: Դատապաշտպանը իր տեսակետը նախօրոք պետք է հայտնի կլիենտին. եթե նա չհամաձայնվի, ապա դատապաշտպանը պաշտպանությունը պետք է տանի ըստ իր խղճի ու համոզմունքի:

Ահա այսպիսի դեպքերում է, որ երբեմն դատավարության վերջում էքսցեսներ են տեղի ունենում պաշտպանի և կլիենտի միջև, որը հասնում է անգամ անձնական վիրավորանքի:

Այնուամենայնիվ, որպես հիմնական սկզբունք, յուրաքանչյուր դատապաշտպանի համար պաշտպանության շահանիշ պետք է հանդիսանա իր կլիենտի օրինական շահերի պաշտպանությունը, որպիսի երաշխիքը նախատեսված է ՍՍՍՄ Կոնստիտուցիայով:

<sup>1</sup> Судебные речи известных русских юристов. Москва, 1956 г., стр. 538



«Հոնտորական արվեստի հիմունքները» աշխատությունը ցանկանում ենք վերջացնել Ա. Պ. Չեխովի խոսքերով. «Հնում և նորագույն ժամանակներում ճարտասանությունը հանդիսացել է կուլտուրայի ուժեղագույն լծակներից մեկը: Բոլոր ժամանակներում էլ եզրվի հարստությունը և հոնտորական արվեստը ընթացել են կողք-կողքի: Բոլոր լավագույն պետական մարդիկ, լավագույն փիլիսոփաները, բանաստեղծներն ու բարեփոխիչները միաժամանակ եղել են լավագույն հոնտորներ: Գուցե մենք էլ երբևիցե կտեսնենք, որ մեր իրավաբանները, պրոֆեսորները և ընդհանրապես պաշտոնատար անձինք, որոնք ի պաշտոնե պարտավոր են խոսել, կխոսեն ոչ միայն գիտականորեն, այլև դյուրըմբռնելի ու գեղեցիկ»:

(А. П. Чехов, «Хорошая новость», Соч., т. VIII, стр. 499—501):

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ժ

(ձառեքը սրված են ժամանակագրական կարգով)

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՀԱՌԵՐ

ԳԵՄՈՍԹԵՆԵՍԻ ՀԱՌԸ «ԵԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ»

Ներկա մեր վիճակը, քաղաքացիներ՝ Աթենքի, ինձ պատկերանում է դժվարին և տագնապալի, և այդ ոչ միայն այն պատճառով, որ անհոգության հետևանքով մենք ծանր կորուստներ կրեցինք, և որ գեղեցիկ ճառերով անհնարին է վերադարձնել կորցրածը, այլև ավելի շատ այն բանից, որ մեր մեջ չկան համախոհության նշաններ այն միջոցառումների վերաբերյալ, որոնք պետք է ձեռնարկել անվնաս մնացած ունեցվածքի պահպանության համար. ընդհակառակն, յուրաքանչյուրն այդ մասին խորհում է իր ձևով: Խորհուրդ տալը ինքնին դժվար և ծանր գործ է, իսկ զուր դա կրկնակի դժվարացնում է: Բանն այն է, որ մյուս բոլոր ժողովուրդների մոտ քննարկումը նախորդում է ձեռնարկումներին. միայն ձեզ մոտ է, որ այն հաջորդում է նրանց: Այստեղից ստացվում է, որ զուր, բրքան ևս հիշում եմ, միշտ զովասանքներով փաստարանում եք այն հոևատրներին, որոնք մերկայնում են ձեր սխալները, և հիանում եք նրանց գեղեցիկ ճառերով այն ժամանակ, երբ այն միջոցառումները, որոնք ձեր իսկ քննարկման առարկան են հանդիսանում, վրիպում են ձեր տաշարությունից: Սակայն ինչպիսին էլ լինի մեր գործերի գրությունը, հուսով եմ, և այս հույսով բարձրացա տեղիցս, որ իմ առաջարկը և իմ խորհուրդը դեռ կարող են ուղղել մեր ներկա հարաբերությունները և հատուցել նախկին կորուստները, եթե միայն զուր համաձայնեք ինձ լսել առանց աղմուկի և զայրուլթի, ինչպես այդ վայել է, երբ խոսք է լինում պետության մասին, նրա կարևորագույն կարիքների մասին:

Չնայած ինձ հավաստի հայտնի է, քաղաքացիներ Աթենքի, որ ձեզ մոտ ամենից ավելի շահում է այն հոևատրը, որը առանց վարանումի վկայակոչում է իր նախկին ճառերը և համարձակ խոսում իր ծառայությունների մասին, բայց ինձ համար այդ անտանելի ծանր է և ես դժվարությամբ, միայն անհրաժեշտությունից ելնելով, որոշեցի խոսել հիմա իմ մասին. զուր ի վիճակի կլինեք ավել-

լի լավ հասկանալ իմ առաջիկա ճառը, եթե մի փոքր վերհիշեք այն, ինչի մասին ես առաջ ասել եմ: Նախ, երբ էվրեայում խոսվում են ինչ տեղի ունենում և մի քանի հոստոսներ ջանում էին ձեզ համոզել՝ օգնություն ցույց տալ Պլուտարքոսին և սկսել ամոթալի ու ավերիչ պատերազմ, ես առաջինն ու միտկն էի, որ առարկեցի դրա դեմ, և հազիվ ազատվեցի այն մարդկանց հոշոտումից, որոնք, գալթակղվելով աննշտն նվերներից, ձեզ մղեցին շատ սխալ գործողությունների: Բայց շատ շանցած, դուք, այն մարդկանցից, որոնց օգնություն էր ցույց տրված, ձեր վրա բերիք այնպիսի խաշտառակություն և այնպիսի աղետներ, որպիսիք չի կրել և դած ժողովուրդներից և ոչ մեկը, և այն ժամանակ դուք բոլորդ հասկացաք, թե որքան կորստաբեր էին ձեր խորհրդատուների ներշնչումները և որքան ես ճիշտ էի ասում: Այնուհետև, ես տեսնում էի այն ամբողջ շարիքը, որ պետությանը պատճառում էր դեբասան նևալտոնիստը, որը օգտվելով իր արհեստի անձեռնմխելիությունից, ինչպես դասավորեց ձեր գործերը և դրանց ուղղություն տվեց հազուա Փիլիպոսի: Ես կրկին հանդես եկա ձեր առաջ մերկացումներով՝ ոչ անձնական թշնամանքից և ոչ էլ շարախոսությունից դրդված, ինչպես այդ ապացուցեցին հետագա անցքերը: Ներկա գեպորում ես ոչ թե նեոպտոլեմոսի պաշտպաններին եմ մեղադրում, — այդպիսիները բոլորովին էլ չկային, — այլ հենց ձեզ, եթե դուք դիտելիք ոգրերությունը Դիոնիսիոսի թատրոնում, որտեղ խոսք չէր կարող լինել պետության բարօրության և պետական գործերի մասին, այս չէիք կարող նրան լսել մեծ հիացմունքով, իսկ ինձ՝ մեծ վրդովմունքով: Սակայն, ինչպես ինձ թվում է, դուք բոլորդ այս անգամ հավատացիք, որ նա գնաց թշնամու հողը, որպեսզի ստանա իրեն հասանելիք պարտքերը և այնտեղից վերադառնալուց հետո կատարի իր հասարակական պարտքը, ինչպես նա էր ասում. նա հաճախ էր կրկնում. ի՞նչ նողկալիություն է մարդկանց վրա հարձակվել այն բանի համար, որ նրանք Մակեդոնիայից իրենց հարստությունները փոխադրում են մեղ մտտ: Եվ ահա, այդ նույն մարդը, Լըր շնորհիվ տիրած խաղաղության ստացավ գործելու աղատություն, այստեղ ձեռք բերած անշարժ գույքը դարձրեց զրամ, որի հետ միասին շուսափուլթ թաքնվեց մեր թշնամու մտտ: Այդպիսին ես լիմ կանխատեսած դեպքերից այդ երկուսը. դրանք ապացուցեցին իմ հովաստիացումների իսկությունն ու ճշմարտությունը, դրանք իմ կողմից պարզաբանված են և դիլ իրականության հետ լիակատար համաձայնությամբ: Ես կրեիմ ևս մի երրորդ և վերջին. օրինակ, ապա անմիջապես կանցնեմ իմ ճառի առարկային: Երբ մեր դեսպանությունը տուն վերադարձավ երգումով հաս-

տատված հաշտությամբ և երբ դեսպաններից մեկը խոստացավ, որ Քեսպոսը և Պլատևան կվերականգնվեն, որ Փիլիպոսը զավթելով Տոկիդան, չի դիսլի Ֆոկիդացիներին, իսկ թերեական պետությունը կբաժանի մասերի, որ Օրոսը կլինի մեր քաղաքը և որ ձեզ կարվի էվրեան ի հատուցումն Ամֆիպոլիսի, երբ դուք շուրջված ու խաբված այդ ու նման խոստումներով, մոտացաք ձեր շահերը, արգարություն և արժանապատվության պահանջները ու Ֆոկիդացիներին դո՛ւ թողեցիք թշնամուն, ևս ձեզ շխարհեցի և չլեցի, այլ ի լուր ամենքի հայտարարեցի, — դուք իճարկե հիշում եք իմ խոսքերը, — որ այդ խոստումների մասին ինձ ոչ մի բան հայտնի չէ, որ ես նբանցից ոչինչ չեմ սպասում և հավատացած եմ, որ հոստորը դատարկ շաղակատում է: Ըշմարիտ է, այդ բոլոր դեպքերում ես ցուցաբերեցի մեծ սրաթափանցություն, քան որե՛կ մեկ ուրիշը, բայց այդ չեմ վերադրում իմ առանձին տաղանդին և դրանով չեմ հպարտանում: Ներկան ըմբռնելու և ապագան կանխատեսելու կարողությամբ ես, քաղաքացիներ Աթենքի, պարտական եմ միայն ներքոհիշյալին. նախ՝ հաշտությանը, որն իմ կարծիքով ավելին արժե մարդկային ամեն տեսակ շնորհներից և իմաստությունից, երկրորդ՝ անկաշառությունը, որով ես գնահատում ու կշռագատում եմ դործերի դրությունը: Եվ իրոք, ոչ ոք չէր կարողանա տալ այնպիսի մի նվերի անուն, որն աղղած լիներ իմ վարքապծի վրա՝ պետական գործերում և ճառերում. ուստի հասարակական բարօրությունը իմ աչքերի առաջ պատկերանում է իր իսկական տեսքով, այնպես, ինչպես նա պարզորոշ երևում է իրերի իսկ դրությունից: Ընդհակառակը, եթե մի կողմի վրա, ինչպես կշեռի նժարին, դեմ նաև դրամ, ապա այդ կողմի վրա անպայման կթեքվեն նաև բո գատությունները. այդ ժամանակ կտրականորեն անհնարին է դառնել ճիշտ և առողջ կերպով:

Եվ այսպես, եթե դուք ցանկանում եք մեր պետության համար շահել դաշնակիցներ, նրանց դրամական վճարումներն ու այլ օգուտներ, ապա դրա՛ համար, իմ կարծիքով, նախ և առաջ և անպատճառ չպետք է խախտել գոյություն ունեցող հաշտությունը, այլ ա՛յ թե այն պատճառով, որպեսզի ես ընդունեի դրա հրապույթը կամ այն վայել համարելի ձեր անխան:

Պետության համար ավելի օգտավետ կլիներ, եթե այդ հաշտությունը բոլորովին էլ չլիներ, քան եթե ներկա պայմաններում խախտվի արդեն գոյություն ունեցող խաղաղությունը, ինչպիսին էլ որ նա լինի: Բանն այն է, որ մեր անհոգությամբ մենք թույլ ենք տվել կարևոր սխալներ. Եթե դրանք չլինեին, պատերազմը մեղ համար հիմա չէր լինի այնքան վտանգավոր ու ծանր:

Այնուհետև, պետք է զգուշանալ, որպեսզի այժմ հավաքույթի մեջ գտնվող և իրենց արդեն ամֆիկլիցիոններ մեծարող ժողովուրդներին, առիթ չտալ խոսակու մեր դեմ դաշնակցային պատերազմի անհրաժեշտություն մասին: Հիմա, եթե մեր և Փիլիպոսի միջև պատերազմ բռնկի Ամֆիկլիցիոսի համար կամ որևէ այլ մասնակի տարածայնության պատճառով, որ չի վերաբերում ոչ թեսաղոնիկեցիներին, ոչ արգիվացիներին, ոչ էլ թերեացիներին, ապա այդ ժողովուրդներից և ոչ մեկը, ամենից քիչ՝ թերեացիները,— մի ընդհատեք ինձ և թույլ տվեք վերջացնել:— մեզ հետ չեն պատերազմի. ես դրանում համոզված եմ ոչ թե այն պատճառով, որպեսզի նրանք բարյացակամ լինեն դեպի մեզ կամ շանան հաճությանը Փիլիպոսին, այլ՝ ա՛յն պատճառով, որ անգամ թերեացիները, ինչպիսի բթամիտ էլ որ դուք նրանց համարեք, լա՛լ են հասկանում, որ այդպիսի պատերազմը իր ամբողջ ծանրությամբ կընկնի նրանց վրա, իսկ դրա օգուտներին հետամուտ կլինի ա՛յն մյուսը, մնալով հանդիսատայատղական գրություն մեջ: Ահա թե ինչու, եթե միայն պատերազմի համար ընդհանուր պատճառներ չլինեն և ժողովուրդներն այն չսկսեն ընդհանուր ուժերով, անգամ թերեացիները չեն հանդրգնի այդ անել: Այնուհետև, եթե մենք մտածեինք պատերազմել թերեացիների հետ Օրոսի համար կամ մի այլ մասնակի առիթով, ապա, իմ կարծիքով, մենք չէինք տուժի, քանի որ դաշնակիցները, որոնք արժանի են այդ անվանը, օգնության կգային կովոզներից նրան, որի հողը կներխուժեք թշնամին, և հարձակողական գործողություններում չէին օգնի ոչ մի կողմի. այդպիսին է միության առանձնահատկությունը: Դաշնակիցների, մերոնց կամ էլ թերեացիների հակվածությունը չի կարող տարածվել այնչափ, որպեսզի նրանք անտարբեր և՛ պաշտպանեն միության ժողովրդի անկախությունը, և՛ օժանդակեն նրա տիրապետությանը, իրենց իսկ սեփական շահից ելնելով, ուրիշների վրա. ընդհակառակը, և՛ մեր, և՛ թերեացիների անկախությանը կհամակրեն բոլոր դաշնակիցները, բայց դաշնակիցներից և ո՛չ մեկը չի ցանկանա, որպեսզի մենք կամ թերեացիները հակառակորդի նկատմամբ հաղթող հանդիսանանք և տիրապետությունը տարածենք իրենց իսկ դաշնակիցների վրա: Ի՞նչն է, իմ կարծիքով, վտանգը, և ինչի՞ց մենք պետք է վախենանք: Նրանից, որ սպառնացող պատերազմում, մեր վարքագծից ընդհանուր դժգոհության պատրվակով, մեր դեմ չմիանան վճռականորեն բոլոր ժողովուրդները:

Եթե արգիվացիները, մեսսենացիները, մեզալուպոլեցիները և մի քանի ուրիշ պելոպոնեսացիներ ու նրանց համախոհները դեպի մեզ թշնամաբար են վերաբերվում այն բանի համար, որ մենք մու-

նեաիկների միջոցով բանակցել ենք լակեդեմոնացիների հետ, և, ըստ երևույթին, հավանություն ենք տվել նրանց որոշ գործողություններին, եթե թերեացիները, ինչպես այդ մասին բոլորն են ասում, թշնամաբար են տրամադրվել դեպի մեզ, է՛լ ավելի կթշնամանան այն բանի համար, որ մենք մեզ մոտ ապաստան ենք բացել նրանց բոլոր վտարանդիների համար և բոլոր միջոցներով նրանց զգացնել ենք տալիս մեր թշնամությունը, եթե թեսաղոնիկեցիները դժգոհ են մեզնից այն բանի համար, որ մենք մեզ մոտ հրահանգ ենք ֆոկիդական վտարանդիներին, իսկ Փիլիպոսը՝ որ մենք նրան դիմադրում ենք մտնելու ամֆիկլիցիոնի մեջ,— ապա ես երկյուղ եմ կրում, որ բոլոր ժողովուրդները կարող են միանալ պատերազմելու մեր դեմ, ըստ որում նրանցից յուրաքանչյուրը կունենա հատուկ հիմք. քողարկվելով ամֆիկլիցիոնների որոշումով, նրանք պատերազմի կենտվեն մեր դեմ, անգամ ի վնաս իրենց իսկ սեփական շահերի, ինչպես այդ տեղի ունեցավ ֆոկիդական պատերազմի ժամանակ:

Ձեզ, իհարկե, հայտնի է, որ ներկայումս թերեացիները, Փիլիպոսը և թեսաղոնիկեցիները, բոլորը կատարել են մի ընդհանուր գործ, շնայած հետապնդել են ամենևին ոչ միատեսակ նպատակ: Այսպես, թերեացիները ուժ չունեին, որպեսզի դիմադրեին Փիլիպոսին՝ անցնել Թերմոպիլեն, գրավել անցուղին և անգամ վաստակել նրանց աշխատանքների ամբողջ փառքը, թեև նա վերջինը հայտնվեց: Ընդդեմ է, թերեացիները մի փոքր լայնացրին իրենց տիրապետությունը, սակայն իրենց ծածկեցին մեծագույն անպատվությամբ ու խայտառակությամբ: Իրոք, եթե Փիլիպոսը շանցներ Պիլան, թերեացիները, ինչպես համարվի է ասում, ոչ մի բաժին էլ չէին ստանա: Թեև նրանք հակառակ էին նրա անցումին, բայց ի վիճակի չլինելով տիրելու Օրխոմենին և Կորոնեսային, որը նրանք այնքան բուռն կերպով ցանկանում էին, այդ բոլորը թույլատրեցին: Գուցե որևէ մեկը կհամարձակվի հավատացնել մեզ, թե Փիլիպոսը նպատակ չունեք թերեացիներին հանձնելու Օրխոմենը և Կորոնեսան, ույլ զիջեց միայն անհրաժեշտությանը: Այդ մարդիկ կարող են կարծել ինչ որ իրենք են ցանկանում, իսկ ես լրիվ համոզվածությամբ պնդում եմ, որ նա դրան տեսչում էր նույնչափ, որչափ և անցուղու գրավմանը, ինչպես և միայն իրեն սեփականացնելու պատերազմն ավարտողի փառքը և պյութիական մրցումները կազմակերպողի կոչումը. նա դրան ձգտում էր ամբողջ հոգով: Ինչ վերաբերում է թեսաղոնիկեցիներին, ապա նրանց համար հավասարապես անցանկալի էր թերեացիների և Փիլիպոսի հզորանալը, քանի որ թե՛ մեկը և թե՛ մյուսը նրանց վտանգ էր սպառնում. բայց նրանք ձգտում

էին երկու առավելութեան՝ նախագահելու պիլիական ժողովում և կառավարելու դեմոկրատիկ սրբավայրը: Այդ երկու շահի համար նրանք անցան Փիլիպոսի կողմը: Այսպիսով, դուք տեսնում եք, որ յուրաքանչյուր ժողովուրդ, հանուն իր սեփական շահի, ստիպված էր անել շատ այնպիսի բաներ, ինչպիսիք նա երբեք չէր ցանկանա:

Մենք պետք է զգուշանանք նման դրուձյան մեջ ընկնելուց:

Մի՞թե այդ վտանգի սարսափից, կասեք դուք, մենք պետք է ենթարկվենք առաջադրված պահանջներին: Եվ դու, Դեմոսթենես, խորհո՞ւրդ ես տալիս այդ: Ո՛չ, ամենևին էլ խորհուրդ չե՛մ տալիս: Չպետք է մեղ թույլ տալ ոչ մի ստորութուն և խուսափել պատերազմից, դրանով իսկ բոլորի առաջ վավերացնել մեր խոհականութունն ու ճշմարտութունը, — ահա, իմ կարծիքով, թե մենք ինչպես պետք է վարվենք: Ի պատասխան այն քաղաքացիների, որոնք մեր պարտքն են համարում արհամարհել բոլոր տեսակի վտանգները և պատերազմ չեն կանխատեսում, ես պատրաստ եմ ներկայացնելու հետևյալ նկատառումները. մենք առաջարկում ենք թեև քաղաքացիների տիրապետության տակ թողնել Օրոպը, և եթե որե՛կ մեկը մեղ հարցնի ինչո՞ւ և մեղնից պահանջի անկեղծ պատասխան, մենք կասենք՝ ի խույս պատերազմի: Հօգուտ Փիլիպոսի մենք, համաձայն դաշնագրի, արդեն հրաժարվել ենք Ամֆիպոլիսից, մենք թույլ ենք տվել կարդիականների անջատումը խերսոնեսցիների շարքերից, Քիոս, Կոսոս և Ռոդոս կղզիների գրավումը կարիսցու կողմից, ինչպես և բյուզանդացիների բռնությունը մեր նավերի հանդեպ, անժխտելիորեն նրա համար, որ խաղաղ դրուձյան մեջ ենք մենք տեսնում մեծ օգուտների աղբյուրը, այլ ոչ թե գժտությունների ու թշնամության մեջ՝ հանուն թված բարիքների: Դեմոկրատիկ սխիստի պատրանքի համար անհեթեթ և անգամ ծիծաղելի կլինեն այժմ պատերազմ սկսել բոլոր ժողովուրդների գեմ, երբ մենք արտասովոր զիջողութուն ենք ցույց տվել առանձին ժողովուրդների հետ ունեցած հարաբերություններում, չնայած այն ժամանակ խոսքը վերաբերում էր մեր ծայրահեղ, կենսական կարիքներին:

(Թարգմանված է ռուսերենից՝ «Речи Демосфена», перевод с греческого проф. Ф. Г. Мищенко, Москва, 1903 г.).

Մինչև ե՞րբ պիտի, վերջապես, շարաշահես մեր համբերատարութունը, Կատիլինա: Դեռ երկա՞ր պիտի համառես քո վայրի խելագարութեամբ: Մինչև ե՞րբ դու, վերջապես, մոռանալով ամեն շափու սահման, պիտի գոռոզանաս քո հանդգնութեամբ: Մի՞թե քեզ վրա ոչ մի ազդեցություն չգործեց ո՛չ զինվորական պահպանությունը, որը գիշերը պաշտպանում էր Պալատիայան բլուրը, ո՛չ քաղաքային պարեկները, ո՛չ ժողովրդի սարսափը, ո՛չ դրսում հավաքված բարեմիտ քաղաքացիների բազմությունը, ո՛չ սենատի նիստերի այս անձեռնմխելի վայրը, ո՛չ էլ այստեղ ներկա գտնվող սենատորների գեմքերի արտահայտությունը: Մի՞թե դու չես զգում, որ քո մտքերը մեզ համար շատ պարզ են: Մի՞թե դու չես նկատում, որ կաշկանդված ես, քանի որ այստեղ բոլորը գիտեն քո զավաղորթյան մասին: Որը՞ մեզանից, քո կարծիքով, տեղեկություններ չի ստացել այն մասին, թե դու ինչ ես արել այս գիշեր, և ինչ՞ անցյալ գիշեր, որտեղ էիր, ում էիր հավաքել, ինչ որոշումներ ընդունեցիր: Օ՞, ժամանակներ, օ՞, բարքեր: Այդ բոլորը սենատը շատ լավ գիտե, կոնսուլը տեսնում է, իսկ նա դեռ ապրում է: Ապրո՞ւմ է: Դա բավական չէ, — նա ներկայանում է սենատ, մասնակցում է պետական խորհրդակցությանը, մեր մեջ ընտրում է զոհ և նրան զենման է դատապարտում: Բայց մենք, իրոք որ խիզախ մարդիկ, կարծում ենք, թե պետության փրկության համար անում ենք ամեն ինչ, եթե խուսափում ենք զենքից, որը նա կատաղի թափահարում է: Քեզ, Կատիլինա, վաղուց պետք է կոնսուլի հրամանով մահապատժի ենթարկել և քեզ ուղղել այն կործանումը, որը դու երկար ժամանակ նյութում էիր մեր բոլորի դեմ: Եթե պատվարժան Պուրիոս Սցիպիոնը՝ զերագույն քուրմը, չգրավելով ոչ մի պետական պաշտոն, կարողացավ սպանել Տիբերիոս Գրակոսին, որը ձգտում էր միայն աննշան շափով փոխել գոյություն ունեցող պետական կարգը, ապա մի՞թե մենք, օժտված կոնսուլական արժանապատվությամբ, պետք է հանդուրժենք Կատիլինային, որը տեսնում է ամբողջ աշխարհը թողողել արյունով և ոչնչացնել կրակով: ...Մենք, Կատիլինա, քո դեմ ունենք սենատի որոշումը...

Ն ճառից հանված են Կատիլինայի անձնական կյանքին վերաբերող մեղադրանքները, որոնցով Ցիցերոնը ջանում էր նրան վարկաբեկել սենատի առաջ:

...Եթե ես, Կատիլինա, քո դեմ գործերի համաձայն այդ որոշման, քեզ պատշաճ էր անմիջապես սպանել: Իսկ դու դեռ ապրում ես, և ապրում այնպես, որ ոչ մի հակում չես ցուցաբերում հրաժարվելու քո հանդեպությունից,— ընդհակառակը, ավելի ու ավելի ես ամրանում նրա մեջ: Պարոնա՛յք սենատորներ, ես ցանկանում եմ զիջողամիտ լինել, ես չեմ կամենում պետություն համար այսպիսի կրիտիկական հանգամանքներում կորցնել զուխս, բայց հիմա ես ինքս ինձ պետք է դատապարտեմ իներտության և գործերն անհմուտ կերպով վարելու համար: Հոռոտական ժողովրդին թշնամի բանակը վրան է խփել Իտալիայում՝ էտրուրիա տանող կիրճի առաջ. օրավուր աճում է թշնամիների թիվը, իսկ այդ բանակի պետին և թշնամիների առաջնորդին մենք տեսնում ենք հոռոտական պարիսպների ներսում և անգամ սենատում, և դիտում ենք, թե ինչպես նա ամեն օր ձգտում է հարված հասցնել պետության հենց սրտին: Եթե, Կատիլինա, ես հիմա հրամայեմ բռնել քեզ և սպանել, ես, թերեա պետք է վախենամ նրանից, որ ավելի շուտ բոլոր բարեմիտները ինձ կնախատեն ավելորդ դանդաղկոտության, քան գեթ որևէ մեկը՝ դաժանության համար: Դու, վերջապես, այն ժամանակ կսպանվես, երբ անկարելի կլինի գտնել մի մարդ այնչափ անարգ, այնչափ ստոր, այնչափ քեզ հիշեցնող, որը հրաժարվեր ճիշտ համարելու իմ գործողությունները:

Բայց քանի դեռ գոյություն կունենա գեթ մի մարդ, որը կհամարձակվի պաշտպանել քեզ, դու կապրես, բայց կապրես այնպես, ինչպես ապրում ես՝ իմ բազմաթիվ, վստահելի պահակախմբի հրակողության տակ, որը քեզ կպրկի հնարավորությունից անգամ մատ շարժելու պետության դեմ: Հարյուրավոր աչքեր ու ականջներ կհետևեն ու կդիտեն քեզ, ինչպես նրանք այդ արել են մինչև հիմա, թեև դու այդ չես էլ նկատել:

## 3.

Դու, Կատիլինա, ինչի՞ վրա կարող ես հույս դնել, եթե գիշերվա մթությունն անգամ ի վիճակի չէ թաքցնելու քո պիղծ ձեռնարկումները, ոչ էլ մասնավոր տունը կարող է իր պատերի ներսում պահել քո դավադիրների ձայները, երբ ամեն ինչ հայտնի է դառնում և ամեն ինչ երևան է ելնում: Ժամանակն է, վերջապես, որ դու սթափվես, հավատա՛ ինձ, հրաժարվի՛ր կոտորածների և հրկի-

զումների մասին մտածելուց: Դու ամբողջովին մեր ձեռքում ես գտնվում. քո բոլոր պլանները մեզ հայտնի են: ...Ես քո բոլոր դիտավորությունները ոչ միայն տեսնում, այլև ուղղակի նախազգում եմ:

## 4.

...Այստեղ, սենատում, ես տեսնում եմ մի քանիսներին, որոնք (երեկ գիշեր) այնտեղ քեզ հետ էին: Օ՛ր, անմահ աստվածներ: Որտե՞ղ ենք մենք գտնվում: Ի՞նչ քաղաքում ենք ապրում: Ո՞ր պետության մեջ ենք բնակվում: Այստեղ, կրկնում եմ, այստեղ, մեր մեջ, պարոնայք սենատորներ, այս ամենամեծարելի և ամենահեղինակավոր ժողովում, որին հավասար ոչ մի բան դուք չեք գտնի ամբողջ տիեզերքում, ներկա են գտնվում մարդիկ, որոնք խորհում են իմ և ձեր կործանման մասին, մեր քաղաքի և ամբողջ աշխարհի ոչնչացման մասին: ...Եվ այսպես, այն գիշեր դո՛ւ, Կատիլինա, լեկի տանն էիր, մասերի էիր բաժանում Իտալիան, որոշում էիր, թե ո՞վ որտե՞ղ, ըստ քո կարծիքի, պետք է մեկնի, ընտրում էիր, թե ո՞րին թողնել Հռոմում, ո՞րին վերցնել քեզ հետ, նշում էիր քաղաքի այն կետերը, տրտեղից պետք է սկսվեն հրկիզումները, հավատացնում էիր, որ ինքդ էլ շուտով կթողնես Հռոմը, ասում էիր, որ քեզ համար մի անախորժ խոչընդոտ կա՝ դա իմ կյանքն է: Գտնվեցին երկու հոռոտական հեծյալներ, որոնք պատրաստակամություն հայտնեցին քեզ ազատել այդ գառնությունից. նրանք խոստացան նույն գիշեր, մինչև լուսաբաց, սպանել ինձ իմ անկողնում: Այդ ամենի մասին ես իմացա ձեր ժողովը վերջանալուց անմիջապես հետո:

## 5.

...Այսպիսի պարագաներում, Կատիլինա, գնա՛ այն ուղիով, որի վրա ոտք ես դրել, հեռացի՛ր, վերջապես, քաղաքից. գարպասները բաց են, մեկնի՛ր: ...Դու այլևս չես կարող մեզ հետ լինել: Ես այդ չեմ տանի, չեմ համբերի, թույլ չեմ տա: ...Հիմա դու արդեն բացահայտորեն ոտնձգություն ես անում ամբողջ պետության դեմ, կործանման ու ավերման ես մատնում անմահ աստվածների տաճարները, քաղաքային բնակատեղերը, մեր բոլորի կյանքը, վերջապես ամբողջ Իտալիան: ... Կոնսուլը թշնամուն հրամայում է,

հեռանալ քաղաքից: Դու հարցնում ես, գուցե՞ արտո՞ր: Չեմ համարձակվում պատվիրել, բայց եթե դիմում ես ինձ խորհրդով, խորհուրդ եմ տալիս:

10.

...Ինչպիսի՞ հոյակապ արդյունքների ես հասա, երբ քեզ հեռացրի կոնսուլությունից. համենայն դեպս, դու կարող ես ծվատել պետությունը որպես միայն արտորական, և ոչ թե որպես կոնսուլ, և քո հանցագործ ձեռնարկումները պետք է կոչվեն ավելի շուտ ելուղակություն, քան պատերազմ:

12.

...Այժմ ես համոզված եմ, որ եթե նա միայն հասնի մինչև Մանիլուի ճամբար, ուր նա մտադիր էր մեկնել, անկարելի կլինի գտնել մի հիմար, որը ակներև չհամոզվի, թե դավադրությունը գոյություն ունի, չի գտնվի մի սրիկա, որը համառի ժխտել ապացուցված փաստը: Ես շատ լավ հասկանում եմ, որ եթե պատժել միայն Կատիլինային, պետական վարակի այդ հիդրան կարող է միայն մի փոքր ճղմվել, բայց ոչ թե ճխլվել: Իսկ եթե նա հեռանա, տանելով իր համախոհներին, նրանց հետ միասին նա իր հետ կբաշի նաև բոլոր սնանկացածներին, սլետություն մարմնի վրա՝ հասունացած պալարը կրացվի, և վերջնականապես դուրս կբաշվի արմատը և ամեն տեսակ աղետների սաղորդը:

13.

Վաղուց է ինչ մենք, պարոնայք սենատորներ, ապրում ենք սպառնալի պայմաններում, հետամտվելով դավադիրների կողմից, բայց չգիտեմ, ինչպիսի ճակատագրական պատահականություններ, հատկապես ի՞մ կոնսուլության ժամանակ, ամբողջ ուժով երևան եկան ամեն տեսակ հանցագործություններ և վաղեմի կատաղի հանդգնություն: Եթե ելուղակների այս հրեշտիկը հրոսախմբի միջից վերացնել միայն Կատիլինային, գուցե թվա, որ մենք կարճատև դադար կստանանք մեր անհանգստություններից և հուզումներից հետո, բայց իրականում վտանգը չի վերանում, այլ միայն

ավելի խորն է թափանցում պետության երակների և ներքին օրգանների մեջ: ...Եթե պատժենք միայն Կատիլինային և մյուս դավադիրները կենդանի մնան, հիվանդությունը ավելի սուր բնույթ կընդունի: Ուստի թող անզգամները հեռանան, թող առանձնանան: Բարեմիտ մարդկանցից և թող բոլորը հավաքվեն մի վայրում, թող վերջապես քաղաքի պարիսպը ...բաժանի նրանց մեզանից, թող դադարեն մահափորձ նախապատրաստել կոնսուլի դեմ նրա սեփական տան մեջ, խոնվեն քաղաքային պրետորի տրիբունալի շուրջը, զենքը ձեռքներին պաշարեն սենատի շենքը, քաղաքը հրկիզելու համար պատրաստեն հրթիռներ ու կերոններ, թող, վերջապես, յուրաքանչյուրի դեմքի վրա գրվի նրա քաղաքական համոզմունքը: Իսկ ես խոստանում եմ ձեզ, որ մեր՝ կոնսուլներիս զգոնությունը, ձեր հեղինակությունը, հոմեական հեծյալների անդրդվելի կայունությունը, ընդհանրապես բոլոր բարեմիտների համերաշխությունը այնպիսի բարձունքի վրա կլինեն, որ Կատիլինայի հեռանալուց հետո, դուք ակներև կերպով կհամոզվեք, որ նրա բոլոր դիտավորությունները բացված, հայտնաբերված, խափանված, պատժված են: Այսպիսի նախանշանակների առկայությամբ, Կատիլինա, մեկնի՛ր վարելու անօրեն ու անխիղճ պատերազմ: Պետությանը դա կծառայի՝ հասնելու ավելի բարձր առաջադիմության, իսկ քեզ և բոլոր նրանց, ովքեր կապված են քեզ հետ ամեն տեսակ հանցագործություններով ու սպանություններով՝ անկման և անզամ վերջնական ոչնչացման: Դու, Յուպիտե՛ր, որի տաճարը հիմնադրված է Ռոմուլի ձեռքով Հոսմի հիմքը դնելու հետ միաժամանակ, որին մենք արժանի կերպով անվանում ենք մեր քաղաքի և մեր պետության հովանավորը, պաշտպանի՛ր նրանից ու նրա համախոհներից քո զոհարանները, բոլոր տաճարները, քաղաքի բնակարաններն ու պարիսպները, ինչպես նաև բոլոր քաղաքացիների կյանքն ու գույքը, իսկ այն մարդկանց, որոնք թշնամի են բարեմիտներին, — հայրենիքի թշնամիներին, Իտալիայի կողոպտիչներին, որոնք սերտ կապված են մյուսանց հետ հանցագործություններով և այլո՞ծ ընկերակցությամբ, պատժի՛ր ինչպես կենդանության, նույնպես և մահվանից հետո հավիտենական տանջանքներով:

(Փարզամանված է ուսերենից. Марк Туллий Цицерон, Речь против Катилины, С. П. Гусев, Академия, 1934 г., стр. 17) - 201).

(1788 ՔՎԱԿԱՆԻՆ ՏՈՒՆՈՒՅԻ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼՈՄՆԵԻ ԴԵ ՐՐԻՆԵԻ ՄԻՆԻՍՏՐ ՆՇԱՆԱԿՎԵԼՈՒ ԵՎ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉՆԵՐ ԸՆՏՐԵԼՈՒ ԱՌՔԻՎ ԱՐՏԱՍԱՆԱՍ ՃԱՌԻՑ)

(ՀԱՏՎԱԾԻ ԼՈՐԳԵՐԻ ՊԱԱՏՈՒՄ 1812 ՔՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-ԻՆ Ի ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ԸՄՐՈՍՏԱՅԱՍ ՋՈՒԼՅԱԿԵՐԻ ԱՐՏԱՍԱՆԱՍ ՃԱՌԻՑ)

...Իմ թանկագին համաքաղաքացիներ, թող անցյալը ապագայի համար ձեզ դաս ծառայի. գինվեցե՛ք խոհեմությամբ և Ազգային ժողովի ձեր ներկայացուցիչների ընտրության ժամանակ եղեք նույնքան խիստ, որքան և մինիստրի ընտրության ժամանակ:

Քաղաքական ասպարեզից հեռացրե՛ք անխոհեմ և դյուրաբորբոք երիտասարդությունը, ինչպես և այն մարդկանց, որոնք հայտնի են իրենց թեթևամտությամբ և անհոգ կյանքով, մարդկանց, որոնք շոայլողության, ճոխության, անբարոյականության, ժլատության և փառամոլության հակում ունեն:

Գիտելիքներ և առաքինություններ—ահա այն հատկությունները, որոնք անհրաժեշտ են երրորդ դասի ներկայացուցիչն: Այդ կոչմանը արժանացրե՛ք միայն ողջամիտ և փորձված, աղնիվ մարդկանց, որոնց ընդունակությունների վերաբերյալ անհնարին է կասկածել, մարդկանց, որոնք չբեմեռանդորեն են վերաբերվում դեպի հասարակական բարիքը, փորձված են գործերի մեջ, որոնց շահերը անբաժանելի են ձեր սեփական շահերից, մարդկանց, որոնք լուրջ են, տարիքով հասուն, կամ թե նրանց, որոնց պատկանելի ծերությունը պահում է անբասիր կյանքը: Եվ, վերջապես, նրանց առաքինությունը ամեն տեսակ գայթակղությունից պահպանելու համար ընտրեցե՛ք մարդկանց, որոնք իրենց կարողության կամ վաստակի շնորհիվ կարիքի մեջ չեն, մարդկանց, որոնք իրենց գործունեության բնույթով անկախ են, կամ այնպիսիներին, որոնց պաշտոնները կախում չունեն բարձրաստիճան անձանց բարեհաճությունից, ազնվատոհմ իշխանի կամ մինիստրի հովանավորությունից:

Զգուշացե՛ք, չլինի թե արհամարհելով իմաստուն խորհուրդները և ականջ դնելով հրապուրիչ ճառերին, դուք ձեր իսկ սեփական ձեռքերով անդունդ փորեք ձեր ոտքերի առաջ, Զգուշացե՛ք, չլինի թե ձեր սեփական զավակները հետագայում ձեզ նախատեն այն բանի համար, որ դուք ինքներդ նրանց համար շղթաներ կոեցիք, չլինի թե հեծկտալով ստրկացման դառն պտուղների վրա և գանգատվելով իրենց տանջանքներից, անիծեն իրենց հայրերի վաճառվածությունը:

(Քարգմանված է ռուսերենից. Жан Поль Марат, «Избранные произведения», т. I, Дар отечеству, издательство Академии наук СССР, Москва, 1956 г., стр. 278—281).

«Ձի եղել մի դեպք, որ ձերբակալվեի փոքի հանցագործության վայրում բռնված մի իսկական հանցավոր, որի վերաբերմամբ կիրառվեի ակնհայտ և ապացույցի կարիք չզգացող մեղադրանք... այդ մարդիկ մեղադրվում են նրա համար, որ երեխաներ ունեն, որոնց, ներկա ժամանակի պայմանների պատճառով, ի վիճակի չեն պահել... Բայց այդ բոլոր թշվառությունների իսկական պատճառը, դրա հետ և բոլոր խռովությունների պատճառը, ավելի խորն է թաղված: Երբ մեզ ասում են, թե այդ մարդիկ կազմել են մի ընկերություն ոչնչացնելու ո՛չ միայն իրենց բարեկեցությունը, այլև դրա անմիջական միջոցները, կարո՞ղ ենք մոռացության տալ, որ այդ ամենի պատճառը ոչ այլ ինչ է, եթե ոչ մեր դառն քաղաքականությունը և վերջին տասնևութ տարիների կործանարար պատերազմը: Այդ քաղաքականությունն է կործանել նրանց բարեկեցությունը: Դա մի քաղաքականություն է, որ ծնվել է իր դրույթի հետ, թե՛ «չկան այլևս քաղաքական խոշոր գլուխներ»: Նա մեռյալներից ավելի երկար է ապրել, որ իր նողմքի կնիքը դնի մեզ վրա և այդպես երրորդ և չորրորդ սերունդների վրա:

...Ձե՛ որ այդ ամբոխն է աշխատում մեր դաշտերում և ծառայում մեր տներում: Նա է ղեկավարում ձեր նավերը: Նրանից է կազմվում ձեր զորքը: Միայն և միայն նա է ձեզ հնարավորություն տալիս սպանալ ամբողջ աշխարհին. բայց նա ինքը, երբ նրա շահերը և տառապանքները մոռացության են մատնվում, կարող է ընկնել հուսահատության մեջ և սպանալ ձեզ:

...Ես անցել եմ Պիրենեյան թերակղզու վրա ծավալված ռազմական գործողությունների ամբողջ ընթացքով. եղել եմ Թուրքիայի մի քանի ամենաճնշված նահանգներում, բայց ոչ մի տեղ, ամենաբռնապետական և դավաճանական կառավարությունների մեջ անգամ, չեմ տեսել այնպիսի ահավոր աղբատություն, ինչպես տեսում եմ իմ վերադարձից հետո այս քրիստոնեական երկրի բուն սրտում:

Մի՞թե մեր օրինագրություններում բավականաչափ պատիվ չկա, մի՞թե մեր քրեական օրենսգրքում այնքան քիչ աշույն կա, որ այժմ հարկավոր է այն ամբողջ շատրվանով բաց թողնել, որը ծառանում է մինչև երկինք, կարծես նրա համար, որ բարձրաձայն սղբա ձեզ համար: Ինչպե՞ս եք դուք ձեր օրինագիծը կենսագործում

կյանքում: Մի՞թե կարող եք դուք մի ամբողջ դքսութուն վերածել բանտի: Դուք ուզում եք կախաղաննե՞ր կանգնեցնել բոլոր դաշտերում և կախել մարդկանց ինչպես աղաձկներ»<sup>1</sup>:

#### 4. ՄԱՐԳՍ

(1856 թ. ԱՊՐԻԼԻ 14-ԻՆ «ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ»  
ՀՈՐԵԼՅԱՆԻՆ ԱՐՏԱՍՍԱՆԱԾ ՃԱՌԸ)

1848 թ. այսպես կոչված ռևոլյուցիաները սոսկ մանր միջադեպեր, չնչին ճաքեր ու ճեղքեր էին եվրոպական հասարակության պինդ կեղևի վրա: Պինդ թվացող մակերեսի տակ երևան եկավ մի անծայրածիր օվկիանոս, որը բավական է շարժվի, որպեսզի փշուրփշուր անի կարծր ժայռերից կազմված ամբողջ մայր ցամաքներ: Աղմկալի ու անկարգ կերպով հռչակեցին նրանք պրոլետարիատի ազատագրումը՝ XIX դարի և նրա ռևոլյուցիայի այդ գաղտնիքը:

Ճիշտ է, այդ սոցիալական ռևոլյուցիան նոր բան չէր, 1848 թ. հնարածը չէր: Շոգին, էլեկտրականությունը և ավտոմատ դազգահներն անհամեմատ ավելի վտանգավոր ռևոլյուցիոներներ էին, քան քաղաքացիներ Բարբեսը, Ռասպայը և Բլանկին: Բայց թեև այն մթնոլորտը, որի մեջ մենք ապրում ենք, մեզանից յուրաքանչյուրիս ճնշում է 20.000 ֆունտ ծանրությամբ, դգո՞ւմ եք արդյոք դուք այդ նույնքան քիչ, որքան քիչ էր եվրոպական հասարակությունը մինչև 1848 թ. զգում այն ռևոլյուցիոն մթնոլորտը, որով նա շրջապատված էր և որը ճնշում էր նրան բոլոր կողմերից:

Առկա է մի մեծ, XIX դարի համար բնորոշ փաստ, որը չի համարձակվի րացասել ոչ մի պարտիա: Մեկ կողմից, կյանքի են արթնացել արդյունաբերական և գիտական այնպիսի ուժեր, որոնց մասին ենթադրել անգամ չէր կարող պատմության նախորդ դարաշրջաններից և ոչ մեկը: Իսկ մյուս կողմից, երևան են գալիս անկման նշաններ, անկում, որ ավելի քան գերազանցում է Հռոմեական կայսրության վերջին ժամանակների այն սարսափները, որոնք բոլորը մտցված են տարեկանությունների մեջ:

Մեր ժամանակում ամեն մի բան կարծես թե հղի է իր հակադրությամբ: Մենք տեսնում ենք, որ մարդկային աշխատանքը կրճատելու և ավելի արդյունավետ դարձնելու հրաշագործ ուժով օժտված մեքենան տանում է դեպի սով ու ուժասպառում: Հարև-

տության նորահնար աղբյուրները շնորհիվ ինչ-որ ճակատագրական կախարհանքի զրկանքների աղբյուր են դառնում: Արվեստի հաղթանակներն ըստ երևույթին գնված են բարոյական հատկությունը կորցնելու գծով: Մարդկությունն ամբողջությամբ վերցրած շարունակ ավելի մեծ իշխանություն է ձեռք բերում բնության վրա, մինչդեռ առանձին մարդը մյուս մարդկանց կամ իր սեփական ստորության ստրուկն է դառնում: Թվում է, որ գիտության մաքուր լույսն անգամ չի կարող այլ կերպ փայլել, քան միայն տգիտության մոայլ ֆոնի վրա: Մեր բոլոր գյուտերը և մեր ամբողջ պրոգրեսը կարծես թե տանում են դեպի այն, որ նյութական ուժերը հոգեկան կյանք են ստանում, իսկ մարդկային կյանքն իջնում է մինչև բոթ նյութական ուժի աստիճանը: Արդի արդյունաբերության ու տգիտության միջև, մեկ կողմից, և, մյուս կողմից, աղքատության ու անկման միջև գոյություն ունեցող այս անտագոնիզմը, մեր դարաշրջանի արտադրողական ուժերի և հասարակական հարաբերությունների միջև գոյություն ունեցող այս անտագոնիզմը մի շղջափելի, ճնշող և անվիճելի փաստ է: Թող պարտիաներից ոմանք ողբան այդ, իսկ մյուսները ցանկանան ազատվել տեխնիկայի ժամանակակից հաջողություններից, միայն թե դրա հետ միասին փրկվեն ժամանակակից կոնֆլիկտներից. ոմանք էլ թող երեվակայեն, որ արդյունաբերության մեջ առաջ եկած այդքան նշանակալից պրոգրեսն անսպասելի պիտի լրացվի քաղաքականության մեջ առաջանալիք նույնքան նշանակալից ռեզրեսով: Մենք մեր կողմից չենք մոլորվում այն նենգ ոգու բնության նկատմամբ, որը շարունակ երևան է գալիս այդ բոլոր հակասությունների մեջ: Մենք գիտենք, որ հակասության նոր ուժերը, որպեսզի հարկ եղած եղանակով աշխատեն, կարիք ունեն միայն մի բանի՝ այդ ուժերին պիտի տիրանան նոր մարդիկ, և այդ նոր մարդիկ բանվորներն են:

Բանվորներն արդիականության նույնպիսի գյուտ են, ինչպես և իրենք մեքենաները: Այն երևույթներում, որոնք իրարանցման մեջ են գցում րուրժուազիային, արիստոկրատիային և ռեզրեսի շարաբաստիկ մարզարևներին, մենք ճանաչում ենք մեր բարի բարեկամի, մեր Ռորին Հուգֆելլոույի\* գործը, այն հին խլուրդի գործը, որն այնքան արագ է կարողանում հողի տակ փորփրել, փառապանծ սակրավորի՝ ռևոլյուցիայի գործը: Անգլիական բանվորներն արդի արդյունաբերության անդրանիկներն են: Եվ նրանք, իհարկե, այս

\* Ցանտաստիկ մի էակ, որն Անգլիայում ըստ 16 և 17-րդ դարերի ժողովրդական հավատալիքների, բարի բարեկամի դեր է խաղում մարդկանց գործերում, Շեքսպիրի «Ամառային գիշերվա բուռն» կատակերգության պիսավոր գործող անձերից մեկն է: Խմբ.:

<sup>1</sup> Խաչիկ Դաշտենց, «Բայրոնը և հայերը», Հայպետհրատ, 1959 թ., էջ 10—13:

արդյունաբերության կատարած սոցիալական ռեֆորմացիան օգնող-ներին վերջինները չեն լինի, այն ռեֆորմացիան, որն ամբողջ աշխարհում նրանց սեփական դասակարգի ազատագրումն է նշանակում և որը նույնքան միջազգային է, որքան կապիտալի տիրապետությունը և վարձու ստրկությունը: Ես գիտեմ այն հերոսական պայքարը, որ մղել են անգլիական բանվորներն անցյալ դարի կեսից, պայքար, որն այնքան էլ հայտնի չէ միայն այն պատճառով, որ բուրժուական պատմաբանները այն թողել են սովորի մեջ և լուծված են մատնել: Կառավարող դասակարգերի շարագործությունների վրեժը լուծելու համար միջին դարերում Գերմանիայում գոյություն ունեւ գաղտնի դատարան, այսպես կոչված «Քեմայի դատարան»: Եթե որևէ տան վրա կարմիր խաչ էր գծագրված, ապա ամենքը հասկանում էին, որ նրա տերը դատապարտված է «Քեմայի» կողմից: Այժմ Եվրոպայի բոլոր տների վրա գծագրված է խորհրդավոր կարմիր խաչը: Ինքը պատմությունն է այժմ դատավորը, իսկ վճիռն ի կատար ածողը՝ պրոլետարիատը:

(Կ. Մարքս, Ֆ. էնգելս, Ընտիր երկեր, հ. I, 1950 թ.,  
Երևան, Հայպետհրատ, էջ 422—424)

### Ֆ. էՆԳԵԼՍ

ՀՍՍՌ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Կ. ՄԱՐՔՍԻ ԳԵՐԵՉՄԱՆԻ ՎՐԱ, ՀԱՅԳԵՑՔԻ ԳԵՐԵՉՄԱՆՈՑՈՒՄ,  
1883 թ. ՄԱՐՏԻ 17-ԻՆ

«Մարտի 14-ին կեսօրից հետո, երեքից քառորդ պակաս, դարեց մտածելուց ժամանակակից մտածողներից խոշորագույնը՝ Նրան մենակ թողեցինք ընդամենը միայն երկու բուրժուական մտնելով սենյակ, մենք գտանք նրան բազկաթոռի վրա հանգիստ քնած. բայց արդեն հավիտենապես:

Եվրոպայի և Ամերիկայի մարտնչող պրոլետարիատի համար, պատմական գիտության համար այդ մարդու մահը անսահման կորուստ է: Արդեն ամենամոտիկ ժամանակում զգալի կդառնա այն դատարկությունը, որը գոյացել է այդ հսկայի մահից հետո:

Այնպես, ինչպես Գարվինը հայտնագործեց օրգանական աշխարհի զարգացման օրենքը, այդպես Մարքսը հայտնագործեց մարդկային պատմության զարգացման օրենքը—այն, մինչև վերջին ժամանակներս իդեոլոգիական շերտերի տակ թաքնված հասարակ փաստը, որ մարդիկ առաջին հերթին պետք է ուտեն, խմեն,

բնակարան ունենան և հագնվեն, նախքան ի վիճակի լինեն զբաղվելու քաղաքականությամբ, գիտությամբ, արվեստով, կրոնով և այլն, որ, հետևաբար, կյանքի անմիջական նյութական միջոցների արտադրությունը և դրանով իսկ ժողովրդի կամ դարաշրջանի տնտեսական զարգացման յուրաքանչյուր տվյալ աստիճանը կազմում են այն հիմքը, որից զարգանում են պետական հաստատությունները, իրավական հայացքները, արվեստը և նույնիսկ տվյալ մարդկանց կրոնական պատկերացումները և որից դրանք հետևապես պետք է բացատրվեն, և ոչ թե ընդհակառակը, ինչպես դա արվում էր մինչև հիմա:

Բայց դա քիչ է: Մարքսը հայտնագործեց նաև արտադրության ժամանակակից կապիտալիստական եղանակի և նրա ծնած բուրժուական հասարակության շարժման առանձնահատուկ օրենքը: Հավելյալ արժեքի հայտնագործումով, անմիջապես այդ բնագավառը մտցվեց պարզություն, այն ժամանակ, երբ ինչպես բուրժուական տնտեսագետների, այնպես էլ սոցիալիստական քննադատների բոլոր նախկին հետազոտությունները եղել են խարխափման խավարի մեջ:

Այդպիսի երկու հայտնագործում բավական կլինեին մեր կյանքի հաճար. երջանիկ կլինեին նա, ում հաջողվեի կատարել նույնիսկ այդպիսի մեկ հայտնագործում: Բայց Մարքսը ինքնուրույն հայտնագործումներ էր անում յուրաքանչյուր բնագավառում, որ նա ուսումնասիրում էր,—անգամ մաթեմատիկայի բնագավառում,— իսկ այդպիսի բնագավառներ շատ էին, և դրանցից ոչ մեկով նա չի զբաղվել մակերեսորեն:

Այդպիսին էր գիտության այդ մարդը: Բայց դա նրա մեջ ամենևին էլ զլխավորը չէր: Գիտությունը Մարքսի համար եղել է պատմական շարժիչ, ռեֆորմացիոն ուժ: Ինչպիսի կենդանի ուրախություն էր որ նրան պատճառեի յուրաքանչյուր նոր հայտնագործումը ամեն մի տեսական գիտության մեջ, որի գործնական կիրառումը նույնիսկ չէր էլ կարելի կանխատեսել,— նրա ուրախությունը միանգամայն այլ էր, երբ խոսքը լինում էր այն հայտնագործման մասին, որն անմիջապես ռեֆորմացիոն ներդրություն էր ունենում արդյունաբերության վրա, ընդհանրապես պատմական զարգացման վրա: Այսպես, նա ամենայն մանրամասնությամբ հետևում էր գյուտերի զարգացմանը էլեկտրականության բնագավառում և վերջին ժամանակներս էլ Մարսել Գեյլերի գյուտերին:

Որովհետև Մարքսը ամենից առաջ ռեֆորմացիոն էր: Այս կամ այն միջոցով մասնակցել կապիտալիստական հասարակության և

նրա ստեղծած պետական հաստատությունների տալիսմանը, մասնակցել ժամանակակից պրոլետարիատի ազատագրության գործին, պրոլետարիատ, որին նա առաջին անգամ տվեց իր սեփական դրությունն ու իր պահանջներն զիտակցումը, իր ազատագրության պայմանների գիտակցումը—ահա ինչ էր իրոք նրա կյանքի կոչումը: Պայքարը նրա տարերքն էր: Եվ նա պայքարում էր այնպիսի կրքով, այնպիսի համառությամբ, այնպիսի հաջողությամբ, ինչպես քչերն են պայքարում:

...Ահա թե ինչու Մարքսը մի այնպիսի մարդ էր, որին ամենից ավելի էին ատում և որին ամենից ավելի էին զրպարտում: Կառավարությունները, — և՛ ինքնակալական, և՛ ռեսպուբլիկական, — արտաքուստ էին նրան, բուրժուաները, — և՛ պահպանողական, և՛ ուլտրադեմոկրատական, — մրցելով՝ նրա գլխին էին թափում զրպարտանք ու անեծքներ: Նա այդ ամենը դեն էր նետում, որպես սարդուտայն, ուշադրություն չդարձնելով դրան, պատասխանելով միայն ծայրահեղ անհրաժեշտության դեպքում: Եվ նա մեռավ հարգված, սիրված, ողբացած միլիոնավոր ռևոլյուցիոն գինակիցների կողմից՝ ամբողջ Եվրոպայում և Ամերիկայում, սիրիրյան հանքերից մինչև Կալիֆոռնիա, և ես համարձակ կարող եմ ասել. նա կարող էր ունենալ շատ հակառակորդներ, բայց հազիվ թե ունեցել է մեկ անձնական թշնամի:

Նրա և՛ անունը, և՛ գործը դարեր կապրեն»<sup>1</sup>:

### ՍՏ. ՇԱՀՈՒՄՅԱՆԻ ԶԱՌԸ

ԲԱՔՎԻ ԳԱՎԱԽԻ ԳՅՈՒԼԱՑԻԱԿԱՆ ՍՈՎԵՏՆԵՐԻ ՀԱՄԱԳՈՒՄԱՐՈՒՄ,  
1918 թ. ՄԱՅԻՍԻ 26-ԻՆ

Թույլ տվեք ինձ, ընկերներ, ողջունել ձեզ ժողովրդական Կոմիսարների Սովետի անունից: Դուք գիտեք, որ մեր այս կառավարությունը, որ կազմվեց վերջերս, ստեղծված է նույն հիմունքներով, ինչպես համառուսաստանյան կառավարությունը, այն է՝ ընտրական հիմունքներով: Եվ ինչպես կենտրոնական ռուսաստանյան, այնպես էլ մեր կառավարությունը ժողովրդական կառավարություն է հանդիսանում, բանվորների և չքավոր գյուղացիների կառավարություն: Մեզ մոտ, Բաքվում, մինչև հիմա կառավարու-

թյան մեջ մտնում էին միայն բանվորների կողմից ընտրված մարդիկ, բայց ընդհանուրի շերտ ցանկությունը, ընդհանուրի երազանքն է եղել նաև գյուղացիների ներկայացուցչությունը:

Եվ ահա, այսօր առաջին ուրախալի օրն է, այն օրը, երբ առաջին անգամ հավաքվել են գյուղացիների ընտրյալները, որպեսզի արտահայտեն իրենց կամքը և մասնակից լինեն իշխանության: Հենց այսօր մենք իմացանք, որ այնպիսի համագումարներ են գնում ամբողջ նահանգում: Շամախու գավառում եղել է համագումար, որին ներկա է գտնվել 285.000 գյուղացիների կամքն արտահայտող 299 դելեգատ: Այս լուրը վերին աստիճանի ուրախալի է, որովհետև նա ցույց է տալիս, որ ամբողջ նահանգով մեկ եռանդուն աշխատանք է կատարվում գյուղացիների կազմակերպման ուղղությամբ, որ ամենուրեք ակտիվ գործունեության են ելնում լայն մասսաներ: Եվ ես հույս եմ հայտնում, որ մենք շուտով կաեսենք այդ աշխատանքի արդյունքը, որ ամբողջ նահանգում շուտով կլինի մեկ կառավարություն—բանվորների և գյուղացիների կառավարություն: Բաքվի Սովետը մինչև այժմ միակ անկյունն էր, ուր լայնանում ու ամրապնդվում էր Սովետական իշխանությունը: Մենք հույս ունենք, որ Բաքվի Սովետի աշխատանքը կտարածվի ամբողջ Անդրկովկասում, կմիավորի բոլոր ազգությունների գյուղացիներին և դրա հետևանքով մեզ կտա բանվոր-գյուղացիական կառավարություն: Այս հույսը ամրապնդում է մեր ուժերը, մեզ հնարավորություն է տալիս պայքարելու մեր բազմաթիվ թշնամիների դեմ:

Բայց մնացած Անդրկովկասում իշխանությունը պատկանում է բեգերին, խաներին և հայ բուրժուազիային: Այդ իշխանությունը վստահություն չի վայելում գյուղացիական շքավորության մեջ, թեև նրա կողմնակիցներն աշխատում են հավատացնել, թե իրենք հանդիսանում են շքավորության շահերի պաշտպանները, նրանք կայացուցիչները: Բայց այս տարվա սկզբին Ելիզավետպոլի նահանգում եղած ազարային շարժումը բոլորովին հակառակն է ցույց տալիս, այն է՝ ժողովրդի լիակատար անվստահությունը դեպի այդ իշխանությունը: Մուսուլման գյուղացիներն ասում էին, որ իրենք իրենց կալվածատերերին, բեգերին ու խաներին սպանում են թուրքերի գալուց վախենալու պատճառով, տրոնք բեգերի ու խաների շահերի պաշտպան կկանգնեն և գյուղացիների գրաված հողերը կվերադարձեն նրանց, ու այն ժամանակ բեգերն ու խաները դարձյալ կիշխեն իրենց՝ գյուղացիների վրա:

Նրանք դժգոհ էին նաև Սահմանադիր ժողովի ընտրություններից՝ ասելով, որ իրենց խաբել են. բայց երբ գյուղացիներն

<sup>1</sup> «Էխոլոգիաների Մարքսի և Էնգելսի մասին», Երևան, 1958 թ., էջ 397—399:

իրենք են ասում, որ բեգերն ու խաները նրանց թշնամիներն են. ապա ինչպես կարելի է պնդել, թե հենց այդ բեգերն ու խաները գյուղական շրջավորության շահերի պաշտպաններն են:

Եվ այժմ մեր գլխավոր խնդիրն է՝ ոտքի հանել այդ գյուղացիներին, նրանց ներգրավել մեր ընդհանուր թշնամիների դեմ ուղղված պայքարում, ինչպես նաև նրանց ներգրավել այստեղ՝ Անդրկովկասում բանվորների և գյուղացիների միասնական կառավարություն ստեղծելու աշխատանքում:

Բոլոր գավառներում հայ և մուսուլման գյուղացիների միջև լիակատար միաբանություն է նկատվում. նրանք գիտակցում են, որ իրենց ընդհանուր թշնամին կալվածատերերն են: Եվ այն թըշնամությունը, որի մասին խոսում են, ամենեին էլ չի բխում մասսաների առանձին տրամադրությունից, նրանց մեկը մյուսին շփրելուց, այլ՝ բեգերի, խաների ու հայ բուրժուազիայի սերմանած թշնամության հետևանքն է հանդիսանում: Գյուղացիներն ինքնին, ինչ ազգության էլ որ պատկանեն, չեն կարող թշնամարար վերաբերվել միմյանց, որովհետև ունեն ընդհանուր շահեր, ընդհանուր թշնամիներ: Եվ Սովետական իշխանության խնդիրն է միավորել բոլոր ազգությունների գյուղացիական մասսաներին, որպեսզի նրանց դուրս բերի ընդհանուր թշնամու՝ կալվածատիրոջ դեմ: Եվ ահա այստեղ, այս ժողովում՝ մենք այդ միավորման հիմքի առաջին քարն ենք դնում:

Առաջինը, որ պահանջվում է բանվոր-գյուղացիական կառավարությունից, դա կալվածատիրական իշխանության ոչնչացումն է, հողի գրավումը խոշոր հողատերերից և նրա հանձնումը շրջավորության: Մեր գավառում չկան կալվածատերեր, որոնց հողերը կարելի լիներ հանձնել գյուղացիներին: Այստեղ դրությունը բոլորովին այլ է: Մեր գավառում գլխավոր հարստությունը նավթաբեր հողերն են: Դրանք անմիջականորեն բնակչությանը հանձնել անկարելի է, այդ հողերը համապետական սեփականություն պետք է լինեն:

Բայց թեև այդ առաջին խնդիրն անմիջականորեն չի վերաբերվում անձամբ ձեզ, այնուամենայնիվ դուք պետք է նպաստեք ամբողջ նահանգում այդ խնդրի իրագործմանը:

Այն հանգամանքը, որ դուք գտնվում եք արդյունարերական ռայոնում, ձեզ դնում է առանձնահատուկ պայմանների մեջ, այն է՝ դա նպաստում է ձեր շահերի և պրոլետարիատի շահերի ընդհանրությունը հասկանալուն, նպաստում է ձեր և բանվորների միջև ավելի ամուր կապ հաստատելուն: Դուք պետք է աշխատեք ամրապնդել այդ կապը, միավորվել բանվոր դասակարգի հետ

որպեսզի նրա հետ միասին Անդրկովկասում տարածեք և ամրապնդեք Սովետական իշխանությունը:

Թեև մեզ մոտ այժմ իշխանությունը տեղական է, ընտրովի, այնուամենայնիվ չի կարելի մոռանալ մեր իշխանության սերտ կապը համառուսաստանյան իշխանության հետ, որին դուք պետք է օժանդակեք բանվոր դասակարգի հետ միասին: Իր հերթին դուք կենտրոնական իշխանությունից օգնություն կստանաք ձեր տեղական պայքարում:

Այստեղ, Անդրկովկասում, Սովետական իշխանության համար մղվող պայքարում դեռևս նորանոր բարգուժյուններ են սպասում մեզ: Առաջվա կարգը վերադարձնելու համար, գյուղացիներին ենթարկելու համար բեգերն ու խաները օգնության են կանչում Քուրդիային: Եվ եթե մենք թշնամուն հակահարված չտանք, ապա մեզ Ուկրաինայի վիճակն է սպասում, որտեղ, ինչպես դուք գիտեք, գերմանացիներն արդեն կալվածատերերի իրավունքների պաշտպան են կանգնել, արդեն էլի ստրկացրել են գյուղացիներին:

Հանուն հաղթանակի մեր թշնամիների դեմ՝ ես ձեզ կոչ եմ անում շենթարկվել պրոլետարիոն ազիտացիային, որը ձեր մեջ կսերմանի ազգային թշնամություն, մեկուսացում բանվոր դասակարգից: Դուք շպետք է հավատար իմամին, որը ձեզ կոչ է անելու զեպի ձեր ազգության, ձեր կրոնի պաշտպանությունը, նա այդ անելու է հանուն ոչ ձեր շահերի, այլ հանուն բեգերի ու խաների շահերի:

Դուք պետք է միավորվեք բանվորների ու հայ գյուղացիների հետ՝ Սովետական իշխանությունը պաշտպանելու համար: Որպես միասնական ընտանիք, որպես միասնական բանակ, դուք պետք է զինված ուժով պաշտպանեք բանվոր-գյուղացիական կառավարությունը բեգերից ու խաներից և նրանց պաշտպան թուրքիայից<sup>1</sup>:

### ՅԱ. Մ. ՍՎԵՐԴԼՈՎԻ ՃԱՌՉ

ՀԱՄԱՌՈՒՍԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆԻՆՈՒՄԻ ՆՈՍՈՒՄ,

1918 թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2-ԻՆ

Համառուսական Կենտրոնական Նիստը հայտարարում եմ օացված:

Նախքան մեր այսօրվա նիստի օրակարգին անցնելը, ես մի քանի խոսքով ուզում եմ հիշեցնել այն, ինչն առանց այն էլ հաս-

<sup>1</sup> Ստ. Եանուվյան, «Հողվածներ և ճոռեր», Երևան, 1953 թ., էջ 351—354:

տատապես հիշում է այստեղ ներկա գտնվողներից յուրաքանչյուր-  
որը Ամենից առաջ ես կհիշեցնեմ ընկ. Ուրիցկու սպանությունը  
Պետրոգրադում և Համառուսական Կենտգործկոմիին կառաջարկեմ  
հոտնկայս հարգել մեր հիանալի ընկերոջ հիշատակը: Ես չեմ խո-  
սի այն բանի մասին, թե որքան թանկ է մեզ համար ընկեր Ուրից-  
կու հիշատակը, չեմ խոսի մեր բանվորական շարժմանը նրա մա-  
տուցած հսկայական ծառայությունների մասին: Մենք բոլորս գի-  
տենք, որ ընկ. Ուրիցկին երկու տասնյակ տարուց ավելի պատվով  
պատասխանատու պաշտոններ էր գրավում մեր պարտիայի շար-  
քերում: Ընկ. Ուրիցկու սպանությունն, անկասկած, խոշոր կորուստ  
պատճառեց մեր պարտիային, բայց մենք կարող ենք հավատա-  
ցած լինել, որ պրոլետարական մասսաները, որոնք մինչև այժմ  
իրենց շրջանից փալուռ աշխատողներ են առանձնացրել սոցիա-  
լիզմի գործի համար, կկարողանան տասնյակ ու հարյուրավոր նոր  
ընկերներ դնել այն պաշտոններին, որոնցից հանվում են մեր լա-  
վագույն աշխատողները: Ես ինձ թույլ կտամ մի քանի խոսքով  
հիշեցնելու այն դեպքերը, որոնք տեղի ունեցան հենց նույն օրը:  
Պետրոգրադում ընկ. Ուրիցկու սպանությունից մի քանի ժամ հետո  
այստեղ ես, Մոսկվայում, մահափորձ կատարվեց ընկեր Լենինի  
դեմ, համաշխարհային բանվորական շարժման ղեկավարի վրա:  
Այստեղ կարիք չկա, որ խոսեմ ընկեր Լենինի մատուցած ծառա-  
յությունների և նշանակության մասին: Ձեզանից յուրաքանչյուրն  
աճել և իրրև ունեցողներ՝ աշխատանքով ղբաղվել է միշտ ընկեր  
Լենինի ղեկավարությամբ: Դուք գիտեք, որ ընկեր Լենինին մենք  
ոչ ոքով չենք կարող փոխարինել: Ես ուզում եմ հիշեցնել, որ եթե  
ներկայումս մենք զրկված ենք ընկեր Լենինի ղեկավարությունից,  
ապա հույս ունենք, որ մենք զրանից զրկված կլինենք ամենակարճ  
ժամանակամիջոցով, և հույս ունենք, որ ամենամոտ ժամանակում  
մեր առաջնորդը կգրավի իր պաշտոնն ու առաջվա սկս կաշխատի  
հօգուտ սոցիալիստական ունեցողների, ինչպես աշխատել է իր  
ամբողջ կյանքում: Ես Համառուսական Կենտգործկոմիին կառաջար-  
կեի ընդունել հետևյալ բանաձևը. «Համառուսական Կենտրոնական  
Գործադիր Կոմիտեն խորին զայրույթ է հայտնում այն զազրելի  
մահափորձի առթիվ, որ կատարեց կոնտրոլուցիայի ազենտը  
բանվոր դասակարգի ու գյուղացիական շրջավորության առաջնոր-  
դի, ընկեր Լենինի, համայն աշխարհում արդի ունեցողն սո-  
ցիալիզմի ամենականավոր ներկայացուցչի կյանքի դեմ: Համա-  
ռուսական Կենտգործկոմը նրան ցանկություն է հղում, որ առող-  
ջանա շուտափույթ կերպով: Համաշխարհային պրոլետարիատի  
համար այս ամենաթանկարժեք կյանքի դեմ կատարված անլուր

ոտնձգությունը նախապատրաստված է սոցիալիզմի ունեգատների  
դավաճանական ազիտացիայով, ներշնչված է սևհարյուրակայնու-  
թյան կողմից և վարձատրված է անգլո-Ֆրանսիական իմպերիա-  
լիզմի ոսկով:

Ռուսաստանի կոնտրոլուցիան, որին ղեկավարում են աչ  
էսենների պարտիան և զենեբալ Ալեքսեևի շտաբը, ուզում էր ի  
դեմս ընկեր Լենինի ջախջախել Հոկտեմբերյան ունեցողների մեծ  
նվաճումները և ծանր հարված հասցնել բանվոր դասակարգին:

Համառուսական Կենտգործկոմը խորապես հավատացած է, որ  
բուրժուազիայի վարձկանների հանցագործ ոտնձգությունները շփո-  
թություն չեն մտցնի ունեցողներին պրոլետարիատի շարքերը և չեն  
թուլացնի սոցիալիստական հասարակարգը հաստատելու և կոնտր-  
ոլուցիան ոչնչացնելու համար մղվող պայքարը:

Համառուսական Կենտգործկոմը աշխատավոր մասսաներին  
կոչ է անում ամրապնդել իրենց կաղմակերպությունները: Դրա հետ  
մեկտեղ Համառուսական Կենտգործկոմը հանդիսավոր նախազգու-  
շացում է տալիս Ռուսաստանի և դաշնակից բուրժուազիայի բոլոր  
ճորտերին, զգուշացնելով նրանց, որ սովետական իշխանության  
գործիչների և սոցիալիստական ունեցողների գաղափարները կրող-  
ների դեմ կատարված ամեն մի մահափորձի համար պատասխան  
են տալու բոլոր կոնտրոլուցիոններները և նրանց բոլոր ոգեշնչ-  
չողները: Բանվոր-գյուղացիական իշխանության թշնամիների  
սպիտակ տեռորին բանվորներն ու գյուղացիները կպատասխանեն  
մասսայական կարմիր տեռորով՝ ընդդեմ բուրժուազիայի ու նրա  
գործակալներին»:

Թույլ տվեք քվեարկության դնելու այս բանաձևը: Ով կողմնա-  
կից է, խնդրում եմ ձեռք բարձրացնի: Ո՞վ է դեմ: Այդպիսիք չկան:  
Ընդունվեց միաձայն<sup>1</sup>:

## Վ. Ի. ԼԵՆԻՆ

ՃԱՌ՝ ՈՎ(Թ)Պ VIII ՀԱՄԱԳՈՒՄՍՈՒ ՓԱԿՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ,  
1919 թ. ՄԱՐՏԻ 23-ին

Ընկերներ, մեր օրակարգն սպառված է: Այժմ թույլ տվեք  
ինձ համագումարի աշխատանքների վերջանալու կապակցությամբ  
մի քանի խոսք ասել:

1 Յա. Մ. Սվերդլով, «Ընտիր հողվածներ և ճառեր», Սրևան, 1941 թ., էջ  
129—131:

Ընկերներ, մենք հավաքվեցինք ծանր բուսեում ոչ միայն այն պատճառով, որ կորցրինք մեր լավագույն կազմակերպիչ և գործնական ղեկավար Յակով Միխայլովիչ Սվերդլովին: Մենք հավաքվեցինք հատկապես ծանր բուսեում այն պատճառով, որ միջազգային իմպերիալիզմը,—այժմ այս բանում արդեն բոլորովին կասկածներ չկան,—Սովետական ռեսպուբլիկան ճգմելու վերջին, հատկապես ուժեղ փորձն է անում: Մենք կասկածներ չունենք, որ ուժեղացրած հարձակումն արևմուտքից և արևելքից, մի ամբողջ շարք սպիտակագլարդիական ապստամբությունների հետ միաժամանակ, մի քանի տեղերում երկաթուղիները քանդելու փորձերով հանդերձ,— որ այդ բոլորը Համաձայնության իմպերիալիստների միանգամայն պարզ մտածված և ակնհերևորեն Փարիզում վճռված քայլն է: Ընկերներ, բոլորս գիտենք, թե ինչպիսի դժվարություններով Ռուսաստանը, որ դիմացել էր չորսամյա իմպերիալիստական պատերազմին, պետք է նորից զենքի դիմեր, որպեսզի Սովետական ռեսպուբլիկան պաշտպաներ գիշատիչ-իմպերիալիստներից: Բոլորս գիտենք, թե ինչպես ծանր է այս պատերազմը, թե ինչպես նա մեզ ուժասպառում է: Բայց մենք գիտենք նույնպես, որ եթե այս պատերազմը բարձր եռանդով է մղվում, բարձր հերոսություններ, ապա միայն այն պատճառով, որ աշխարհում առաջին անգամ է ստեղծված մի բանակ, զինված ուժ, որը գիտե, թե ինչի համար է կռվում, և աշխարհում առաջին անգամ բանվորները և գյուղացիները, որ անհավատալիորեն ծանր զոհաբերություններ են անում, պարզ գիտակցում են, որ իրենք պաշտպանում են Սովետական սոցիալիստական ռեսպուբլիկան, աշխատավորների իշխանությունը կապիտալիստների նկատմամբ, պաշտպանում են համաշխարհային պրոլետարական սոցիալիստական ռեոլյուցիայի գործը:

Այս դժվար պայմաններում մեզ հաջողվեց կարճ ժամանակամիջոցում շատ խոշոր դործ անել: Մեզ հաջողվեց հաստատել, և ընդամին միաձայն,— ինչպես և համագումարի բոլոր էական որոշումները,— մեզ հաջողվեց հաստատել ծրագիրը: Մենք համոզված ենք, որ այն, չնայած բազմաթիվ խմբագրական և այլ թերություններին, արդեն մտել է III Ինտերնացիոնալի պատմության մեջ իբրև մի ծրագիր, որը պրոլետարիատի համաշխարհային ազատագրական շարժման նոր էտապի հանրագումարներն է տալիս: Մենք համոզված ենք, որ մի ամբողջ շարք երկրներում, որտեղ մենք շատ ավելի մեծ շափով դաշնակիցներ և բարեկամներ ունենք, քան մենք գիտենք, մեր ծրագրի սոսկ թարգմանությունը լավագույն պատասխանը կլինի այն հարցին, թե ի՞նչ է արել Ռուսաստանի

Կոմունիստական պարտիան, որը համաշխարհային պրոլետարիատի մեծ ջոկատն է ներկայացնում: Մեր ծրագիրը պրոպագանդայի և ագիտացիայի համար ամենուժեղ նյութը կլինի, այն փաստաթուղթը կլինի, որի հիման վրա բանվորները կասեն. «Այստեղ մեր ընկերներն են, մեր եղբայրները, այստեղ մեր ընդհանուր գործն է արվում»:

Ընկերներ, այս համագումարում մեզ հաջողվեց անցկացնել նաև այլ կարևորագույն որոշումներ: Մենք հավանություն տվեցինք III, Կոմունիստական Ինտերնացիոնալի ստեղծմանը, որը հիմնված է այստեղ, Մոսկվայում: Մենք համերաշխ որոշման հանգեցինք ռազմական հարցի նկատմամբ: Ինչքան էլ որ սկզբում մեծ էին ռազմական հարաձայնությունները, ինչքան էլ որ շատ ընկերների կարծիքում տարաձայնությունները, ինչքան էլ որ շատ ընկերների կարծիքները հակասական էին, որոնք լիակատար անկեղծությամբ այստեղ արտահայտվում էին մեր ռազմական քաղաքականության թերությունների մասին,— մեզ շափաղանց հեշտությամբ հաջողվեց բացարձակ միաձայն որոշման հանգել հանձնաժողովում, և մենք այս համագումարից կհեռանանք՝ համոզված, որ մեր գլխավոր պաշտպանը, Կարմիր Բանակը, որի համար ամբողջ երկիրը այսպիսի անհաշիվ զոհաբերություններ է անում,— որ նա հանձին համագումարի բոլոր անդամների, հանձին պարտիայի բոլոր անդամների ամենաջերմ, նրան անսահման նվիրված օգնականներ, ղեկավարներ, բարեկամներ և աշխատակիցներ կգտնի:

Ընկերներ, կազմակերպական հարցի վերաբերյալ մեր առաջ կանգնած պրոբլեմները մենք այդպես հեշտ լուծեցինք, որովհետև պարտիայի ղեկի Սովետներն ունեցած հարաբերությունների պատմությունը նշել էր այդ բոլոր որոշումները: Մենք միայն հանրագումար տվեցինք: Գյուղում կատարվող աշխատանքի հարցի վերաբերյալ համագումարի միահամուռ և արագ նորոշումով մենք գիծ նշեցինք հատկապես անհրաժեշտ և հատկապես դժվար հարցում, որը մյուս երկրներում նույնիսկ անլուծելի է համարվում,— բուրժուազիային տապալած պրոլետարիատի՝ բաղամիլիոն միջակ գյուղացիության նկատմամբ ունենալիք վերաբերմունքի հարցում: Մենք բոլորս համոզված ենք, որ համագումարի այդ բանաձևը կամրացնի մեր իշխանությունը: Այն ծանր ժամանակում, որ մենք ապրում ենք, երբ իմպերիալիստները Սովետական իշխանությունը բռնությամբ տապալելու վերջին փորձն են անում, երբ պարենավորման սուր կարիքը, երբ տրանսպորտի քայքայումը նորից ուսահատական դրության մեջ են դնում,— մենք համոզված ենք, որ այս ծանր ժամանակում այն բանաձևը, որ մենք ընդունեցինք, այն

ողին, որով խանդավառված էին համագումարի անդամները, կօգնեն այս փորձությունը դիմանալու, կօգնեն այս ծանր կիսամյակից գուրս գալու:

Մենք համոզված ենք, որ սա կլինի վերջին ծանր կիսամյակը: Մեզ այս համոզմունքի մեջ հատկապես ամրացնում է այն լուրը, որ այս օրերին մենք հաղորդեցինք համագումարին — Հունգարիայում պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակի լուրը: Եթե մինչև այժմ Սովետական իշխանությունը հաղթում էր միայն ներսում, նախկին Ռուսաստանի կայսրության կազմում մտած ժողովուրդների մեջ, եթե մինչև այժմ կարճատես մարդիկ, որոնք առանձնապես դժվար են բաժանվում ռուտինայից, մտքի հին սովորություններից (թեկուզ և նրանք սոցիալիստների լազերին պատկանեն) կարող էին կարծել, որ միայն Ռուսաստանի առանձնահատկություններն առաջ բերեցին այս անսպասելի շրջադարձը դեպի պրոլետարական սովետական դեմոկրատիան, որ այս դեմոկրատիայի առանձնահատկություններում, ինչպես ծուռ հայելիում, գուցե, ցարական Ռուսաստանի հին առանձնահատկություններն են արտացոլվում, — եթե այսպիսի կարծիքը դեռ կարող էր դիմանալ, ապա այժմ դա հիմնովին խորտակված է: Ընկերներ, այսօր ստացված տեղեկությունները տալիս են մեզ հունգարական ռևոլյուցիայի պատկերը: Մենք այսօրվա հաղորդագրություններից իմանում ենք, որ դաշնակից տերությունները Հունգարիային ամենագազանային ուլտիմատում են ներկայացրել գործեր անցկացնելու թուլյությունների մասին: Բուրժուական կառավարությունը տեսնելով, որ դաշնակից տերությունները ցանկանում են իրենց ղորքերն անցկացնել Հունգարիայի միջով, տեսնելով, որ դարձյալ Հունգարիայի վրա ընկնում է նոր պատերազմի շլված ծանրությունը, — բուրժուական-համաձայնողական կառավարությունն ինքն է՝ հրաժարվել, ինքն է բանակցությունների մեջ մտել կոմունիստների, բանտերում գտնված հունգարական ընկերների հետ, և ինքն է ընդունել, որ այլ ելք չկա, քան իշխանությունն աշխատավոր ժողովրդին հանձնելը: (Մափաճարություններ):

Ընկերներ, եթե մեր մասին ասում էին, որ մենք զավթիչներ ենք, եթե 1917 թվականի վերջին և 1918 թվականի սկզբին բուրժուազիան և նրա շատ կողմնակիցներ մեր ռևոլյուցիայի վերաբերմամբ ուրիշ բառեր չունեին, քան «բռնություն» և «զավթում», եթե մինչև այժմ ձայներ են լսվում, որոնց ամբողջ անմտությունը մենք շատ անգամ ենք ապացուցել, որ իբր թե բոլշևիկյան իշխանությունը բռնությամբ է դիմանում, եթե այսպիսի անհեթեթությունը կարելի էր առաջներում կրկնել, — ապա այժմ Հունգարիայի օրինակը

հարկադրում է, որ այդպիսի խոսակցությունները լռեն: Նույնիսկ բուրժուազիան տեսավ, որ չի կարող այլ իշխանություն լինել, բացի Սովետների իշխանությունից: Ավելի կուլտուրական երկրի բուրժուազիան ավելի պարզ տեսավ, քան մեր բուրժուազիան հոկտեմբերի 25-ի նախօրյակին, որ երկիրը կործանվում է, որ շարունակ ավելի և ավելի ծանր փորձություններ են գալիս ժողովրդի գլխին, — նշանակում է՝ իշխանությունը պետք է Սովետների ձեռքին լինի, նշանակում է՝ Հունգարիայի բանվորները և գյուղացիները, նոր սովետական պրոլետարական դեմոկրատիան պետք է փրկի երկիրը:

Ընկերներ, հունգարական ռևոլյուցիայի դժվարությունները հսկայական են: Ռուսաստանի համեմատությամբ այս փորձիկ երկիրը շատ ավելի հեշտ կարող է խեղդվել իմպերիալիստների կողմից: Բայց ինչպիսին էլ լինեն Հունգարիայի առաջ անկասկած դեռ կանգնած դժվարությունները, մենք այստեղ, բացի Սովետական իշխանության հաղթանակից, քառոչյակն հաղթանակ ունենք: Ամենաարմատական, ամենից ավելի դեմոկրատական, համաձայնողական բուրժուազիան ընդունեց, որ մեծագույն ճգնաժամի մոմենտում, երբ պատերազմից ուժասպառված երկրի վրա նոր պատերազմ է վրա հասնում, Սովետական իշխանությունը պատմական անհրաժեշտություն է հանդիսանում, ընդունեց, որ այդպիսի երկրում չի կարող այլ իշխանություն լինել, բացի Սովետների իշխանությունից, բացի պրոլետարիատի դիկտատուրայից:

Ընկերներ, մեր թիկունքում կանգնած են մի ամբողջ շարք ռևոլյուցիոներներ, որոնք իրենց կյանքը զոհեցին Ռուսաստանի ազատագրության համար: Այդ ռևոլյուցիոն գործիչների մեծամասնությունը ծանր բախտ վիճակվեց: Նրանց բաժին ընկան ցարիզմի հալածանքները, նրանք հալածական ռևոլյուցիային ներկա լինելու երջանկությունը չունեցան: Իսկ մեզ էլ՝ ավելի բարձր երջանկություն է բաժին ընկել: Մենք ո՛չ միայն մեր ռևոլյուցիայի հաղթանակը տեսանք, մենք ո՛չ միայն տեսանք, թե ինչպես նա շլված դժվարությունների մեջ ամրացավ և իշխանության նոր ձևեր ստեղծեց, որոնք ամբողջ աշխարհի համակրանքը դեպի մեզ են գրավում, այլ և մենք տեսնում ենք նույնպես, որ ռուսական ռևոլյուցիայի ցանած սերմը ծլում է Եվրոպայում: Այս մեր մեջ բացարձակ անհողողող վստահություն է ստեղծում, որ ինչքան էլ ծանր լինեն այն փորձությունները, որ դեռ կարող են մեր վրա թափվել, ինչքան էլ մեծ լինեն այն աղետները, որ դեռ կարող է բերել մեզ միջազգային իմպերիալիզմի շունչը գազանը, — այդ գազանը

կիրթմանը, և սոցիալիզմը կհաղթանակի ամբողջ աշխարհում: (Երկարատև ծափահարություններ):

Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի VIII համագումարը հայտարարում էմ փակված<sup>1</sup>:

#### Գ. Կ. ՕՐՋՈՆԻԿԻՉԵ

ՀԱՍ. ԲԱՔՎԵ ՍՈՎԵՏԻ ՀԱՆՐԱՊԵՏԱՎՈՐ ԵՒՏՏՈՒՄ, ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՍՈՎԵՏԱԿԱՆԱՑՄԱՆ ԱՌԹԻՎ,  
1920 թ. ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 1-ԻՆ

Հնկերնե՛ր: Գծվար թե որևէ տեղ կարելի լինի գտնել ավելի երջանիկ մի դահլիճ, քան այս դահլիճն է: Ինչ-որ յոթ ամսվա ընթացքում այս դահլիճի պատերի ներսում շտտ անգամ են հավաքվել Բաքու քաղաքի բանվորները՝ հանդիսավոր տոների համար:

Այսօր, հենց այս դահլիճում, Բաքվի պրոլետարիատը ողջունում է Հայկական սովետական ռեսպուբլիկայի ծնունդը: (Ծափահարություններ):

Բազմաշարժար հայ ժողովուրդը, Հայաստանի աշխատավոր մասսաները դաշնակների կառավարման շնորհիվ նետված էին իմպերիալիստական պատերազմի հորձանքի մեջ՝ այդ պատերազմի բոլոր սարսափներով: Այդ ժողովուրդը ներկայումս բարձրացնում է ապստամբության կարմիր դրոշը և մեզ հետ միանում սովետական իշխանության կարմիր դրոշի աակ: Ավելի մեծ հաղթանակ մենք չէինք կարող սպասել: Ամեն մի ժողովուրդ, որը պարաստվում է ազատագրվել դարավոր ճնշումից, այսուհետև բարձրացնում է սովետական իշխանության դրոշը, որովհետև մեր դրոշը՝ այդ ճնշվածների դրոշն է: Ամեն մի ճնշված ժողովուրդ, ամեն մի ճնշված աշխատավոր դասակարգ բարձրացնում է այդ դրոշը և դնում մեզ հետ միասին: Մուսուլմանական Արևելքը, որը մի ժամանակ գնում էր Մեքքա՝ Մահմեդի գերեզմանը երկրպագելու, այժմ իր ձեռքը պարզում է և իր հայացքն ուղղում դեպի Մոսկվայի Կրեմլը, որովհետև այնտեղ է Սովետական իշխանության օրրանը, համաշխարհային ռևոլյուցիայի օջախը: Այդ ժողովուրդներն իրենց ազատագրում են փնտրում Անգլիայի, Ֆրանսիայի և այլ պետությունների անիծյալ իմպերիալիստների լծից և ընդառաջ են գնում Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի անշահախնդիր ռևոլյուցիային:

Հնկերնե՛ր: Սովետական Ադրբեջանը, որն այսօր հանդես եկավ հանձինս ընկեր Նարիմանովի, ամբողջ աշխարհին և ամենից առաջ Հայաստանի բանվորներին և գյուղացիներին ապացուցեց, որ միայն սովետական իշխանությունն է ընդունակ լուծելու ազգամիջյան թշնամանքի հետ կապված այն անիծյալ հարցերը, որ կային այստեղ և որոնք շատ են ամբողջ աշխարհում...

Ջանգեզուր, Նախիջևան և Ղարաբաղ անունները այդ խոսքերի բովանդակությանն անձանոթ ռուս մարդու ականջին բացարձակապես ոչինչ չեն ասում: Ինչ-որ Ջանգեզուր՝ անբերրի լեռներ, ո՛չ հաց կա, ո՛չ ջուր: Այնտեղ ո՛չինչ չկա: Ինչ-որ Նախիջևան՝ ճահիճ, մալարիա, և ուրիշ ոչինչ: Ինչ-որ Լեռնային Ղարաբաղ: Ի՞նչ կա այդ Ղարաբաղում: Ոչինչ չկա: Եվ ահա ընկ. Նարիմանովին ասում է. «Իրանք ձեզ վերցրեք: Այդ անբերրի հողերը վերցրեք Հայաստանի համար»: Կարծես թե Սովետական Ադրբեջանն ազատվում է մի ավելորդ բեռից: Բայց ո՛չ: Այդ գավառներում, այդ անբերրի հողերի մեջն է կայանում, այստեղ Անդրկովկասում, այսպես կոչված հայ-մուսուլմանական հարցի հանգույցը, այն հարցի, որը դարձավ սարսափների աղբյուր, այն հարցի, որը մուսուլման աշխատավորին նետում էր հայ աշխատավորի վրա... 1905 թվականից սկսած թափվում է այդ դժբախտ ժողովուրդների արյունը: Հազարավոր մարդիկ ոչնչանում էին անխղճորեն: Ես ինքս վկա էի, թե ինչպես դժբախտ մանուկներին, որոնք ոչ ոքի վնաս չէին տվել, գցում էին անդունդը և ինչպես դժբախտ, անպաշտպան կանանց գցում էին հորերը, որ այնտեղ սարսափելի տանջանքների մեջ նրանք մեռնեին: Այսպես էին անում մուսուլմանները՝ մուսավաթականների առաջնորդությունը և հայերը՝ դաշնակների առաջնորդությամբ:

Եվ ահա այսօր Ադրբեջանական ռեսպուբլիկայի ղեկավարը հանդես է գալիս ու ասում. «Այդ սարսափելի հարցն այլևս գոյություն չունի: (Աղմկալից ծափահարություններ): Այլևս թշնամանք չկա մուսուլմանների և հայերի միջև: Մուսուլմաններն ու հայերը, այդ աշխատավորները, այսուհետև դառնում են հարազատ եղբայրներ՝ Սովետական իշխանության կարմիր դրոշների տակ»: (Ծափահարություններ): Այստեղ կարդացված այս ակտը մեծագույն կարևորություն ունեցող ակտ է, սա պատմական մի ակտ է, որը մարդկության պատմության մեջ իր օրինակը չունի:

Հնկեր Լենինին ուղղված Հայկական ռեկոմի քաղաքական հեռագրում ասվում է, որ Հայաստանի աշխատավորները բարձրացրել են ապստամբության դրոշը: Ե՛րևան, ընկերներ, ավելին գիտենք, քան բովանդակում է այդ փոքրիկ հեռագրի մեջ. Հայաստանի մեզ սահմանակից շրջանների գյուղացիները երաժշտությամբ

<sup>1</sup> Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 29, էջ 263—268:

մոտենում էին մեր սահմաններին և ասում. «Կարմիրքանակային եղբայրներ, հասել է Հայաստանում բանվորա-գյուղացիական իշխանության հաղթական ժամը, եկեք, օգնեցեք մեզ»։ Այդ ժամին մեր կոմունիստ ընկերները կանգնում են Հայաստանի իշխանության գլուխը։ Ոչ մի ուրիշ պարտիա, ոչ մենշևիկյան, ոչ էսեռական, ոչ դաշնակցական-մուսավաթական, ոչ ո՛ր, միայն Կոմունիստական պարտիան է ընդունակ բարձր պահել կարմիր դրոշը և ժողովուրդներին տանել իր հետևից։ Ոչ ո՛ր, բացի մեր Կոմունիստական պարտիայից, չի կարողացել և չի կարողանա փրկել բանվորների և գյուղացիների Հայաստանը։ (Բուռն ծափահարություններ)։ Մենք գիտենք, ընկերներ, թե ինչպես հեշտ չէ Սովետական իշխանություն կառուցելը։ Է՛լ ավելի դժվար է, միլիոն անդամ ավելի դժվար է այդ իշխանությունը կառուցել այստեղ՝ տանջված, ծվատված Հայաստանում, որը քիչ է մնացել վերածվի գաղթականների ռեսպուբլիկայի։ Մենք գիտենք, որ մեր երիտասարդ ընկերները հարկադրված կլինեն թափափվել դժվարություններ հաղթահարելու։ Բայց թող նրանք պատվով գնան դեպի սքանչելի սոցիալիստական կարգերը տանող ուղիով, մի ուզի, որ ծածկված է ոչ թե վարդերով, այլ տատակներով, և թող նրանք իմանան, որ մեր ամբողջ էներգիան, մեր բոլոր ուժերը կնվիրենք նրանց օգնելու գործին։ (Ծափահարություններ) 1:

### ԱԼԵՔՍԱՆԻՐ ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ՃԱՌԸ

ԶԿ ԵՐԵՎԱՆԻ ԿՈՉՄԱԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՉԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՑՅԱԼ ԶԱՆԻՍԱՎՈՐ ՆԻՍՏՈՒՄ, 1921 Թ. ՄԱՅԻՍԻՆ  
(նստված)

...Մեր նոր գիծը ավելի շեշտակի պիտի ընդգծենք Հայաստանի համար։ Մենք պիտի աշխատենք ավելի մեղմ միջոցներով։ Դրությունը ուրիշ է, քան Ռուսաստանում։ Ռուսաստանում կար խոշոր բուրժուազիա, դասակարգային շերտավորումը մեծ էր։ Հայաստանում խոշոր բուրժուազիա չկա, ինտելիգենցիան ուրիշ բնույթ է կրում, քան Ռուսաստանում։ Գյուղացիությունը նույնպես շերտավորված չէ։ Տիրող տիպը միջին գյուղացիությունն է։ Ինդուստրիալ պրոլետարիատ չունենք։ Եղած սակավաթիվ բանվորությունը կապ-

ված է գյուղի հետ։ Առայժմ մենք չենք կարող արհեստականորեն շերտավորել գյուղացիությունը։

Մեր քաղաքականությունը պիտի լինի զգույշ, մեղմ։ Պետք է օգտագործենք մասնագետներին, ինտելիգենցիային, որովհետև մեր սեփական կարմիր մասնագետներ, սպեցներ մենք չունենք։ Նրանց հանդես գալը տարիների գործ է։ Իսկ մենք չենք կարող տարիներ սոված մնալ։ Վախենալ պետք չէ սպեցներից։ Քաղաքական իշխանությունը մեր ձեռքին է։ Երբ մասնագետները, ինտելիգենցիան կփորձեն գործել ի վնաս բանվորա-գյուղացիական գործի, մենք ունենք նրանց դեմ կռիվի միջոցներ։

Երբ որ մենք խուսում ենք մեր քաղաքականության մասին, մենք չենք խարում ժողովրդին։ Մենք ասում ենք՝ չենք կարող վերացնել Չեկան, Կարմիր Բանակը, որովհետև դասակարգեր կան։ Երբ բուրժուազիան հասկանա, որ այլևս վերադարձ չկա, չենք կլերացնենք և՛ Չեկան, և՛ Կարմիր Բանակը։

Զորքին, Չեկային մենք ասում ենք՝ նախկին միջոցներով շաշխատել, բայց հսկել, որ մութ տարրերը էլի գլուխ չբարձրացնեն։ Զէ՛ որ, եթե ժամանակին միջոցներ ձեռք առնվեին, ապստամբություն չէր լինի։ Իսկ ո՞վ օգտվեց նրանից՝ ժողովրդի թշնամիները։

Բոլոր նորմալ օրգանները—մենք դա ասում ենք, խոստանում և կանենք—կաշխատեն, օդտագործելով, շվախեցնելով սպեցներին։ Այս գիծը մենք կտանենք հաստատ և անկեղծորեն։ Մենք կարծում ենք, որ ժողովրդի բոլոր շերտերը մեզ օչնություն կգան, որովհետև հայ ժողովուրդը շատ ծանր օրեր է ապրում։ Մենք եկել ենք այստեղ ոչ թե քաղաքացիական կռիվ անելու, շարշարելու, այլ աշխատավորությունը տանելու դեպի խաղաղ, հանդիստ աշխատանք՝ առանց շահագործման, առանց կռվի, դեպի կոմունիզմ։ Եվ ուրիշ ոչ ոք, բացի խորհրդային իշխանությունը, չի կարող այդքանը տալ հայ ժողովրդին։

Տանիկների հետ ավելի հաշող պայմաններ կարող էինք կապել։ Բայց շարագործները խանգարեցին։ Եթե չլինեք դաշնակիների վերջին ավանտյուրան, մենք այժմ ավելի լայն սահմաններ կունենայինք։

Դուք տեսնում եք, որ դրությունը անմխիթար է։ Սա ամենագաժան, ամենադժբախտ երկիրն է Անգրկովկասում։ Դեռ այս երկրի փողոցներում, դաշտերում, հիշեք Ալեքսանդրոպոլը, ցրված են դիակներ։ Քաղցը ահագին է։ Պետք է կռվել քաղցի դեմ։ Քաղցած Ռուսաստանը մեզ ինչ որ կարողանում է, տալիս է։ Բայց այդ օգնությունը չի լրացնի մեր պետքերի 5 տոկոսը, մնում է մեր ներքին ուժերով հոգալու նույնը շեշտեց ընկեր լենինը նրա հետ ունեցածս

1 Գ. Կ. Սրջոնիկիան, «Ընտիր հոդվածներ և ճառեր», Հայպետհրատ, 1950 թ., էջ 31—34:

վերջին խոսակցության մեջ. «Ներքին ուժերով պիտի վերականգնեք, ուստի Կարմիր Բանակը ձեզ միշտ կօգնի, Ռուսաստանը քաղաքական օգնություն կտա: Բայց ձեր երկրում տնտեսական հարստություններ ունեք: Դուք չե՞ք կարող այն սեփական ուժերով օգտագործել: Դիմեցեք արտասահմանին, կոնցեսիաներ տվեք: Այդ բանը թույլ է տալիս իմ մարքսիստական խիղճը»:

Մենք գործնականապես պետք է դիմենք կոնցեսիաների: Եվ մենք հավատացած ենք, որ մեր քաղաքական գիծն իրագործելով՝ մենք կհասնենք լավ արդյունքների: Բայց մենք խոստումներ չենք անում: Մենք գիտենք, որ արտաքին վտանգ էլ կա: Մենք պահում ենք բանակը՝ և մերը, և ռուսականը: Սրանց պահպանման տակ է, որ դիմելու ենք շինարար աշխատանքի:

Հայաստանում մենք ռազմավորստիկ չենք անի, ուրիշ խոսքով՝ գյուղացու պարենի ավելցուկը պարտադիր կերպով չենք վերցնի:

Մենք կմտցնենք նալուգ: Ազատ առևտուր արդեն թույլ է տրված: Կոոպերացիա ունենք, ավելի լավ հողի վրա կղենք այն:

Մենք չենք հրաժարվի և արտասահմանյան ֆիլանտրոպիայից, քանի որ չենք կարող կերակրել բոլոր որբերին:

Այս բոլոր խնդիրներում դուք, բանվորներ, աշխատավորներ, ընկեր կոմունիստներ, պետք է գաք մեզ օգնություն: Եվ դուք կկարողանաք մի բան անել, որովհետև դուք ունեք Ռուսաստանի փորձը, որտեղ բանվորը նույնպես սոված էր. բայց նա հասկանում էր, որ վերադարձը դեպի հինը, դեպի կապիտալիզմը՝ ավելի վատ է իրեն համար: Մանր է Հայաստանի դրությունը: Այս դրությունից դուրս կգանք, եթե չհակառակվենք աշխատավորության կամքին:

Մեր գործը տնտեսական, շինարարական խնդիրն է: Ժամանակը չէ թեորիաների: Կոմունիզմը, ինտերնացիոնալը տոնական խոսքեր չեն: Կոմունիզմ, ինտերնացիոնալ նշանակում է գյուղացու համար՝ խաղաղություն, հող, սերմացու, կուշտ կերակուր: Այս կոմունիզմին մենք պետք է ծառայենք, բուրժուազիան չէր կարողանում այդ բանը անել: Նա շահագործում էր, պատերազմներ էր ստեղծում: Խորհրդային իշխանության ժամանակ չկա շահագործում, քաղաքական իշխանությունը գտնվում է աշխատավորների ձեռքին:

Հայաստանն այժմ ավելի ազատ է, քան դաշնակցականների ժամանակ:

Ի՞նչ է դաշնակցականների ազատությունը: Դա կախումն էր Անտանտայից: Մեր ազատությունը համերաշխ եղբայրական կապն է Ռուսաստանի պրոլետարիատի հետ:

Ունենալ անկախ Հայաստան՝ նշանակում է եղբայրական կապ

ստեղծել Անդրկովկասի ժողովուրդների հետ: Ո՞րն է լավ՝ կախումը Անտանտայի ավազակներից, թե՛ կապը խորհրդային երկրների աշխատավորության հետ: Դաշնակների, մենշևիկների, մուսավաթիստների օրոք, ասել է՝ Անտանտայի տիրապետության ժամանակ, Անդրկովկասում անվերջ ազգային կոլիվներ էին: Տույց տվեք մի օրինակ, որ Խորհրդային իշխանության ժամանակ Ռուսաստանում կամ Անդրկովկասում եղած լինի որևէ ազգային ջարդ:

Այսօր մենք դեռ ամբողջ Անդրկովկասը չենք կարող կառավարել իրեն մի ամբողջություն: Բայց հենց որ մենք ոտքի վրա կանգնենք, կհիմնենք Կովկասյան ֆեդերացիա: (Մափահարություն): Սրան մենք կհասնենք համառ տնտեսական աշխատանքով: Այստեղից և միշտ պիտի հիշենք, որ մեր թիկունքում մեզ պաշտպան ունենք Խորհրդային մեծ հանրապետությունը: (Մափահարություններ):

Հայությունը լավ է արել, որ միշտ էլ իր րախտը կապել է ռուսի հետ: Կովկասը կլինի կապված Խորհրդային Ռուսաստանի հետ նույնպես եղբայրական կապերով, ինչպես Բաշկիրական, Քաթարական, Քուրդեստանի և մյուս մանր խորհրդային հանրապետություններն են:

Հանուն այդ միության, այդ կապի, որի մեջ է մեր փրկությունը, մեր ուժը, մենք կօգտագործենք այն բոլոր տարրերին, որոնք ուզում են օգնել մեր ժողովրդին, մեր պետությանը:

Դեպի այդ աշխատանքը: Այսպիսով մենք կհասցնենք մեր բազմատանջ ժողովրդին մինչև այն լուսավոր օրը, երբ Եվրոպայի պրոլետարիատը կմիանա խորհրդային հանրապետություններին, կթոթափի կապիտալիստների լուծը, և ամբողջ աշխարհում կհաստատվի կոմունիզմի իղեալը:

\* Կեցցե՛ մեր Կոմունիստական իղեալը: (Բուռն ծափահարություններ) 1:

## Ս. Մ. ԿԻՐՈՎ

(1924 թ. ԱՊՐԻԼԻ 22-ԻՆ ԲԱՔՎԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԻԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԻ ՐԱՅՄԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՍԱՆԱՍՏ ՃԱՌԸ)

Ընկերներ: Դուք գիտեք, որ խոսել անմոռանալի Իլլիչի կյանքի մասին՝ միևնույնն է, թե խոսել ռուսական պրոլետարիատի կյանքի ու շարժման մասին: Այնքա՛ն սերտ է միահյուսվել Վլադիմիր Իլլիչի

1 Ալեքսանդր Մյասնիկյան, «Ընտիր երկեր», Երևան, 1957 թ., էջ 335—338:

ամբողջ անձնական կյանքը ռուսական բանվորական շարժման ճակատագրի հետ:

Ուղիղ 54 տարի առաջ ռուսական մեծ գետի ափին ծնվեց մի մարդ, որին վիճակվել էր ցնցել ամբողջ աշխարհը: Այդ իսկ ժամանակ ծնվում էր համաշխարհային ռեյուցիայի նախամարտիկը՝ ռուսական բանվորական դասակարգը:

Լենինը շուտ դրսևորեց համաշխարհային պրոլետարիատի առաջնորդի տվյալները: Դեռ վաղ պատանեկության շրջանում նա համակվում է այն գաղափարներով, որոնց և նվիրեց իր ողջ կյանքը:

Կան Մարիա Իլյինիչնայի հետաքրքրական հիշողություններն այն մասին, որ երբ մահապատժի ենթարկվեց Լենինի մեծ եղբայրը, այդ ճակատագրական լուրը ցնցեց նրան: Եվ ո՛չ միայն այն պատճառով, որ նա իր մեծ եղբայրն էր: Նա տեսնում էր սխալներ նարոզովուլեցիների գործունեության մեջ, մի պարտիա, որին պատկանում էր մահապատժի ենթարկվածը: Բայց այդ մահապատիժը չէր կարող չազդել Իլյինիչի աշխարհայացքի դրսևորման վրա: Ստանալով այդ լուրը, նա ասաց. «Ո՛չ, մենք կզանաք ո՛չ այդ ճանապարհով: Այդ ճանապարհով չէ՛, որ պետք է գնալ»:

Դեռ այն ժամանակ նա նշում էր պրոլետարիատի ռեյուցիտն պայքարի նոր մեթոդները: 25 տարեկան հասակում Իլյինը այնպես գիտեր Մարքսի ուսմունքը, ինչպես մենք դեռ չգիտենք մինչև օրս:

### Պրոլետարական ռեյուցիայի կանխատեսողը

Դեռ այն ժամանակ նրա համար պարզ էին պայքարի ուղին ու վախճանը. այդ ուղին ասում էր, որ ռեյուցիտն պրոլետարիատի կողմից իշխանության գրավմամբ միայն կսկսվի մարդկային հասարակության վերակառուցումը նոր, կոմունիստական սկզբունքներով: Բայց 30 տարի առաջ դեռ ոչ ոք այդպես չէր մտածում և երբ երևացին Իլյինի առաջին գրքերը, շատերին պարզ դարձավ, որ ապագայում նա կընդարձակի իր լայնածավալ մտքի բոլոր ուժերը:

Դեռ այն ժամանակվանից ռեյուցիտն շրջապատում Իլյինն սկսեց կայուն դեկավար դիրք նվաճել: Նա հանճար էր նախ և առաջ: Նա հանճար էր կամքի ուժի տեսակետից: Բնավորությամբ նրան հավասար որևէ մեկին դժվար է գտնել:

Եվ իր ճանապարհով նա գնում էր ոչ «հենց այնպես»: Իրեն շրջապատող մարդկանց գնահատման հարցում նա անխնա էր:

Հետզհետե աճելով, նա դարձավ համաշխարհային պրոլետարիատի առաջնորդ: Եթե հետևենք պարտիայի պատմությանը, ապա կարելի է տեսնել, թե որքան վաղ նա հեղինակություն ձեռք բերեց:

### Մարքս և Լենինը

Մարքսի ուսմունքը նա գիտեր ծայրից ծայր: Նա միշտ ու անընդորեն վերադառնում էր այդ մեծ ուսմունքին և այնտեղից բազում իր ուժերն ու իր հայանագործությունները: Նա Մարքսի մեծ հետևորդն էր:

Այդ մարդկանց միմյանցից բաժանում է մի ամբողջ դարաշրջան: Մարքսի ժամանակ նոր էր միայն ծնվում պայքարն ընդդեմ կապիտալի: Իսկ Լենինն ապրում էր մի դարաշրջանում, երբ ռեյուցիտն պրոլետարիատը կազմավորվեց որպես դասակարգ: Լենինը զարգացրեց Մարքսի ուսմունքը: Մարքսի մի կիրառման մեջ նա ռուսական բնավորության լայնությունը զուգորդում էր ամերիկյան գործարարության հետ:

### Տեսարանը և գործնական մարդը

Երբ Լենինը դեկավարում էր 150-միլիոնանոց ժողովրդին, առանձնապես գյուղացիությանը, նրան օգնում էր իր գործնականությունը:

Խորագույն տեսաբանի զուգակցումը ոչ պակաս խորը գործնական մարդու հետ, նրան դարձրեց վիթխարի, արտակարգ ռեյուցիտներ, որպիսին դեռ աշխարհը չէր տեսել:

Լենինը հլիանալի գիտեր կապիտալիզմի դարգացման փուլերը Ռուսաստանում: Նա տեսնում էր պրոլետարիատի մի ոչ մեծ խումբ և գյուղացիության մի հակայական զանգված: Դեռևս 1905 թվականին, երբ մեզինք շատերը բուրժուական ռեյուցիայի ծավալման ժամանակ գուլիները կորցրել էին, Իլյինը պարզորոշ կերպով գրեց գյուղացիության հարցը: Եվ մենք հասկացանք, որ պետք է ունենանք բանվոր-գյուղացիական պիտություն: Բանվոր-գյուղացիական դաշինքի անհրաժեշտությունը խորը կերպով մեխվեց մեր դիտակցության մեջ: Իլյինը ոչ մի բոպե չէր կասկածում, որ սոցիալիզմի իսկական կրողները կարող են լինել միայն բանվորները: Ղրա հետ միասին նա հանգեց այն եզրակացության, որ պրոլետարիատը միասնակ չի կարող ռեյուցիտ կատարել, որ նա այդ կարող է անել գյուղացիության հետ դաշն կապած:

## Վեճիճը և արևելքը

Վլադիմիր Իլյիչի գործունեության մեջ պետք է նշել նրա հետաքրքրությունը դեպի Արևելքի ճնշված ազգությունները: Եվ ճշնշված ազգությունների հարցի առթիվ Իլյիչը մեզ տվել է ոչ պակաս հայտնագործություններ, քան մյուս բնագավառներում:

Եթե ուսումնասիրել Լենինին հայր է անվանում, ապա դեղին, սև և մյուս բոլոր ցեղերի մարդիկ ոչ պակաս իրավունքով նո՛ւյնպես նրան իրենց հայր են անվանում:

Սոցիալիզմի համար մղվող համաշխարհային պայքարի մասշտաբում նա հաշվի էր առնում Արևելքի հսկայական բանակը:

Մենք տեսնում ենք մի վիթխարի շարժում Արևելքի երկրներում, որտեղ կապիտալիզմը նոր է միայն զարգանում: Միայն հանճարեղ Իլյիչը կարող էր կանխատեսել, որ Արևելքը կարող է ռևոլյուցիոն դառնալ: Դրանումն է նրա հսկայական արժանիքը:

## Իմպերիալիստական պատերազմը և ռևոլյուցիան

Բոլոր նրանք, ովքեր գիտեին Իլյիչին, կարող են հավաստել, որ իմպերիալիստական պատերազմը խիստ ազդել է նրա աշխարհայացքի զարգացման վրա: Այն ժամանակ սոցիալ-համաձայնողականներ Հիլֆերդինգը, Կաուցկին և ուրիշներ պնդում էին, որ պատերազմը արդարացվում է, որ նա դեմոկրատիայի համար ստեղծում է ինչ-որ նոր դարաշրջան: Եվ միայն Իլյիչը խորապես բացասաբար էր վերաբերվում դեպի այդ նողկալի սպանդը:

Նա պարզորոշ հայտարարեց, որ կապիտալիզմը ցանկանում է եվրոպական բանվորների ռևոլյուցիոն շարժումը խեղդել արյան մեջ: Այն ժամանակ միայնակ էր հնչում նրա ձայնը: Բայց արդեն Ֆրանկվալդում նա գտնում է կողմնակիցներ: Ոչ ոք Իլյիչի պես չի բողոքածել այդ պատերազմը: Նա արել է հնարավոր այն ամենը, որպեսզի դա լինի վերջինը: Նա ասում էր՝ աշխարհը կկործանվի եթե իր սվիճեերը չդարձնի դեպի իր կեղեքիչները:

Դրանից մենշևիկների մաղերը բիզ-բիզ էին կանգնում: Բայց Իլյիչի կամքը արգելքներ չէր ճանաչում: Հիմա մենք ասնում ենք, որ նրա հանճարեղ տակտիկան արգասավոր էր: Դեռ այն ժամանակ Իլյիչը, հեռանալով մենշևիկյան դիսկուսիաներից, ասում էր, որ պրոլետարիատի կողմից իշխանությունը գրավելու պահին մենշևիկները կլինեն բարիկադների մյուս կողմում: Նա չսխալվեց: Հենց այն ժամանակ հորինվեցին նողկալի առասպելներ գերմանա-

կան ոսկու, կնքված վագոնի մասին և այլն: Բայց Իլյիչը ամուր կոփում էր իր պատգամներն ընդդեմ պատերազմի և կոնց այն, որը կոչվում է III Ինտերնացիոնալ:

## Վեճիճը պարտիայի կազմակերպիչ

Մեր պարտիայի պատմությունը Իլյիչի կյանքի ու գործունեության պատմությունն է: Ռուսաստանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի ստեղծման գործում նա իրեն ցուցաբերեց որպես մեծ կազմակերպիչ: Մեր թշնամիները համաձայնվելով, որ Լենինը պայծառ մտքի տեր է, նրանից խլում էին կազմակերպչական ունակությունները:

Կանխատեսելու նրա հմտությունը, հսկայական եռանդն ու հաստատակամությունը, օպորտունիզմի դեմ մղվող պայքարում նրա անհաշտությունը նրան հնարավորություն տվին կազմակերպելու մեծագույն պարահան աշխարհում: Արտասահմանի մեր թշնամիները շատ լավ հաշվի են առնում, որ նրանց ամենաոխերիմ թշնամին դա մեր կազմակերպությունն է:

Մեր պարտիայի մեջ կան շատ կայուն մարդիկ, բայց, այնպիսին, ինչպիսին Լենինն էր, չի եղել: Կոմիստերնի մեջ մտնողներին նա թելադրում էր խիստ պայմաններ: Նա կարողացավ մեր պարտիայի համար ստեղծել հսկայական հեղինակություն:

Կգա ժամանակ, երբ արխիվներից կհանվեն այնպիսի փաստաթղթեր, որոնք կհաստատեն Իլյիչի վիթխարի աշխատանքը: Բայց կան նաև այլ փաստաթղթեր, որոնք խոսում են Իլյիչի մասին, որպես մեծագույն կանխատեսողի: Նա նախագուշակեց իմպերիալիստական պատերազմը և Փետրվարյան ռևոլյուցիան: Երբ եկավ փետրվարը, Իլյիչը գրեց, որ հասունանում է մի այլ ռևոլյուցիա, որը բանվորներին ու գյուղացիներին կտանի ընդդեմ անգլիական ու ֆրանսիական կապիտալի: Նու չսխալվեց:

Կարելի է ասել, որ միջազգային ռևոլյուցիոն շարժման ուսումնասիրությունը հենց իրեն՝ Լենինին ուսումնասիրելն է:

## Մարդ և ընկեր

Կասեմ մի քանի խոսք Լենինի մասին, որպես մարդու: Ավելի արտակից մարդու, քան Լենինը, մեզնից ոչ ոք չի հանդիպել: Նա բազմակողմանի էր: Նա մեզնից յուրաքանչյուրի սիրտը թափանցելու բանալի էր գտնում: Կա՞ր արդյոք պարտիայի մի այնպիսի անդամ, որը չիմանար նրա սրտակից լինելու մասին:

Ընկերների շրջանում նա բոլորին տեսնում էր ներքուստ մինչև նրանց հոգու խորքը, բայց այդ ցույց չէր տալիս: Նա միշտ էլ մատչելի էր և շփվող: Բանվորների ու գյուղացիների հետ նա երկար կարող էր խոսել մանրուքների մասին: Անգամ մեր թշնամիները հիացած էին Իլյիչով:

Ոչ տք մարդկությանն այնպես չգիտեր, ինչպես նա, և միայն դրանով կարելի է բացատրել նրա ակալություն խիզախությունը:

### Պարտիայի մեջ պահպանենք Իլյիչի ոգին

Լենինը մեռավ: Բայց մեզնից հեռանալով, նա կարողացավ միայն ընդհանուր դժերով ավարտել իր վիթխարի աշխատանքը:

Նա դրեց ապագա սոցիալիստական իրավակարգի հիմքը: Մեզնից բուրաքանչյուրը, ով աճել է Կոմունիստական պարտիայի մեջ, զգում է Իլյիչի ղեկավար ձեռքը:

Նվ եթե մենք կարողանանք պարտիայի մեջ պահել Իլյիչի ոգին, ապա մենք նրա սկսած գործը կհասցնենք մինչև վերջ: Մեզ համար, համենայն դեպս, արդեն ավելի հեշտ է: Մենք ունենք վճարատանելի, ճշտված պարտիական կողմնացույց, և մենք ճանապարհը կգտնենք:

Իլյիչը մեզ ասել է՝ «նացե՛ք առաջ և առաջ, որպեսզի գազանային կապիտալիզմը այլևս կովի դաշտ չնետի բանվորներին ու գյուղացիներին»:

Նրա ժառանգությունից մենք կստեղծենք լենինիզմ: Միայն մի ուղի կա դեպի ապագան՝ լենինիզմի ուսումնասիրությունը:

Տոգորվենք մեր առաջնորդի ոգևորությամբ, մեր հոգու բոլոր թելերով ատենք այն ամենը, ինչ ստրկացնում է անարդում է մարդուն:

(Թարգմանված է ռուսերենից. С. М. Киров, Избранные статьи и речи, Москва, 1957 г., стр. 153—157).

### Մ. Ի. ԿԱԼԻՆԻՆ

ՀԳԿԿ ԿԱԶՄԲԱՏՆԻ ԵՐԱՏՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ԵՆՈՒՅԹԻՑ

(1931 թ.)

...Կոմունիստների ղգալի խավը ինչո՞վ է տառապում: Հիմնականն այն է, որ նրանք մտածում են ֆորմուլաներով, նրանք

ձգտում են խոսել համագումարի, Կենտկոմի կամ առնվազն Մոսկվայի կոմիտեի բանաձևերի խոսքերով: Դա սխալաստիկա է, և ոչ թե մարքսիզմ: Ի միջի այլոց, երբ մարդ իր ճառերում գործածում է պատրաստի ֆորմուլաներ և խոսում է արդեն պատրաստի ֆորմուլաներով, իհարկե, դա ավելի հեշտ է, քանի որ այստեղ քեզ ոչ մի թեքման մեջ չեն մեղադրի, քանի որ, եթե որևէ բան պատահի, նա կասի՝ ներեցեք, դրանք այսինչ բանաձևի խոսքերն են: Մարքսիստը չսլետք է ֆորմուլայով մտածի... Նա, ով խոսում է պատրաստի ֆորմուլաներով, նա չի մտածում, այլ պարզապես դրանք սերտում է: Մինչդեռ մարքսիզմը չի կարելի սերտել, այն պետք է խորհել, ուսումնասիրել: Ուստի մենք ևս մեր ճառերում պետք է խուսափենք պատրաստի ֆորմուլաներից: Զեկուցումների մեջ դրանք կարելի է օգտագործել՝ հաստատելու համար, բայց խոսակցության մեջ պետք է խուսափել: Երբ ես լսում եմ այգալիսի ղեկուցողի, ապա ես որոշում եմ, որ այդ մարդը պարզապես չի մտածում: Ավելի հեշտ է խոսել պատրաստի ֆորմուլաներով: Այդպիսի մարդը այսօր կամ վաղը մարքսիզմից կհեռանա: Մարքսիզմը պետք է ևլնի կոնկրետ իրադրությունից: Երբ մարդ ձեռնարկում է որևէ միջոցառում, ապա նա պետք է գործը դնի այսպես, նա պետք է այսպես խոսի. այսպիսի և այսպիսի իրադրությունը, այսպիսի և այսպիսի հանգամանքները ես հաշվի առա, և դա իմ մեջ առաջացրեց այսպիսի միջոցառումներ: Դա կլինի մարքսիստական մտտեցում: Իսկ եթե պարզապես ասել՝ պայքարի՛ր «աջ» և «ձախ» թեքումների, հաշտվողականության դեմ, — ապա դա, ըստ էության, նշանակում է ոչինչ չասել: Դա արդեն տաղտկալի է: Նվ երբ առանց այլևայլության խոսում են Սովետների աշխատանքի փոփոխման մասին, ապա դա ևս տաղտկալի է, պետք է խոսել այն մասին, թե ինչպես փոփոխել, ինչպես վերակառուցել Սովետների աշխատանքը: Ես հիմա չեմ ցանկանում ձեզ Ամերիկա բացել, թող յուրաքանչյուրը իր գլխով աշխատի:

(Թարգմանված է ռուսերենից. М. И. Калинин, «Советы агитатору», Госполитиздат — Москва, 1957 г., стр. 82—83).

## Ն. Ս. ԽՐՈՒՇՉՈՎ

ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԳԻՆԱՎՈՐ ԱՍԱՄՐԱԿԱՅԻ 15-ԸՆԴ  
ՍԵՍԻԱՑՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՍԿՈՒՍԻՒԱՅԻ ԺԱՄԱՆԱԿ ՈՒՆԵՑԱԾ ԵՂՈՒՑՔԻՑ

### Զինաթափման պրոբլեմը պետք է, վերջապես, լուծվի

Հարգելի պարոններ: Անցած տարվա սեպտեմբերին ես Սովետական կառավարության հանձնարարությամբ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 14-րդ սեսիային ներկայացրի Սովետական Միության առաջարկները ընդհանուր և լրիվ զինաթափման մասին: Ժամանակակից զենքի ահավոր ավերիչ ուժը, սպառազինությունների մրցավազքի շտեմսված թափը, պետությունների կողմից մասսայական բնաջնջման զենքի վիթխարի պաշարների կուտակումը՝ այս ամենը սպառնալիք է ստեղծում մարդկության ապագայի համար և ստիպում է որոնել սկզբունքորեն նոր մոտեցում դեպի զինաթափման պրոբլեմը: Մեր առաջարկները գործնականում այդպիսի մոտեցման արտահայտություն են:

Կարելի էր լուրջ գոհունակության զգացմունք ապրել այն կապակցությամբ, որ մեր առաջ քաշած գաղափարները հանդիպեցին Միավորված Աղդերի Կազմակերպության միահամուռ հավանությանը և ստացան ամբողջ աշխարհի ժողովուրդների լայն պաշտպանությունը: Անկավարժելով Գլխավոր Ասամբլեայի անցյալ սեսիայի որոշմամբ, Սովետական Միությունը մյուս պետությունների հետ միասին ամենաեռանդուն կերպով մասնակցեց Տասը պետությունների զինաթափման կոմիտեի բանակցություններին և այնտեղ ձգտում էր ընդհանուր և լրիվ զինաթափման պայմանագրի մշակմանը: Չսպասելով զինաթափման հարցի վերաբերյալ միջազգային համաձայնության, Սովետական Միությունը միակողմանի կարգով իրականացնում է իր զինված ուժերը 1 միլիոն 200 հազարով կրոնատեղու միջոցառումները, մի բան, որ, ընդհանուրի խոստովանությամբ, նպաստեց զինաթափման բանակցությունների մթնոլորտի բարելավմանը:

Սովետական կառավարությունը, հետևողականորեն ու հաստատակամորեն վարելով խաղաղասիրական քաղաքականություն, ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի ներկա սեսիայում հանդիսավոր կերպով հայտարարում է, որ Սովետական Միությունը զինված ուժեր ունի միայն մեր երկրի պաշտպանության համար և մեր դաշնակիցների ու բարեկամների հանդեպ իր պարտավորությունները կատարելու համար, եթե նրանց դեմ ագրեսիա կատարվի: Այլ նպատակների համար մեր զինված ուժերի օգտագործման հնարավորու-

թյունը բացառված է, քանի որ դա խորթ բան կլիներ մեր պետության բուն էության և նրա խաղաղասիրական արտաքին քաղաքականության հիմքերի համար:

Մեր երկիրը ստիպված է զինված ուժեր ունենալ միայն նրա համար, որ լրիվ և ընդհանուր զինաթափման մեր առաջարկները մինչև օրս ընդունված չեն: Մենք մեզանից կախված ամեն ինչ կանենք, որ լրիվ և ընդհանուր զինաթափումը դառնա փաստ, որ մարդկությունը փրկվի սպառազինությունների մրցավազքից և նոր բնաջնջող պատերազմի սպառնալիքից:

Գլխավոր Ասամբլեայի կողմից ընդհանուր և լրիվ զինաթափման բանաձևի ընդունման պահից անցել է մեկ տարի: Կյանքի այժմյան տեմպերի տեսակետից դա համեմատաբար մեծ ժամանակամիջոց է, և կարելի է շտաբակուսել, որ նրանք, ովքեր զբաղված են զենքի արտադրությամբ, նոր, մահաբեր միջոցների կատարելագործմամբ ու հորինմամբ, այդ ժամանակը զուր չեն կորցրել:

Սակայն անցած տարում զինաթափման գործը ոչ մի քայլ առաջ չի զնացել: Որո՞նք են այդ դրության պատճառները, որի մասին հարկ է լինում խոսել մեծ ակոսսանքով և լուրջ տազնապով: Ովքե՞ր են խոչընդոտում ընդհանուր և լրիվ զինաթափման մասին Գլխավոր Ասամբլեայի բանաձևի՝ ՄԱԿ-ի պատմության մեջ այդ թերևս ամենակարևոր և աչքի ընկնող որոշման կատարմանը: Ովքե՞ր թույլ չեն տալիս մեռյալ կետից շարժել զինաթափման պրոբլեմը:

Փաստերը վկայում են, որ զինաթափման պրոբլեմի լուծման գործում ամեն մի առաջադիմության բացակայությունը Ամերիկայի Միացյալ Նահանգների և նրանց հետ ՆԱՏՕ-ի դժով կապված մի քանի այլ պետությունների դիրքի հետևանքն է:

Տասը պետությունների զինաթափման կոմիտեի ամբողջ աշխատանքի ընթացքում արևմտյան տերությունները հրաժարվում էին ձեռնամուխ լինել ընդհանուր և լրիվ զինաթափման պայմանագրի մշակմանը, ամեն կերպ խույս էին տալիս Գլխավոր Ասամբլեայի կողմից կոմիտեին մանրամասն քննարկման հանձնված ընդհանուր և լրիվ զինաթափման սովետական ծրագիրը ըստ էության քննարկելուց: Իրենց հերթին նրանք ներկայացնում էին այնպիսի առաջարկներ, որոնք չէին նախատեսում ոչ ընդհանուր, ոչ լրիվ զինաթափում, ոչ էլ առհասարակ զինաթափում, այլ միայն սպառազինությունների վերահսկողության միջոցառումներ, այսինքն՝ վերահսկողություն առանց զինաթափման: Մինչդեռ չի կարելի շտեմսել, որ առանց զինաթափման վերահսկողություն հաստատելը հավասարազոր կլիներ միջազգային լրտեսության սխտեմ

ստեղծելուն և դա ոչ միայն չէր նպաստի խաղաղության ամրապնդմանը, այլև, ընդհակառակը, կարող էր պոտենցիալ ազրեստրի համար հեշտացնել ժողովուրդներին սպառնացող նրա պլաննե-րի իրականացումը:

Վտանգն այն է, որ սպառազինությունները պահպանելու դեպքում սպառազինության նկատմամբ վերահսկողություն հաստատելը, ըստ էության, նշանակում է, որ թե՛ մեկ և թե՛ մյուս կողմը կիմանա հակադիր կողմի ունեցած սպառազինությունների քանակը, որակը և դասավորության վայրը: Հետևաբար, ազրեսիվ կողմը կարող էր իր սպառազինություններն ավելացնել ու հասցնել գերակշռող մակարդակի, որպեսզի հարմար պահ ընտրի և հարձակում գործի: ՄԼՆՔ էրբեք չենք համաձայնի, որ սպառազինությունների նկատմամբ վերահսկողություն հաստատվի առանց զինաթափման, որովհետև դա կնշանակեր խրախուսել ազրեստրին: Մեր նպատակն է ապահովել կայուն խաղաղություն, իսկ դրան կարելի է հասնել միայն սպառազինություններն ու զինված ուժերը վերացնելու միջոցով, միջազգային խիստ վերահսկողության պայմաններում:

Գործելով ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի բանաձևին ուղղակի հակասող ուղղությամբ, արևմտյան տերությունները Տասը պետությունների կոմիտեում միայն ոչինչ չնշանակող խոսակցություններ էին ունենում զինաթափման առթիվ, աշխատելով խանգարել այդ գործում ամեն մի առաջընթացի և համաշխարհային հասարակա-նության աչքում վարկաբեկել ընդհանուր ու լրիվ զինաթափման գաղափարը:

Սովետական կառավարությունը, ինչպես նաև մի շարք այլ պետությունների կառավարություններ, ստիպված եղավ ընդհատել իր մասնակցությունը Տասի կոմիտեի աշխատանքին, որը արևմտյան տերությունները դարձրել էին սպառազինությունների մրցավազքը քողարկելու միջոց: Սովետական կառավարության համար հեշտ չէր ընդունել այդ որոշումը, քանի որ հենց մեր երկիրն էր, որ հանդես եկավ որպես ընդհանուր և լրիվ զինաթափման հարցը զննելու նախաձեռնողը և բոլոր շանքերը գործադրում էր, որպեսզի կոմիտեում, Գլխավոր Ասամբլեայի բանաձևին լիովին համապատասխան, ձեռք բերվի այդ պրոբլեմի կոնստրուկտիվ լուծում: Սակայն ստեղծված պայմաններում մնալ կոմիտեի մեջ, նշանակում էր միայն օգնել զինաթափման հակառակորդներին: Չէր կարելի հաշտվել այն բանին, որ զինաթափման մեծ գործը փորձում են սպեկուլյացիայի ենթարկել ընդհանուր խաղաղության շահերին թշնամական նպատակներով:

Ահա թե ինչու Սովետական կառավարությունը զինաթափման

հարցը դրեց Միավորված Ազգերի կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի քննարկմանը, որի անդամների զգալի մեծամասնու-թյունը ոչ մի չափով չահագրգռված չէ սպառազինությունների մրցավազքով և անկեղծորեն նրա դադարեցումն է ցանկանում:

Հաշվի առնելով զինաթափման պրոբլեմի վիթխարի նշանա-կությունը և բանակցությունների ընթացքում շեշտակի բեկում ստեղծելու անհրաժեշտությունը, Սովետական կառավարությունն արտահայտվեց հօգուտ այն բանի, որպեսզի Գլխավոր Ասամբլեայում այդ հարցի քննարկմանը անմիջականորեն մասնակցեին պետությունների և կառավարությունների անհրաժեշտ լիակատար լու-խանությունը օժտված ղեկավարները: Մենք գոհունակությամբ էլ-ջում ենք, որ հարցի այդ գրվածքը պատշաճ ուշադրությամբ դիմա-վորեցին մի շարք պետությունների կառավարություններ, որոնց պատվիրակություններին Գլխավոր Ասամբլեայում գլխավորում են իրենց երկրների առավել պատասխանատու պետական գործիչները:

Զինաթափման հարցը Գլխավոր Ասամբլեայի պլանում քննարկմանը զննելով, մենք ելնում ենք նրանից, որ լրիվ ծավալով այդ հարցի քննարկումը պետք է, վերջապես, հանգեցնի նրա լուծմանը կամ համենայն դեպս ավելի կոնկրետ ուղղություն տա զինաթափման բանակցություններին, որոնց այժմ մասնակցելու պետք է հերքաբավել միմյանց հակադրող ռազմական խմբավորումների մասնակից պետություններին զուգընթաց նաև այն պետություններին, որոնք չեզոք կուրս են վարում:

Զգտելով հեշտացնել Գլխավոր Ասամբլեայի աշխատանքը և զինաթափման պրոբլեմի ֆենարկմանը տալ կոնկրետ բնույթ, Սովետական կառավարությունը Գլխավոր Ասամբլեայի ֆենարկմանն է ներկայացնում «Ընդհանուր և լրիվ զինաթափման պայմանագրի հիմնական դրույթները» առաջարկությունը: Մենք Գլխավոր Ասամբլեայի նախագահին և ՄԱԿ-ի ֆառտուղարությանը խնդրում ենք օրպես Գլխավոր Ասամբլեայի պաշտոնական փաստաթղթեր պատվիրակությունների շրջանում տարածել այս առաջարկությունը և այն պարզաբանող մեր հայտարարությունը, որի մեջ ավելի ման-րամասնորեն է շարադրված Սովետական Միության դիրքը զինաթափման հարցում:

Ընդհանուր և լրիվ զինաթափման հարցի վերաբերյալ սովետական նոր առաջարկությունը, որի հիմքում ընկած են Սովետական կառավարության կողմից աշխարհի բոլոր կառավարությունների քննարկմանը ներկայացրած 1960 թվականի հունիսի 2-ի առաջարկության դրույթները, կազմված է հաշվի առնելով այն ամբողջ օգտակարը, ինչ անցած տարի այդ հարցի քննարկման ըն-

թացքում արտահայտեցին աշխարհի տարբեր երկրների քաղաքական և հասարակական շրջանները: Այդ առաջարկությունը մեծ շահով ընդառաջ է գնում արևմտյան տերությունների դիրքին, մի բան, որ, ինչպես մենք հույս ունենք, կնպաստի շուտափույթ կերպով զինաթափման համաձայնության հասնելուն:

Մենք այժմ, մասնավորապես, նախատեսում ենք, որ ընդհանուր և լրիվ զինաթափման արդեն առաջին էտապում պետք է վերացվեն միջուկային զենքը նշանակետին հասցնելու բոլոր միջոցները, հանգամանորեն մշակվեն բոլոր էտապներում միջազգային արդյունավետ վերահսկողության միջոցառումները, հաշվի առնվի արևմտյան որոշ տերությունների ցանկությունը, տրպեսզի հենց սկզբից նախատեսվի զինված ուժերի և սովորական սպառազինությունների թվի կրճատումը: Մեր ծրագրում մտցված են նաև մի ամբողջ շարք այլ փոփոխություններ և ճշգրտումներ: Այդ բոլոր փոփոխությունները, մեր կարծիքով, կոնկրետացնում են ընդհանուր և լրիվ զինաթափման ծրագիրը, այն դարձնում են է՛լ ավելի ռեալիստական և գործուն:

Ընդհանուր և լրիվ զինաթափման պայմանագրի մանրակրկիտ մշակումը, իհարկե, բարդ խնդիր է, որի լուծման համար բանակցությունների բոլոր մասնակիցները շատ ջանքեր և աշխատանք պետք է գործադրեն: Այդ աշխատանքի ընթացքում կարող են ծագել տարբեր հարցեր, որոնց լուծումը կպահանջի ճկունություն և միջազգային իրադրության ռեալ հաշվառում:

II մ ա

## ԴԱՏԱԿԱՆ ՃԱՌԵՐ

### Ս. Ա. ԱՆԿՐԵՆԿՍԿԻ

ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ՃԱՌ՝ ԱՆԿՐԵՆԿԻ ԳՈՐԾԻ ԱՌԹԻՎ, 1907 թ.,  
Մ.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԵՐԶԱՆԱՅԻՆ (ՆԱՀԱՆԴԱԿԱՆ) ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

(Կրեւոված)

Պարոնայք երդվյալ ատենակալնե՛ր:

Կնոջ կամ սիրուհու սպանությունը, ճիշտ այնպես, ինչպես և ամուսնու կամ սիրականի սպանությունը, մի խոսքով, աշխարհում ամենամոտ էակին կյանքից զրկելը, ամեն անգամ մեր մեջ զարթնեցնում են հոգեկան կյանքի ամենախորունկ հարցեր: Ստիպված ենք բազմակողմանի ուսումնասիրել և՛ ամուսնուն, և՛ կնոջը:

...Սկսենք ամուսնուց:

Առաջին անգամ Անդրեևը ամուսնացավ դեռևս քսաներեք տարեկան հասակում: Ամուսնությունը խաղաղ էր, առանց առանձնահատուկ հափշտակության: Ազջիկը լավ ընտանիքից էր, և Անդրեևից երեք տարով փոքր էր: Ամուսինները համերաշխ էին ապրում: Անդրեևը մնում էր հավատարիմ ամուսին՝ բառիս բուն իմաստով: ...Այդպես շարունակվեց ավելի քան տասը տարի: Միայն երեսունհինգ տարեկան հասակում Անդրեևին հայտնվեց զայլթակղությունը՝ հանձինս Սառա Լեինայի: ...Առաջին հանդիպումը անդի ունեցավ Լեանոյում, հասարակական զբոսանքի ժամանակ: ...Յուրաքանչյուր նոր հանդիպման ժամանակ Անդրեևը ավելի ու ավելի էր հրապուրվում: Նա նվերներ էր տալիս և արտահայտում իր զգացմունքները: ...Սառան զգալով նրա մեջ ինչ-որ հաստատուն բան՝ հանձնվեց... Նա անարատ չէր: ...Անդրեևը շխորացավ և տշինչ չէր ուղում իմանալ: ...Նա այլևս չէր կարող հավատարիմ լինել իր կնոջը, նա կարող էր հավատարիմ լինել միայն Լեինային:

Հարկադրված եղավ բացատրվել կնոջ հետ: Սկսվեց ընտանիքի քայքայումը: Կինը հեշտությամբ չէր զիջում իր հավատարիմ ամուսնուն, առավել ևս, որ ախոյանուհին կոխվ էր սարքում և ամեն կերպ վիրավորում էր նրան: Հանդիպելով փողոցում, Լեինան նրան լեզու էր ցույց տալիս: Նրա շքամուտքի մոտ կառք տեսնելով, Լեի-

նան նստում էր կառքը և կառապանին հրամայում էր տանել իրեն և ոչ թե տիրուհուն: Իսկ Անդրեևան միայն զարմանում էր, թե կառքը ի՞նչ եղավ... Անդրեևը մնացել էր երկու կրակի մեջ: ...Սանր օրեր ապրեց նա:

Այնինչ Լեինան հղիացավ: Անդրեևը ուրախացավ, քանի որ գրանւում տեսավ իր կապի նոր ամրացում: Գրությունը սրվեց, որովհետև կինը, զայրացած Լեինայի լիտիությունից, միջոցների էր գիմում, որպեսզի ամուսնուն ազատի նրանից: Նա հաջողացրեց, որ ոստիկանութունը «վախեցրեց» Լեինային: ...Ոչինչ չկասկածող Անդրեևը մեկ անգամ իր հղի սիրուհուն դռավ ուշաթափված՝ Պետերբուրգից արտաքսվելու մասին ծանուցազիրը ձեռքում: Նա օգտագործեց իր բոլոր կապերը, և նրան հաջողվեց քաղաքապետ Գրեսսերի միջամտության շնորհիվ փոխել տալ արտաքսման որոշումը: ...Կինը, վերջապես, ենթարկվեց իր ճակատագրին: Անդրեևը կնոջն ու փոքր աղջկան միանգամայն ապահովեց: Վճովեց, որ կինը Անդրեևի և Լեինայի կապին արգելք չպիտի հանդիսանա, բայց ապահարզան չի տրվի՝ մինչև առաջին ամուսնությունից ունեցած աղջկա ամուսնանալը: ...Հենց որ Լեինան ինքը աղջիկ ունեցավ, նա ընդունեց ուղղափառություն և կոչվեց Զինաիդա: Մկրտությունն անհրաժեշտ էր, որպեսզի Անդրեևը կարողանա օրինականացնել նորածնին: Միաժամանակ Անդրեևի պահանջով ինքը և իր մտերմուհին կտակ կաղմեցին հօգուտ այդ երեխայի: Այդ ժամանակվանից, արդեն 17 տարի, ձեր տեսած օրիորդը հանդիսանում է իր ծնողների միակ ժառանգը:

...Սվ այսպես Անդրեևը նոր ընտանիք կազմեց: Թվում էր, թե միանգամայն համապատասխան զույգ էր: Տարբերությունը՝ տասներկու տարի, շատ լավ է: Երկուսն էլ առևտրական միջավայրից էին, ոչ էլ այնքան կրթված: Լեինան մինչ այդ շունենալով որոշակի եկամուտ, դրամական նեղությունից շատ էր դես ու դեն ընկել, և մինչև Անդրեևի հետ հանդիպելը, ոխակ էր անում, ինչպես ասում են, «ձեռքից ձեռք անցնել»... Նրան բաժին ընկավ մի պատկառելի, հավատարիմ մարդ, որը նրան շրջապատել էր լիությամբ, սիրով և քնքույշ հոգացողությամբ: Էլ ի՞նչ էր հարկավոր: Սվ, իրօք, Անդրեևը այլևս ուրիշ բան չէր ցանկանում:

...Ի դեպ, առաջին կինը ժամանակին կատարեց իր խոսքը. աղջկա ամուսնությունից հետո տեղի ունեցավ ապահարզանը և աղետից երեք տարի առաջ Զինաիդա Նիկոլաևնան ամուսնացավ Անդրեևի հետ: Բոլորը միաբերան ասում էին, որ Անդրեևը խելագարի նման սիրում էր կնոջը: Ինչո՞ւ, եթե ձեզնից որևէ մեկի համար պարզ չէ, ես ձեզ կօգնեմ:

Վերջերք Անդրեևի ամբողջ կյանքը: Դուք կտեսնեք, որ նա անխոնջ ու հաջող էր աշխատում: Շատ լավ վաստակում էր: Բայց չէր արհեստում փողը: Ծոխությունը նրան խորթ էր: Վնասաբեր հրապուրանքներ չունեի: Ոչ խաղացող էր, ոչ հարբեցող, ոչ որկրամու, ոչ հեշտասեր, ոչ էլ փառամու: Ըստ էության ամբողջ աշխատանքը ուրիշներին էր տրվում: Մի մեծ գրամագլուխ նա տվեց առաջին ընտանիքին: Բացի դրանից, նա մասնակցում էր ամեն տեսակ բարեգործական ընկերությունների և արժանացել էր զանազան պատվավոր կոչումների: Հոգեկան բարձր հետաքրքրությունները՝ գիտությունը, արվեստը՝ նրան օտար էին: ...Իր բարձրագույն բերկրանքը Անդրեևը գտել էր իր երկրորդ կնոջ մեջ: Նա չգիտեր, թե ինչպես շնորհակալություն հայտնեի նրան... Կատարում էր նրա բոլոր բժահաճույքները: Նրան էր հանձնում ամեն ինչ, ինչ որ ուներ ինքը: Զիջում էր նրա խստություններին, միշտ կարողանում էր արդարացնել նրա պակասությունները:

Ըստ իր զգացողության, նա կարող էր երգվել, որ այդ կինը ուրիշի կարիքը չէր զգում: Սվ քանի որ նա ուրիշ ոչ մի կնոջ չէր գրկում, նա կարծես ձուլված էր իր կնոջը, իր և կնոջ մեջ նա տեսնում էր մեկ ստեղծագործության երկու անբաժան մասեր:

Չեմ կասկածում, որ Սառա Լեինան, շնորհիվ դեպի տղամարդիկ ունեցած իր մակերեսային հայացքի և զգայական տեմպերամենտի, իր առողջ ամուսնուն հանձնվում էր նրա համար ջերմ փոխադարձության լիակատար պատրանքով: Էլ ի՞նչ կարող էր ամուսինը պահանջել: Սվ այսպիսի մոտրության մեջ նա ապրեց երջանիկ, որբտն այդ հնարավոր էր, տասնյոթ տարի... Սվ հանկարծ...

Այստեղ մենք թողնենք ամուսնուն և դառնանք կնոջը:

Սանր է խոսել մեկուսիների մասին: Նողկալի կլինեի նաև ստել, քանի որ նրանք առարկիլ չեն կարող: ...Սակայն ասել ճշմարտությունը նրանց մասին ոչ միայն հնարավոր է, այլև նույնիսկ անհրաժեշտ, որովհետև յուրաքանչյուր մահացած խրատ է կենդանի մնացածների համար: Սառա Լեինան, կապվելով Անդրեևի հետ, նրանից երեխա ունենալով և նրան իր կողմը գրավելով որպես ամուսին, Զինաիդա Նիկոլաևնան հասկացավ, որ ինքը ընտանեկան դիրք ձեռք բերեց, սակայն բոլորովին էլ չկորցրեց իր ազատությունը: Արտաքուստ նա այնպես դասավորեց, որ, ինչպես ինքն էր կարծում, ոչ մի բանով ռիսկի չէր ենթարկվում: Համարյա ամբողջ օրը նրա տրամադրության տակ էր, քանի որ ամուսինը առավտոից մինչև ճաշ աշխատում էր քաղաքում: Բացի դրանից, նրան երբեմն հաջողվում էր գնալ Միխայլովսկի թատրոն, ուր ամուսինը չէր գրնում: Վերջապես, նա սովորություն էր դարձրել ամառը ապրել



ված ընկավ Անդրեևի հոգու վրա: Հենց այս բոլորից էլ իսկապես սկսվում է պաշտպանությունը:

Անդրեևի կյանքում տեղի ունեցավ երկրաշարժի նման մի բան, ճիշտ այնպես, ինչպես Պոմպեյում կամ Մարտինիկում: Հրաշալի կլիմա, բնության բոլոր բարիքներ, պարզ երկինք: Հանկարծ երևում է թույլ լույս, թեթև ծուխ: Հետո ծխի սև քուլաներ, խանձահոտ, մրուր: Ավելի ու ավելի է թանձրանում: Ահա և արեգակը ծածկվում է: Թռչում են քարեր: Հոսում է հրեղեն լավան: Ամեն տեղից խորտակում է սպառնում: Գետինը տատանվում է: Անելանելի սարսափ: Վերջապես անսպասելի ստորերկրյա հարված, ճայթյուն, և՛ ամեն ինչ կործանվեց:

Այդ ամենը, սկզբից մինչև վերջ, տևեց զարհուրելի տասներկու օր:

«Իսկ գիտե՞ս, որ ես ամուսնանում եմ Պիստոլիորսի հետ»...

Առաջին բոլորից Անդրեևը կնոջ խոսքերն ընդունեց որպես տխմար հանաք: Բայց նա նորից կրկնեց: Անդրեևը աչքերը չոնց: Կինը սկսեց հետզհետե դարգացնել իր պլանները: Նրա համառությունը ավելի պարզ է դրսևորվում: Անդրեևը դեռևս չի ուզում հավատալ: Բայց Պիստոլիորսի անունը ավելի է մխրճվում նրա տան մեջ, որպես մի մարդու, որը նրան հրում է ճանապարհից: Կինը բացեփրաց հեռախոսով խոսում է Պիստոլիորսի հետ: Վերջապես աղջիկը երկար տատանումներից հետո հորը հայտնում է մոր լուրջ մտադրություն մասին, բացում է հոր առաջ. «մոր վաղուցվա սիրալին կապը: Անդրեևը սկսում է ղգալ կործանումը: Նա գնում է ֆիննական դանակ, որպեսզի վերջ տա իր կյանքին: Ստիպված էր դանակ գնել, քանի որ ատրճանակ գնելու համար թույլտվություն էր պահանջվում, իսկ հուսահատության հորդումը կարող էր վրա հասնել յուրաքանչյուր բոլոր և նրան թվում էր, որ եթե նա իր զրպանում պահի մահը, ապա դեռ կկարողանա ոտքի վրա կանգնել, ավելի հեշտություն կհաջողվի խելքի բերել կնոջը, թախանձել, պահել նրան...»

Կյանքի սովորական ամբողջ ընթացքը չբացավ: Ամուսինը կորցնում է կնոջը: Նա անսպասելի աղետից չի քնում, չի ուտում: Նա դեռ կառչում է ինչ-որ բանից, թեպետև ասում է աղջկան. «Ես այդ չեմ կարող տանել»...

Վերջապես Անդրեևին ներկայացավ ինքը Պիստոլիորսը ապահարզանի առաջարկով: Բայց Անդրեևը նրան դեռ չէր ասել «այո՞» կամ «ո՛չ»: «Լուրջ գործ է, պետք է մտածել»...

Մինչդեռ զայրացած Զինաիդա նիկոլաևնան սկսում է ծեծել աղջկան՝ հորը պաշտպանելու համար: Անդրեևը անհանգստանում

է, աղջկան մեկուսացնում մորից և ամբողջ ժամանակ մտածում է, մտածում... Ինչի՞ մասին է նա մտածում: Նա մտածում է, թե որքան սոսկալի է նրա համար հրաժարվել այն կնոջից, որի համար նա զոհարեցել է ամեն ինչ, ինչպես անհույս կլինի իր միայնակ ծերությունը, և որ գլխավորն է, նա չի ըմբռնում, թե հանուն ինչի է այս բոլորը կատարվում...

...Եվ ահա, օգոստոսի 23-ի առավոտյան, Զինաիդա նիկոլաևնան որոշեց կտրել հանգույցը: Այդ ժամանակ ամուսինը տասներկու օրվա անքուն գիշերներից հետո, դեռ ինչ-որ բանի հույս ունենալով, ցանկանում էր գործով դուրս գալ, և մեքենայաբար հազավ վերարկուն: Զինաիդա նիկոլաևնան մերկ տոբերին մուճակներ հագած, շտապեց պահել նրան, որպեսզի միանգամից հասնի իր նպատակին:

...Նա շափաղանց ինքնավստահ էր: Ամուսինը վերին աստիճանի մեղմ ու հնազանդ էր: Բայց նա վարվեց այնպես, ինչպես կվարվեր մի վայրի, բուժ էակ, մոռանալով մարդկային ամեն ինչ: Անմեղ և սիրող ամուսնու վրա նա հարձակվեց կատաղի լուսանքով... Աղմուկի վրա ներս վազող աղջիկը լսեց մոր վերջին խոսքերը. «Ես այնպես կանեմ, որ քեզ կվտարեն Պետերբուրգից»:

Այդ կինը, որին Անդրեևը փրկել էր արտաքսումից, որին նա բարձրացրել էր տիղմից, 16 տարի գուրգուրել էր, պահպանել, որպես գանձ,—այդ կինը ցանկանում է իրեն անհետ ոչնչացնել, ճզմել տաքի տակ:

Այն ժամանակ Անդրեևը արագ շարժումով նետեց վերարկուն, ասելով. «Դեռ երկա՞ր պետք է դու մեց անարգես»—բռնեց կնոջ ձեռքերից, քարշ տվեց կաբինետ—և այնտեղից, հենց դռների մոտից, լսվեց կնոջ հուսահատուր ճիչը...

Մի քանի վայրկյանում ամեն ինչ վերջացավ:

Անդրեևը դուրս վաղեց նախասենյակ, նետեց ֆիննական դանակը և իրեն հայտարարեց ոճրագործ:

Ի՞նչ կատարվեց նրա հոգու մեջ:

Այդ հարցին չի կարելի տալ որոշակի պատասխան, որն անհրաժեշտ է դատավճռի համար, քանի որ այդպիսի անասելի հոգեկան ցնցման ժամանակ մարդու մեջ ամեն ինչ տակնուվրա է լինում... Անդրեևի ներսից բարձրացավ մի հղոր ալիք, որը քշեց տարավ ե՛ր բանականությունը, և՛ սիրտը, և՛ խիղճը, և՛ կամքը, և՛ հիշողությունը սպառնացող վտանգի մասին:

Ի՞նչ կար այստեղ: Խա՞նդ: Զայրո՞ւյթ: Գյուրաբորբոքություն: Ո՞չ, այդ բոլորը այն չէ: Ուժեղ խանդն արդեն հաղթահարված էր, քանի որ Անդրեևը կարող էր գործնականորեն բանակցել իր հա-

(ՀԱՏՎԱԾ՝ 1933 թ. ՎԱԿԱՆԻ ԳԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ԼԱՅՊՅԻԳԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ԱՐՏԱՍԱՆԱԾ ԻՆՔՆԱԳԱՆՇՊԱՆԱԿԱՆ ՃԱՌԻՑ)

կառակորդի հետ: Զայրույթն ու դուրաբորբոքությունը նույնպես չի կապվում գործի հետ, որովհետև Անդրեևը բարի էր և տոկուն մինչ վերջին հնարավորությունը:

Եթե կամենում եք, այստեղ առկա էին և՛ սարսափը, և՛ հուսահատությունը, որ հանկարծակի Անդրեևի առաջ բացվեցին անողորմ ու անգութ կնոջ կողմից, որին նա անվերադարձ կերպով հանձնել էր իր սիրտն ու իր կյանքը: Նրա մեջ սկսեց խոսել կատաղության հասնող անըմբռնելի անարդարության զգացումը: Այստեղ արդեն ղեկավարում է կյանքի ուժը, որը խորտակում է ոչ պիտանի ամեն ինչ՝ առանց դատախազի և առանց դատարանի: Ո՛չ Անդրեևը և ո՛չ էլ նրա կինը չէին կարող հեռանալ այդ անխուսափելի ճգնաժամից: Ես Անդրեևի հոգեկան դրությունը կանվանեմ «խելացնորություն» — ոչ այնպիսի խելացնորություն, որի մասին խոսում է ձևական օրենքը (որովհետև այնտեղ անպայման պահանջվում է հոգեկան հիվանդություն), այլ՝ խելացնորություն հանրակենցաղային լիմաստով: Մարդը «խելքը կորցրեց», «իրեն կորցրածի» պես էր... նրա ռաբերն ու ձեռքերը աշխատում էին առանց նրա մասնակցության, որովհետև հոգին բացակայում էր...

Մի՞թե եղբայրակից մարդիկ դա չեն հասկանա:

Ինչպիսի խոր ճշմարտությամբ է հնչում Անդրեևի ցուցմունքը, երբ նա ասում է. «Կնոջս ճիշտ ինձ ուշքի բերեց»... Նշանակում է, մինչ այդ ճիշտ նա լիակատար խելացնորության մեջ է եղել...

Կամենում էր, արդյոք, Անդրեևը անել այն, ինչ արեց: Ո՛չ, չէր կամենում, քանի որ հենց հետևյալ օրը նա ասել է իր ծանոթներին. «Ես, թվում է, թե ամեն բան աշխարհում կտայի, որ պեսզի այդ տեղի շունենար»...

Որևէ մեկին պատժել ակնհայտ անպատասխանատու արարքի համար, — անմարդկային է, և հարկավոր էլ չէ...

Ահա այն ամենը, ինչ ես ցանկանում էի ասել: Ես շանացի ձեր սեփական խղճի լեզվով ձեզ բացատրելի դործը: Ծճմարիտն ասած, ես չեմ կասկածում, որ դուք ինձ հետ շեք համաձայնի:

Եվ հավատացեք, որ Անդրեևը դատարանից դուրս կգա, ինչպես ասում են, «զլուխը կախած»... Նրա հոգու հատակում առաջվա նման անբուժելի վերք կմնա... նրա մեղքը աստուծո՞ առաջ և իր կնոջ արյունոտ ուրվականը, իր ամբողջ զարհուրանքով, նրանից անբաժան կմնան մինչև վերջ:

(Անդրեևը անպարտ ճանաչվեց):

(Թարգմանված է ռուսերենից. «Судебные речи известных русских юристов», Москва, 1956 г., стр. 103—111).

ԴԻՄԻՏՐՈՎ.— Դատավարության երեք ամիսների ընթացքում, դուք, պարոն նախագահ, անթիվ-անհամար անգամ հարկադրել եք ինձ լռել, խոստանալով, որ դատավարության վերջում ես կարող կլինեմ մանրամասն խոսել իմ պաշտպանության համար: Եվ ահա այդ վերջը եկավ, բայց, հակառակ ձեր խոստումին, դուք նորից սահմանափակում եք իմ խոսելու իրավունքը:

...Գերագույն դատախազն առաջարկեց բուլղարացի մեղադրյալներին արդարացնել նրանց մեղադրելու ապացույցների բացակայության պատճառով:

Գերագույն դատախազն առաջարկեց բուլղարացի մեղադրյալներին արդարացնել հանցանշանների բացակայության պատճառով: Բայց այդ ինձ երբեք չի կարող բավարարել: Հարցն ամենևին էլ այդքան հասարակ չէ: Այդ բանը չի վերացնի կասկածները: Ո՛չ, դատավարության ժամանակ ապացույցված է, որ մենք ոչ մի ընդհանուր բան չունենք ռախստագի հրկիզման հետ, ուստի որևէ կասկածանքի տեղ չկա: Մենք, բուլղարացիներս, ինչպես և Տորգլերը, պետք է արգարանանք ոչ թե հանցանշանների բացակայության պատճառով, այլ այն պատճառով, որ մենք իբրև կոմունիստներ ոչ մի ընդհանուր բան չունենք և չէինք կարող ունենալ այդ հակակոմունիստական ակտի հետ:

Ես առաջարկում եմ կայացնել հետևյալ վճիռը.

1. Գերագույն դատարանը պետք է ընդունի մեր անմեղությունն այս գործում, իսկ մեղադրանքը՝ սխալ. այս վերաբերում է մեզ՝ ինձ, Տորգլերին, Պոպովին և Տանեին:
2. Վան-դեր-Լյուբբեխին դիտել որպես գործիք, որն օգտագործվել է ի վնաս բանվոր դասակարգի:
3. Մեր դեմ անհիմն մեղադրանք հարուցող մեղավորներին ենթարկել պատասխանատվության:
4. Այդ մեղավորների հաշվին հատուցել մեր կորցրած ժամանակի վնասները, վնասված առողջությունը և կրած տանջանքները:

ՆԱԽԱԳԱՀ.— Դատավճիռը քննելիս դատարանը ձեր այդ, այսպես կոչված, առաջարկությունները նկատի կունենա:

ԴԻՄԻՏՐՈՎ.— Կգա ժամանակ, երբ այդպիսի առաջարկությունները տոկոսներով կկատարվեն: Ինչ վերաբերում է ռախսու-

տազը հրկիզելու հարցը լիակատար կերպով պարզելուն և իսկական հրկիզողներին հայտնաբերելուն, ապա այդ բանը, իհարկե, կանի գալիք պրոլետարական դիկտատուրայի համաժողովրդական դատարանը:

XVII դարում գիտական ֆիզիկայի հիմնադիր Գալիլեո Գալիլեյը կանգնեց ինկվիզիցիայի խիստ դատարանի առաջ, որը նրան իբրև հերետիկոսի պետք է մահվան դատապարտեր: Նա խորը համոզմունքով և վճռականությամբ բացականչեց. «Բայց այնուամենայնիվ երկիրը պտտվում է»: Եվ այդ գիտական դրույթը հետագայում դարձավ ամբողջ մարդկության սեփականությունը:

(Նախագահը խստորեն ընդհատում է Գիմիտրովին, ոտքի է կանգնում, հավաքում է թղթերը և պատրաստվում է գնալ):

Գիմիտրով.—(Շարունակում է) Մենք, կոմունիստներս, այժմ կարող ենք ոչ պակաս վճռականությամբ, քան ծեր Գալիլեյը, ասել:

«Եվ այնուամենայնիվ նա պտտվում է»: Պատմության անիվը պտտվում է, առաջ է շարժվում դեպի խորհրդային եվրոպայի կողմը, դեպի խորհրդային հանրապետությունների համաշխարհային միության կողմը:

Եվ այդ անիվը, որ առաջ է մղում պրոլետարիատը՝ կոմունիստական Ինտերնացիոնալի ղեկավարությամբ, չի հաջողվի կանգնեցնել ո՛չ բնաջնջող միջոցառումներով, ո՛չ տաժանակիր աշխատանքի դատապարտող դատավճիռներով, ո՛չ մահապատիժներով: Այդ անիվը պտտվում է և կպտտվի մինչև կոմունիզմի վերջնական հաղթանակը:

Գ. Գիմիտրով, «Ֆաշիստական դատարանի առաջ»,  
Հայկուսհրատ, 1937, Երևան, էջ 33—37:

**Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն**

Երկու խոսք	3
Ներածություն	5
ԽՈՍՔԻ ՏԵՆԵԻԿԱՅԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՏԱՐՐԵՐԸ	10
ԽՈՍՔԻ ԱՊԱՐԱՏԸ ԵՎ ՇՆՉԱՌՈՒԹՅԱՆ ՕՐԳԱՆՆԵՐԸ	13
Աւտոմանու դերն ու նշանակությունը	17

**ՇՆՉԱՌՈՒԹՅՈՒՆ**

Շնչառության տեսակները	19
Շնչառության խառը-ստոծանային ձևը և նրա առավելությունները	21
Շնչառության մարզանք և վարժություններ	22
Տեղատային վարժություններ	23

**ԱՌՈԳԱՆՈՒԹՅՈՒՆ (ԴԻԿՑԻԱ)**

Ձայնավորներ	25
Բաղաձայններ	26
Շուտասելուկներ	26
Տեմպ	28
Վարժություններ	29
Տեմպի գրական նմուշներ	30
	31

**ՉԱՅՆ**

	33
Չայնադրման էությունը	34
Չայնական ապարատի «հիմնական դիրքը»	35
Չայնի ծավալը և ռեզիստորը	36
Չայնեթանգ (տեմբր)	37
Չայնի առողջապահությունը (հիգիենան)	38
Վարժություններ	39

**ՈՒՂՂԱՆՈՍՈՒԹՅՈՒՆ**

Ուղղախոսություն	42
Ուղղախոսության անճշտության պատճառները	43

Ձայնավորների արտասանությունը . . . . .	49
Իս երկհնչյունի արտասանությունը . . . . .	51
Յ ձայնակապի արտասանությունը . . . . .	52
Բս դաձայնների արտասանությունը . . . . .	52
Կրկնակ բաղաձայնների արտասանությունը . . . . .	62
Սխալ շեշտադրություն . . . . .	63

ԽՈՍՔԻ ՀՆՉՄԱՆ ԿՈՒՆՏՈՒՐԱՆ

Խոսքի բարեհնչյունությունը (մեկոդիկան) . . . . .	69
Խոսքի տեմպը . . . . .	71
Շեշտ . . . . .	72
Դադար . . . . .	75
Ռիթմ . . . . .	78
Ձայներանգ . . . . .	79
ԳԻՄԱԽԱՆՁ (միմիկա) եվ ՇԱՐԺՈՒՋԵՎ . . . . .	81
ԴՈՅՏՈՐԸ եվ ԼՍԱՐԱՆԸ . . . . .	84

ՀՈՒՑՈՐԱԿԱՆ ԱՐՎԵՍՏԻ ՏԵՍԱԿԵՐԸ

1. Քաղաքական-պառլամենտական . . . . .	88
2. Դատական . . . . .	92
3. Գիտական-դասախոսական . . . . .	98
4. Բեմական-գեղարվեստական . . . . .	99
5. Ռազմական . . . . .	102
6. Հոգևոր . . . . .	103
7. Ներբողական . . . . .	105
8. Դամբանական . . . . .	105
9. Խրախճանքի . . . . .	108

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՃԱՌԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Ներածություն . . . . .	110
Շարադրում . . . . .	113
Նզրափակում . . . . .	115
Քաղաքական ճառի լեզուն և ոճաբանական ձևերը . . . . .	117

ԴԱՏԱԿԱՆ ԽՈՍՔ

Դատական ճառի ձևն ու բովանդակությունը . . . . .	113
Միջնորդություններ դատավարության ընթացքում հարուցվող հարցերի շուրջը . . . . .	142
Դատական խոսքը քաղաքացիական գործերի վերաբերյալ . . . . .	143
Դատական խոսքը բեկման ատյանում . . . . .	143
Ճառի նախապատրաստումը . . . . .	145
Գրված տեքստ և հանպատրաստից ճառ (իմպրովիզացիա) . . . . .	147
Դատական էթիկան դատավարության ընթացքում . . . . .	149

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ս

I մաս

Քաղաքական ճառեր

1. Դեմոսթենեսի ճառը «Եսաղաղության մասին» . . . . .	155
2. Յիցերոնի առաջին ճառը Կատիլինայի դեմ . . . . .	161
3. Ժան Պոլ Մարատի ճառը . . . . .	166
4. Քորչ Բայրոնի ճառը . . . . .	167
5. Կ. Մարքսի ճառը «Ժողովրդական լրագրի» հոբելյանին, 1856 թ. ապրիլի 14-ին . . . . .	168
6. Տ. Էնգելսի ճառը Կ. Մարքսի գերեզմանի վրա . . . . .	170
7. Ստ. Եահոմյանի ճառը Բաքվի դավառի դուրդացիական սովետների համագումարում, 1918 թ. մայիսի 26-ին . . . . .	172
8. Յա. Մ. Սվեբլովի ճառը Համառուական Կենտգործկոմի նիստում, 1918 թ. սեպտեմբերի 2-ին . . . . .	175
9. Վ. Ի. Լենինի ճառը ՌԿ(Բ)Պ VIII համագումարի փակման ժամանակ, 1919 թ. մարտի 23-ին . . . . .	177
10. Գ. Կ. Օրջոնիկիձեի ճառը Բաքվի սովետի հանդիսավոր նիստում, 1/12—1920 թ. . . . .	182
11. Ալ. Մյասնիկյանի ճառը ՀԿԿ Երևանի կազմակերպության և արհեստակցական միությունների միացյալ հանդիսավոր նիստում, 1921 թ. մայիսին . . . . .	184
12. Ս. Մ. Կիրովի ճառը Բաքվի կազմակերպության պարտիական ակումբի բացման ժամանակ, 1924 թ. ապրիլի 22-ին . . . . .	187
13. Մ. Ի. Կալինինի ելույթից՝ ՀԿԿ կազմբաժնի նիստում, 1931 թվականին . . . . .	192
11. Ն. Ս. Խրուշչովի ելույթից՝ ՄԱԿ-ի Գլխավոր Ասամբլեայի 15-րդ սեսիայում . . . . .	194

II մաս

Դատական ճառեր

12. Ս. Ա. Անդրեևսկու պաշտպանական ճառից՝ Անդրեևի գործի առթիվ . . . . .	199
13. Գ. Գիմիտրովի ճառը Լայպցիգի դատավարության ժամանակ, 1933 թ. դեկտեմբերի 16-ին . . . . .	207

Սուրեն Ղահրամանի Արկառայան  
Հոնաուրական արվեստի հիմունքները

Խմբագիր՝ Գ. Ա. Մարտիրոսյան  
Գեղ խմբագիր՝ Լ. Շ. Մանասերյան  
Տեխ. խմբագիր՝ Խ. Ե. Ախիբյան  
Վերստուգող խմբագիր՝ Է. Վ. Վարդանյան

ՎՋ 08452

Գրառվեր 488

Տիրաժ 2000

Հանձնված է արտադրության 4/11 1961 թ.:  
Ստորագրված է տպագրության 8/IV 1961 թ.:  
Քուղթ՝ 60x92<sup>1</sup>/<sub>16</sub>: Տպագր. 13,5 մմ., հրատ. 11,2 մմ.:  
Գինը՝ 38 Կ.:

Հայկական ՍՍՌ Գույտուրայի մինիստրության Հրատարակչությունների և  
պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության  
Մ Յ տպարան, Երևան, Հենինի պողոտա Ձև 51: